Ս. Վ. Հովհաննիսյան

Չեխոսլովակիայի սոցիալիստական շինարարության պատմությունից

ԵՐԵՎԱՆ 1953

ՀՍՍՌ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

С. В. ОВНАНЯН

ИЗ ИСТОРИИ СОЦИАЛИСТИЧЕСКОГО СТРОИТЕЛЬСТВА В ЧЕХОСЛОВАКИИ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(437).
Հ-

Ս. Վ. ՀՈՎՆԱՆՅԱՆ

ԶԵԹՈՒԼՈՎ ԱԿԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

A II/21554

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1963

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ

Աշխատության մեջ շարադրվում է Չեխոսլովակիայի հեղափոխության պատմությունը սկսած 1938 թվականից, այսինքն՝ Մյունխենյան գործարքից մինչև մեր օրերը։ Հանգամանորեն լուսաբանվում է ազգային-դեմոկրատական հեղափոխության ծավալումը Չեխոսլովակիայում, խազաղ ճանապարհով նրա վերաճումը հաղթական սոցիալիստական հեղափոխության։ Նպատակիչ գլխում վեր են հանվում սոցիալիստական շինարարության բնագավառում չեխ և սլովակ ժողովուրդների ձեռք բերած նվաճումները, որոնք հիմք հանդիսացան երկրում նոր, սոցիալիստական հասարակարգի հաղթանակի համար։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չեխոսլովակյան Սոցիալիստական Հանրապետությունը (ՉՍՍՀ) զբաղեցնում է 127,8 հազար քառակուսի կիլոմետր տարածություն, կազմված է պատմականորեն ձևավորված 3 մասերից՝ Չեխիայից, Մորավիայից (Չեխական Սիլեզիայի հետ միասին) և Սլովակիայից։ Նա հիմնականում սահմանակից է սոցիալիզմի լագերի երկրների հետ, որ մեծ նշանակություն ունի երկրի անվտանգության համար։ «Բավական է նայել քարտեզին,—նշել է Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի և կառավարության ղեկավար գործիչ Անտոնին Զապոտոցկին,— համոզվելու համար, թե ինչպիսի տարբերություն գոյություն ունի Չեխոսլովակիայի անվտանգության ապահովման մեջ՝ այսօր և առաջին հանրապետության ժամանակ»[1]։

Չեխոսլովակիայի պետական սահմաններով ձգվում են Սուդետական և Կարպատյան լեռները։ Հարավ-արևմուտքում տարածվում է լայնարձակ Միջին-Դանուբյան բերդաստան հարթավայրը։ Խոշորագույն գետերից են Լաբան (Էլբան) և Դանուբի վտակներ Մորավան ու Վագը, որոնք նավարկելի են և ունեն մեծ հիդրոէլեկտրակայանային նշանակություն։ Լաբայի ջրառատ Վլտավա վտակի գեղատեսիլ հովտում փռված է երկրի մայրաքաղաքը՝ Ոսկյա Պրագան իր միջնադարյան Գրադով[2], բարձրարձակ աշտարակներով և հոյակապ կամուրջներով։

Չեխոսլովակիան հարուստ է օգտակար հանածոներով, հատկապես քարածխով, գանազան պիրիտներով, երկաթով, մագնեզիտով, ուրանով, գրաֆիտներով, գունավոր մետաղներով և այլն։

---

[1] „Правда", 3.XI, 1951.

[2] *Գրադ է անվանվում Պրագայի Կրեմլը, միջնաբերդը։*



Մի տեսարան Պրագայից

Երկրի տերիտորիայի 1/3 մասը ծածկված է անտառներով։ Տարեկան միջին ջերմաստիճանը հավասար է 5—6° տաքության, հունվարյանը՝ 3—4° ցրտության, հուլիսյանը՝ 14—16° տաքության։

Երկրի հիմնական հարստությունը նրա տաղանդավոր և աշխատասեր ժողովուրդն է։ Վիճակագրական վերջին տվյալների համաձայն (1959), Չեխոսլովակյան ռեսպուբլիկան ունի 13.353 հազար բնակիչ, որի զրեթե կեսը բնակվում է քաղաքներում։ Խոշորագույն քաղաքներից է Սլովակիայի մայրաքաղաքը՝ Բրատիսլավան, ինչպես նաև Բռնոն, Օստրավան, Պլզենը, Գրադեց-Կրալովը և այլն։ Երկրի բնակչության 2/3 մասը կազմում են բանվորները և ծառայողները, իսկ 1/3-ը՝ գյուղացիները։

Երկրի անունը լրիվ կերպով արտացոլում է նրա բնակչության էթնիկական կազմը. ըստ ազգության, բնակչության հիմնական մասը կազմում են երկու արյունակից եղբայրական սլավոնական ժողովուրդները՝ չեխերը և սլովակները։ Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկայում բնակվում են նաև ուկրաինացիներ, լեհեր, հունգարացիներ և գերմանացիներ, որոնք ունեն չեխերին ու սլովակներին հավասար քաղաքացիական իրավունքներ։

Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ժողովուրդները կերտել են բազմադարյան փառապանծ պատմություն։ Սկսած վաղ ժամանակներից մինչև մեր թվականության XVII դարը չեխերն ունեցել են ինքնուրույն պետականություն։ Միջին դարերում Չեխիան Եվրոպայի զարգացած ֆեոդալական պետություններից էր։

Չեխ և սլովակ ժողովուրդների պատմության հերոսական էջերից է XV դարի առաջին կեսում բռնկված Հուսյան ապստամբությունը, որն իր սուր ծայրով ուղղված էր օտարերկրացիների ճընշման և տեղական հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների դեմ։ Ապստամբները, որոնց ղեկավարն էր ժամանակի տաղանդավոր զորավար Յան Ժիժկան, մի շարք հաղթանակներ տարան գերմանական ասպետական օրդենի և Հռոմի պապի զորքերի դեմ։ Ի վերջո՝ գյուղացիական-ժողովրդական այդ պատերազմը ճնշվեց ամենայն դաժանությամբ, իսկ շարժման գաղափարախոս, չեխ ժողովրդի ազգային մեծ հերոս Յան Հուսը այրվեց խարույկի վրա։

XVII դարի սկզբից մինչև առաջին համաշխարհային պատերազմի վերջը չեխ ժողովուրդը զրկված էր ինքնուրույն պետականությունից և գտնվում էր Ավստրիայի, իսկ այնուհետև Ավստրո-Հունգարական կայսրության լծի տակ։ Հաբսբուրգյան միապետությունը իրենից ներկայացնում էր, Ա. Ի. Գերցենի բնորոշմամբ,

«Ժողովուրդների Բաստիլիա» (բանտ), որի իշխող կլիկը, հենվելով տեղական ֆեոդալների վրա, վարում էր չեխ և սլովակ ժողովուրդների բռնի դերմանացման ու հունգարացման քաղաքականություն, հալածում նրանց ազգային լեզուն, կուլտուրան և կրոնը։ Չեխերի և սլովակների պայքարը իրենց «սեփական»՝ չեխ և սլովակ ֆեոդալների ու կապիտալիստների, ինչպես նաև այլազգի կեղեքիչների դեմ համաշխարհային պատմության մեջ գրված է արյունով և քրտինքով։

Չեխ և սլովակ ժողովուրդները վաղ ժամանակներից ի վեր բազմաթիվ կապերով կապված են սլավոնական մյուս ժողովուրդների և, առաջին հերթին՝ ռուս մեծ ժողովրդի հետ։ «Ռուսական ազգային ոգին և կուլտուրան,—գրել է ՉԿՊ ակտիվավոր գործիչ, ժողովրդական հերոս Յան Շվերման,—եղել են մեր ազգային զարթոնքի անբաժան աղբյուրը»[3]։ Ահա թե ինչու չեխ և սլովակ ժողովուրդների ազատագրական պայքարը միշտ էլ ընթացել է ռուս մեծ ժողովրդի հետ սերտ դաշինքի և եղբայրական համագործակցության նշանաբանի ներքո։ Այդ դարավոր պայքարը նոր բովանդակություն և թափ ստացավ XIX դարի վերջում և XX դարի սկզբում, երբ միջազգային ռևոլյուցիոն շարժման կենտրոնը Արևմուտքից տեղափոխվեց Արևելք՝ Ռուսաստան։ «Արևելքից՝ Ռուսաստանից, մեզ համար շողաց կապիտալիստական ճնշման դեմ պայքարի և ազատության արևը։ Դա մեր արդեն վաղեմի ավանդական բարեկամական կապերին տալիս էր նոր, ռևոլյուցիոն իմաստ»,—ընդգծել է Ա. Զապոտոցկին[4]։

Ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան ջերմ արձագանք գտավ չեխ և սլովակ ժողովուրդների ամենալայն զանգվածներում։ Ոգեշնչված ռուսական պրոլետարիատի հերոսական պայքարով, նրանք ուզի ելան ընդդեմ իրենց ազգային և սոցիալական ճնշողների։ 1905 թվականի Համառուսաստանյան հոկտեմբերյան համընդհանուր գործադուլի անմիջական ազդեցության տակ Պրագայում տեղի ունեցան մասսայական ցույցեր, ծագեցին բարիկադային կռիվներ։ Նոյեմբերի 5-ին Չեխոսլովակիայի մայրաքաղաքի աշխատավորներն ապրեցին իրենց «Արյունոտ կիրակին»[5]։

---

[3] „Československé listy", 15.IX, 1913 (հետագայում՝ «Չեխոսլովենսկե լիստի»)։

[4] „Правда", 26.I, 1957.

[5] Մանրամասն այդ մասին տես С. В. Овнанян, Подъем рабочего движения в Австрии в 1905—1906 гг., М., 1957, стр. 144—145.

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որը նոր դարաշրջան բացեց մարդկության պատմության մեջ, խորտակիչ հարված հասցրեց Հաբսբուրգյան «կարկատանի կայսրությանը»: Նրա վերամակների վրա, մի շարք այլ անկախ ազգային պետությունների հետ մեկտեղ, 1918 թվականի հոկտեմբերի 28-ին կազմավորվեց Չեխոսլովակյան ռեսպուբլիկան, վերածնվեց ժողովրդի շուրջ 3 դար ի վեր կորցրած պետականությունը:

Չեխոսլովակիայի բանվոր դասակարգի թուության, նրա ավանդարդի՝ Կոմունիստական պարտիայի բացակայության, աջ սոցիալ-դեմոկրատների դավաճանության և օտարերկրյա իմպերիալիստների օգնության հետևանքով Ռեսպուբլիկայի իշխանությունն իր ձեռքը վերցրեց բուրժուա-կալվածատիրական բլոկը՝ Թոմաշ Մասարիկի (պրեզիդենտ), Կարել Կրամարժի (պրեմիեր մինիստր), Էդուարդ Բենեշի (1918—1935 թվականներին՝ արտաքին գործերի մինիստր, 1935—1948 թվականներին՝ պրեզիդենտ) և մյուսների գլխավորությամբ: Անգլո-ամերիկյան իմպերիալիստների ուղղակի աջակցությամբ նրանք վարում էին բացահայտ ռևակցիոն ներքին ու արտաքին քաղաքականություն: Բավական է նշել, որ նրանք արյան մեջ խեղդեցին Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի ազդեցության տակ երկրում ծավալված ռևոլյուցիոն շարժումը և ընդհուպ մինչև 1934 թվականի հունիսը դե-յուրե չճանաչեցին Սովետական Միությունը[6]:

Կեղծիքի և հերյուրանքների մշուշը, որով չեխոսլովակյան ռևակցիան ջանում էր պատել նորածին սովետական կարգերը, աստիճանաբար ցրվում էր: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, 1920 թվականի գարնանը Սովետական Ռուսաստան ժամանեց չեխոսլովակյան ականավոր ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատ Բոգումիր Շմերալը: Մոսկվից ծանոթանալով Լենինին և զրուցելով Վ. Ի. Լենինի հետ, նա վերադարձավ հայրենիք: «Ես եկել եմ ուրիշ աշխարհից,—հայտարարեց նա,—և եկել՝ որպես այլ մարդ: Այն, ինչ տեղի է ունենում Ռուսաստանում, մեծ է, գլխապտույտ, ազնիվ, խելացի, անհրաժեշտ և անհաղթ»[7]:

---

[6] Մանրամասն այդ մասին տես Ժողովածու „Великая Октябрьская социалистическая революция и свобода Чехословакии", Изд-во Иностранной литературы, М., 1951.

[7] Մեջբերված է ըստ „Rudé právo", 22.IV, 1956 (հետագայում— «Ռուդե պրավո»):

1920 թվականին հիմնադրվեց Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիան, որի մեջ, սակայն, թափանցեցին նաև օպորտունիստներ։ Կոմունիստական Ինտերնացիոնալի 5-րդ կոնգրեսը, որը կայացավ 1924 թվականին, նշեց կոնկրետ ուղիներ ՉԿՊ-ի բոլշևիկացման համար։ Նույն թվականի նոյեմբերին կայացած ՉԿՊ 2-րդ համագումարը հավանություն տվեց Կոմինտերնի 5-րդ կոնգրեսի որոշմանը, կազմակերպական տեսակետից վերակառուցվեց դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների հիման վրա, ընդունեց ազգային և ագրարային հարցերի մասին լենինյան ծրագրեր[8]։

Նորընտիր Կենտրոնական Կոմիտեում մեծամասնություն կազմեցին լենինյանները (18 հոգի՝ ընդդեմ 14 օպորտունիստների), որոնք, կանգնած լինելով ստեղծագործական մարքսիզմի դիրքերի վրա, այն հաջողությամբ կիրառում էին երկրի յուրահատուկ պատմական պայմաններում։ Այդ օրերին գրած «Հանուն կոմունիստական շարժման բոլշևիկացման» հոդվածում, Կ. Գոտվալդը ընդգծում էր, որ «բոլշևիկացում նշանակում է ռուսական փորձի օգտագործում այս կամ այն երկրում ստեղծված կոնկրետ իրավիճակի պայմաններում, ռուսական, այսինքն՝ բոլշևիկյան աշխատանքի մեթոդների հատուկ հաշվարկ»[9]։

1929—1933 թվականներին միջազգային տնտեսական ճգնաժամի ճիրաններում տատանվող կապիտալիստական սիստեմի կողքին անընդհատ աճող ՍՍՌՄ-ի դոյությունը ոգեշնչում և պայքարի էր կոչում ամբողջ աշխարհի, այդ թվում նաև Չեխոսլովակիայի աշխատավորական զանգվածներին։ Համակրանքը դեպի ՍՍՌՄ-ը աճեց այն աստիճան, որ ականավոր հասարակական գործիչ և գիտնական Զդենեկ Նեմեցին (ներկայումս՝ ակադեմիկոս, ՉՍՍՌ ԳԱ պրեզիդենտ) 1925 թվականին հիմնադրեց «Նոր Ռուսաստանի հետ տնտեսական և կուլտուրական կապերի ընկերությունը», իսկ Բոդումիր Շմերալը՝ «ՍՍՌՄ-ի եղբայրների միությունը» (1931)։ «Սովետական Միությունը մերն է,—վճռականապես հայտարարեց ՉԿՊ 1930 թվականին,—և մենք մինչև արյան վերջին կաթիլը կպաշտպանենք նրան իմպերիալիստների ռազմական հարձակումներից»[10]։

Տնտեսական ճգնաժամը և ՉԿՊ-ի բոլշևիկացման պրոցեսի

---

[8] Մանրամասն տես И. Н. Мельникова, Борьба рабочего класса Чехословакии в 1924—1925 гг., „Вопросы истории", 1955, № 3, стр. 45—59.

[9] Клемент Готвальд, Избранные произведения в двух томах, том I, М., 1957, стр. 8. (Հետագայում—К. Готвальд. Избранные произведения).

[10] «Ռուդե պրավո», 5.XII. 1930։

ավարտումը պայման հանդիսացավ երկրում ռևոլյուցիոն շարժման բուռն վերելքի համար[11]։ «Մեր բանվորների հայացքը,—նշել է այդ կապակցությամբ Ա. Զապոտոցկին,—բևեռված էր Սովետական Միությունում հաղթականորեն ծածանվող սոցիալիզմի դրոշին։ Ընթանա ռուսական բոլշևիկների ուղիով՝ սրանում էր կայանում նրանց ծրագիրն ու նպատակը»[12]։

Չեխոսլովակիայի բուրժուազիան և կալվածատերերը, տեսնելով ռևոլյուցիոն շարժման ճնշման բուրժուա-դեմոկրատական մեթոդների անզորությունը, վճռականապես դիմեցին ֆաշիզացման. ուժեղացվեցին ռեպրեսիաները կոմունիստների նկատմամբ, ցրված հայտարարվեցին կոմերիտմիությունը, Կարմիր (կոմունիստական) պրոֆմիությունների գործունեությունը, ՍՍՌՄ-ի եղբայրների միությունը և այլն։ 1930-ական թվականների սկզբին երկիրը կանգնած էր բացարձակ ֆաշիստական դիկտատուրայի հիմնադրման նախադռանը։ Այդ ժամանակ հիտլերյան Գերմանիան, որպես դամոկլյան սուր, արդեն սպառնում էր Չեխոսլովակիային։

Կենսագործելով Կոմինտերնի 7-րդ կոնգրեսի որոշումը, որին ՉԿՊ-ից մասնակցում էր բանվորական շարժման ականավոր գործիչ, ներկայիս պրեզիդենտ Անտոնին Նովոտնին, կոմունիստները դաժան ռեպրեսիաների պայմաններում վճռական պայքար ծավալեցին միացյալ ժողովրդական, հակաֆաշիստական ճակատ կազմակերպելու համար։ Համաժողովրդական, հակաֆաշիստական պայքարը Չեխոսլովակիայում, ինչպես և այլ երկրներում ընթանում էր ՍՍՌՄ-ի հետ կոլեկտիվ անվտանգության ու փոխադարձ օգնության պայմանագիր կնքելու նշանաբանի ներքո։ Այդ պայքարի և ՍՍՌՄ-ի վաստակած միջազգային մեծ հեղինակության արդյունքը եղավ այն, որ 1935 թվականի մայիսին Սովետական Միության, Չեխոսլովակիայի և Ֆրանսիայի միջև կնքվեց փոխադարձ օգնության պայմանագիր։

Սակայն Ֆրանսիայի, ինչպես և Չեխոսլովակիայի ղեկավար շրջանները այդ պայմանագիրը դիտում էին որպես ձևական ակտ և, անգլո-ամերիկյան իմպերիալիստների հետ մեկտեղ, հրաժարվում ֆաշիստական Գերմանիային կոլեկտիվ կերպով սանձահարելու և նրա ագրեսիայի հնարավորությունը բացառելու քաղաքակա-

---

[11] Տես С. И. Прасолов, Революционное движение трудящихся Чехословакии в годы мирового экономического кризиса (1929—1933). „Вопросы истории", 1951, № 3, стр. 36—54.

[12] Մեջ է բերված ըստ „Правда", 1. II, 1957։

նությունից։ Չեխոսլովակյան կառավարության պահանջով Սովետա-չեխոսլովակյան պայմանագրում մտցվեց հատուկ կետ (№ 2), ըստ որի ՍՍՌՄ-ն իրավունք ուներ իր զինված ուժերով օգնել Չեխոսլովակիային միայն այն դեպքում, եթե արևմտյան տերությունները (իհարկե՝ Ֆրանսիայի միջոցով) համաձայնվեին դրան։ Դեռ ավելին, 1936 թվականի դեկտեմբերին Բենեշը դաշնակցություններ էր վարում Հիտլերի հետ և ջանում ապահովել Չեխոսլովակիայի մասնակցությունը հակասովետական, ագրեսիվ, այսպես կոչված, «Հակակոմինտերնական» բլոկին[13]։

Չեխոսլովակյան ռեակցիոներների, ինչպես և անգլո-ֆրանսիական իմպերիալիստների նման մեքենայությունները, որոնց ոգեշնչողները հանդիսանում էին ԱՄՆ-ի կառավարող շրջանները[14], 1939 թվականի սեպտեմբերի 30-ին հանգեցրին Հիտլերի, Չեմբերլենի (Անգլիա), Դալադիեի (Ֆրանսիա) և Մուսոլինիի (Իտալիա) Մյունխենյան դավադրությանը։ Հիտլերյան Գերմանիան, համաձայն Մյունխենյան գործարքի, օկուպացիայի ենթարկեց Չեխոսլովակիայի գրեթե $^1/_3$ մասը[15]։

Սովետական կառավարությունը անմիջապես մերկացրեց Արևմտյան իմպերիալիստների այդ նողկալի քայլը և դրա հետևանքները։ Նա վճռականապես բողոքեց Չեխոսլովակիայի անդամահատման դեմ և հայտնեց հաստատուն պատրաստակամություն իր զինված ուժերով պաշտպանելու Չեխոսլովակիայի անկախությունն ու սահմանների ամբողջականությունը, եթե «ինքը Չեխոսլովակիան պաշտպանվի և խնդրի սովետական օգնություն»։

Չեխոսլովակյան կառավարությունը Բենեշի գլխավորությամբ, ելնելով բուրժուազիայի դասակարգային նեղ շահերից և դավաճանելով երկրի ազգային շահերին, դերադասեց խայտառակ կապիտուլյացիան գերմանական ֆաշիզմի առջև, քան սովետական օգնությունը։ Չեխոսլովակյան կառավարող շրջաններն իրենց գլխա-

---

[13] *Տես* „Великая Октябрьская социалистическая революция и свобода Чехословакии", М., 1951, стр. 81.

[14] *Մանրամասն այդ մասին տես* Ю. В. Арутюнян, Роль американской дипломатии в организации Мюнхенской конференции. „Вопросы истории", 1958, № 2.

[15] *Չեխոսլովակյան կառավարող շրջանների ռեակցիոն գերի մասին Մյունխենյան դավադրության նախապատրաստման գործում մանրամասն տես* В. Краль, О контрреволюционной и антисоветской политике Масарика и Бенеша. М., 1955.

վոր թշնամի համարում էին ոչ թե Հիտլերին, ֆաշիզմը, այլ բանվոր դասակարգին, կոմունիստական շարժումը։

Օգտվելով արևմտյան իմպերիալիստների և չեխոսլովակյան բուրժուազիայի պրոֆաշիստական դիրքից, 1939 թվականի մարտի 15-ին Գերմանիան օկուպացրեց Չեխիան ու Մորավիան. Սլովակիան հայտարարվեց «անկախ»՝ Հիտլերի գործակալներ Տիսոյի, Տուկայի և Դուրչանսկու ղեկավարությամբ։ Ագրեսիայի այս աննախադեպ ակտը անմիջապես ճանաչվեց նրա ոգեշնչողներ՝ ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ Միայն ՍՍՌՄ-ն էր, որը նույն օրը հրապարակած կառավարական նոտայում բողոքեց Չեխոսլովակիայի բռնագրավման դեմ և ընդգծեց, որ Գերմանիայի գործողությունները խոշորագույն վտանգ են ներկայացնում մարդկության խաղաղությանը[16]։

* * *

Գերմանական օկուպացումով սկսվեց չեխ և սլովակ ժողովուրդների պատմության մի մռայլ շրջան, որը տևեց մոտ 7 տարի։ Հիտլերյան դահիճներն ու համակենտրոնացման ճամբարները չընկճեցին ազատասեր չեխ և սլովակ ժողովուրդներին, որոնք, համախմբվելով բանվոր դասակարգի շուրջը, ՉԿՊ-ի ղեկավարությամբ համառ և հետևողական պայքար ծավալեցին իրենց հայրենիքի ազգային անկախության և դեմոկրատականացման համար։ Գնալով հակաֆաշիստական պայքարն ուժեղացավ և 1944 թվականի ամռանը վերաճեց ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի[17], որի հեգեմոն դիրքերում կանգնած էր բանվոր դասակարգն իր մարտական ավանդարդի՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ։ Հիտլերյան Գերմանիայի պլխովին ջախջախումը և Չեխոսլովակիայի ազատագրումը Սովետական Բանակի կողմից նպաստեց այնտեղ ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակին։ Չեխ և սլովակ ժողովուրդների պատմության մեջ բացվեց

---

[16] Տես „Известия", 20.III, 1939։

[17] Այդ ռևոլյուցիան ազգային-դեմոկրատական էր, որովհետև նա մի կողմից ուղղված էր գերմանական օկուպանտների դեմ և մղվում էր երկրի ազգային անկախության համար, իսկ, մյուս կողմից, ընդդեմ հիտլերականների, չեխ և սլովակ կամակատարների, «հայրենական» ռեակցիոներների, հանուն երկրի հասարակական-քաղաքական կարգերի արմատական դեմոկրատականացման։

նոր դարաշրջան՝ ժողովրդական-դեմոկրատիայի ժամանակաշրջանը։

Կանգնած լինելով ստեղծագործական մարքսիզմի գիրքերի վրա, Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիան կարողացավ կազմակերպել և ղեկավարել բանվոր դասակարգի, աշխատավորական լայն զանգվածների պայքարը՝ հանուն հաղթական ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան խաղաղ ճանապարհով (առանց զինված ապստամբության և քաղաքացիական կռիվների) սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճման։ Պայքարի պառլամենտական ձևերի օգնությամբ, 1948 թվականի փետրվարին Չեխոսլովակիայում հաղթանակեց սոցիալիստական ռևոլյուցիան, երկրում հիմնադրվեց պրոլետարիատի դիկտատուրա։

Ճնշված և կեղեքված չեխ և սլովակ ժողովուրդները, թոթափելով ազգային և սոցիալական լուծը, մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղան սոցիալիստական շինարարության և երջանիկ կյանքի կառուցմանը։ Շնորհիվ ՉԿՊ-ի հմուտ ղեկավարության և Սովետական Միության ու ժողովրդա-դեմոկրատական երկրների անշահախնդիր օգնության, նրանք կարճ ժամանակամիջոցում կառուցեցին նոր, սոցիալիստական հասարակարգ, որի հաղթանակն իր օրենսդրական արտացոլումն ու ամրապնդումը գտավ 1960 թվականի Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Կոնստիտուցիայում։

Չեխ ու սլովակ ժողովուրդների պատմության վերոհիշյալ դժվարին և հերոսական ժամանակաշրջանին է նվիրված սույն աշխատությունը, որը ժամանակագրական տեսակետից ընդգրկում է 1938—1960 թվականները, այսինքն՝ սկսում է Մյունխենյան դարձարքից և ավարտվում Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկայի հռչակումով։ Դա ամբողջական մի ժամանակաշրջան է, որի ընթացքում տեղի ունեցող անցքերը օրգանապես շաղկապված են միմյանց հետ և սերտորեն միահյուսված։ Այն բաժանվում է երեք հիմնական, ինքնամփոփ էտապների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր լայտմոտիվը և, այդ իսկ պատճառով, տրված է առանձին գլխում։

* * *

Մարքսիզմի կլասիկների աշխատություններում մշակված է, ոչ միայն սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիստական շինա-

բարության դիտական ամբողջական թեորիան, որով զեկավարվել է ՉԿՊ-ն իր գործունեության ընթացքում, այլ նաև այդ բարդ պրոցեսների ուսումնասիրման միակ ճիշտ մեթոդոլոգիան։ Չեխոսլովակիայում ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի ծագման, զարգացման և սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճման ամբողջ մեխանիզմը ըմբռնելու և բացահայտելու գործում հատկապես մեծ նշանակություն են ունեցել Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ» (1905), «Պետություն և ռևոլյուցիա» (1917), ««Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» (1920) աշխատությունները։ Լենինյան կոնկրետիվ պլանը, որով առաջնորդվել է ՉԿՊ-ն սոցիալիստական շինարարության առավել դժվարին հարցը՝ գյուղատնտեսության կոլեկտիվացումը լուծելիս եղել է բանալի Չեխոսլովակիայի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրոցեսը պարզաբանելու գործում։

Չեխոսլովակիայի պատմության ընտրած ժամանակաշրջանի հանգուցային հարցերի տեսական ըմբռնման և պատմական լուսաբանման համար արտակարգ նշանակություն ունեն ՉԿՊ-ի և կառավարության ղեկավար գործիչների, հատկապես՝ Կլեմենտ Գոտվալդի, Անտոնին Զապոտոցկու, Անտոնին Նովոտնու, Վիլյամ Շիրոկու, Զդենեկ Ֆիրլինգերի, Յուլիուս Ֆուչիկի, Յան Շվերմայի և մյուսների աշխատություններն ու ելույթները, որոնք, ի դեպ, պարունակում են նաև հարուստ և ստույգ փաստական նյութեր։ Ուստի այդ աշխատությունները ոչ միայն տեսական ուղեցույց են, այլ նաև պատմական նյութերի կարևորագույն աղբյուր։

Աշխատությունում օգտագործված բազմաթիվ աղբյուրների շարքում առաջնակարգ տեղ են զբաղեցնում Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի փաստաթղթերը, հատկապես՝ համագումարների, համապետական կոնֆերանսների, նրա Կենտրոնական Կոմիտեի պլենումների և նախագահության նիստերի արձանագրությունները, որոշումներն ու բանաձևերը, որոնցում արտահայտված է ոչ միայն պարտիայի քաղաքական գիծը՝ երկրի զարգացման տվյալ էտապում և տվյալ հարցում, այլ նաև երկրի հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքի ամբողջական պատկերը, տրված է նրա խոր և դիտական անալիզն ու գնահատականը։ Ուստի աղբյուրների հիշյալ խումբը հնարավորություն է տալիս ոչ միայն լուսաբանել ՉԿՊ-ի քաղաքականությունը, նրա առաջատար դերը երկրի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյան-

քում, այլ նաև երկրի քաղաքացիական կոնկրետ պատմությունը:

Պատմական փաստական նյութի անսպառ աղբյուր է չեխոսլովակյան պարբերական մամուլը և, առաջին հերթին, ՉԿՊ-ի կենտրոնական օրգան՝ «Ռուդե պրավո» («Կարմիր իրավունք») օրաթերթը: Կանգնած լինելով մարտնչող պարտիականության հասատաման դիրքերի վրա, լրագիրը հիտլերյան օկուպացիայի տարիներին խոր ընդհատակից համառ և հետևողական պայքարի է կոչում չեխ և սլովակ ժողովուրդներին, ղեկավարում և ուղղություն տալիս նրանց հակաֆաշիստական ելույթներին: Մեծ տեղ հատկացնելով ՉԿՊ-ի քաղաքականության լուսաբանմանը, լրագիրը 1945—1948 թվականներին մերկացնում էր բուրժուական և մանրբուրժուական պարտիաներին, նրանց հակաժողովրդական գործունեությունը և նպաստում աշխատավորական զանգվածներին՝ նրանց վնասակար ազդեցությունից ազատագրվելուն, Կոմպարտիայի շուրջը համախմբվելուն: «Ռուդե պրավոն» մշտապես լուսաբանում է երկրում սոցիալիստական շինարարության, պարտիական, հասարակական և քաղաքական կյանքի բոլոր հարցերը: Նրանում, ինչպես և պարբերական այլ օրգաններում[18] զետեղված փաստական նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս՝ վերարտադրելու պատմական իրադարձությունների և անցքերի կենդանի պատկերը՝ իրենց ժամանակագրական հաջորդականությամբ:

Ժողովրդա-դեմոկրատական կառավարության քաղաքականության լուսաբանման համար մեծ նշանակություն ունեն փաստական նյութերի այնպիսի աղբյուրներ, ինչպիսին են կառավարական ծրագրերը, օրենսդրական ակտերը, 1948 թվականի և 1960 թվականի կոնստիտուցիաները և այլն, որոնք լույս են սփռում նրա ամբողջ գործունեության վրա:

---

[18] Նկատի ունենք Չեխոսլովակիայի Կոմպարտիայի կենտրոնական օրգան „Pravda" («Պրավդա» — «Ճշմարտություն») օրաթերթը, ՉԿՊ ԿԿ կենտրոնական տեսական օրգան „Nová my'sl" («Նովա միսլ» — «Նոր միտք») ամսագիրը, Չեխոսլովակիայի միասնական սոցիալիստական պրոֆմիութենական շարժման կենտրոնական օրգան „Práce" («Պրացե» — «Աշխատանք» „Труд") օրաթերթը, գյուղացիական „Zemědělské noviny" («Զեմեդելսկե նովինի» — «Գյուղատնտեսական նորություններ») լրագիրը, բուրժուական, այսպես կոչված, Ազգային-սոցիալիստական պարտիայի կենտրոնական օրգան „Svobodné slovo" («Սվոբոդնե սլովո» — «Ազատ խոսք») օրաթերթը, ժողովրդական (կաթոլիկական) պարտիայի կենտրոնական օրգան „Lidová demokracie" («Լիդովա դեմոկրացիե» — «Ժողովրդական դեմոկրատիա») օրաթերթը և այլն, որոնք օգտագործված են այս աշխատության մեջ:

ժողովրդական տնտեսության զարգացման երկամյա պլանը (1947—1948), առաջին հնգամյա պլանը (1949—1953), 1954 և 1955 թվականների ժողովրդական տնտեսության զարգացման տարեկան պլանները և երկրորդ հնգամյա պլանը (1956—1960) հնարավորություն են տալիս բացահայտելու երկրի տնտեսության զարգացման և բնակչության նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման ամբողջական պատկերը: Այդ գործում մեծ նշանակություն ունեն նաև վերոհիշյալ պլանների կատարման վերաբերյալ Չեխոսլովակիայի պետական վիճակագրական վարչության ամփոփիչ տվյալները, որոնք, որպես կանոն, զետեղվում են «Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայի վիճակագրական տարեգրության» („Statistická ročenka Republiky Československé"), «Վիճակագրական հաղորդագրությունների» („Statistické Zpravy"), «Տնտեսության նորությունների» („Hospodářské noviny") և բազմաթիվ այլ հրատարակությունների և պարբերական մամուլի էջերում:

Սույն աշխատության համար որոշակի նշանակություն են ունեցել չեխոսլովակյան պատմաբաններ՝ Յ. Մացեկի, Ի. Վեսելու, Ի. Կոտյատկոյի, Ի. Դոլեժալի, Զ. Ամորտի, Մ. Ֆալտանի և սովետական պատմաբաններ Ի. Ուդալցովի, Ա. Նեդորեզովի, Ս. Պրասոլովի, Ա. Խաչատուրովի, Ի. Մելնիկովայի, Ս. Գրաչևի, Ֆ. Պետրովի, Ն. Չերկասովի, Ֆ. Պավլովի, Ի. Մեդվեդևի և ուրիշների աշխատությունները, որոնցում լուսաբանված են Չեխոսլովակյան ռեսպուբլիկայի պատմության մեջ հետաքրքրող ժամանակաշրջանի առանձին հարցեր:

Հատուկ հիշատակության արժանի է ՍՍՌՄ ԳԱ Սլավոնագիտության ինստիտուտի կողմից հրատարակված «Չեխոսլովակիայի պատմություն» եռհատոր կապիտալ աշխատությունը, որի վերջին հատորի վերջին գլուխները նվիրված են ժողովրդա-դեմոկրատական Չեխոսլովակիայի պատմությանը[19]:

[19] «История Чехословакии», Институт Славяноведения АН СССР, том III, М., 1960, 662 стр. *Այս ֆունդամենտալ աշխատության II և III հատորների հանդամանալից վերլուծությունը և գնահատականը տես մեր գրախոսականում՝ զետեղված* „Новая и Новейшая история" *ամսագրում (1961, № 6):*

A 91554

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՉԵԽ ԵՎ ՍԼՈՎԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԻՏԼԵՐՅԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՄ

1. ՀԻՏԼԵՐՅԱՆ ՌԵԺԻՄԸ ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ

Ֆաշիստական Գերմանիան, օկուպացնելով Չեխոսլովակիան, իր ագրեսիվ պլանների հետագա կենսագործման համար ձգտում էր օգտագործել նրա ռազմա-տնտեսական պոտենցիալը։ «Ով տիրում է Չեխիային, նա տիրում է Եվրոպային»,—թիմարկյան այդ տրխրահռչակ դարձվածքը, որը հաճույքով կրկնում էր Հիտլերի չեխոսլովակյան պրոտեկտոր Կոնստանտին Ֆոն Նեյրատը,—ֆաշիստակա Գերմանիայի ուղենիշն էր։

Հիտլերյան օկուպացումով սկսվեց երկրի և բնակչության անհանգստության կողոպուտը, որի ձևերը տարբեր էին՝ սկսած ուղղակի թալանից և գողությունից, այսպես կոչված «արիացումից»[1], ընդհուպ մինչև ունեցվածքի տարբեր «լեգալ» փոխադրումները։

«Արիացման» պատրվակով գերմանական մոնոպոլիստները հափշտակում էին ոչ միայն հրեաներին, այլև չեխերին ու սլովակներին պատկանող կապիտալը և անշարժ գույքը։ Կարճ ժամանակամիջոցում նրանց ձեռքում կենտրոնացվեց Չեխոսլովակիայի արդյունաբերության կարևորագույն բարձունքները՝ լեռնարդյունաբերությունը, մետաղամշակությունը, մեքենաշինությունը, էլեկտրա-

---

[1] *Այսպես կոչված «արիացում»* (аризация) *անվանվում էր հրեաներին պատկանող ունեցվածքի բռնագրավումը, որը, որպես կանոն, ուղեկցվում էր նրանց ֆիզիկական ոչնչացումով։*

արդյունաբերություններ, երկաթուղիները և այլն։ Հատկապես ուռճացավ «Հերման Գյորինգ» կոնցեռնը, որը հափշտակեց Չեխոսլովակիայի ռազմական արդյունաբերության լավագույն գործարաններն ու ֆաբրիկաները, այդ թվում նաև աշխարհահռչակ Շկոդավերկը և այլն[2]։

Տարատեսակ մեքենայություններով, որոնք համարվում էին կոզոպուտի «օրինական» ճանապարհ, ֆաշիստները թշվառ երկրից և բնակչությունից «մեկից մաշկում էին երեք տակ կաշի»[3]—փլում ազգային կապիտալը, ոսկու պաշարը և անշարժ գույքը։

Հսկայական են նյութական այն կորուստները, որ Չեխոսլովակիային պատճառեց ֆաշիստական Գերմանիան։ Օկուպացիայի ժամանակաշրջանում (1938—1945), հիտլերյան հորդաները Չեխոսլովակիայի անտեսությանը հասցրել են 400 միլիարդ չեխական քրոնի վնաս[4]։

Ֆաշիստական Գերմանիան շահագործակից երկրի և բնակչության թե՛ բացարձակ և թե՛ սքողված թալանով, այլև, որը ամենահարկուն էր, ծայր աստիճան ստստիացրեց ռեսուրսները։ Տեսորն ընդունեց այնպիսի չափեր և այնպիսի ձևեր, որպիսիք Չեխոսլովակիայի ժողովուրդները մինչ այդ չդիտեին։ Բազմաթիվ վայրերում հիտլերականները կիրառեցին բարբարոսային, այսպես կոչված «հրկիզված հողի օրենքը», որի հետևանքով ամբողջական բնակավայրեր ջնջվեցին երկրի երեսից։ 1942 թվականի հունիսի 10-ին նրանք հիմնահատակ արեցին Լիդիցե գյուղը։ Գերմանական պաշտոնական հաղորդագրության մեջ այդ կապակցությամբ հիշվում է. «Գյուղի ամբողջ ազամարդ բնակչությունը գնդակահարված է, կանայք ուղարկված են համակենտրոնացման ճամբար, իսկ երեխաները գտնվում են այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրանց համապատասխան դաստիարակություն։ Բոլոր կառուցումները հավասարեցված են հողին, իսկ գյուղի անունը՝ ցուցակներից ջնջված է»[5]։ Նման բախտ վիճակվեց նաև Լեժակի գյուղին և մի շարք այլ բնակավայրերի։

Չեխերին և սլովակներին համարելով «հիմանդ ազգեր», ֆա-

---

[2] Տե՛ս „Нюрнбергский процесс", Сборник материалов, том I, М., 1952, стр. 60, 694—696.

[3] Տե՛ս „Большевик", 1941, № 11—12, стр. 50.

[4] Տե՛ս „История Чехословакии", том III, М., 1960, стр. 330.

[5] Թիտատը մեջ է բերված ըստ Է. Ունլեր, Лидице, перевод с английского, Прага, 1947, стр. 12.

շիտանները կազմակերպում էին նրանց հրեշային ջարդեր և անվանում դրանք «արյան բաց թողում»։ Ընդ որում այդ ջարդերը կազմակերպվում էին ոչ թե տարերայնորեն, առիթից-առիթ, այլ պարբերաբար, պլանավորված կերպով և հանդիսանում էին չեխերի ու սլովակների գերմանականացման պլանի բաղկացուցիչ մասերը[6]։

Դաժան ռեպրեսիաների և տարտարոսի տեռորի հետևանքով Չեխոսլովակիայում դրեթե չմնաց մի ընտանիք, ուր այս կամ այն չափով չթափանցեր դժբախտությունը։ Բավական է հիշատակել, որ ֆաշիստական օկուպացիայի տարիներին սպանվեցին 360 հազար չեխոսլովակյան հայրենասերներ[7]։

Բայց միայն ռեպրեսիաների և տեռորի միջոցով չէր, որ կիրառվում էր գերմանականացման քաղաքականությունը։ Ելնելով բիսմարկյան այն դրույթից, որ «սլավիններն անհարմար են նրանց վրա նստելու համար», հիտլերականները միաժամանակ ջանում էին իրենց կողմը գրավել չեխ և սլովակ խոշոր բուրժուազիայի, կալվածատերերի ու հոգևորականության վերնախավին և նրանց օգնությամբ վերափոխել չեխոսլովակների ամբողջ ներքնաշխարհը, մատծելակերպը։

Կառավարության նախաձեռնությամբ չեխոսլովակյան խոշոր բուրժուազիայի, կալվածատերերի և հոգևորականության վերնախավի մի բուռ ներկայացուցիչներ, որոնք զգալի շահույթներ էին ստանում պատերազմական պատվերներից և որոնց հիտլերյան ռեժիմը այնքան էլ չէր դիպչում, հիմնադրեցին կիսաֆաշիստական, այսպես կոչված, «Ազգային համերաշխություն» կազմակերպությունը, որը քարոզում էր համերաշխություն Բեռլինի հիտլերյան օկուպանտների հետ, որպես «ազգի փրկության միակ ուղի»։

Եթե չեխոսլովակյան խոշոր բուրժուազիայի մի մասն ուներ գերմանական հակում և բացահայտ կերպով քարոզում էր հաշտվողականություն ու համագործակցում հիտլերականների հետ, ապա նրա մյուս մասը հակվում էր դեպի արևմտյան պետությունները։ Դադարել է դիմանգիտական գաղտնիք լինելուց այն նողկալի դերը, որ խաղացին չեխոսլովակյան խոշոր բուրժուազիայի այդ մասը և նրա արևմտյան հովանավորները երկրի մյունխենյան ոգբեր-

---

[6] Տե՛ս Генеральный план „ОСТ". „Военно-исторический журнал", 1960, № 1, стр. 83—98, ինչպես նաև «Ռուդե պրավո», 21.VI.1957։

[7] Տես „Protokol VIII. řádného sjezdu Komunistické strany Československa". Vydalo Ústřední Výbor KSČ v Praze, str. 50 (Հետագայում — „Protokol VIII. Sjezdu").

գությանն և Հիտլերյան օկուպացիայի դարձում[8]։ Զգալով թաքցնել իրենց հակաազգային դեմքը և գործունեությունը, Չեխոսլովակիայի մյունխենյան դավադիրները նախկին պրեզիդենտ Էդուարդ Բենեշի դիմաքողությամբ դիմեցին վատանդիությանն։ Նրանք տեղափոխվեցին Ֆրանսիա, իսկ վերջինիս կապիտուլյացիայից հետո՝ Անգլիա։

Չեխոսլովակյան վատանդիների լոնդոնյան խումբը, հավատարիմ մնալով իր արևմտյան օրիենտացիային և երկրի խոշոր բուրժուազիայի դասակարգային շահերին, պահում էր, որ պատերազմի վախճանը, վերջին հաշվով, կվճռեն արևմտյան տերությունները, որ նրանց ղորքերը կդուրսեն Չեխոսլովակիան և կօգնեն վերականգնելու չեխոսլովակյան բուրժուազիայի տիրապետությունը։ «Արևմուտքի հաղթանակը,—ընդգծել է Բենեշը,—միակ հնարավորությունն է, որ թույլ կտա Անգլիայի ու Ամերիկայի օգնությամբ անցկացնել Եվրոպայի սոցիալական կարգի ամրապնդում և կիսաշնդոտի լիակատար քայքայման և սոցիալական կազմալուծմանը»[9]։

Բացի այդ, Բենեշը և նրա համախոհները մշտապես կապ էին պահպանում Հիտլերի չեխոսլովակյան կամակատար Էմիլ Հաչայի ֆաշիստական կառավարության հետ, նրան համարում իրենց ներկայացուցիչը Պրագայում։ Նրանք ամեն կերպ խոչընդոտում էին երկրում ծավալվող ազգային դիմադրողական շարժմանը, նախապատրաստում ռեակցիոն զինվորական կազմեր և զորամասեր, որոնց միջոցով հույս ունեին Գերմանիայի պարտությունից հետո ճնշել ազգային-դեմոկրատական շարժումը և երկրում վերականգնել բուրժուազիայի իշխանությունը՝ մինչմյունխենյան կարգերը։

Հիտլերյան Գերմանիայի դեմ պայքարող միակ հեռանկարային ուժը Չեխոսլովակիայի ժողովուրդն էր՝ բանվոր դասակարգի գլխավորությամբ։ Ահա թե ինչու ֆաշիստներն իրենց գործելակերպի սլաքն ուղղեցին բանվոր դասակարգի և հատկապես նրա մարտական ավանգարդի՝ Կոմունիստական պարտիայի դեմ։ Անցկացվեց հարկադիր աշխատանք անդամ տարիքավորների, կանանց և դեռահասների համար։ Աշխատանքային օրը հասցվեց 12—14 ժամի։ Բանվորների վրա սահմանվեց հատուկ ռազմական ոստիկանության (վերկշուտցի), ինչպես նաև դեստապոյական գաղտնի

---

[8] Տե՛ս ժողովածու „Новые документы из истории Мюнхена", М.' 1958.

[9] Dr. Edvard Benes, Paměti, Od Mnichova k nové válce a k novémi vítězstvi. Praha, 1948, str. 84; տես նաև էջ 163, 208 (հեղագրում— Ի. Բենեշ. Պամյաթի)։

գործակալների մշտական և խիստ վերահսկողություն։ Պաշտոնապես արգելվեցին գործադուլները։ Գործարանային կոմիտեների անդամները դարձան նշանակովի, ընդ որում նշանակվում էին այնպիսի անձինք, որոնց նպատակն էր երկրի տնտեսությունը ի սպաս դնել ֆաշիստական Գերմանիային։ Հիտլերականները հարյուր հազարավոր բանվորների տեղափոխեցին Գերմանիա՝ տաժանակիր աշխատանքի, տասնյակ հազարավորների նեռեցին համակենտրոնացման ճամբարներ։

1938 թվականի դեկտեմբերի 27-ին պաշտոնապես հայտարարվեց ՉԿՊ-ի, իսկ այնուհետև (1939 թվականի հունվարի 25) պրոֆմիությունների և բանվորական ու դեմոկրատական այլ կազմակերպությունների, որոնք հանդիսանում էին, ինչպես շեշտված էր որոշման մեջ, «կոմունիստների ազդեցության հիմնական պարտները», արգելման մասին։ Միաժամանակ հիմնադրվեցին, այսպես կոչված, «Աշխատավորների ազգային պրոֆմիութենական կենտրոն» և «Հասարակական ծառայողների պրոֆմիութենական կենտրոն» կիսաֆաշիստական կազմակերպությունները, որոնց մեջ բռնի միջոցներով ընդգրկվում էին բանվորներ և ծառայողներ։ Նրանցից պահանջվում էր լռել, հեղաբար աշխատել և մուծել անդամավճար։ Այդ կազմակերպությունների ղեկավարներ նշանակվեցին տեղական ֆաշիստական պարտիաների պարագլուխներից, որոնք ամեն կերպ ջանում էին բացառել բանվորների դիմադրության փոքրիշատե առկա հնարավորությունը և՝ որպես «ազգի փրկության միակ ուղի», քարոզում էին լիակատար կապիտուլյացիա Հիտլերյան Գերմանիայի առջև[10]։

2. ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՇԽՈՒԺԱՅՈՒՄԸ ԵՐԿՐՈՒՄ

Մյունխենյան դործարքից մինչև 1939 թվականի մարտյան ողբերգությունը կամ, ինչպես անվանվում է, Երկրորդ ռեսպուբլիկայի ժամանակաշրջանում, ՉԿՊ-ն ընդհատակյա աշխատանքի ծավալմանը զուգընթաց օգտագործում էր բոլոր լեգալ հնարավորությունները հակաֆաշիստական, ազգային-դիմադրողական շարժում կազմակերպելու և ղեկավարելու համար։

[10] Տե՛ս „Za svobodu českého a slovenského naroda“, Sbornik dokumentu, SNPL, Praha, 1956, str. 32 (Հետագայում— „Za svobodu českého a slovenského naroda“).

Պայքարի այս շրջանում կոմունիստները, որպես կանոն, տարբեր ծածկանուններով պարբերաբար հանդես էին գալիս դեռևս չարգելված առանձին առաջադեմ լրագրներում, ամսագրերում և մասսաներին կոչ անում միասնության, համատեղ պայքարի՝ ընդդեմ ֆաշիզմի։ Այսպես, օրինակ, Յուլիուս Ֆուչիկը հանդես էր գալիս Յան Բորովսկի, Վացլավ Պիլեցկի, Կարել Վոյան, Իրժի Շտեպան և այլ ծածկանուններով այն ժամանակի առաջադեմ («Աշխարհը նկարներում», «Մեղու», «Մեր ուղին» և այլն) ամսագրերում։ Իր գրականագիտական հոդվածներում նա վեր հանեց հայրենի գրական կոթողներում առկա ազգային-ազատագրական գաղափարների արտացոլումը, գաղափարներ, որոնք ծնվել և հիմնավորվել էին չեխոսլովակների ամբողջ պատմական փորձով՝ սկսած XIV դարի Անանուն հանդավորված ժամանակագրությունից, որի նշանաբանն էր՝ «Օտարերկրացուն թույլ մի՛ տա քո սահմանները», մինչև Յան Ներուդայի ոտանավորները, որոնք պահանջում էին ոչ թե համակերպվել «ժամանակակից տրկատներին», այլ պայքարել նրանց դեմ և հաղթանակել։

Ղեկավարվելով Կոմինտերնի համապատասխան որոշմամբ, որը պահանջում էր ռևոլյուցիոն պրոֆմիությունների արգելման վտանգի դեպքում կազմակերպել նրանց անդամների անհապաղ ընդգրկումը ռեակցիոն պրոֆմիությունների մեջ, քանի որ դրանք «այնուամենայնիվ տալիս են կազմակերպչական կապերի, ամենատարրական կենսական շահերի բարձրացման և համատեղ պայքարի որոշ հնարավորություններ»[11], ՉԿՊ ձևնամուխ եղավ կարմիր պրոֆմիությունների անդամներին և բանվորական ակտիվիստներին կլերիֆաշիստական պրոֆմիությունների մեջ ընդգրկելու գործին։ Շնորհիվ կոմունիստների ջանքերի, ռևոլյուցիոն պրոֆմիությունների արգելման ժամանակ (1939 թվականի հունվար) նրանց շատ անդամներ արդեն մի քանի կազմակերպությունների անդամներ էին, ուր և նրանք շարունակեցին իրենց գործունեությունը օկուպացիայի տարիներին։

Ռևանշիստները կոմունիստների նկատմամբ անհամեմատ սատակացան երկրի հիտլերյան օկուպացումից հետո։ Ֆաշիստներն իրենց բացահայտ և դաղտնի գործակալների միջոցով կազմակերպեցին, այսպես կոչված, «կոմունիստների ոս», որի հետևանքով օկուպացիայի տարիներին զոհվեցին պարտիայի անդամ-

[11] „Коммунистический интернационал", 1940, № 12, стр. 10.

ների 1/3 մասը՝ 25 հազար կոմունիստներ[12]։ Դրանց թվումն էին նաև ՉԿՊ այնպիսի ակնառավոր գործիչներ, ինչպիսիք էին Յուլիուս Ֆուչիկը, Իվան Սեկանինը, Էդուարդ Ուրկսը, եղբայրներ Օտտո և Վիկտոր Սինեկները, Բեդրժիխ Վացլավեկը, Յան Զիկան, Վացլավ Սինկուլը, Կարել Կրեյչին և շատ ու շատ ուրիշներ։ Հիտլերյան արյունարբու շներին հաջողվեց որսալ Կոմպարտիայի չորս ընդհատակյա կենտրոնական կոմիտեների անդամների, որոնց, դաղանային տանջանքներից հետո, սպանեցին։

Կոմունիստների մեծությունը կայանում էր նրանում, որ նրանք մահվան ճիրաններում անգամ չէին կորցնում հավատը դեպի ապագան ու զոհվում էին լուսաշող ապագայի համար։ Իրենց օրինակով նրանք ոգևորում, մահու և կենաց պայքարի էին կոչում ժողովրդին՝ ընդդեմ օկուպանտների։ «Հարազատ շնչ ժողովուրդ,—գրում է իր հրաժեշտի նամակում Սիլեզյան Օստրավի լեռնագործ բանվոր, կոմունիստ Յոզեֆ Մատուշեկը,—մենք այնուամենայնիվ կհաղթենք... Դու մինչև վերջ կհաստատես, ես ընկա նպատակից մի քանի քայլի վրա»[13]։

Լինելով երկրի և ազգի ազատագրական պայքարի մինչև վերջը հետևողական և ղեկավար միակ ուժը, ՉԿՊ անցավ խոր ընդհատակ և վերակազմավորեց իր շարքերը՝ ըստ երկրում տիրող ֆաշիստական դաժան ռեժիմի և մասսայական տեռորի պայմանների։ Նա բաժանվեց երկու մասի՝ Չեխիայի և Սլովակիայի կոմունիստական պարտիաների, որոնք ունեին իրենց ընդհատակյա կենտրոնական կոմիտեները և լրագրերը («Ռուդե պրավո» և «Հլաս Լյուդու»), մարզային, շրջանային և սկզբնական պարտիական կազմակերպությունները։ Ելնելով խստագույն կոնսպիրատիվ պայմաններից, պարտիայի ղեկավար օրգանների անդամները ոչ թե ընտրվում էին, այլ նշանակվում՝ 2—3 հոգի կազմով։

Հիտլերականների տեռորից ղերծ պահելու և Չեխիայի ու Սլովակիայի կոմունիստական պարտիաներին ընդհանուր և անխափան ղեկավարություն ապահովելու նպատակով ՉԿՊ ԿԿ որոշմամբ ՍՍՌՄ մեկնեցին Կլեմենտ Գոտվալդը, Յան Շվերման, Վիլյամ Շիրոկին, Կարել Բացիլեկը, Վացլավ Կոպեցկին, Բոհումիլ Կելերը և պարտիայի մի շարք այլ հանրաճանաչ գործիչներ, որոնք Մոսկվայում կազմակերպեցին պարտիական կենտրոն և մեծ դեր խաղա-

---

[12] Տե՛ս „Protokol VIII. Sjezdu", str. 50.

[13] „Poslední dopisy". Praha, 1946, str. 21—22.

ցին սեփական երկրի պատմական բախտում: Շնորհիվ կազմակերպված նահանջի, արդեն 1941 թվականի ամռանը երկրում գործում էր պարտիական ընդհատակյա կազմակերպությունների լայն ցանց:

Չիջելով իր լեգալ դիրքերը, ՉԿՊ-ն հենց սկզբից դրավեց հարմար անլեգալ դիրքեր և ակտիվ գործունեություն ծավալեց: 1938 թվականի հոկտեմբերի 20-ին, երբ լույս տեսավ ՉԿՊ ԿԿ օրգան «Ռուդե պրավո» թերթի վերջին լեգալ համարը, պարտիան անմիջապես ձեռնամուխ եղավ անլեգալ լրագրի հրատարակմանը: Պրագայի մի շարք թաղամասերում և արվարձաններում (Վրշովիցում, Պանկրացում և այլուր) կազմակերպվեցին առաջին դաշտանի տպարանները: Արդեն 1939 թվականի ամռանից տպահովվեց «Ռուդե պրավո» թերթի պարբերաբար (10—14 օրը մեկ անգամ) հրատարակումը (այն էլ 4—8 էջ ծավալով), որը հոկայական դեր խաղաց պարտիայի Կենտկոմի և պարտիական ու անպարտիական մասսաների միջև կենդանի կապի ամրապնդման գործում:

Բացի այդ, պարտիայի մարզային ու շրջանային կոմիտեները, ինչպես նաև առանձին տեղական կազմակերպություններ հրատարակում էին բազմաթիվ անլեգալ թերթիկներ («Պրավդա», «Սվոբոդա», «Ցել», «Չին», «Ուդար», «Իսկրա» և այլն)[14], դրքեր, բրոշյուրներ, թռուցիկներ, կոչեր և այլն, որոնց օգնությամբ ՉԿՊ-ն ժողովրդական լայն մասսաներին պայքարի էր հանում ընդդեմ օկուպանտների, ղեկավարում և ուղղություն տալիս այդ պայքարին:

1939 թվականի մարտի 15-ին հրապարակվեց կառավարության խայտառակ կապիտուլյացիան, իսկ 16-ին՝ Հիտլերի հրամանը այսպես կոչված «Չեխ-մորավական պրոտեկտորատի» կազմակերպման մասին, որն սկսվում էր «Չեխոսլովակիան դադարեց գոյություն ունենալուց» վիրավորական և սառեցուցիչ պնդումով: Ի պատասխան դրան ՉԿՊ-ն խոր ընդհատակից ազդարարեց, որ չեխ ժողովրդի պատմությունը չի ավարտվում 1939 թվականի մարտի 15-ով, որ չեխ ու սլովակ ժողովուրդները համառ պայքար կմղեն ընդդեմ օկուպանտների, որ բռնագրավված Չեխոսլովակիան երբեք չի դառնա Հիտլերի համար հուսալի և անվտանգ տերիտորիա:

1939 թվականի հոկտեմբերի 28-ին ընդհատակում գործող Կոմպարտիայի նախաձեռնությամբ Պրագայում, Բռնոյում, Կլադ-

---

[14] Բավական է նշել, որ միայն չեխական հողերում օկուպացիայի տարիներին լույս են տեսել շուրջ 50 անուն անլեգալ թերթիկներ:

նույում և պրովինցիալ շատ քաղաքներում տեղի ունեցան բազմամարդ ցույցեր՝ ընդդեմ օկուպանտների։ Նրանք հրաշալի օգնությամբ ցրեցին Պրագայի աշխատավորության ցույցը։ Ուսանողական թաղամասը և, հատկապես, համալսարանը, որը վերածվել էր շարժման կենտրոնի, բարբարոսաբար դնդակոծվեցին։ Ընդ որում մահացու վիրավորվեց ուսանող Յան Օպլետալը, որի թաղումը վերածվեց մայրաքաղաքի ուսանողության մասսայական ցույցի՝ ընդդեմ օկուպանտների։ Լինելով ուժերի առաջին խոշոր առճակատումը, այդ անցքերը օկուպանտներին ցույց տվեցին, որ չեխ ու սլովակ ժողովուրդները արդեն վեր են բարձրացնում ազգային-դիմադրողականության դրոշը։

Գնալով շարժումը ավելի էր ծավալվում։ Ելնելով կոնկրետ իրադրությունից, Կոմպարտիան բանվորներին կոչ էր անում «աշխատել առանց շտապելու»։ Դրա հետևանքով 1939—1941 թվականներին աճեցին սաբոտաժի ակտերը արդյունաբերության մեջ։ Բանվորները միտումնավոր կերպով բաց էին թողնում անորակ կամ ցածրորակ արտադրանք։ Հիտլերյան օկուպացիայի երրորդ տարեվերջին բանվորներն «աշխատանքի ելան», բայց արտադրանք դրեթե չավելացավ։ Սիստեմատիկ պայքար ծավալվեց ընդդեմ կողոպուտի, հարկադիր աշխատանքի, մթերքների և աշխատուժի Գերմանիա տեղափոխման։ Արդյունաբերության մի շարք օբյեկտներում տեղի ունեցան նշանակալից գործադուլներ, որոնց միջոցով ետ մղվեցին ձեռնարկատերերի և նրանց կից ֆաշիստական կառավարչությունների՝ բանվորների կենսամակարդակի վրա ձեռնարկած հարձակումները։ Այս տեսակետից հատկապես նշանակալից էին 1940 թվականի հոկտեմբերին Սլովակիայի Դանդլովա և 1941 թվականի սկզբին Կլադնոյի ավազանի Ռոննա հանքերում ծագած գործադուլները[15]։

Դիմադրողական շարժման ընդերքում աստիճանաբար սկիզբ էր առնում ազգային-ազատագրական շարժումը։ Քիչ չէին դեպքերը, երբ չեխ և սլովակ ժողովուրդների ազգային հերոսների հուշարձանների մոտ դրվում էին ծաղկեփնջեր, մորավական անտառներում և չեխական կարպատներում բարձրացվում ազգային դրոշ-

---

[15] Դանդլովայում ծագած գործադուլը, որին ջերմորեն համակրում էր տեղական բնակչությունը և նպաստում, ընդունեց այնպիսի չափեր, որ ֆաշիստները այն ճնշելու համար գործադրեցին ոչ միայն հետևակային զինված ուժեր, այլ նաև 6 տանկ ու 9 զրահակիր ավտոմեքենա (տե՛ս „Za svobodu českého a slovenského naroda", str. 124).

ներ և այլն։ Մշտապես ձեռքից-ձեռք էին անցնում հակաֆաշիստական անլեգալ թերթիկները և լրագրերը, որոնք նախապատրաստում էին մասսաներին համառ և հետևողական ազգային-ազատագրական պայքարի։

Բայց, ընդհանուր առմամբ, 1939—1941 թվականներին Չեխոսլովակիայում գերակշռում էին դիմադրողական շարժման պասիվ ձևերը և երկրում տիրում էր կարծեցյալ անդորր։ Անդրադառնալով այդ վիճակին, Յուլիուս Ֆուչիկը իր «1941 թվականի մայիսի 1-ը» հոդվածում գրում է, որ օկուպանտները սխալվում են տեսնելով Պրագայի մայիսմեկյան կարծեցյալ լռության մեջ իրենց հաղթանակը։ Այդ թվացող հանդարտի մեջ գտնվում է ֆաշիզմի մահացու վտանգը։ Այդ լռությունն ու հանդարտը նշանակում են, որ Չեխոսլովակիայի ժողովուրդները անցել են վճռական, մահու և կենաց պայքարի ու ավելորդ, անտեղի զոհեր չեն կամենում տալ։ Դա անդորր է, որ տիրում է փոթորկից առաջ[16]։

3. ՀԱԿԱՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԵԼՔԸ ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ

1941 թվականի ամռանը ֆաշիստական Գերմանիան զավթել էր գրեթե ամբողջ Արևմտյան Եվրոպան, տիրել նրա ռազմա-տնտեսական ռեսուրսներին։ Արդեն պատկվել էին հաջողությամբ ու դադարել նրա ցամաքային զորքերի մարտական գործողությունները Եվրոպայում և միայն ծովում ու օդում էին մարտեր մղվում Անգլիայի դեմ։

Օգտվելով Արևմուտքում ստեղծված բարենպաստ պայմաններից, հիտլերյան Գերմանիան ՍՍՌՄ-ի արևմտյան սահմանների երկարությամբ կենտրոնացրեց մի հսկայական բանակ (190 դիվիզիա) և խախտելով սովետա-գերմանական չհարձակման պակտը, 1941 թվականի հունիսի 22-ին ներխուժեց Սովետական Միություն՝ սոցիալիստական հասարակարգը տապալելու և սովետական ժողովրդին ստրկացնելու նպատակով։

Սովետական Միության ներգրավումը երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ աղդարարեց հիտլերյան Գերմանիայի վերջ-

---

[16] Տե՛ս Ю. Фучик, Избранные очерки и статьи, Изд-во Иностр. литературы, М., 1950, стр. 131 (հետագայում — Ю. Фучик, Избранные очерки и статьи).

նական չախչախման անխուսափելիությունը։ 1941 թվականի հուլիսի 11-ին «Ռուդե պրավո»-ն տպագրեց Յու. Ֆուչիկի «Դեպի մարտ՝ հանուն չեխ ժողովրդի ազատագրության» հոդվածը, ուր ընդգծվում էր, որ ուխտադրժորեն հարձակվելով ՍՍՌՄ-ի վրա, Հիտլերը, ըստ էության, ստորագրեց իր մահվան դատավճիռը։ «Հունիսի քսաներկուսին ժամը երեք անց հինգ րոպեին սկսվեց նացիստական քաղաքականության վերջին ակտը, սկսվեցին նացիզմի վերջին օրերը»[17]։

ՉԿՊ-ն հատուկ ուղերձով դիմեց ժողովրդին, որտեղ հանգամանորեն շարադրեց ընակչության բոլոր խավերի նոր խնդիրները՝ ազատագրական շարժման ընթացիկ էտապում։ Այդ ծրագրային փաստաթղթում, որ անլեգալ կերպով տպագրվեց և, իբրև թռուցիկ, տարածվեց երկրում, ընդգծված էր. «Հասել է ժամը, երբ մեր առելությունը պետք է վերածվի գործողությունների... Բանվորական պատիվը ձեզ հրամայում է հրաժարվել ձեր ստրկացնողներին ծառայելուց, հանդես չգալ մեր ազգային եղբայրների դեմ, որոնք մարտնչում են նաև մեր ազատագրության համար... Պայթեցրեք ռազմական էշալոնները, քանդեցեք երկաթուղային գծերը, հրկիզեցեք պահեստները..., Կազմակերպեցեք պարտիզանական ջոկատներ, պատրաստվեցեք թիկունքից ֆաշիստների վրա հարձակման... Բոլոր չեխոսլովակներ, կռվի ելեք և մինչ դադարեցնի պայքարը մինչև վերջին ստոր ֆաշիստը չոչնչացվի»[18]։

Մեկ մարդու պես ելնելով մահու և կենաց Հայրենական պատերազմի ընդդեմ հիտլերյան Գերմանիայի, սովետական ժողովուրդը իր առջև միաժամանակ խնդիր էր դնում օգնել Եվրոպայի ժողովուրդներին ազատագրվելու գերմանական իմպերիալիզմի ճնշումից, նրանց աջակցություն ցույց տալու իրենց ազգային անկախությունը վերականգնելու գործում։ Ելնելով վերոհիշյալ սկզբունքից, ՍՍՌՄ-ը 1941 թվականի հուլիսի 18-ին ճանաչեց Չեխոսլովակյան Ռեսպուբլիկան որպես սուվերեն, իրավահավասար և դաշնակից պետություն[19]։

---

[17] Ю. Фучик, Избранные очерки и статьи, стр. 132.

[18] Մեջ է բերված ըստ „Советско-чехословацкие отношения во время Великой Отечественной войны 1941—1945 гг.", Документы и материалы Министерств иностранных дел СССР и ЧСР. М., Госполитиздат, 1960, стр. 7—10 (հետագայում կրճատ— „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.").

[19] Տե՛ս „Внешняя политика Советского Союза в период Отечественной войны", Госполитиздат, том I, 1946, стр. 117—118.

Ըստ Համաձայնության երկրորդ հոդվածի, Սովետական Միությունը և Չեխոսլովակյան Ռեսպուբլիկան պարտավորվեցին ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պատերազմում «միմյանց ցույց տալ ամեն տեսակի օգնություն և աջակցություն»: Հատուկ հոդվածով նախատեսվում էր ՍՍՌՄ-ի տերիտորիայում և նրա աջակցությամբ չեխոսլովակյան ազգային զորամասերի կազմակերպում, որոնց հրամանատարները պետք է նշանակվեին Չեխոսլովակիայի լոնդոնյան կառավարության կողմից: Քանի որ պատերազմը մղվում էր սովետական հողում, ապա այդ զորամասերը պետք է գործեին ՍՍՌՄ Գերագույն ռազմական հրամանատարության ընդհանուր ղեկավարության ներքո և համագործակցած ՍՍՌՄ Զինված Ուժերի հետ:

Այդ Համաձայնությունը լուրջ նշանակություն ունեցավ Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայի համար: Դրանով վերականգնվեց նրա միջազգային-իրավական սուվերենիտետը: Երկիրն իր մինչմյունխենյան սահմաններով ճանաչվեց որպես ինքնուրույն պետություն: ՍՍՌՄ-ի նախաձեռնությունը անհետևանք չմնաց: Արևմտյան պետությունները ստիպված «դե-յուրե» ճանաչեցին Չեխոսլովակյան Ռեսպուբլիկան:

Հայրենական Մեծ պատերազմի սկիզբը և սովետա-չեխոսլովակյան Համաձայնությունը շրջադարձային կետ հանդիսացան, նոր էտապ բացեցին չեխերի ու սլովակների ազատագրական պայքարում: «Այժմ մենք դարձանք ավելի ուժեղ,—գրում է այդ կապակցությամբ Յու. Ֆուչիկը,—պասսիվ դիմադրության տարիները մնացին հետևում: Մենք սկսում ենք ակտիվ պայքար: Մենք անցնում ենք հակահարձակման, որովհետև միայն այդպիսով մենք կարող ենք փրկել Չեխոսլովակիայի ապագան»[20]: «Պասսիվ դիմադրությունից անցնել միլիոնների ակտիվ պայքարի,—այդպիսին է մեր լոզունգը, այդպիսին պետք է լինի մեր պայքարի այս նոր էտապի բովանդակությունը»[21],—ընդգծում էր Ֆուչիկը իր «Պետք է գործել» հոդվածում:

Չեխական հողերում Յուլիուս Ֆուչիկի, իսկ Սլովակիայում Վիլյամ Շիրոկու գլխավորությամբ վերականգնվեցին Չեխիայի և Սլովակիայի կոմունիստական պարտիաների կենտրոնական կոմիտեները, սկսեցին վերահրատարակվել նրանց կենտրոնական օր-

---

[20] Ю. Фучик, Избранные очерки и статьи, стр. 132.
[21] Նույն տեղում, էջ 142:

գանները, կապեր հաստատվեցին պարտիական և բանվորական մասսաների հետ։ ՉԿՊ ԿԿ Քաղբյուրոյի Մոսկվայում գտնված անդամների նախաձեռնությամբ ՍՍՌՄ-ի տերիտորիայում հիմնադրվեցին զաղտնի ռադիոկայաններ, որոնք մեծ դեր խաղացին Չեխոսլովակիայում ազգային-ազատագրական շարժման ծավալման գործում։

Այն ժամանակ, երբ ՉԿՊ-ն ոչ մի ջանք չէր խնայում երկրում հակաֆաշիստական, ազգային-ազատագրական պայքար կազմակերպելու համար, Չեխոսլովակիայի լոնդոնյան վտարանդիների կառավարությունը ամեն կերպ խոչընդոտում էր դրան։ Օգտագործելով լոնդոնյան ռադիոն, վտարանդիների կառավարությունը երկրի բնակչությանը բացեիբաց կոչ էր անում «ձեռնպահ մնալ ամեն տեսակի դեմոնստրացիաներից, գործադուլներից և նմանօրինակ այլ գործողություններից»[22]։

Բայց մասսաները չհետևեցին նրա կապիտուլյանտական կոչերին։ Շնորհիվ կոմունիստների ջանքերի, երկրում ծավալվեց հակաֆաշիստական պայքար։ Գործադուլների ալիքը, սկսվելով 1941 թվականի ամռանը, Չեխիայից տարածվեց դեպի Մորավիա և Սլովակիա։ Հանձնակի դարձան դիվերսիայի և սաբոտաժի ակտերը. օգոստոսի 30-ին մի խումբ հայրենասերներ Նախագում (Արևելյան Չեխիա) պայթեցրին բենզինի մի խոշոր պահեստ։ Սեպտեմբերին բոյկոտի ենթարկվեց ֆաշիստական և պրոֆաշիստական մամուլը[23]։

Կոմունիստների գործունեության հետևանքով չեխոսլովակյան զորամասերում ծայր առան խմորումներ։ Զինվորները չէին կամենում պատերազմել ընդդեմ եղբայրական սովետական ժողովրդի, առաջին իսկ հնարավորության դեպքում անհատապես կամ խմբերով անցնում էին ճակատային գիծը և սովետական մարտիկների հետ ուս-ուսի տված պայքարում հիտլերականների դեմ։ Զգալով աճող վտանգը, գերմանական հրամանատարությունը 1941 թվականի օգոստոսին ստիպված էր դրեթե ամբողջությամբ ետ կանչել սլովակյան դիվիզիաները սովետա-գերմանական ճակատից և դրանք օգտագործել Միկունքում[24]։ Բացի այդ, Չեխոսլովակիայում սաբոտաժի ակտերը կանխելու և ժողովրդական հուզումները ճնշե-

---

[22] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 21.

[23] Տե՛ս „Правда" 23.IX.1941.

[24] Տե՛ս „Правда", 26.VIII. 1941.

լու նպատակով գերմանական հրամանատարությունը ստիպված էր այնտեղ մշտապես պահել 250 հազարանոց օկուպացիոն բանակ[25]: Ծայր աստիճան սասակացվեցին ռեպրեսիաները: Ռազմական գործարանների յուրաքանչյուր 5 բանվորի կողքին, որպես կանոն, հերթապահում էր մարտականորեն պատրաստ հիտլերյան մեկ զինվոր: Մահապատիժ էր սպառնում բոլոր նրանց, ովքեր փոքրիշատե կասկածվեին սաբոտաժի կամ հակաֆաշիստական որևիցե գործունեության մեջ:

Օկուպացիոն ռեժիմը հարվածում էր հասարակական բոլոր խավերին և քաղաքական պարտիաներին՝ բանվորներին և գյուղացիներին, արհեստավորներին և ինտելիգենցիային, կոմունիստներին և սոցիալ-դեմոկրատներին, «ժողովրդական» և «Ագրարային» պարտիաների անդամներին ու շատ-շատերին: Ծածանելով ազգային-ազատագրության դրոշը, կոմունիստները համառ և հետևողական պայքար ծավալեցին բոլոր հակաֆաշիստական ուժերին պրոլետարիատի շուրջը համախմբելու և միասնական ճակատ կազմակերպելու համար: Ազգային միասնություն ընդդեմ Հիտլերի՝ այսպիսին է քաղաքական արտիստան Հայրենիքում,—ընդգծում էր Կոմպարտիան:

1941 թվականի ընթացքում կոմունիստներին հաջողվեց հակաֆաշիստական պայքարի մեջ ընդգրկել հասարակական տարբեր խավերի և քաղաքական պարտիաների, որոնց ներկայացուցիչներից կազմակերպվեցին Ազգային կոմիտեներ: Այդ կոմիտեների գործունեությունը աշխուժացնելու ու կոորդինացնելու, ինչպես նաև նրանց ընդհանուր ղեկավարությունն ապահովելու հարցերին հանդամանորեն անդրադարձավ ՀԿՊ ԿԿ 1941 թվականի Սեպտեմբերյան նիստը, որն ընդունեց այդ հարցերի վերաբերյալ պատմական որոշում: Այն ընդգծում էր միասնական ազգային ճակատի կազմակերպման, տեղական Ազգային կոմիտեների ամրապնդման, նրանց գործունեության կոորդինացման, ինչպես նաև միասնական ղեկավարության ապահովման հրատապ անհրաժեշտությունը:

Պարտիայի ընդհատակյա կազմակերպությունները հսկայական գործ կատարեցին այդ որոշումների կենսագործման ուղղությամբ: Անլեգալ թերթերում ու թռուցիկներում, ժողովներում ու հավաքույթներում, խմբակներում և այլուր կոմունիստները՝ վտանգի ենթարկելով իրենց կյանքը, հանդես էին գալիս և մասսաներին բացատրում ազգային միասնության կենսական անհրաժեշտությունը:

---

[25] Տես „Правда", 21.VII.1941.

«Օկուպանտների մահը մեր միասնության մեջ է,—գրում է այդ օրերին Յու. Ֆուչիկը իր «Մենք բոլորս ունենք մի նպատակ» հոդվածում,—...Անհրաժեշտ է առանց հապաղելու նվաճել ազգային միասնություն և այն աչքի լույսի պես պահպանել»[26]: «Հենց միասնության և մասսայականության մեջ է մեր զենքի ուժը,—գրում է նա «Միասին, կազմակերպված և համաձայնությամբ հասնել հաղթանակի» հոդվածում[27]:

Կոմունիստների ջանքերով ամրապնդվեցին դոյությունն ունեցող տեղական Ազգային կոմիտեները, հիմնադրվեցին նորերը, աշխուժացավ նրանց գործունեությունը, կապ հաստատվեց նրանց միջև, իսկ նույն թվականի (1941) սեպտեմբերի վերջին Պրագայում հիմնադրվեց Ազգային-ռևոլյուցիոն կենտրոնական կոմիտե: 1942 թվականի մարտին նման կոմիտե հիմնադրվեց նաև Սլովակիայում, Բրատիսլավայում:

Լինելով ժողովրդական լայն մասսաների ազգային վերելքի և ռևոլյուցիոն ակտիվության ծնունդ, Ազգային կոմիտեները կոմունիստների ջանքերով դարձան ազգային-ազատագրական շարժման մասսայական և ղեկավար օրգաններ: Նրանք շարժման այդ էտապում հսկայական դեր խաղացին ազգային միասնության հետագա ծավալման, ամրապնդման և հակաֆաշիստական շարժման ղեկավարման գործում: Իր առաջին իսկ կոչում, որն ուղղված էր Չեխոսլովակիայի բոլոր քաղաքացիներին և որը հավանություն էր ստացել ՉԿՊ Կենտկոմի կողմից, Պրագայի Ազգային-ռևոլյուցիոն կենտրոնական կոմիտեն ընդգծում էր, որ «նացիզմը ուզում է ոչնչացնել այն ամենը, ինչ չեխական է, ուստի այն ամենը, ինչ չեխական է պետք է բարձրանա, որպեսզի ոչնչացնի նացիզմը»:

1941 թվականի ձմռանը Կարմիր Բանակը, վերցնելով նախաձեռնությունը հիտլերյան զորքերից, հակահարձակման անցավ և Մոսկվայի տակ պարտության մատնեց նրանց: Այդ հաղթանակը ոչ միայն վերջնականապես խորտակեց «կայծակնային պատերազմի» հիտլերյան պլանը, նրա բանակի «անպարտելիության» առասպելը, այլ նաև «պայքարի ոգեշնչեց Եվրոպայի՝ հիտլերականների կողմից ստրկացված ժողովուրդներին, բարձրացրեց ֆաշիզմի ուժերին դիմադրելու նրանց ընդունակությունը»[28]:

---

[26] J. Fučík, Milujeme svůj národ, Sv. III, Praha, 1949, стр. 207.
[27] Ю. Фучик, Избранные очерки и статьи, стр. 150.
[28] «ՍՄԿՊ պատմություն», Երևան, 1959, էջ 668:

Չեխոսլովակիայի ժողովուրդները ջերմորեն ողջունեցին Կարմիր Բանակի պատմական հաղթանակը, որը նոր թափ հաղորդեց նրանց ազատագրական պայքարին: 1942 թվականի նոր տարվա արշալույսը նշանավորվեց Պրագայի Ազգային-ռևոլյուցիոն Կենտկոմի երկրորդ կոչով, որն ազդարարում էր դիմադրողական շարժման և ազգային միասնության հետագա ծավալում: Կոչում դատապարտվում էր ամեն ոք, ով ակտիվ կերպով չէր պայքարում հիտլերականների դեմ և, առավել ևս՝ նա, ով այս կամ այն ձևով օգնում էր նրանց: Չեխոսլովակյան հայրենասերներին հաջողվեց խորտակել երկաթուղային այն շարասյունը, որով հիտլերականները փորձում էին Արևելյան ռազմաճակատ տեղափոխել բնակչությունից բռնությամբ հավաքած տաք հագուստներն ու մթերքները[29]: 1942 թվականի դարնանը գործադուլ հայտարարեցին Պլզենի Շկոդյան գործարանի գնդացրի հավաքման ցեխի բանվորները: Ֆաշիստները կրակ բացեցին գործադուլավորների վրա, որի հետևանքով սպանվեց 17 բանվոր[30]: Բռնություն չեխոսլովակյան հայրենասերներին հաջողվեց զինաթափել գերմանական կայազորի բազմաթիվ զինվորներ[31], իսկ սլովակյան զորամասերում, որոնք ուղարկվում էին պատերազմի ՍՍՌՄ-ի դեմ, ծայր առան լուրջ հուզումներ և բացարձակ հակաֆաշիստական ելույթներ[32]:

Ժողովրդի աճող դիմադրությունը ջարդելու և նրան ընկճելու նպատակով հիտլերականները ծայր աստիճան սաստկացրին ռեպրեսիաները և տեռորը: Արտակարգ դրություն հայտարարվեց ամբողջ Չեխիայում ու Մորավիայում, հազարավոր խաղաղ բնակիչներ գնդակահարվեցին, տասնյակ հազարավորներ քշվեցին տաժանակիր աշխատանքի: 1942 թվականի ամռանը ձերբակալվեց ՉԿՊ-ի երկրորդ ընդհատակյա կենտկոմի կազմը[33], ջախջախվեցին պարտիական, պրոֆմիութենական և Ազգային կոմիտեների մի շարք տեղական կազմակերպություններ, տպարաններ և այլն: Ձերբակալվեցին նաև Սլովակիայի ԿՊ երկրորդ, իսկ այնուհետև՝ երրորդ ընդհատակյա կենտրոնական կոմիտեների անդամները:

---

[29] Տե՛ս „Правда", 17.I.1942:

[30] Տես նույն տեղում, 13.V.1942:

[31] Տես նույն տեղում, 28.V.1942:

[32] Տե՛ս Л. И. Недорезов, Национально-освободительное движение чешского и словацкого народов против немецко-фашистской оккупации в 1939–1945 годах. „Вопросы истории", 1953, № 7, стр. 92.

[33] Յուլիուս Ֆուչիկը, որին մատնել էր պրովոկատոր Ռայցինը, ձերբակալվել էր դեռևս 1942 թվականի ապրիլի 21-ին:

Բայց հիտլերականների հաշիվները չարդարացան։ Սրդենկ օգոստոսին վերստեղծվեցին Սլովակիայի ԿՊ չորրորդ, իսկ աշնանը՝ նաև Չեխիայի ԿՊ երրորդ ընդհատակյա կենտկոմները, որոնք՝ չնայած դաժան պայմաններին, վերականգնեցին կապերը պարտիական ու անպարտիական մասսաների հետ և շարունակեցին գլխավորել ազգային-ազատագրական շարժումը։ Պրագայի ընդհատակյա կոմունիստական «Դելնիցկե Նովինի» թերթը այդ օրերին ընդգծում էր. «Ո՛չ։ Ո՛չ տեսորով, ո՛չ էլ փողով հնարավոր չէ ջարդել ֆաշիզմին հասցվող անհաշտ հարվածը։ Չեխ ժողովուրդը գիտե, որ իր ապագան նա կպահպանի միայն նրանով, որ մեկ հարվածին կպատասխանի կրկնակի հարվածով... Պայքարը կհասցվի մինչև հաղթական վախճանը»[34]։

1942 թվականի մայիսին Մոսկվայում գտնվող չեխոսլովակյան հասարակական և քաղաքական գործիչները, որոնց մեծ մասը կոմունիստներ էին, հատուկ ուղերձով[35] դիմեցին հայրենի ժողովրդին, որով կոչ արեցին ամենակուռ միասնության և ակտիվ պարտիզանական կռիվների։ «Մեր ժողովուրդը այս կռվում միայնակ չէ,—ընդգծված էր ուղերձում,—նա սլավոնական ժողովուրդների հզոր ընտանիքի անդամ է, հարազատ եղբայրն է ռուս մեծ ժողովրդի, որն իր սրբազան Հայրենական պատերազմով գլխավորում է ամբողջ սլավոնականության և համայն առաջադեմ մարդկության պայքարը։ Մեր առջևում է քաջարի Կարմիր Բանակի, փառապանծ սովետական պարտիզանների օրինակը... Թո՛ղ մեր երկրում էլ հնչի մեր պանծալի նախնիներ Հուսյանների մարտակոչը՝ թշնամուց չ՝վախենալ, նրա թվին չ՝նայել, անխնա հարվածե՛լ նրան»։

Ուղերձում խիստ կերպով քննադատվում էր Չեխոսլովակիայի լոնդոնյան վտարանդիների դիրքորոշումը, որոնք շարունակում էին ժողովրդին պասսիվության կոչել, և ընդգծվում, որ արդի պայմաններում «դանդաղումը, տատանումները և սպասողականությունը նշանակում են մեծագույն վտանգի ենթարկել ազգի ամբողջ ապագան»։

Չնայած դրան, լոնդոնյան վտարանդիները և նրանց կառավարությունը շարունակեցին իրենց ռեակցիոն քաղաքականությունը։

---

[34] Մեջ է բերված ըստ С. Грачев, Помощь СССР народам Чехословакии в их борьбе за свободу и независимость, М., 1953, стр. 124.

[35] „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 35—37.

Անդրադառնալով այդ հարցին, պրեզիդենտ Բենեշը Նյու-Յորքում գտնված չեխոսլովակյան հաղորդագրությունների բյուրոյի վարիչին 1942 թվականի մայիսի 8-ին հետևյալը է. «Արդեն մի քանի ամիս շարունակվում է բանավեճը Լոնդոնի և Մոսկվայի միջև... Մոսկվայում գտնված չեխոսլովակյան ռադիոն հետևողականորեն կոչ է անում սաբոտաժների և ապստամբությունների, այն ժամանակ, երբ լոնդոնյանը... պահպանում է զգուշավոր (պասսիվության— Ս. Հ.) դիրք... Մենք շարունակում ենք և կշարունակենք դիրքն ունեցող դիրք... Մենք չունենք ազդեցություն (Չեխոսլովակիայի—Ս. Հ.) մոսկովյան ռադիոյի ագիտատորական քաղաքականության վրա և, հետևաբար, նրա համար չենք կրում պատասխանատվություն։

Այս ես հաղորդում եմ միայն Ձեր ինֆորմացիայի համար։ Բայց լավ չէր լինի բացեիբաց հակադրվել (дезавуировать) Մոսկվային»[36],—խորհրդանկում էր Բենեշը։

Հակառակ լոնդոնյան վարանողների կամքի, ազգային-ազատագրական պայքարը դնալով ավելի ծավալվում և խորանում էր, ծնունդ էին առնում այդ պայքարի ավելի ազդու ձևեր ու մեթոդներ։ Ինչպես ամենուր, այդպես էլ Չեխոսլովակիայում կոմունիստները հանդիսանում էին պարտիզանական շարժման նախաձեռնողները, կազմակերպիչները ու ղեկավարները։

«Բանվորներ և գյուղացիներ, զինվորներ և սպաներ, երիտասարդներ և ծերեր,—ընդգծված էր Չեխոսլովակիայի Մոսկվայում գտնված քաղաքական գործիչների 1942 թվականի մայիսյան ուղերձում,—համախմբվեցե՛ք զինված դրուժինաներում, կազմակերպեցե՛ք պարտիզանական ջոկատներ, ձեռք բերե՛ք զենք և պայթուցիկ նյութեր և ոչ մի բան հանդիսա մի՛ք տա օկուպանտներին։ Այդ են պահանջում չեխ և սլովակ ժողովուրդների ազգային պատիվը, կենսական շահերը։ Այդ է նրանց հրամայական խնդիրը»[37]։

Մայր Ուկրաինայում ծավալված պարտիզանական շարժման ազդեցության տակ 1941 թվականի վերջին ծագեցին առաջին պարտիզանական ջոկատները Անդրկարպատյան Ուկրաինայում, որը մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը մտնում էր Չեխոսլովակիայի մեջ, իսկ վերջինիս անդամահատումից հետո ընկել էր խորտիկան Հունգարիայի լծի տակ։ Արդեն 1942 թվականի ամռանը Անդրկարպատյան Ուկրաինայում պարտիզանական շարժումն

[36] „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 40—41.
[37] Տե՛ս նույն տեղում, էջ 36։

ընդգրկել էր ավելի քան 10 հազար մարդ[38]։ 1942 թվականի երկրորդ կեսին պարտիզանական ջոկատներ կազմակերպվեցին նաև Արևելյան Սլովակիայում, որոնք հաջողությամբ պայքարում էին հիտլերականների և նրանց տեղական կամակատարների դեմ։

Բայց, ընդհանուր առմամբ, 1942 թվականը ինչպես ՍՍՌՄ-ի, այնպես էլ հիտլերյան լծի տակ ընկած եվրոպական ժողովուրդների համար շափազանց ծանր տարի էր։ Բավական է նշել, որ 1942 թվականի աշնանը թշնամու ձեռքում էին գտնվում ոչ միայն Կենտրոնական Եվրոպայի բազմաթիվ երկրներ, այլ նաև ՍՍՌՄ-ի տերիտորիայի մի հսկայական մասը, որտեղ պատերազմից առաջ ապրում էր նրա բնակչության 45 տոկոսը, արտադրվում էր արդյունաբերության ամբողջ համախառն արտադրանքի 33 տոկոսը և կենտրոնացված էր բոլոր ցանքատարածությունների 47 տոկոսը։ Հիտլերյան հորդաներն սպառնում էին Վոլգոգրադին, որի մատույցներում ծավալված մարտերին գամված էր ամբողջ աշխարհի, այդ թվում նաև Չեխոսլովակիայի ազատասեր ժողովուրդների ուշադրությունը։ Նրանք գիտակցում էին, որ իրենց պայքարի գլխավոր թատերաբեմը սեփական երկիրն է, բայց այդ պայքարի ելքը վճռվում է վերջին հաշվով սովետա-գերմանական ռազմաճակատում։

1942 թվականի սեպտեմբեր-նոյեմբերին հերոսական Կարմիր Բանակը կասեցրեց թշնամու առաջխաղացումը, խլեց նախաձեռնությունը նրանից, անցավ հակահարձակման և 1943 թվականի հունվար-փետրվարին գլխովին ջնջեցրեց գերմանա-ֆաշիստական զորքերի 22 ընտիր դիվիզիաներ։ Այդ երեք օրերը, որ հայտարարել էին հիտլերականները այդ կապակցությամբ, ազատասեր ժողովուրդների, այդ թվում չեխերի ու սլովակների համար դարձան հրճվանքի օրեր և ազատության կարապետներ։

Այդ պատմական հաղթանակը Հայրենական մեծ պատերազմի և ամբողջ համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքի մեջ արմատական բեկման սկիզբ դրեց, որն ավարտվեց 1943 թվականի հունիսին՝ Օրյոլ-Կուրսկի ուղղությամբ Կարմիր Բանակի տարած նոր հաղթանակով։ Հիտլերյան զորքերի պարտությունը խթան հանդիսացավ Գերմանիայի կողմից օկուպացված երկրներում, այդ թվում նաև Չեխոսլովակիայում ծավալված ազգային-ազատագրական շարժման նոր և բուռն վերելքի համար։ Կոմունիստները ամե-

---

[38] Տե՛ս „Правда“, 15.IV.1942։

նայն սրությամբ դրեցին ազգային միասնության և պարտիզանական շարժման ընդլայնման ու խորացման հարցերը։ Նրանց նախաձեռնությամբ 1943 թվականի մայիսի 1-ին կոմունիստական, սոցիալ-դեմոկրատական և ազգային-սոցիալիստական պարտիաները, որոնք փաստորեն ներկայացնում էին Չեխոսլովակիայի ամբողջ բանվոր դասակարգը, համատեղ կոչով դիմեցին ողջ ժողովրդին, որտեղ ընդգծեցին համազգային զինված դիմադրության, օկուպանտների դեմ զինված պայքարի, միասնական բանվորական և միասնական ազգային կոմիտեների կազմակերպման անհրաժեշտությունը։ Այդ կոմիտեները պարտավոր էին ընդգրկել ազգի բոլոր հայրենասիրական ուժերի ներկայացուցիչներին և լինել ազգային միասնության, դիմադրողական շարժման ղեկավար, ազգի սուվերենության օրգաններ։

1943 թվականի մայիսմեկյան համատեղ կոչը հանդիսանում էր Ազգային ճակատի կազմակերպական ձևավորման առաջին փորձը, որը, դժբախտաբար, չտևեցավ հետագա զարգացում։ Ազգային ճակատին հարող 3 բանվորական պարտիաների քաղաքական վերախմբավորման պրոցեսը, որը սկսվեց այդ կոչով, շարունակվեց 1944 թվականին։

1943 թվականի հուլիսին տեղի ունեցավ ՉԿՊ-ի ընդհատակյա Կենտկոմի պլենում, որը հանգամանորեն քննարկեց ազգային միասնության ամրապնդման ու պարտիզանական շարժման ակտիվացման միջոցառումների հարցը և ընդունեց համապատասխան որոշումներ։ ՉԿՊ-ի ընդհատակյա Կենտկոմին կից ստեղծվեց հատուկ բաժին, որը զբաղվում էր պարտիզանական ջոկատների կազմակերպման, զինման և այլ հարցերով։ Չեխոսլովակիայում գործող պարտիզաններին մշտապես օգնում էր Սովետական Միությունը և հատկապես պարտիզանական շարժման Ուկրաինական շտաբը[39]։

Շնորհիվ այդ ամենի, արդեն 1943 թվականի աշնանը նկատելի դարձավ պարտիզանական շարժման որոշակի վերելք։ Օլոմուցում, Օստրավայում, Չեխո-Մորավական բարձրավանդակում և մի շարք այլ շրջաններում ակտիվ մարտական գործողություններ ծավալեց «Յան Ժիժկան Տրոցնովից» պարտիզանական ջոկատը, որին հաջողվեց զգալի վնաս տալ հիտլերականներին, շարքից դուրս

[39] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 275.

բերել առանձին երկաթուղագծեր ու էշելոնաշարասյուններ, խափանել Վարշավա-Պրագա հեռախոսագիծը, կտրել հաստատել և համագործակցել այլ վայրերում, ինչպես նաև Սլովակիայում գործող պարտիզանական ջոկատների հետ և այլն[40]։

Պարտիզանական շարժումներն ավելի լայն չափեր ընդունեցին Սլովակիայում, որի բնությունը անհամեմատ նպաստավոր էր պարտիզանական մարտերի համար, քան Չեխ-Մորավական բարձրավանդակը։ Արդեն 1943 թվականի սկզբին կազմակերպվեց և Արևելյան Սլովակիայում ակտիվ կռիվներ ծավալեց «Զապադնի» անվան պարտիզանական ջոկատը, իսկ բարձր Տատրայի լեռնաշխարհում համանուն («Բարձր Տատրա») պարտիզանական խոշոր ջոկատը։ Բացի չեխերից ու սլովակներից այդ ջոկատներում դրական դեր էին խաղում նաև գերմանական համակենտրոնացման ճամբարներից փախած սովետական ռազմիկները[41], որոնք, իրենց չեխ և սլովակ եղբայրների հետ ուս-ուսի տված, համառ մարտեր ծավալեցին հիտլերականների թիկունքում[42]։

Պարտիզանական շարժման ծավալումը սլովակյան զորամասերում առաջ բերեց հայրենասիրական բուռն վերելք, որոնք պատերազմի հենց սկզբից վստահություն չէին ներշնչում հիտլերականներին և օգտագործվում էին Ուկրաինայի և Բելոռուսիայի մի շարք օկուպացված տերիտորիաներում «կարգը պաշտպանելու» նպատակով։ Սլովակյան հսկողական դիվիզիայի մարտիկները ցուցաբերում էին բարյացակամ վերաբերմունք դեպի տեղական բնակչությունը, նրանցից շատերը կապ էին պահպանում բնակիչների հետ, նախազգուշացնում նրանց պատժիչ ջոկատների հարձակումներից, աջակցում երիտասարդներին թաքնվել ու խույս տալ Գերմանիա

[40] Տե՛ս „KSČ v boji za svobodu", Praha, 1949, str. 167—168.

[41] 1943 թվականին, օրինակ, հիտլերյան գերությունից փախած սովետական կապիտան Ալեքսեյ Եմելյանովը Նրան հաջողվեց Արևելյան Սլովակիայում կազմակերպել պարտիզանական մի խոշոր ջոկատ, որը պատմության մեջ մտավ «Եմելյան Պուգաչով» անվան տակ։ Ջոկատը բազմապիսի վնասներ պատճառեց հիտլերականներին. ընդհարումներից մեկի ժամանակ (1944 թվականի հուլիսին) Ա. Եմելյանովը ընկավ հերոսի մահով Զենք կարող ազգային հպարտությամբ չնշել, որ այդ ջոկատի վերկազմման գործում հնարավորինս դեր խաղաց և հերոսաբար զոհվեց, դարձյալ գերությունից փախած՝ սովետական մայոր Բակով Իլիկյանը։

[42] Չեխ ու սլովակ և սովետական մարտիկների եղբայրական համագործակցության մասին պարտիզանական կռիվներում մանրամասն տես С. Грачев и Ф. Петров, Плечом к плечу, о боевом товариществе советских и чехословацких воинов, Воениздат, М., 1958, стр. 61—80.

բշվելուց և այլն։ «Մեր պարտիզանական կռիվների ամբողջ ընթացքում,—հիշում է Ուկրաինայի և Բելոռուսիայի տերիտորիայում գործող պարտիզանական մեկ խոշոր միավորման հրամանատար, Սովետական Միության Հերոս գեներալ մայոր Ա. Ն. Սաբուրովը,— մենք երբեք չենք հանդիպել օկուպացիոն զորքերի, որոնք իրենց այնպես պահեին, ինչպես սլովակները»[43]։

Սլովակյան հսկողական դիվիզիայի շատ զինվորներ և անգամ առանձին հրամանատարներ չէին սահմանափակվում բնակչության հետ կապեր հաստատելով և նրանց աջակցելով, այլ անհատապես կամ խմբերով անցնում էին պարտիզանների կողմը։ Այս տեսակետից հիշատակության է արժանի Սլովակյան հսկողական դիվիզիայի 101 գնդի շտաբի պետ կապիտան Յան Նալեպկան (Ռեսկինը), որին հաջողվեց կապվել Բելոռուսիայի տերիտորիայում գործող Սաբուրովի պարտիզանական ջոկատի հետ, հայտնել նրան թշնամու պլանների մասին և դրանով իսկ նպաստել պարտիզանների հաջող մարտական գործողություններին հիտլերականների թիկունքում։

Գեստապոյականները, ելնելով ֆաշիստական պատժիչ ջոկատների անհաջողություններից, հատուկ հսկողություն սահմանեցին սլովակյան գնդերի վրա։ Չդալով վերահաս վտանգը, Նալեպկան 1943 թվականի մայիսի 14-ին սլովակյան մարտիկների մեծ խմբով անցավ Սաբուրովի պարտիզանական ջոկատի կողմը։ Նրա հրամանատարությամբ կազմակերպվեց 800 հոգուց բաղկացած Սլովակյան ազգային պարտիզանական գումարտակ, որի տրամադրության տակ կար երկու ծանր և մեկ թեթև գնդացիր, 9 ավտոմատ և 31 հրացան։ Ջոկատն օրեցօր համալրվում էր նոր մարտիկներով և ղղալի քայքայիչ գործունեություն ծավալում թշնամու թիկունքում։ Համագործակցած գեներալ մայոր Ա. Ն. Սաբուրովի պարտիզանական միավորման հետ, Սլովակյան ազգային պարտիզանական ջոկատը 1943 թվականի աշնանը ակտիվ մասնակցություն ունեցավ Ելսկի և Դավիդգորոդկայի ազատագրական մարտերին։ Նոյեմբերի 16-ին ուկրաինական Օվրուչ քաղաքի ազատագրման համար մղված մարտերում սպանվեց սլովակ ժողովրդի քաջարի զավակ Յան Նալեպկան, արժանանալով Սովետական Միության Հերոսի պատվավոր կոչման[44]։

---

[43] „Славяне", 1958, № 6, стр. 40

[44] Սովետական ժողովուրդը վառ է պահում հերոսի հիշատակը։ Ներկայումս Օվրուչի կենտրոնական հրապարակում վեր է խոյանում նրա հու-

ՉԿՊ զեկավար գործիչները, հենվելով Սովետական Միության բազմակողմանի օգնության և աջակցության վրա, արդեն 1942 թվականի վաղ գարնանը ձեռնամուխ եղան ՍՍՌՄ-ի տերիտորիայում չեխոսլովակյան բանակի առաջին դումարտակի կազմակերպմանը: Չեխոսլովակիայի լոնդոնյան վարանդիների կառավարությունը ամեն կերպ խոչընդոտում էր այդ զորամասերի կազմակերպմանը, լրջորեն սնահանդատանում, որ դրանք երկրի ազատագրումից հետո կարող են դառնալ Չեխոսլովակիայի նոր, ռևոլյուցիոն բանակի մի-



Կապիտան Յա. Նալեպկան և գեներալ-մայոր Ա. Ն. Սաբուրովը (1943 թ. հոկտեմբեր):

ջուկը[45]: *Ավելին. երբ բանակային առաջին դումարտակի կազմակերպումն ավարտված էր, Բենեշի կառավարությունը ՍՍՌՄ-ում գտնվող ռազմական պատվիրակության միջոցով, որը գլխավորում էր հետագայում մերկացված և գնդակահարված անգլիական գաղտնի գործակալ գեներալ Գ. Պիկան, ջանում էր չեխոսլովակյան ազգային զորամասերը ղեր ի պահել կոմունիստների ազդեցությունից, տարբեր առիթներով արգելել նրանց ընդգրկումը այդ զորամասերի*

շարքերը, իսկ կենտրոնական փոստոցներից մեկը կրում է նրա պատվո անունը: (Մանրամասն նրա կյանքի և հերոսական գործունեության մասին տե՛ս Д. Берлинский и М. Погребинский, Подвиг Яна Наленки, М., Воениздат, 1959).

[45] *Տե՛ս* „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 42—44, 47—48.

մեջ, մատնել այդ զորամասերը պասիվության, իսկ պատերազմի հաղթական ավարտից հետո օգտագործել երկրում կապիտալիստական կարգերը վերականգնելու համար[46]:

ՉԿՊ-ն հենց սկզբից վճռական հակահարված հասցրեց լոնդոնյան ռեակցիոներներին և նրանց գործակալներին: 1942 թվականի մայիսի 27-ին Բուդուլուկում չեխոսլովակյան նորաստեղծ դիմադրության անձնակազմի առջև ընդարձակ ճառով հանդես եկավ Կլեմենտ Գոտվալդը: Լուսաբանելով երկրում ծավալված ազատագրական շարժման և նրանից դուրս կազմակերպված ազգային զորամասերի խնդիրները, տեղը և դերը հայրենիքի ազատագրման գործում, նա ընդգծեց, որ բուն Չեխոսլովակիան է չեխ և սլովակ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հիմնական թատերաբեմը, որ չեխոսլովակյան զորամասերի պայքարը երկրի ազատագրման համար արտաքինից, արտաքսմանից «օժանդակ հոսանք է և ենթակա Հայրենիքում ծավալված շարժման»: Ուստի «ազատագրված երկրում բոլոր սոցիալական, քաղաքական և ազգային հարցերի ապագա լուծումը, ինչպես նաև նրա միջազգային հարաբերությունների կարգավորումը ժողովուրդը կվերցնի իր վրա»: Անդրադառնալով լոնդոնյան վտարանդիներին, որոնք կարծում էին, որ Հիտլերի վերջնական ջախջախումից հետո կվերադառնան հայրենիք և «կտանձեն ժողովրդին», «կվերականգնեն (մինչմյունխենյան—Ս. Հ.) կարգերը», կոմունիստները ընդգծում էին, որ «նման մարդկանց անհրաժեշտ է, ինչպես ասում են, կարգի հրավիրել»[47]:

Շնորհիվ կոմունիստների ջանքերի և Սովետական Միության անշահախնդիր օգնության ձախողվեցին լոնդոնյան ռեակցիոներների մտադրությունները՝ ՍՍՌՄ-ի տերիտորիայում հաջողությամբ ընթացավ չեխոսլովակյան ազգային զորամասերի կազմակերպումը: Նրանք անընդհատ համալրվում էին Կարմիր Բանակի կողմն անցած չեխոսլովակյան հայրենասերներով. բավական է նշել, որ 1943 թվականի հոկտեմբերի 30-ին Մոլոչնայա գետի ափին գտնվող Մելիտոպոլի շրջանում Կարմիր Բանակի կողմն անցավ Սլովակյան առաջին հետիոտն դիվիզիան՝ իր ամբողջ անձնակազմով և սպառազինությամբ: Եթե 1942 թվականի փետրվարին ՍՍՌՄ-ում կազմակերպված չեխոսլովակյան ազգային զորամասը իրենից ներկայացնում էր մի դիմադրական 214 զինվորով և սպայով, ապա 1944

---

[46] Տե՛ս Zd. Fierlinger, Ve sluŽbach ČSR, díl III. Praha, 1949, str. 63.

[47] Տե՛ս К. Готвальд, Избранные произведения, том II, стр. 28—31.

թվականին այն դարձավ 16 հազարանոց բանակային կորպուս, որի կազմի մեջ մտնում էին չեխոսլովակյան 1-ին և 2-րդ բանակային բրիգադները, 3-րդ շարքային բրիգադան, հատուկ տանկային և պարաշյուտային բրիգադաները, կապի և սակրավորական գումարտակները և ավիացիոն գունդը, հրետանային և այլ տեխնիկական զորամասեր[48]:

Չեխոսլովակյան բանակային կորպուսի կազմակերպման, նրա մարտիկների և սպայական կազմի ռազմական ու քաղաքական ուսուցման գործում մեծ դեր խաղաց Վորոնեժյան ռազմաճակատի հրամանատարությունը և, հատկապես, այդ ճակատի Ռազմական խորհրդի անդամ Ն. Ս. Խրուշչովը, որը «մշտապես հոգատարություն և հատուկ ուշադրություն» էր ցուցաբերում Չեխոսլովակյան բանակային կորպուսի կազմակերպման, նրա սպառազինման, հրամկազմի և մարտիկների ռազմա-քաղաքական ուսուցման նկատմամբ[49]:

Չնայած բենեշյան ինտրիգներին, Սովետական Միությունում կազմակերպված չեխոսլովակյան ազգային զորամասը 1942 թվականի օգոստոսին դիմեց ՍՍՌՄ Զինված Ուժերի Գերագույն Գլխավոր հրամանատարությանը և խնդրեց թույլ տալ մասնակցելու սովետա-գերմանական ճակատում ծավալված ռազմական գործողություններին: «Այդ մեղանից պահանջում է պարտքը հայրենիքի և առաջադեմ մարդկության առջև»,—ընդգծված էր նամակում[50]: 1943 թվականի հունվարի 30-ին, երբ ավարտված էր գումարտակի մարտական ուսուցումը, հարգվեց նրա խնդրանքը:

1942 թվականի մարտի 8—13-ը Խարկովի տակ, Մժա գետի ափին ընկած Սոկոլովո գյուղի մոտ չեխոսլովակյան բանակային առաջին գումարտակը ստացավ իր մարտական մկրտությունը: Համագործակցած Սովետական 25-րդ և 62-րդ գվարդիական դիվիզիաների հետ, գումարտակը ետ շպրտեց թշնամու գերակշռող ուժերը: Չեխ ժողովրդի զավակ Օտակար Յարոշը, որն ընկավ այդ մարտում, առաջին օտարերկրացին էր, որ արժանացավ Սովետական Միության Հերոսի բարձր կոչմանը:

---

[48] Այդ բանակային կորպուսից 1945 թվականի մարտին ծնվեց Չեխոսլովակիայի բանակը (տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 229—234), որի ամբողջ սպառազինությունը անվճար կերպով տվեց Սովետական Միությունը (տե՛ս նույն տեղում, էջ 236):

[49] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 73—74, 80—81.

[50] Տե՛ս նույն տեղում, էջ 50—51:

ՍՍՌՄ-ում կազմակերպված չեխոսլովակյան ազգային զորամասերը, որոնք հիմք դրեցին Չեխոսլովակիայի նոր, ռևոլյուցիոն, ժողովրդական բանակին, անցան փառապանծ մարտական ուղի՝ Սոկոլովոյից—Պրագա: Նրանց սխրագործությունները սովետա-գերմանական ռազմաճակատում խթանում էին Հայրենիքի դաժան պայմաններում ծավալված չեխ և սլովակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը, ուժ և եռանդ հաղորդում նրանց պայքարին, վստահություն ներշնչում դեպի հաղթական ավարտն: «Ռուդե պրավո» թերթի 1943 թվականի մարտի 15-ի համարը, ուր զետեղված էր հաղորդում չեխոսլովակյան գումարտակի անդրանիկ ճակատամարտի և առաջին մարտական մկրտության մասին, ձեռքից-ձեռք էր անցնում և ոգևորում չեխ ու սլովակ ժողովուրդներին պայքարելու ընդդեմ օկուպանտների[51]:

Սովետական Բանակի փայլուն հաղթանակները ռազմաճակատում, ՍՍՌՄ-ի տերիտորիայում չեխոսլովակյան ազգային զորամասերի կազմակերպումը և երկրում ծավալված ազգային-ազատագրական շարժումը ակնհայտորեն վկայում էին, որ հիտլերյան օկուպացումից Չեխոսլովակիան կազատագրվի միայն և միայն ՍՍՌՄ-ի միջոցով: Այս հանգամանքը չէր կարող հաշվի չառնել Չեխոսլովակիայի լոնդոնյան կառավարությունը: Նրան քաջ հայտնի էին այն արմատական-դեմոկրատական տրամադրությունները, որոնք տիրապետող էին երկրի բնակչության և շատ քաղաքական գործիչների շրջաններում: Դեռևս 1942 թվականի սեպտեմբերի 17-ին Դ. Պիկան Բենեշին հեռագրել է այդ գործիչներից մեկի հետևյալ վճռական հայտարարությունը. «Եթե պրեզիդենտը հանդես չգա ՍՍՌՄ-ում գտնված չեխոսլովակյան քաղաքական խմբավորման ծրագրի կողմնակից, ապա նա պրեզիդենտ չի՛ լինի»[52]:

Նման պարագաներում Չեխոսլովակիայի վարչապետների լոնդոնյան կառավարությունը ստիպված էր Բենեշին արտաքուստ, ձևականորեն իրեն ցուցաբերելու որպես ՍՍՌՄ-ի և չեխ ու սլովակ ժողովուրդների «բարեկամի», որպեսզի պատերազմից հետո ճանաչվի որպես Չեխոսլովակյան ռեսպուբլիկայի կառավարություն և վերադառնա Հայրենիք: Ահա թե ինչու 1943 թվականի վերջին Բենեշի կառավարությունը, որը մշտապես խույս էր տալիս ՍՍՌՄ-ի հետ բարեկամության, փոխադարձ օգնության և հետպատերազմյան

---

[51] Մանրամասն այդ մասին տե՛ս „Рождение Чехословацкой Народной Армии", Сборник статьей, М., Воениздат, 1959.

[52] „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 53.

համագործակցության պայմանագիր կնքելուց, ստիպված կնքեց այդպիսին[53]:

1943 թվականի դեկտեմբերի 12-ին Մոսկվայում կնքած Սովետա-չեխոսլովակյան պայմանագիրը[54] իրենից ներկայացնում էր 1941 թվականի հուլիսի 18-ի Համաձայնության հետագա և օրինաչափ զարգացումը: Նա երկու կողմերին պարտավորեցնում էր առկա պատերազմում համատեղ պայքարել հիտլերյան Գերմանիայի և նրա սատելիտների դեմ, իսկ հետպատերազմյան ժամանակաշրջանում ապահովել մշտական բարեկամություն և սերտ համագործակցություն: Հատուկ հոդվածով (2) արգելվում էր Գերմանիայի կամ նրա սատելիտների հետ կնքել կոմպրոմիսային կամ սեպարատ հաշտություն: Եթե պայմանավորվող կողմերից մեկը հետպատերազմյան ժամանակաշրջանում ենթարկվի նոր ագրեսիայի Գերմանիայի կամ նրա որևէ դաշնակցի կողմից,—ընդգծված էր երրորդ հոդվածում,—ապա մյուս կողմը պետք է անհապաղ կերպով իր դաշնակցին ցույց տա «ամեն տեսակ ռազմական և այլ աջակցություն ու օգնություն»:

Ըստ պայմանագրի 4-րդ հոդվածի, հարաբերությունները երկու երկրների միջև խարսխվելու են իրավահավասարության, սուվերենության և միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների վրա. ընդ որում ընդգծվում էր, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում երկու կողմերը պետք է իրար ցույց տան «ամեն տեսակի տնտեսական փոխադարձ օգնություն»: Պայմանագիրը ուժի մեջ էր մտնում նրա ստորագրումից անմիջապես հետո և պահպանում այն 20 տարի:

Պայմանագրին կից ստորագրվեց նաև հատուկ Արձանագրություն[55], ըստ որի կողմերի փոխադարձ համաձայնությամբ այդ պայմանագրին կարող է միանալ այնպիսի երրորդ պետություն, որը սահմանակից է Սովետական Միությանը կամ Չեխոսլովակյան Ռեսպուբլիկային և ընթացիկ պատերազմում հանդիսացել է գերմանական ագրեսիայի օբյեկտը:

Այդ պայմանագիրը կանխորոշեց Չեխոսլովակիայի պատմա-

---

[53] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 60, 63—65, 71—72, 84, 96, 105, 117—118, 126—127.

[54] Տե՛ս „Внешняя политика Советского Союза в период Отечественной войны", том I, Огиз, 1946, стр. 430—432.

[55] Там же, стр. 433.

կան բախտը, դրեց նրա ապագա ազգային ու պետական կյանքի անսասան հիմքերը, դարձավ նրա անկախության և ազատության երաշխիքը։ 1943 թվականի դեկտեմբերի 12-ը մտավ չեխ և սլովակ ժողովուրդների պատմության մեջ որպես նրանց ամենահոյակապ օրերից մեկը[56]։

4. ՀԱՂԹԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ

Սովետական Բանակի առաջխաղացումը դեպի Չեխոսլովակիայի սահմանները, Սովետա-Չեխոսլովակյան 20-ամյա պայմանագրի կնքումը, ինչպես նաև ՍՍՌՄ-ում կազմակերպված չեխոսլովակյան ազգային զորամասերի աճող հաջողությունները Չեխոսլովակիայում առաջ բերեցին պարտիզանական շարժման շեշտակի վերելք։ Ընդ որում հանդես եկան այդ շարժման նոր, ավելի բարձր ձևեր։ Պարտիզանական ջոկատները, որոնք մշտապես համալրվում էին նորանոր հայրենասերներով, միանում և կազմում էին խոշոր պարտիզանական միավորումներ։ Նրանք ձեռնարկում էին լուրջ մարտական օպերացիաներ, ազատագրում և իրենց ձեռքում էին պահում ամբողջ շրջաններ։ Բավական է նշել, որ 1944 թվականի վաղ գարնանը Արևելյան Սլովակիայում գործող Զապատաևի, Օշանեկովի և Պուզաչովի անվան պարտիզանական ջոկատները միացան և սլովակյան ժողովրդի հերոս կոմունիստ Լյուդովիտ Կուկորելու գլխավորությամբ կազմեցին Զապատաևի անվան չեխոսլովակյան առաջին պարտիզանական բրիգադան։ Վերջինս ազատագրեց հսկայական տերիտորիա, որը ստացավ «Պարտիզանական Ռեսպուբլիկա» անունը[57]։

Կրնկակոխ հետապնդելով ֆաշիստական գազանին, Կարմիր Բանակը 1944 թվականի ապրիլին մտավ Կարպատների նախալեռ-

---

[56] Ամեն տարի Չեխոսլովակիայի ժողովուրդները նշում են այդ պայմանագրի կնքման տարեդարձը։ Սովետա-չեխոսլովակյան բարեկամության միամսյակը, որպես կանոն, սկսվում է հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակի օրը (նոյեմբերի 7-ին) և տևում է մինչև սովետա-չեխոսլովակյան 20-ամյա պայմանագրի կնքման օրը (դեկտեմբերի 12-ը), որը վեր է ածվել տարեկան ժողովրդական տոնի։

[57] Տե՛ս М. Кронилак, Восстание 1944 года—важнейшее событие в истории национально-освободительной борьбы словацкого народа, „Вопросы истории", 1959, № 9, стр. 91—105.

ները և դուրս եկավ ՍՍՌՄ ու Չեխոս ովակիայի պետական սահմաններին մոտ։ Միաժամանակ Սովետական Միությունը ընդլայնեց չեխ և սլովակ հայրենասերներին ցույց տրվող օժանդակությունը և օգնությունը[58]։ Կիևի պատի հիմնադրվեցին պարտիզանական շարժման ղեկավարների ուսուցման կուրսեր, որտեղ սովետական հմուտ մասնագետների օգնությամբ կարճ ժամանակամիջոցում չեխ և սլովակ մարտիկներից պատրաստվեցին պարտիզանական շարժման ղեկավար գործիչներ և կազմակերպվեց չեխոսլովակյան պարաշյուտային-դեսանտային բրիգադան[59]։

Երկու ամսվա ընթացքում (1944 թվականի հուլիս-օգոստոս) միայն Սլովակիա պարաշյուտով իջեցվեցին 24 դեսանտային խմբեր, որոնք ի հաշիվ տեղական բնակչության անընդհատ համալրվում էին, աճում և վերածվում պարտիզանական խոշոր միավորումների։ Շատ տեղերում փաստական իշխանությունը ստանձնել էին ազգային կոմիտեները, կամ՝ ազգային պարտիզանական շտաբները։ Երկրում տիրում էր ռևոլյուցիոն սիտուացիա և օրերի հարց էր ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի բռնկումը[60]։

Չեխոսլովակիայի լոնդոնյան վարչանդինների կառավարությունը ձգտում էր ռազմական դավադրության միջոցով տապալել Տիսոյի և Տուկայի ֆաշիստական դիկտատուրան Սլովակիայում, անջատել այն Գերմանիայից և դրանով իսկ ստանձնել ժողովրդին, բացառել այնտեղ հասունացած ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի բռնկման հնարավորությունը ու Սլովակիան վերածել աջակցա չեխոսլովակյան բուրժուական ռևանշիզմի վերականգնման բազայի[61]։ Այդ մտադրությունների կենսագործմանը լուրջ աջակցություն էր ցույց տալիս Սլովակյան Ազգային խորհուրդը, որի ղեկավարությունը իրենց ձեռքն էին վերցրել սլովակյան բուրժուազիայի ներկայացուցիչները։

Հակահարված տալով լոնդոնյան վարչանդինների կառավարությանը, ինչպես նաև Սլովակյան Ազգային խորհրդի ռեակցիոն ան-

---

[58] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 267, 275.

[59] Տե՛ս Č. Amort, Partizáni na Podbrdsku, Praha, 1958, str. 128.

[60] Տե՛ս И. И. Удальцов, Антифашистская освободительная борьба в Словакии в период второй мировой войны и словацкое народное восстание 1944 года, „Ученые записки института славяноведения АН СССР", том II, М.—Л., 1950, стр. 42—45.

[61] Տե՛ս А. И. Недорезов, Восстание словацкого народа в 1944 году, „Новая и новейшая история", 1959, № 6, стр. 7—8.

դամներին, ՉԿՊ-ն 1944 թվականի մայիսի 15-ին հանդես եկավ «Ռեսպուբլիկայի ազատագրված տերիտորիայում մի շարք միջոցառումների մասին» ծրագրային փաստաթղթով[62], որը հանդիսացավ երկրում հաստատված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի ուղենիշը: Ռեսպուբլիկայի ազատագրվող վայրերում,—ընդգծված էր այնտեղ,—հասարակական ղեկավարման ամբողջ ապարատը անհրաժեշտ է կառուցել նորից, նոր սկզբունքների հիման վրա, վարից վեր: «Խոսքը վերաբերվում է... ոչ թե առանձին ծառայողների, այլ պետական ապարատին՝ ամբողջությամբ վերցրած: Այն պետք է վերակառուցել՝ սկսած բուն հիմքից և փոխարինել ազգային կոմիտեների սիստեմով»:

Սոցիալ-տնտեսական միջոցառումների ասպարեզում այդ պատմական փաստաթուղթը պահանջում էր. 1. Մյունխենյան դաշնագրից հետո բռնագրավված օբյեկտները վերադարձնել նրանց նախկին տերերին: 2. Եթե բացակայում է ավյալ ձեռնարկության օրինական ժառանգորդը, կամ նրա արժեքը ավելի է 500 հազար մինչմյունխենյան քրոնից, ապա ավյալ ձեռնարկության վրա սահմանել ժամանակավոր հասարակական կառավարչություն՝ մինչև Ազգային ժողովի կողմից հարցի արմատական լուծումը: 3. Օկուպանտներին և նրանց համախոհներին (անկախ ազգությունից) պատկանող ունեցվածքը բռնագրավել՝ հօգուտ ազգային-ազատագրական պայքարի զոհերի:

Վերոհիշյալ, ինչպես նաև մի շարք այլ միջոցառումներ, որոնք պետք է անմիջապես անցկացվեին ռեսպուբլիկայի ազատագրվող ամեն մի բնակավայրում, ուղեորում էին ժողովրդական լայն մասսաներին և պայքարի կոչում: Օդեսսայի երկրորդ կեսին պարտիզանական ջոկատներն արդեն ազատագրել էին միջին Սլովակիայի ընդարձակ տերիտորիա՝ սկսած Նիտրից մինչև Անդրկարպատյան Ուկրաինա: Վախենալով պարտիզանների հաշվեհարդարից, Տիսոյի «կառավարությունը» Հիտլերից «խնդրեց» Սլովակիան վերջնականապես օկուպացնել: Ի պատասխան ազգային դավաճանության այդ բացահայտ քայլի երկրով մեկ ծավալվեց պարտիզանական պատերազմը, որն սկսեց վերաճել համաժողովրդական զինված ապստամբության՝ ընդդեմ հիտլերյան Գերմանիայի և նրա սլովակյան գործակալների[63]:

---

[62] Տե՛ս «Զեմոսլովենսկե լիստի», 15.V.1944:

[63] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1944—1945 гг.", стр. 183—185.

Ապստամբության ավանդարդում ընթանում էր Սլովակիայի բանվոր դասակարգը: Մասսայական գործադուլների ալիքը, սկսվելով միջին Սլովակիայից (Վադի Դուբնիցում, Ռիբարպոլում) ընդգրկեց գրեթե ամբողջ երկիրը: Օգոստոսի 26-ին դիմված բանվորները, համագործակցելով պարտիզանների հետ, ազատագրեցին Մարտին, իսկ այնուհետև Վրուտկի և Ռուժոմբերոկ քաղաքները: Գրեթե ամենուր ապստամբների կողմն էին անցնում սլովակյան ազգային զորամասերը: Օգոստոսի 29-ին ապստամբությունը դարձավ համընդհանուր, ազատագրվեցին Բրեզնո և Բանսկա-Բիստրիցա քաղաքները: Օգոստոսի 31-ին ապստամբությունն արդեն ընդգրկել էր Սլովակիայի տերիտորիայի $^2/_3$ մասը և շարունակում էր արագությամբ ծավալվել[64]:

Մեծ ուշացումով (օգոստոսի 30-ին) Սլովակյան Ազգային խորհուրդը, որի կազմում բացի կոմունիստներից կային նաև զգալի թվով սլովակյան բուրժուական դեմոկրատներ, Բրատիսլավայից, ուր նա գործում էր անլեգալ պայմաններում, տեղափոխվեց Բանսկա-Բիստրիցա, որը դարձել էր ապստամբության կենտրոն: Ստանձնելով ազատագրված տերիտորիայի կենտրոնական իշխանությունը, Սլովակյան Ազգային խորհուրդը «դրսից»՝ մասսաների, իսկ «ներսից»՝ կոմունիստների ճնշման տակ դիմված ապստամբության կոչ արեց: Շնորհիվ կոմունիստների հեղեղղական նախապատրաստական գործունեության, համաժողովրդական դիմված ապստամբությունը հանդիսացավ երկրում հասունացած ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի սկիզբը: Այն ընթանում էր կոմունիստների առաջ քաշած մարտական լոզունգների նշանարանի ներքո, ինչպիսին էին՝ «Հանուն ազգային ազատության», «Գործարանները՝ բանվորներին», «Հողը՝ նրա մշակողին» և այլն[65]:

Ընդառաջելով ապստամբների պահանջին, վերակազմավորված Սլովակյան Ազգային խորհուրդը 1944 թվականի սեպտեմբերի 1-ին ընդունեց Դեկլարացիա, որով ազդարարեց անկախ և միասնական Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայի կազմակերպման, դեմոկրատական միջոցառումների անցկացման, բանվորների և գյուղացիների դրության բարելավման, հողային ռեֆորմի և այլ միջոցառում-

---

[64] Տե՛ս J. Doležal, Slovenské národní povstání, Praha, 1954, str. 90—96.

[65] И. Веселый, Коммунистическая партия Чехословакии вдохновитель словацкого народного восстания 1944 года, „Вопросы истории КПСС", 1960, № 1, стр. 188.

ների անցկացման անհրաժեշտության մասին։ Արդեն վեցին ֆաշիստական և կիսաֆաշիստական կազմակերպությունները, անցկացվեց բանակի համընդհանուր մոբիլիզացում, հիմնադրվեց Սլովակիայի Պաշտպանության կոմիտե, դպրոցները հանձնվեցին պետության տնօրինությանը, հսկողություն սահմանվեց արդյունաբերական ձեռնարկությունների վրա և այլն։

Ապատամբված տերիտորիայում տեղական իշխանությունը պատկանում էր տեղական ազգային կոմիտեներին, որոնցում գլխավոր դեր էին խաղում կոմունիստները։ Այդ կոմիտեները ձևավորվեց եղան բնակչության, բանակի և պարտիզանների պաշտպանման գործին, կազմակերպեցին զինված միլիցիայի ջոկատներ, որոնք պահպանում էին ռևոլյուցիոն կարգը։ Նրանք գործի դրեցին գերմանացիներից, հունգարացիներից և ժողովրդի թշնամիներից (հիտլերականների գործակալներից) խլված արդյունաբերական ձեռնարկությունները, տեղերում կենսագործեցին ռևոլյուցիոն-դեմոկրատական մի շարք միջոցառումներ և այլն[66]։

Կոմունիստները հանդիսանում էին սլովակյան ապստամբության ոգեշնչողները։ 1944 թվականի սեպտեմբերի 17-ին ապստամբության կենտրոնում՝ Բանսկա-Բիստրիցա քաղաքում տեղի ունեցավ Սլովակիայի Կոմունիստական պարտիայի համագումարը, որը, ելնելով կոնկրետ պայմաններից, ընդգծեց երկրի ազատագրման առաջնահերթ նշանակությունը։ Երկրի ազատագրումից հետո նախատեսվում էր հիմնադրել չեխերի և սլովակների միասնական ժողովրդա-դեմոկրատական կառավարություն, որի միջոցով արմատապես լուծել ազգային և ագրարային հարցերը, ազդայնացնել խոշոր արդյունաբերական ձեռնարկություններն ու բանկերը և այլն։

Շնորհիվ կոմունիստների ջանքերի համագումարի նախօրյակին (սեպտեմբերի 16-ին) կազմակերպվել էր պարտիզանական շարժման գլխավոր շտաբ, որը կոորդինացնում էր պարտիզանական ջոկատների գործունեությունը և ղեկավարում այն։ Շտաբի պետ նշանակվեց կոմունիստ Կ. Շմիդկեն, իսկ տեղակալ՝ սովետական գեներալ Ա. Ն. Ասմոլովը։ Ապստամբության ղեկավարությունը ուժեղացնելու նպատակով սեպտեմբերի 28-ին Մոսկվայից Սլովակիա ժամանեց Յան Շվերման։ Նա վճռական պայքար ծավալեց լոնդոն-

---

[66] „Československý Časopis historický" (հետագայում— «Չեխոսլովենական չասոպիս հիստորիկի»), 1960, № 3, էջ 279—282։

յան կառավարության գործակալների դեմ, որոնք փորձում էին կազմալուծել պարտիզանական ջոկատները՝ ընդդիմանալով դրանք ալովակյան բանակի մեջ։ Հայտարարելով Չեխոսլովակիայում գործող բոլոր զինված ուժերը, այդ թվում նաև պարտիզանական ջոկատները, չեխոսլովակյան բանակի բաղկացուցիչ մասեր, Բենեշի կառավարությունը ձգտում էր ոչ միայն լիկվիդացնել պարտիզանական ջոկատները, այլ նաև ռեակցիոն, ժողովրդական պատերազմին տալ երկու բանակների միջև մղվող պատերազմի բնույթ, օգտագործել բանակի ռեակցիոն ղեկավարությունը՝ հետագայում մենշվիկենյան կարգերը երկրում վերականգնելու նպատակով[67]։

Տրամադրորեն հակադիր էին ժողովրդական լայն մասսաների ձգտումները, որոնք բանվոր դասակարգի ղեկավարությամբ զենքի էին դիմել և հերոսական մարտեր էին մղում ընդդեմ օկուպանտների, հանուն անկախության և իսկական ազատության։ Հոկտեմբերի 15-ին Պոդբերեզովայում տեղի ունեցավ ֆաբրիկա-գործարանային կոմիտեների ներկայացուցիչների խորհրդակցություն, որին մասնակցում էին ամբողջ Սլովակիայի 137 արդյունաբերական ձեռնարկություններից 200 պատգամավորներ։ Սլովակիայի Ազգային Խորհրդին ուղղված բանաձևում խորհրդակցությունը պահանջում էր անցկացնել դերմանացիների, հունգարացիների և նրանց գործակալների ունեցվածքի ազգայնացում, արտադրության նկատմամբ բանվորական վերահսկողության սահմանում, ագրարային ռեֆորմի անցկացում՝ ըստ սկզբունքի «Հողը պատկանում է այն մշակողին» և այլն։ Խորհրդակցությունը հատուկ կոչով դիմեց պարտիզաններին, բանակին, բանվորներին, գյուղացիներին և ինտելիգենցիային, որտեղ ձևակերպված էին նրանցից յուրաքանչյուրի կոնկրետ խնդիրները պայքարի ավյալ փուլում։

«Հայրենիքին նվիրված յուրաքանչյուր սլովակ, ուր էլ որ նա գտնվելիս լինի՝ բանակում, պարտիզանական ջոկատում, գործարանում, թե դաշտում,—ընդգծված էր Սլովակիայի Կոմպարտիայի Կենտկոմի 1944 թվականի հոկտեմբերի 8-ի կոչում.—չպետք է խնայի իր ուժը, սեփական կյանքը ժողովրդի ազատության համար... Անհրաժեշտ է բարձրացնել զգոնությունը կալվածատերերի և թշնամու գործակալների նկատմամբ... Մարտում ամեն մի վախկոտություն սրբազան գործին դավաճանություն է»[68]։

Սկզբից ևեթ Սովետական Միությունը եղբայրական օգնության

---

[67] *Տե՛ս* „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 186, 192.

[68] „Pravda", 8.X.1944.

ձեռք մեկնեց Սլովակիայի ապստամբ ժողովրդին։ Անհապաղ կերպով այնտեղ իջեցվեցին չեխոսլովակյան բանակային կորպուսի № 2 պարաշյուտային-դեսանտային բրիգադան և № 1 ինքնաթիռային կործանիչ գունդը, որոնք կազմակերպվել էին ՍՍՌՄ-ի տերիտորիայում և սպառազինվել նրա միջոցներով։ Պարզ եղանակներին սովետական ինքնաթիռները սիստեմատիկաբար վայրէջք էին կատարում ապստամբների «Երեք կաղնի» օդանավակայանում՝ փոխադրելով այնտեղ ռազմամթերք, ռազմական տեխնիկա և մասնագետներ։ Մոտավոր հաշվումներով ՍՍՌՄ-ը սլովակյան ապստամբներին տրամադրեց 2 հազար հրացան, 900 ավտոմատ, 200 ձեռքի գնդացիր, 150 հակատանկային հրացան, 800 հազար փամփուշտ և այլն[69]։

Բացի այդ, Սովետական Միությունը վերակառուցեց ռազմական գործողությունների ընթացիկ պլանը, ձեռնարկեց Կարպատյան հարձակումը, նպատակ ունենալով թափանցել Չեխոսլովակիայի տերիտորիան և ուղղակի օգնություն ցույց տալ սլովակյան ապրստամբությանը[70]։ Համագործակցած չեխոսլովակյան բանակային 1-ին կորպուսի հետ, Ուկրաինական 1-ին ռազմաճակատի 38-րդ բանակը ճեղքեց թշնամու պաշտպանությունը և ներխուժեց Չեխոսլովակիայի պետական սահմանները։ Հոկտեմբերի 6-ին Կարպատների Դուկլյան լեռնուղում ծածանվեցին Սովետական Միության և Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայի պետական դրոշները, սկսվեց բուն Չեխոսլովակիայի ազատագրումը[71]։

---

[69] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 187, 194, 268.

[70] Սովետական բանակի Կարպատյան հարձակումը, որը բիսում էր չեխ և սլովակ ժողովուրդների արմատական շահերից, մեծ ազդեցություն առաջացրեց Արևմուտքում և հատկապես Չեխոսլովակիայի լոնդոնյան կառավարական շրջաններում։ Նրանք լուրջ կերպով տարակուսում էին, որ Չեխոսլովակիայի ազատագրումը Սովետական Բանակի կողմից կասեցնի ժողովրդին, որը և կրացատի երկրում մինչմյունխենյան կարգերի վերականգնման հնարավորությունը։ Բավական է հիշատակել միայն մեկ փաստաթուղթ. «Մենք ծայր աստիճան զարմացած ենք քո պնդումով,— շտապեցրեց կերպով հեռագրեց Չեխոսլովակիայի լոնդոնյան կառավարության Արտաքին գործերի մինիստր Ցան Մասարիկը այդ կառավարության մոսկվյան դեսպան Զդենեկ Ֆիրլինգերին,— որ Սովետները (Սովետական Միությունը – Ս. Հ.) ձեռնարկել են Կարպատյան հարձակումը իրենց մեր խնդրանքով։ Ինչ վերաբերում է Լոնդոնին, այդպիսի խնդրանք չի եղել։ Իրականությունը ճիշտ հակառակն է»։ (Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 205)։

[71] Այդ օրը (հոկտեմբերի 6-ը) մտավ Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայի

Հարձակումը կատարվում էր բնական և կլիմայական արտակարգ անբարենպաստ պայմաններում. հիտլերականներին հաջողվել էր գինարբուքել երկու սլովակյան դիվիզիաներ, որոնք պետք է հարվածեին նրանց թիկունքից: Այս բոլորի հետևանքով Դուկլի համար մղված կռիվներում զոհվեցին 80 հազար սովետական և 6 հազար չեխոսլովակյան մարտիկներ: Չեխոսլովակիայի ազատության համար նրանց համատեղ թափած արյամբ ամրապնդվեց սովետական և չեխոսլովակյան ժողովուրդների բարեկամությունը: Ահա թե ինչու Դուկլում, հիտլերականներից Չեխոսլովակիայի ազատագրված առաջին հողակտորում ծնունդ առավ «Հավերժ ՍՍՌՄ-ի հետ» չեխ և սլովակ ժողովուրդների պատմական լոզունգը[72]:

Սովետական և չեխոսլովակյան մարտիկների հանդիպումը Դուկլում

Սովետական Բանակի Կարպատյան հարձակումը, որը կատարվեց Օնդավա գետի ափին, իր վրա բևեռեց ֆաշիստական Գերմանիայի զգալի ուժերը և լուրջ օգնություն հանդիսացավ Սլովակյան ապստամբությանը: Բայց հիտլերյան հրամանատարությունը, որը Սլովակիայի տերիտորիան դիտում էր որպես մարտադաշտ

պատմության մեջ որպես նոր նոր, ժողովրդական բանակի տուն, որը յուրաքանչյուր տարի բյուրերին նշվում է այնտեղ: (*Տե՛ս* Д. М. Проэктор. Через Дукльинский перевал, М., Воениздат, 1960):

[72] «Ռուդ պրավո», 11.X.1949:

բուն Գերմանիայի պաշտպանության համար, ոչ մի ջանք չէր խնայում ապստամբությունը ճնշելու և այնտեղ ամրանալու համար։ Ապստամբները հերոսական մարտեր էին մղում հիտլերյան գերազանց ուժերի դեմ, նրանք ոչ միայն իրենց վրա բևեռեցին և կաշկանդեցին գերմանական 8 դիվիզիաներ, այլև մոտավոր հաշվումներով շարքից դուրս բերեցին 56 հազար ֆաշիստական զինվոր և սպա, ոչնչացրին 100 երկաթուղային և խճուղային կամուրջներ, 60 ինքնաթիռ, մեծ քանակությամբ սպառազինություն և մարտական տեխնիկա[73]։

Բայց ապստամբների ուժերը անբավարար էին հաղթանակի համար։ 1944 թվականի հոկտեմբերի 28-ին հերոսական մարտերից հետո ընկավ ապստամբության կենտրոնը՝ Բանսկա-Բիստրիցա քաղաքը և ապստամբները մնալով պարտիզանական ջոկատների մեջ, հեռացան դեպի լեռները։ «Լեռներում մենք կկռվենք,—ասում էին կոմունիստները,—այնտեղ մենք նորից կկազմակերպենք մեր ուժերը։ Եթե մեզ բաժանեն խմբերի, մենք խմբերով կկռվենք»[74]։ Խաբենց լեռնանցքից անցնելու ժամանակ ծայրաստիճան վատթարացավ Յան Շվերմայի առողջությունը. երբ նրան առաջարկեցին ինքնաթիռով տեղափոխվել մի ապահով տեղ, անհաղթելի մարտիկը պատասխանեց՝ «Ամբողջ կյանքում ինձ ամոթ կլինի, եթե ես այս վայրերի պահին թողնեմ սլովակյան ժողովրդին։ Ես եկել եմ Սլովակիա ոչ միայն ճառեր արտասանելու և գրելու, այլ նաև կռվելու համար»[75]։ Նա զոհվեց մարտական պոստում՝ 1944 թվականի նոյեմբերի 10-ին։

Անցնելով լեռնանցքը, պարտիզաններն ամրացան Ստորին Տատրայի Լամնիցյան հովտում (Բրեդնոյից ոչ հեռու) և վերսկսեցին մարտերը ընդդեմ հիտլերականների, որոնք մերթընդմերթ բորբոքվելով, շարունակվեցին մինչև Սովետական Բանակի կողմից Չեխոսլովակիայի լրիվ ազատագրումը։

Ապստամբության պարտությանը նպաստեցին լոնդոնյան վտարանդիների կառավարության գործակալները, որոնք սողոսկել էին

---

[73] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 269.

[74] Մեջ է բերված բստ Грачев С. и Петров Ф., Плечом к плечу, М., 1958, стр. 79.

[75] Նույն տեղում։

Սլովակիայի Ազգային և ապստամբության Ռազմական խորհուրդների կազմի մեջ ուժանում էին քայքայիչ աշխատանք։ Բացի այդ, այն ժամանակ, երբ Սովետական Բանակը, հաղթահարելով հսկայական դժվարություններ, օգնության գնաց սլովակյան ապստամբությանը, ամերիկյան ավիացիան «սխալմամբ» ռմբակոծեց ապստամբների «Երեք կաղնի» օդանավակայանը և նրա շրջակա ռազմական պահեստները։ Դա մեծ հարված էր, որ հասցրին ամերիկյան իմպերիալիստները սլովակյան ապստամբությանը։

Սլովակիայի երկամյա ղեկավարած ապստամբությունը, որը ժողովրդական լայն մասսաների ազատագրական պայքարի նախորդ էտապի օրինաչափ զարգացումն էր, մեծ դեր խաղաց Չեխոսլովակիայի բախտում։ Այն ազդարարեց երկրում ծավալված ազգային-ազատագրական շարժման վերաճման սկիզբը ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի։ Երկրում բռնկվեց հիտլերյան օկուպացիայի տարիներին հասունացած և կոմունիստների կողմից նախապատրաստած ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան, որն ուղղված էր այլազգի և հայրենական կեղեքիչների դեմ, մղվում էր երկրի ազգային անկախության և դեմոկրատականացման համար[76]։

Հիտլերյան Գերմանիան, որը դաժանորեն ճնշեց Սլովակիայի ժողովրդական ապստամբությունը, անկարող էր արյան մեջ խեղդել երկրում բռնկված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան։ Ընդունելով հիմնականում պարտիզանական պատերազմի բնույթ, այն ծավալվեց ամբողջ Չեխոսլովակիայով։ Պարտիզանական ջոկատները, որոնք մեծ աջակցություն էին ստանում ժողովրդական լայն մասսաներից և անընդհատ համալրվում ի հաշիվ նրանց, լուրջ հարվածներ էին հասցնում հիտլերականներին, քայքայում նրանց թիկունքը։ Բավական է նշել, որ ընդամենը 3 շաբաթվա ընթացքում (1944 թվականի դեկտեմբեր) միայն Կենտրոնական Սլովակիայում պարտիզանական ջոկատները ոչնչացրին 5200 գերմանական զինվոր և սպա, 40 զինվորական էշելոն, 30 տանկ, 110 ավտոմեքենա, 20 երկաթուղային և խճուղային կամուրջներ և այլն[77]։

Պարտիզանական պատերազմն ընդգրկեց գրեթե բոլոր չեխա-

---

[76] Սլովակյան ապստամբության, նրա պարտության պատճառների և պատմական նշանակության մասին մանրամասն տես այդ ապստամբության 15-ամյակի կապակցությամբ լույս տեսած չեխոսլովակյան պատմաբան Իրժի Դոլեժալի արժեքավոր աշխատությունը (I. Doležal., Slavné povstaní, Praha, SNPL, 1959)։

[77] Տես „Славяне", 1945, № 2, стр. 34.

կան հողերը։ Չեխ-Մորավական բարձրավանդակում ակտիվ մարտական գործողություններ ծավալեցին Յան Հուսի, Յան Կոժինոյի, Երմակի, Կիրովի անվան և մի շարք այլ պարտիզանական ջոկատներ։ 1944 թվականի ապրիլին Հյուսիս-Արևելյան Չեխիայում կազմակերպվեց պարտիզանական դիվիզիա, որի շարքերում ընդգրկված էին շուրջ 5000 հայրենասերներ։ Խոշոր պարտիզանական ջոկատներ գործում էին նաև Հարավային Չեխիայում։

Սովետական Միությունը մշտապես օգնում էր Չեխոսլովակիայում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիային։ Ընդամենը 5 ամսվա ընթացքում (1944 թվականի հոկտեմբեր—1945 թվականի մարտ) ՍՍՌՄ-ը օդային տրանսպորտով Չեխիա տեղափոխեց և այնտեղ գործող պարտիզանական ջոկատներին հանձնեց ավելի քան 300 տոննա ռազմամթերք ու սպառազինություն[78]։ Անհամեմատ մեծ օգնություն ՍՍՌՄ-ը ցույց տվեց Չեխոսլովակիայում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիային իր զինված ուժերով։ Հաղթահարելով Կարպատյան լեռները, Սովետական Բանակն սկսեց ուժեղ հարձակում և 1944 թվականի հոկտեմբերի վերջին գերմանա-հունգարական ֆաշիստների լծից ազատագրեց ամբողջ Անդրկարպատյան Ուկրաինան։ Զարգացնելով հարձակումը, Ուկրաինական 4-րդ և 2-րդ ռազմաճակատների բանակները, որոնց հետ սերտորեն համագործակցում էր չեխոսլովակյան բանակային 1-ին կորպուսը, 1944—1945 թվականների ձմռանը քայլ առ քայլ ազատագրում էին Սլովակիան հիտլերյան ֆաշիստներից։ 1945 թվականի ապրիլի 4-ին նրանք ազատագրեցին Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավան և շարժվեցին դեպի Չեխիա։

Ազատագրված վայրերում նոր ուժով էր բորբոքվում ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան։ Ազգային կոմիտեները, որոնք կազմված էին ժողովրդին նվիրված մարդկանցից (հիմնականում՝ կոմունիստներից և անպարտիական պարտիզաններից), ստանձնում էին տեղական իշխանությունը և՝ հենվելով ժողովրդական լայն մասսաների վրա, ծավալում էին քաղաքական և տնտեսական եռուն գործունեություն։ Կոմունիստների նախաձեռնությամբ Ազգային կոմիտեները կազմակերպեցին բանակի և ժողովրդի պարենավորման գործը, ձեռնամուխ եղան արդյունաբերական ձեռնարկությունների,

---

[78] Տե՛ս „KSČ v boji za svobodu", Praha, 1949, str. 218—219, ինչպես նաև «Չեխոսլովենսկի չասոպիս հիստորիցկի», 1960, № 2, էջ 628։

ճանապարհների և կամուրջների վերականգնման ու վերակառուցման աշխատանքներին և այլն:

Ելնելով երկրում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի շահերից և հաշվի առնելով ազգային բուրժուազիայի ունեցած դեռևս որոշակի ազդեցությունը ժողովրդական մասսաների վրա, ՉԿՊ Կենտկոմը 1945 թվականի փետրվարի 2-ին հատուկ հեռագրով դիմեց Չեխոսլովակիայի լոնդոնյան վարանդիների կառավարության պրեզիդենտ Էդուարդ Բենեշին և առաջարկեց անհապաղ մեկնել Մոսկվա: Ըստ հեռագրում շարադրված պլանի, Մոսկվայում պետք է տեղի ունենային բանակցություններ ՉԿՊ-ի և Չեխոսլովակիայի լոնդոնյան քաղաքական պարտիաների միջև՝ նոր կառավարության կազմի և նրա գործունեության ծրագրի շուրջը: Համապատասխան համաձայնությունից հետո հին կառավարությունը պետք է հրաժարական տար, իսկ նոր կազմակերպված կառավարությունը պետք է տեղափոխվեր Սլովակիայի Կոշիցե քաղաքը ու զեկավարեր երկիրը՝ մինչև ամբողջ Չեխոսլովակիայի ազատագրումը և կառավարության տեղափոխումը Պրագա[79]:

Լոնդոնյան վտարանդիները և նրանց պարագլուխ Բենեշը քայլ դիտակցում էին, որ մերժել այդ հեռագիրը նշանակում է հակադրվել ՉԿՊ-ին, որի հեղինակությունը հակաֆաշիստական պայքարի բովում անչափ աճել էր ժողովրդական լայն մասսաների մեջ, նշանակում է հակադրվել Չեխոսլովակիայի ժողովուրդներին, որոնք վենքը ձեռքին վարում են վճռական դաժան պատերազմ հանուն ազգային-ազատագրության և դեմոկրատիայի: Բացի այդ, հրաժարվել Մոսկվա մեկնելուց նշանակում էր հակադրվել ՍՍՌՄ-ին, որը ծանր փորձությունների տարիներին իրեն ցուցաբերել էր որպես չեխ ու սլովակ ժողովուրդների ջերմ բարեկամի, ազատարարի և վայելում էր նրանց անսահման համակրանքն ու սերը: Այլ կերպ ասած, լոնդոնյան վտարանդիները դիտակցում էին, որ ՉԿՊ-ի առաջարկի մերժումը համազոր է ինքնաոչնչացման և, ավելին՝ ինքնասպանության, որովհետև նման մերժումը կփակեր այն վերջին ուղին, որով Չեխոսլովակիայի լոնդոնյան վտարանդիները կարող էին վերադառնալ հայրենիք և մասնակցել երկրի կառավարմանը: Ահա թե ինչու Բենեշը, ինչպես և Չեխոսլովակիայի լոնդոնյան քաղաքական պարտիաների պարագլուխները ստիպված էին ընդունել ՉԿՊ-ի առաջարկը և մարտի 17-ին ժամանել Մոսկվա:

---

[79] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 225—226.

Բանակցությունները վեր հանեցին բուրժուական և մանրբուրժուական պարտիաների լրիվ անանկությունը, որոնցից և ոչ մեկը չուներ ու չէր էլ կարող ունենալ ազգային-դեմոկրատական ուղղության պահանջները բավարարող գործունեության ծրագիր։ Միայն ՉԿՊ-ն էր, որ մշակել էր և ներկայացրեց նման ծրագիր, որի շուրջը է ծավալվեցին բանակցությունները։ Բուրժուական և մանրբուրժուական պարտիաները, խուսափելով ինքնամերկացումից, ստիպված հաստատեցին Կոմպարտիայի ներկայացրած ծրագիրը, որպես նոր կառավարության գործունեության ծրագիր[80]։

Այնուհետև քննարկվեց նոր կառավարության կազմի հարցը։ Ըստ Կոմպարտիայի առաջարկի, որը և որոշ պայքարից հետո ընդունվեց, երկրում պետք է կազմակերպվեր Ազգային ճակատի կառավարություն՝ բաղկացած 25 չեխից և 9 սլովակից (ըստ ազգաբնակչության թվի հարաբերակցության)։ Ընդ որում Ազգային ճակատի յուրաքանչյուր պարտիա կառավարության կազմում պետք է ունենար երեքական ներկայացուցիչ։ Կառավարության միջուկը մինիստրների խորհրդի նախագահն էր՝ իր տարբեր պարտիաների ներկայացուցիչներից բաղկացած հինգ տեղակալներով։ Համառ պայքարից հետո կազմակերպվեց Ազգային ճակատի կառավարությունը, որի մեջ կոմունիստներին հաջողվեց ապահովել պրեմիեր-մինիստրի երկու տեղակալների և երեք մինիստրների (ներքին գործերի, ինֆորմացիայի և հողագործության) տեղեր, իսկ պրեմիեր-մինիստր անցկացնել ձախ սոցիալ-դեմոկրատ, բանվոր դասակարգի գործին նվիրված Զդենեկ Ֆիրլինգերին։

Ազգային ճակատը հղի էր անտագոնիստական հակասություններով։ Ընդգրկվելով Ազգային ճակատի մեջ, բուրժուական պարտիաները ձգտում էին նրան տալ քաղաքական պարտիաների կոալիցիայի, իսկ կառավարությանը՝ կոալիցիոն կառավարության բնույթ, օգտագործելով իրենց դիրքը՝ նսեմացնել կոմունիստներին և վերականգնել իրենց երբեմնի ազդեցությունը ժողովրդական մասսաների վրա, հենվելով արևմտյան իմպերիալիստների վրա՝ «հարմար մոմենտում» հրահրել քաղաքացիական պատերազմ, կատարել պետական հեղաշրջում և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը, վերականգնել մինչմյունխենյան կարգերը։

Ի հակադրություն բուրժուական պարտիաների, Կոմունիստական պարտիան Ազգային ճակատը դիտում էր որպես բանվորների,

---

[80] Տե՛ս „Советско-чехословацкие отношения в 1941—1945 гг.", стр. 241—247.

գյուղացիների, արհեստավորների, ինտելիգենցիայի և ազգային բուրժուազիայի դասակարգային դաշինքի քաղաքական ձև, ձգտում էր ամեն կերպ ամրապնդել նրա միասնությունը, որպես երկրում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակի գրավական։ Կնքելով կոմպրոմիս բուրժուական և մանրբուրժուական պարտիաների հետ, որոնք դեռևս լրիվ կերպով իրենց չէին մերկացրել ժողովրդի աչքում, Կոմունիստական պարտիան պայքարում էր բանվոր դասակարգի հեգեմոն դիրքը Ազգային ճակատում ամրապնդելու, բուրժուազիային մեկուսացնելու, դեմոկրատական միջոցառումներ անցկացնելու, իսկ այնուհետև պրոլետարիատի դիկտատուրա՝ խաղաղ ճանապարհով, առանց զինված ապստամբության և քաղաքացիական պատերազմի հաստատելու համար։

Մոսկվայի բանակցությունները մեծ նշանակություն ունեցան Չեխոսլովակիայում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակի համար։ 1945 թվականի մարտի 31-ին նրա մասնակիցները ժամանեցին Սլովակիա։ Կատարելով ստանձնած պարտավորությունները, ապրիլի 4-ին պրեզիդենտը հրաժարական տվեց Չեխոսլովակիայի լոնդոնյան վարչապետների կառավարությանը և հաստատեց նոր կառավարության կազմը։ Այդ նույն օրը Արևելյան Սլովակիայի Կոշիցե քաղաքում, որը Սովետական Բանակը փրկել էր ավերումից և որը դարձավ Ազգային ճակատի կառավարության ժամանակավոր նստավայր, հանդիսավոր կերպով հրապարակվեց բանակցությունների ժամանակ ընդունված ծրագիրը, որպես նոր կառավարության գործունեության ծրագիր։ «Կոշիցյան ծրագիրը», ինչպես անվանվեց այդ պատմական փաստաթուղթը, երկրում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակի և ժողովրդա-դեմոկրատական կարգի կառուցման գրավականն էր[81]։

Պետական և հասարակական կյանքի ասպարեզում «Կոշիցյան ծրագիրը» նախատեսում էր հին, բուրժուական պետական ապարատի ջախջախում և նոր, ժողովրդա-դեմոկրատական պետական սիստեմի կառուցում։ Պետական իշխանության միակ աղբյուրը, գրված էր ծրագրում, ժողովուրդն է։ Ազգային ճակատի կառավարությունը պետք է ժողովրդին տա ամեն տեսակի քաղաքական իրավունքներ,

---

[81] „Prahram nove Československé vlády Národní fronty čechů a slovaků". Հետագայում շարադրվում է այդ ծրագրի բովանդակությունը ըստ «Չեխոսլովենսկե լիստի», 1.V.1945։

պայմաններ ստեղծի այդ իրավունքներից լիովին օգտվելու համար, խստորեն հետապնդի ֆաշիստական տարրերին, Թուլացնի բուրժուազիայի ազդեցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքում և ուժեղացնի դրանում բանվոր դասակարգի և նրա դաշնակիցների դերը։

Սոցիալ-տնտեսական քաղաքականության ասպարեզում ծրագիրը նախատեսում էր օկուպանտների, նրանց համախոհների և հողային մագնատների ունեցվածքի բռնագրավում, արդյունաբերական կարևորագույն ճյուղերի ազգայնացում, հողում աշխատավոր գյուղացիության ագրարային ռեֆորմի անցկացում, գործազրկության վերացում, սոցիալական ապահովագրության անցկացում, ժողովրդական կրթության և կուլտուրայի զարգացման ապահովում և այլն։ «Դրամա-վարկային սիստեմը, արդյունաբերության հրամանատարական ձեռնարկությունները, ապահովագրական կազմակերպությունները, բնական և էներգետիկ աղբյուրները,—ընդգծված էր ծրագրում,—պետք է ստանան հանրապետական կառավարում և և ի սպաս դրվեն նոր ազգային էկոնոմիկայի կառուցմանը»։

Այսպիսով, իր սոցիալ-տնտեսական քաղաքականությամբ Ազգային ճակատի կառավարությունը պարտավորվում էր խարխլել խոշոր մոնոպոլիստների և հողային մագնատների դիրքերը, արմատախիլ անել նրանց և իր ձեռքը վերցրած միջոցները ծառայեցնել ժողովրդի շահերին։

Կոշիցյան ծրագիրը դրեց նոր կառավարության ազգային քաղաքականության հաստատուն հիմքերը։ Միասնական և անբաժան ռեսպուբլիկայի կազմում սլովակները ստացան չեխերին հավասար քաղաքական և քաղաքացիական իրավունքներ, վերացվեց ազգային խտրականությունը։ Անդրկարպատյան Ուկրաինան, որի բնակչությունը դարեր շարունակ պայքարել էր մայր Ուկրաինայի հետ վերամիավորվելու համար, միացվեց Ուկրաինական ՍՍՌ-ին։ Դա լուրջ հարված էր բուրժուական նացիոնալիստներին, նրանց ազգային ճնշման և աղգամիջյան թշնամանքի քաղաքականությանը։

Չեխերի ու սլովակների միասնական, դեմոկրատական և սուվերեն ռեսպուբլիկայի արտաքին քաղաքականության անկյունաքարը,—ընդգծված էր Կոշիցյան ծրագրում,—ՍՍՌՄ-ի հետ բարեկամության և փոխադարձ օգնության հետագա ամրապնդումն է։ Կառավարությունը պարտավոր էր հենց սկզբից ձեռնարկել Սովետական Միության հետ սերտ համագործակցություն՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, կուլտուրական և այլ ասպարեզնե-

բում։ Չեխոսլովակիայի նոր, ժողովրդական բանակը,—ասված էր ծրագրում,—պետք է կազմակերպվի և մարզվի ազատարար Կարմիր Բանակի օրինակով, ծառայի ժողովրդի շահերին։

Այսպիսով, Կոշիցյան ծրագիրը մեկընդմիշտ վերջ դրեց չեխոսլովակյան բուրժուազիայի տրոցկիստ ագենտային քաղաքականությանը, Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայի բախտը կապեց հզոր սոցիալիստական երկրի՝ Սովետական Միության հետ[82]։

Ազգային Ճակատի կառավարության կազմակերպումը և նրա կողմից գործունեության ռևոլյուցիոն-դեմոկրատական ծրագրի ընդունումը Չեխոսլովակիայի ժողովուրդների և առաջին հերթին բանվոր դասակարգի ու նրա մարտական ավանգարդի՝ Կոմունիստական պարտիայի մեծ հաղթանակն էր արևմտյան իմպերիալիստների և տեղական բուրժուազիայի նկատմամբ։ Շնորհիվ կոմունիստների համառ և հետևողական պայքարի, երկրում բանկված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի ծրագիրը դարձավ կառավարության գործունեության ծրագիր, որով և սկսվեց ազատագրված վայրերում նոր, ժողովրդա-դեմոկրատական հասարակական-պետական կարգերի հաստատուն հիմքերի կառուցման պրոցեսը։

Լինելով Ազգային Ճակատի և նրա կառավարության գլխավոր ու առաջատար ուժը, Կոմունիստական պարտիան մշտապես գլխավարում և ուղղություն էր տալիս երկրում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիային և, հենվելով ժողովրդական լայն մասսաների ռևոլյուցիոն վերելքի վրա, պայքարում էր Կոշիցյան ծրագրի սկզբունքների հետևողական կենսագործման, երկրում ժողովրդական-դեմոկրատական կարգերի հիմքերի կառուցման համար։ Ծրագրի ընդունումից անմիջապես հետո ՉԿՊ-ն հանդես եկավ «Ի՞նչ անել, ինչի՞ց սկսել» համաժողովրդական կոչով, որտեղ ընդգծեց քաղաքի և գյուղի աշխատավորության, բանվորների, գյուղացիների, արհեստավորների և աշխատավոր ինտելիգենցիայի խնդիրները ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի զարգացման ոլորտում։ «Այս պատմական ժամանակաշրջանում,—ընդգծված էր կոչում,—մեր ժողովրդի առջև կանգնած են երկու գլխավոր խնդիրներ. նախ՝ բոլոր ուժերն ուղղել Հիտլերյան Գերմանիայի նկատմամբ վերջնական հաղթանակին։ Երկրորդ՝ ազատ, իրականում դեմոկրատական ժողովրդական Չեխոսլովակիա-

---

[82] Կոշիցյան ծրագրի ընդունման և նշանակության մասին մանրամասն տես «Չեխոսլովենսկի չասոպիս հիստորիցկի», № 4, 1960, էջ 449—471։

յում դնել նոր ու երջանիկ կյանքի հասատատուն հիմքերը և մեր շատ մինչմյունխենյան կարգերի վերադարձը»[83]:

Այդ խնդիրների կենսագործման համար պահանջվում էր ամեն կերպ ամրապնդել ժողովրդի և ազգի միասնությունը, յուրաքանչյուր ազատագրված վայրում առանց հապաղելու ընտրել Ազգային կոմիտե, իսկ շրջանում՝ շրջանային կոմիտե: Կանխել ազգային կոմիտեներում դավաճանների մուտքը և մշտապես հետևել, որ այդ կոմիտեներն իրենց լայն իրավունքներն օգտագործեն հօգուտ ժողովրդի, ազգի և պետության, որ այդ կոմիտեների միջոցով ժողովուրդը դառնա «պետական իշխանության միակ աղբյուրը»:

Ազատագրված վայրերում ազգային կոմիտեները և ժողովուրդը,—ընդգծված էր կոչում,—պետք է անմիջապես ձեռնամուխ լինեն երկրի քայքայված տնտեսության վերականգնման նախապայմանների ստեղծման՝ երկաթուղիների, խճուղիների, կամուրջների, կապի միջոցների և արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման և վերագործարկման: Արդյունաբերական ձեռնարկություններում անհրաժեշտ է կազմակերպել ֆաբրիկա-գործարանային խորհուրդներ, միասնական պրոֆիմիություններ:

Շտապում բացահայտ և սքողված գործակալներին հետապնդելու և մերկացնելու, անոլյուցիոն կարգը պաշտպանելու և ամրապնդելու նպատակով այդ կոչն առաջարկում էր ստեղծել ազգային միլիցիա, խլել ժողովրդի բոլոր զավաճանների և հիտլերականների ունեցվածքը, ձերբակալել ու ընդգրկել աշխատանքային ճամբարների մեջ և ստիպել նրանց մասնակցելու այն ամենի վերականգնման աշխատանքներին, ինչ քարուքանդ էր արել նրանց ձեռքով կամ մեկքով:

Գյուղացիական լայն մասսաներին առաջարկվում էր ազատագրված վայրերի տեղական ազգային կոմիտեներին կից ստեղծել գյուղացիական հանձնաժողովներ և ձեռնամուխ լինել գերմանացիներին ու ժողովրդի զավաճաններին պատկանող հողային տարածությունների և ունեցվածքի կոնֆիսկացման, կազմակերպել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը և այլն: Բոնագրավված հողերը,—ընդգծված էր կոչում,—համապատասխան ագրարային օրենքով կվերաբաժանվեն հողազուրկ, սակավահող և միջակ գյուղացիության միջև, բատրակների և գյուղատնտեսական բանվորների միջև՝ որպես նրանց մասնավոր սեփականություն:

[83] К. Готвальд, Избранные произведения, том II, стр. 67.

Այն ժամանակ, երբ Սովետական Բանակի կողմից ազատագրված վայրերում չեխ և սլովակ ժողովուրդները ձեռնամուխ եղան նոր, ժողովրդա-դեմոկրատական կարգերի կառուցմանը, դեպի չեխական հողերը շարժվեցին ֆաշիստական բանակների մնացորդները և Պրագայի գլխին կախվեց հիմնահատակ կործանման վտանգը: Մայրաքաղաքի բախտը, երկրում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի շահերը օրակարգում դրեցին զինված ապստամբության հարցը, որը կարող էր կասեցնել հիտլերյան հրամանատարության հանցագործ պլանների կենսագործումը՝ մինչև ազատարար Սովետական Բանակի հայթայթումը և մայրաքաղաքի ու ամբողջ երկրի ազատագրումը: Առանց հապաղելու կոմունիստները ձեռնամուխ եղան ժողովրդական զինված ապստամբության նախապատրաստմանը: Նրանց նախաձեռնությամբ ապրիլի վերջին վերջնականապես ձևավորվեց ապստամբության կենտրոնական օրգանը՝ Չեխական Ազգային խորհուրդը:

Ապրիլի 30-ի նիստում Չեխական Ազգային խորհուրդը, որի ղեկավար կորիզը կազմում էին կոմունիստները, որոշեց ապստամբության հենց սկզբից վերցնել ամբողջ իշխանությունը իր ձեռքը և պահել այն մինչև Կոշիցյան կառավարության ժամանումը Պրագա, մարտական ջոկատները վերանվանել ռևոլյուցիոն գվարդիա և նրանց հրամանատարներ նշանակել հմուտ և նվիրված դոծիչների, միջոցներ ձեռնարկել բնակչության պարենավորման ու վիրավորներին անհապաղ բուժ-օգնություն ցույց տալու նպատակով և այլն:

Բանվոր դասակարգը ջերմորեն արձագանքեց կոմունիստներին: Մայիսի 1-ին վերջնականապես ձևավորվեց ռևոլյուցիոն պրոֆմիությունների անվանված Կենտրոնական խորհուրդը, որի արձակած «Մարտական դիրեկտիվներում» պահանջվում էր, որ բոլոր պրոֆմիությունները և գործարանային խորհուրդները ակտիվորեն աջակցեն Սովետական Բանակի առաջխաղացմանը, ֆաբրիկաներն ու գործարանները վերցնեն հսկողության տակ, կազմակերպեն զինված ջոկատներ և համապատասխան ազդանշանի դեպքում եկեն զինված պայքարի՝ ընդդեմ օկուպանտների և նրանց տեղական կամակատարների[84]:

Զինված ապստամբության բռնկումը ժամերի հարց էր: Արդեն մայիսի 4-ին մայրաքաղաքի տարբեր մասերում տեղի ունեցան ա-

[84] Տե՛ս Г. М. Фоминов, Из истории борьбы за единство профсоюзного движения в Чехословакии (1935—1945 гг.). „Ученые записки ВПШ при ЦК КПСС", вып. I, М., 1959, стр. 87.

ռաջին ընդհարումները օկուպացիոն զորքերի և բնակչության միջև։ Մայիսի 5-ի առավոտյան տեղի ունեցավ ՉԿՊ Կենտկոմի կողմից հրավիրված Պրագայի ֆաբրիկա-գործարանային խորհուրդների ներկայացուցիչների խորհրդակցություն, որը մեկ անգամ ևս ապացուցեց զինված ապստամբություն սկսելու անհրաժեշտությունը։ Չեխական Ազգային խորհրդի կոչով այդ նույն օրը տապալված հայտարարվեց «Պրոտեկտորատի կառավարությունը» և սկսվեց զինված ապստամբությունը։ Մարտի նետվեցին ռևոլյուցիոն գվարդիայի և Պրագայի աշխատավորության ջոկատները, որոնց գլուխ կանգնած էին կոմունիստները։ «Կոմունիստներ,—ընդգծված էր ՉԿՊ ԿԿ կոչում,—եկեք ամենուր լավագույններից լավագույնը, փառքով հասցրեք նպատակին մեր՝ հաղթավոր ընկերների արյունով ներկված դրոշը։ Բոլշևիկյան պարտիայի երկաթյա կարգապահությունը և եղբայրական Սովետական Բանակի մարտական ոգին թող լինեն ձեզ համար բարձր օրինակներ»[85]։

Լինելով Չեխոսլովակիայում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի զարգացման կարևորագույն անցքերից, Պրագայի ապստամբությունը ընթանում էր ոչ միայն ազգային ազատության, այլ նաև զուտ պրոլետարական, սոցիալիստական լոզունգների նշանաբանի տակ։ «Մենք կռվում ենք, մենք մեռնում ենք ոչ միայն ժողովրդի ազգային ազատության համար,—ընդգծված էր Չեխական Ազգային խորհրդի մարտական կոչերից մեկում,—այլ նաև մեր դասակարգի ազատագրման համար։ Ծնվում է նոր ռեսպուբլիկան, որի համար մենք արյուն ենք թափում։ Դա կլինի մեր ռեսպուբլիկան, աշխատավոր ժողովրդի ռեսպուբլիկան»[86]։

Ապստամբներին հաջողվեց գրավել քաղաքի զգալի մասը, մեկ ռադիոկայան, հեռախոսային կենտրոնը, էլեկտրակայանը, մի շարք կամուրջներ, կայարաններ, գերմանական առանձին զինանոցներ և ստրատեգիական այլ կարգի օբյեկտներ։ Հիտլերականները գործի դրեցին իրենց տանկային և օդային զինված ուժերը, հրետանային կրակ բացեցին ապստամբների վրա, որոնց վիճակը արդեն մայիսի 5-ի երեկոյան ծանրացավ։ Սկսվեցին անհավասար, փողոցային, բարիկադային կռիվներ, որոնցում հերոսության օրինակներ ցուցադրեցին կոմունիստները և աշխատավորական լայն մասսաները։ Հիտլերյան գեներալ-ֆելդմարշալ Շերները, որի բա-

---

[85] «Ռուդե պրավո», 6.V.1945։

[86] «Ռուդե պրավո», 7.V.1945։

նակը հրաժարվել էր կապիտուլացումից, շարժվում էր դեպի Պրագա և ապառնում հիմնահատակ կործանել այն[87]:

Այդ կրիտիկական օրերին ամերիկյան գեներալները թույլ չտվեցին Պլզենի բնակչությանը, ինչպես նաև ամերիկյան զորքերի կազմում գտնված չեխոսլովակյան օդաչուներին, տանկիստներին և այլ մարտիկների օգնության հասնել և փրկել ռևոլյուցիոն Պրագան ավերումից: Միայն Սովետական Միությունն էր, որ եղբայրական օգնության ձեռք մեկնեց Պրագայի ապառամբ բնակչությանը: Կատարելով թշնամու մնացորդների համառ դիմադրությունը, սովետական մարտիկները կատարեցին հերոսական երթ՝ Բեռլինից— Պրագա: Հաղթահարելով Ռուդնի լեռների, Օդրժի և Վլտավա գետերի դժվարանցանելի և հիտլերականների կողմից ամրացված արգելակները, ինչպես նաև ականապատված դաշտերն ու անտառները, նրանք 36 ժամում մարտերով անցան 350 կիլոմետր տարածություն և 1945 թվականի մայիսի 9-ի վաղ արշալույսին ազատագրեցին հինավուրց Պրագան հիտլերական ֆաշիստներից[88]: Սովետական տանկիստների հաղթարշավը, այդպիսով, հօդս ցնդեցրեց անգլո-ամերիկյան իմպերիալիստների և հիտլերյան սհմանների շարունակ պլանները, փրկեց ավերումից, Գյոթեի խոսքերով ասած, «Երկրագնդի ապարոշի (դիադեմի) գեղեցիկ բրիլիանտը», ինչպես չեխերն են անվանում՝ «Զլատա Պրագան»: Այդ փայլուն օպերացիայով ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը Եվրոպայում:

Սովետական Բանակի կողմից Չեխոսլովակիայի ազատագրումը նպաստեց այնտեղ ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակին: Հաջորդ օրը Կոշիցե քաղաքից Պրագա տեղափոխվեց Ազգային ճակատի կառավարությունը և ստանձնեց ազատագրված երկրի պետական իշխանությունը: Այդ ժամանակվանից սկսվեց նոր դարաշրջան Չեխոսլովակիայի ժողովուրդների պատմության մեջ: Նրանց պետականությունը վերստեղծվեց նոր՝ ժողովրդա-դեմոկրատական հիմքերի վրա: «1945 թվականի մայիսին,—գրել է Անտոնին Զապոտոցկին,—Սովետական Միությունը բերեց մեզ ազատություն և հարյուր հազարավոր մեր մարդկանց փրկեց մահից ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներում:

---

[87] Տե՛ս „Правда", 7.V.1945.

[88] Չենք կարող չնշել, որ Պրագայի ապատամբական մարտերին ակտիվ մասնակցություն ունեցավ և զորավարական մեծ կարողություն ցուցաբերեց Սովետական Միության հերոս, գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանը:



Զլատա Պրագան ողջունում է մարշալ Մալինովսկուն (մայիս, 1945 թ).

Նա պահպանեց ավերումից մեր սիրելի Պրագան, մեր քաղաքներն ու գյուղերը։ Մեր երկրի ազատագրումը հերոսական Սովետական Բանակի կողմից մեր ժողովրդին հնարավորություն տվեց Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայում գործերը վճռելու սեփական կամքով և ստեղծելու ժողովրդա-դեմոկրատական կարգ...»[89]։

Լինելով արմատական շրջադարձային կետ չեխ և սլովակ ժողովուրդների կյանքում, 1945 թվականի մայիսի 9-ի օրը մտավ այդ ժողովուրդների բազմադարյան պատմության մեջ որպես նրանց մեծ և ամենանշանավոր ազգային տոնի օր, որը յուրաքանչյուր տարի լայնորեն նշվում է Չեխոսլովակիայում։ Այդ օրը այն պատմական սահմանագիծն է, երբ չեխ ու սլովակ ժողովուրդներն սկսեցին իրենց պատմության նոր, ամենահիանալի դարաշրջանը, իսկապես ազգային ազատության և անկախության դարաշրջանը, ժողովրդի տիրապետության դարաշրջանը։

---

[89] „Правда", 1.II.1957.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ (1945—1948)

1. ԺՈՂՈՎՐԴԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Յուրաքանչյուր ռևոլյուցիայի հիմնական հարցը, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, պետական իշխանության հարցն է։ 1945 թվականի մայիսին Չեխոսլովակիայում ստեղծված բարենպաստ իրադրության շնորհիվ երկրի պետական իշխանությունն անցավ հակաֆաշիստական պայքարի բովում ծնված Ազգային ճակատի ձեռքը, որը բանվոր դասակարգի, գյուղացիության, ինտելիգենցիայի ճնշող մեծամասնության և միջակ բուրժուազիայի որոշ մասի դասակարգային դաշինքի կազմակերպական ձևն էր։

Լինելով ժողովրդա-դեմոկրատական կարգերի լայն սոցիալական բազա, Ազգային ճակատը ապահովում էր այդ կարգերի կայունությունը։ «Ժողովրդական ռևոլյուցիայի ժամանակ կայուն... կարող է լինել այնպիսի իշխանությունը միայն,—ընդգծել է Վ. Ի. Լենինը,—որը ակնհայտորեն հենվում է բնակչության մեծամասնության վրա»[1]։

Ազգային ճակատի հիմքը, նրա ուղն ու ծուծը բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության սերտ դաշինքն էր, դաշինք, որտեղ ապահովված էր պրոլետարիատի հեգեմոն դիրքը։ Ազգային ճակատի կառավարության կազմակերպումով բանվոր դասակարգը

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 470։

հիմնականում հասավ պետական իշխանության։ Բայց նա ստիպված էր այդ իշխանությունը ժամանակավորապես բաժանել, կիսել ազգային բուրժուազիայի այն մասի հետ, որը դեռևս լրիվ կերպով իրեն չէր մերկացրել ժողովրդական մասսաների աչքում և մտնում էր Ազգային ճակատի և կառավարության կազմի մեջ։ Պետական իշխանության նման բաժանումը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «արտահայտում է միայն անցման մոմենտը ռևոլյուցիայի զարգացման մեջ, երբ վերջին առաջ է անցել սովորական բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից, բայց դեռ չի հասել «զուտ» պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրային»[2]։

Աղատագրված Չեխոսլովակիայում ստեղծված պետությունը ձևով ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկա էր, իսկ դասակարգային բովանդակությամբ՝ պրոլետարիատի և գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրա։ Լինելով անցման շրջանի պետություն, բանվոր դասակարգի և գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրան կոչված էր անընդհատ խորացնելու և մինչև վերջը հասցնելու ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան, նախադրյալներ ստեղծելու խաղաղ ճանապարհով այն սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճելու, «զուտ» պրոլետարիատի դիկտատուրա հիմնադրելու համար։ «Պրոլետարիատի և գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրան անպայման սոցիալիստների անցողիկ, ժամանակավոր խնդիրն է միայն,—ընդգծել է Վ. Ի. Լենինը,—բայց այս խնդրի անտեսումը դեմոկրատական ռևոլյուցիայի դարաշրջանում ուղղակի ռեակցիոն է»[3]։

Զինված սոցիալիստական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մարքս-լենինյան ստեղծագործ ուսմունքով, ՉԿՊ-ն հմտորեն կողմնորոշվեց երկրում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի բարդ և յուրօրինակ պայմաններում։ Չնայած բարենպաստ իրադրությանը մերձավորագույն նպատակը ոչ թե Սովետներն են ու սոցիալիզմի կառուցումը,—ընդգծում էր ՉԿՊ,—այլ ծավալված դեմոկրատական, ազգային ռևոլյուցիայի իրականում հետևողական, մինչև վերջը այնպես հասցնելն է, որպեսզի դրա ընթացքում ուղի հարթենք դեպի նոր նպատակներ, դեպի սոցիալիզմ՝ գնալով դեպի դրանք հնարավորին չափ լայն ազգային ճակատով և ուղղի գլուխ կանգնած։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 54։

[3] Նույն տեղում, հատ. 9, էջ 25։

Բանվոր դասակարգին և ժողովրդական ամենալայն զանգվածներին Կոմունիստական պարտիայի շուրջը սերտորեն համախմբելու նպատակով ՉԿՊ-ի նախաձեռնությամբ միավորվեցին և ամրապնդվեցին բանվոր դասակարգի և աշխատավորության մի շարք մասնագիտական կազմակերպություններ, կյանքի կոչվեցին ժողովրդի բազմաթիվ անպարտիական դեմոկրատական նոր կազմակերպություններ, որոնք դարձան կոմունիստների ազդեցության հիմնական ոլորտները։

1945 թվականի հունիսին վերջնականապես հաղթահարվեց Չեխոսլովակիայի բանվորական պրոֆմիությունների վազեմի մասնատվածությունը. ըստ «մեկ գործարան—մեկ կազմակերպություն» սկզբունքի հիմնադրվեց Միասնական ռևոլյուցիոն պրոֆմիութենական շարժումը, որը բանվոր դասակարգի միասնական պրոֆմիութենական կազմակերպություն էր։ Նրա գերագույն օրգանը համագումարն էր, որն ընտրում էր պրոֆմիությունների Կենտրոնական խորհուրդ՝ Միասնական ռևոլյուցիոն պրոֆմիութենական շարժման միջհամագումարային ժամանակաշրջանի գլխավոր և գործադիր օրգան։ Ամրապնդվեց ՉԿՊ-ի կապը բանվորական մասսաների հետ, աճեց կոմունիստների ազդեցությունը պրոֆմիություններում և Միասնական ռևոլյուցիոն պրոֆմիութենական շարժումը, որի շարքերում հաշվվում էր (1945 թվականի դեկտեմբեր) ավելի քան մեկ և կես միլիոն բանվոր, սկսեց մեծ դեր խաղալ երկրի ամբողջ հասարակական-քաղաքական կյանքում։

Երկրի ազատագրումից անմիջապես հետո կոմունիստների նախաձեռնությամբ կազմակերպվեցին գործարանային խորհուրդներ, որոնց անդամները ընտրվում էին բանվորների կողմից՝ փակ, գաղտնի և ուղղակի քվեարկությամբ։ Ազգային կոմիտեների հետ մեկտեղ գործարանային խորհուրդները հսկողություն սահմանեցին գերմանացիներին, հունգարացիներին և ժողովրդի դավաճաններին պատկանող ձեռնարկություններում։ 1946 թվականի սկզբին երկրում արդեն հաշվվում էր 12 հազար գործարանային խորհուրդ, որոնք մեծ դեր էին խաղում ժողովրդա-դեմոկրատական հասարակական պետական կարգերի կառուցման և Ազգային ճակատի կառավարության որոշումների կենսագործման ասպարեզներում[1]։

Այնուհետև, Միասնական ռևոլյուցիոն պրոֆմիություններին առընթեր կազմակերպվեց բանվորական գվարդիա, որը 1945 թվա-

[1] Տե՛ս A. Zápotocký, Nová odborová politika, Praha, 1949, str. 18, 52.

կանի հունիսին վերածվեց ֆաբրիկա-գործարանային միլիցիայի։ Նրանք պաշտպանում էին ռևոլյուցիոն կարգը, ժողովրդի ունեցվածքը, գործարանները և ֆաբրիկաները, հնտապնդում ու հալածում հիալերականների մնացորդներին, վնասարարներին և այլոց։ Լինելով բանվոր դասակարգի հարվածային և, որ ամենակարևորն է, զինված ջոկատներ, բանվորական գվարդիան, իսկ, այնուհետև, բանվորական միլիցիան զգալի դեր խաղացին հակառևոլյուցիոն ընդվզումների ճախողման գործում։

Կազմակերպվեցին նաև պրոֆմիությունների տիպի չեխական և սլովակյան միասնական գյուղացիական կազմակերպություններ, որոնք մոբիլիզացնում և երկրի քաղաքական կյանքին հաղորդակից էին դարձնում գյուղացիական լայն մասսաներին, նպաստում գյուղական շրջաններում կոմունիստների ազդեցության աճին։

Վերջապես կազմակերպվեցին կանանց, կոոպերատիվների, սպորտային և այլ միասնական մասսայական դեմոկրատական կազմակերպություններ և միություններ, որոնք լինելով կոմունիստների ազդեցության ոլորտներում, նշանակալից դեր էին խաղում երկրի կյանքում։ Հատկապես մեծ մասսայականություն նվաճեցին օկուպացիայի տարիներին ստեղծված և նրանից հետո վերականգնված «Նոր Ռուսաստանի հետ տնտեսական և կուլտուրական կապերի ընկերությունը», որը հրատարակում էր «Պրագա-Մոսկվա» ամսագիրը, և «ՍՍՌՄ-ի եղբայրների միությունը», որի օրգանն էր «Սովետների լույսը», ամսագիրը[5]։

Երկրի ազատագրմանը զուգընթաց վերականգնվեցին և ակտիվ գործունեություն ծավալեցին Սլովակիայի, իսկ, այնուհետև, Չեխիայի երիտասարդական միությունները, որոնց շարքերն ընդգրկվեցին տասնյակ հազարավոր երիտասարդներ և աղջիկներ։ 1945 թվականի մայիսի 10-ից սկսեց լույս տեսնել Չեխոսլովակիայի երիտասարդական միության Կենտրոնական Կոմիտեի ամենօրյա օրգանը՝ «Մլադա ֆրոնտա» լրագիրը, որը մեծ դեր խաղաց երկրի երիտասարդական շրջաններում կոմունիստների ազդեցության ծավալման գործում։

Ժողովրդական ամենալայն զանգվածներին համախմբելով Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի շուրջը, վերոհիշյալ

---

[5] 1948 թվականին այդ երկու կազմակերպությունները միավորվեցին և կազմեցին «Չեխոսլովակո-սովետական բարեկամության ընկերությունը», որի մեջ ընդգրկվեցին միլիոնավոր անդամներ (տե՛ս „Чехословакия", № 3, 1960, стр. 14)։

անպարտիական մասսայական դեմոկրատական կազմակերպությունները հսկայական դեր էին խաղում երկրի ամբողջ հասարակական-պետական կյանքում, աղդում Ազգային ճակատի կառավարության քաղաքականության վրա։

Մասսայական դեմոկրատական կազմակերպությունների հիմնադրման և նրանց գործունեության ծավալմանը զուգընթաց, ՉԿՊ-ի նախաձեռնությամբ Ազգային ճակատի կառավարությունը՝ երկրի ազատագրումից անմիջապես հետո, արգելեց ֆաշիստական և կիսաֆաշիստական՝ պարտիաների ու կազմակերպությունների գոյությունը, ինչպիսիք էին «Ագրարային պարտիան», որն արտահայտում էր խոշոր (կոմպրադորական) բուրժուազիայի շահերը, «Ժիվնոստենյան (բառացի՝ ագրարային—Ս. Հ.) պարտիան», որը թեև արտահայտում էր միջակ և մանր բուրժուազիայի շահերը, բայց զանվում էր խոշոր բուրժուազիայի («Ագրարային պարտիայի») ազդեցության տակ։ Արգելվեցին նաև այսպես կոչված «Ազգային միասնություն» ֆաշիստական կազմակերպությունը և «Սլովակիայի ժողովրդական պարտիան» («Людовая партия», կամ, ինչպես անվանում են՝ «Լյուդակի»), որը հիմնադրվել էր Հոդևորական Գլինկայի կողմից[6] և կղերա-ֆաշիստական ծայրաստիճան ռեակցիոն միություն էր։

Ազգային ճակատում և կառավարության կազմում օգտագործելով իր առաջատար դիրքը, բանվոր դասակարգը՝ դաշնակցած աշխատավոր գյուղացիության հետ և հենվելով աշխատավորության ամենալայն զանգվածների վրա, Կոմունիստական պարտիայի հմուտ ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ հին, բուրժուական պետական մեքենայի ջախջախմանը և նոր, ժողովրդա-դեմոկրատական պետական ապարատի կառուցմանը։

Ոչնչացվեց բուրժուազիայի դասակարգային տիրապետության կարևորագույն միջոցներից մեկը՝ բյուրոկրատիայի (զեմստվոյական պրեֆեկտների, օկրուգային գեստմանների, ավագների և այլոց) ձեռքում գործադիր իշխանության կենտրոնացումը։ Ժողովրդի ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրայի տեղական օրգաններ դարձան Ազգային կոմիտեները, որոնց իրավական դրությունը ամրագրվեց կառավարության 1945 թվականի մայիսի 5-ի որոշմամբ։ Ազգային կոմիտեներում կոմունիստները զբաղեցնում էին

---

[6] Այդ իսկ պատճառով Սլովակյան ժողովրդական պարտիայի անդամները որոշ հեղինակների կողմից անվանվում են նաև գլինկայականներ։

կարևոր դերքեր, որի շնորհիվ այդ կոմիտեները դարձան կարևորագույն լծակ երկրի ամբողջ պետական կարգի և էկոնոմիկայի վերակառուցման գործում:

Ցրվեց ոստիկանությունը և ժանդարմերիան, որոնք բուրժուադիպլոմատիայի ձեռքում գործիք էին ժողովրդական մասսաներին տիրելու, ճնշելու և հնազանդեցնելու համար: Նախկին պարտիզաններից և զինվորական շարժման մասնակիցներից կազմակերպվեց Աղգային անվտանգության կորպուս, որը պաշտպանում էր ժողովրդադեմոկրատական կարգերը տապալված ռեակցիոն ուժերից, պայքարում էր սպեկուլյանտների, վնասարարների, օտարերկրյա իմպերիալիստների գործակալների և աշխատավորության այլատիպ թշնամիների դեմ:

Վերակառուցվեց հին դատա-քննչական ապարատը, որը բուրժուազիայի դասակարգային շահերի պահպանման գործիք էր: Կազմակերպվեցին ժողովրդական դատարաններ, որոնք կոչված էին ժողովրդի շահերի օրինական պաշտպանությանը: Ժողովրդական դատավորներ նշանակվում էին կառավարության կողմից՝ օկրուգային Աղգային կոմիտեների երաշխավորությամբ: 1945 թվականի հունիսին հիմնադրվեցին ժողովրդական արտակարգ դատարաններ՝ ժողովրդի թշնամիներին դատապարտելու համար: Միջոցներ ձեռնարկվեցին բանակի դեմոկրատականացման համար:

Բուրժուական պետական մեքենայի ջախջախման և ժողովրդադեմոկրատական պետական ապարատի կառուցման պրոցեսում ակնհայտորեն բախվեցին դասակարգային և պարտիական ախոյան ուժերը, որոնք մտնում էին Աղգային ճակատի մեջ: Բացի Կոմունիստական պարտիայից, որն Աղգային ճակատի առաջատար ուժն էր, նրանում ընդգրկված էին հիմնականում չորս բուրժուական և մանրբուրժուական մինչմյունխենյան պարտիաներ, որոնք օկուպացիայի տարիներին հայտարարվել էին ցրված և վերականգնվել էին երկրի ազատագրումից հետո: Ըստ էության այդ պարտիաներն ունեին հետևյալ պատկերը.

Չեխոսլովակիայի սոցիալ-դեմոկրատական պարտիան, որի կենտրոնական օրգանն էր «Պրավո լիդու» օրաթերթը, թույլ քաղաքական պարտիաներից էր: Այն պառակտված էր երկու ախոյան թևերի՝ ձախ, ռևոլյուցիոն, որը Զդենեկ Ֆիրլինգերի գլխավորությամբ պայքարում էր կոմունիստների հետ ակտիվ համագործակցության համար, և աջ, օպորտունիստական, որը Վացլավ Մայերի և Վիլիմի գլխավորությամբ ջանում էր խլել պարտիայի ղեկավա-

բությունը ձախերից և այն դարձնել բուրժուազիայի պատվար։ Այդ երկու թևերի միջև մշտապես տատանվում էր երրորդ քաղաքական ուղղությունը, որը գլխավորում էր Բոգամիր Լաուշմանը։

Այսպես կոչված Ազգային-սոցիալիստական պարտիան, որը հենվում էր քաղաքի և գյուղի մանրբուրժուական տարրերի վրա, իրականում հակազգային և հակասոցիալիստական պարտիա էր։ Նա գերադասում էր բուրժուազիայի դասակարգային շահերը ազգի և առավել ևս՝ սոցիալիզմի շահերից։ Շարքային պարտիականների ճնշման տակ նրա ղեկավարությունը (Պյոտր Զենկլ, Վլադիմիր Կրայնա, Դուբերտ Ռիպկա, Պրոկոպ Դրտինա) 1945 թվականի հունիսին կոմունիստների հետ թեև կնքեց միասնական գործելու համաձայնություն, բայց անընդհատ պայքարում էր նրանց դեմ։ Այդ պարտիային հարեցին Չեխոսլովակիայի Լոնդոնում գտնված քաղաքական վտարանդիների մեծ մասը՝ Էդուարդ Բենեշի գլխավորությամբ, ինչպես նաև արդեն ֆաշիստական և կիսաֆաշիստական պարտիաների ու կազմակերպությունների նախկին անդամները։

Չեխոսլովակիայի ժողովրդական պարտիան, որի կենտրոնական օրգանն էր «Սվոբոդնե Դեմոկրացիե» օրաթերթը, արտահայտում էր գյուղական բուրժուազիայի, առևտրականների և արհեստավորների շահերը։ Նրա պարագլուխները (Յան Շրամեկ, Գալա, Պրոխազկա և ուրիշներ) սերտորեն կապված էին կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության և, նրա միջոցով, Վատիկանի հետ։ Այդ իսկ պատճառով որոշ հեղինակներ Չեխոսլովակիայի ժողովրդական պարտիան անվանում են նաև կաթոլիկական պարտիա։ Բացի վերոհիշյալ ռեակցիոներներից, ժողովրդական պարտիայի քաղաքականության մեջ մեծ դեր էին խաղում նաև արդեն ֆաշիստական պարտիաների նախկին անդամները։ Շարքային պարտիականների զգալի մասը համախմբված էր հոգևորական Յոզեֆ Պլոյդարի շուրջը, որը պայքարում էր կոմունիստների հետ անկեղծ համագործակցության համար։

Բուրժուազիայի չորրորդ քաղաքական պարտիան, որն ընդգրկված էր Ազգային ջակատի մեջ, Սլովակիայի դեմոկրատական պարտիան էր։ Նրա սոցիալական բազան քաղաքային մանրբուրժուական տարրերն էին և սլովակյան գյուղացիությունը, որի վրա բավականին ուժեղ էր կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը։ Այս պարտիան, որի պարագլուխներից էին Յան Ուրսինին և Յոզեֆ Լետրիխը, իր դռները լայնորեն բացել էր նախկին ֆաշիստական

պարտիաների անդամների և, հատկապես՝ զինկոմիսարների առջև, որոնք որոշում էին պարտիայի ռեակցիոն քաղաքական դիծը։

Ազգային ճակատի կառավարությունը, որը կազմված էր վերոհիշյալ պարտիաների ներկայացուցիչներից, «ներսից»՝ կոմունիստների և «դրսից»՝ ժողովրդական լայն մասսաների ճնշման տակ ձեռնամուխ եղավ մի շարք համադեմոկրատական բնույթի արմատական միջոցառումների անցկացմանը, միջոցառումներ, որոնց մեծ մասը պարունակում էր նաև սոցիալիստական տարրեր և նպաստում ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի հետագա խորացմանը, նրա խաղաղ ճանապարհով՝ առանց զինված ապստամբության ու քաղաքացիական կռիվների, սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճման պրոցեսին[7]։ Խոսելով անալոգիկ միջոցառումների մասին, Վ. Ի. Լենինը դեռևս 1905 թվականին ընդգծել է, որ դրանք «լիովին իրագործելի են, մի կողմից, տվյալ հասարակական-տնտեսական հարաբերությունների հողի վրա, և անհրաժեշտ են, մյուս կողմից, հետագա քայլն անելու դեպի առաջ, սոցիալիզմն իրականացնելու համար»[8]։

ՉԿՊ-ի նախաձեռնությամբ 1945 թվականի մայիսի 19-ին Ազգային ճակատի կառավարությունը հրատարակեց դեկրետ (№ 5), ըստ որի շեղյալ հայտարարվեցին այն բոլոր գործարքները, որոնք տեղի էին ունեցել օկուպանտների ճնշման տակ՝ ազգային, ռասայական և քաղաքական նկատառումներով։ Մանր ձեռնարկությունները և դյուղացիական տնտեսությունները, որոնք հափշտակվել էին նրանց տերերից հեռմյունխենյան ժամանակաշրջանում, վերադարձվում էին նախկին տերերին։ Դերմանացիներին, հունգարացիներին և ժողովրդի թշնամիներին պատկանող արդյունաբերական ձեռնարկությունները, բանկերը, հանքահորերը և դյուղացիական տնտեսությունները հանձնվում էին Ազգային կառավարչություններին։ Ազգային կառավարչությունների և կառավարիչների գործունեությունը մշտապես հսկում էին Ազգային կոմիտեները և գործարանային խորհուրդները, որոնց իրավունքները ընդլայնվում էին։ Ընդ որում 20-ից ավելի բանվոր ունեցող ձեռնարկություններում բանվորական վերահսկողությունն իրագործվում էր տեղական Ազ-

---

[7] «Մեզ մոտ ասկա է հանդամանքների պատմության մեջ հազվագյուտ բարենպաստ միահյուսում,— շեշտել է Կ. Գոտվալդը,— երբ մենք կատարում ենք ռևոլյուցիա միաժամանակ վերից և վարից» (К. Готвальд, Избранные произведения, том II, стр. 107)։

[8] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 17։

գային կոմիտեների և գործարանային խորհուրդների ներկայացուցիչների, իսկ պակաս բանվոր ունեցող ձեռնարկություններում բանվորների կողմից լիազորված անձանց միջոցով։

Բանվորական վերահսկողություն էր սահմանվում նաև այն ձեռնարկություններում, որոնք պատկանում էին ազգային բուրժուազիային. ընդ որում այստեղ գործարանային խորհուրդները օժտված էին ավելի լայն իրավունքներով։ Իրենց գործունեության մասին գործարանային խորհուրդները քառորդ տարին մեկ անգամ հաշվետու էին լինում տվյալ ձեռնարկության աշխատողների ընդհանուր ժողովում, որի շնորհիվ նրանք դարձան երկրի էկոնոմիկայի բանվորական համընդհանուր վերահսկողության կարևորագույն միջոցներից մեկը։

Բանվոր դասակարգը և աշխատավորությունը լայն մասսաները ջերմորեն ողջունեցին ժողովրդա-դեմոկրատական կառավարության առաջին նշանակալից ռեֆորմը և մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղան նրա կենսագործմանը։ Ընդամենը 3 շաբաթվա ընթացքում միայն չեխական հողերում Ազգային կառավարչությունները հատատավեցին բոլոր ձեռնարկությունների 47 տոկոս կազմող մասում, ուր կենտրոնացված էր բանվորների ավելի քան $^3/_4$ մասը[9]։ Օգոստոսի վերջին Ազգային կառավարչություն էր մտցվել Չեխոսլովակիայի արդեն բոլոր բանկերում, ապահովագրական ընկերություններում, 9302 արդյունաբերական ձեռնարկություններում, որոնցում կենտրոնացված էին շուրջ 1 միլիոն բանվորներ, և 80 հազար դյուղացիական տնտեսություններում (միայն չեխական հողերում), որոնց հողագումարը հասնում էր 800 հազար հեկտարի[10]։

Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ միջոցառումը արմատապես չէր լուծում արդյունաբերական և այլ հիմնարկ-ձեռնարկությունների ու դյուղացիական տնտեսությունների բախտը, նրանց ազգայնացման հարցը։ Ազգային կառավարչությունների ստեղծումը և նրանց վրա բանվորական վերահսկողության սահմանումը ժամանակավոր, անցողիկ միջոցառում էր։ «Սպառնացող վտանգը և ինչպե՞ս պայքարել նրա դեմ» հոդվածում Վ. Ի. Լենինը, բացահայտելով նման դեմոկրատական միջոցառման անցողիկ բնույթը,

---

[9] Տե՛ս „Československý průmysl", № 4, 1946 (Հետագայում— «Չեխոսլովենսկի պրոմիսլ»), ինչպես նաև «Տվորբա», 1946, № 9, էջ 129։

[10] Տե՛ս J. Kotatko, Konfiskace, rozdělování a osidlování půdy, Praha, 1946, str. 8.

ընդգծել է, որ բանվորական վերահսկողության հեռանքը «դեռևս սոցիալիզմ չէ, բայց այն արդեն կապիտալիզմ չէ: Դա մի հսկայական քայլ է դեպի սոցիալիզմ, այնպիսի քայլ, որ, լիակատար դեմոկրատիան պահպանելու դեպքում, այդպիսի քայլից արդեն անհնար կլինի ետ դնալ դեպի կապիտալիզմ՝ առանց մասսաներին չլսված բռնությունների ենթարկելու»[11]:

Այսպիսով, ժողովրդա-դեմոկրատական կառավարության առաջին իսկ դեմոկրատական միջոցառումը (1945 թվականի մայիսի 19-ի դեկրետը) իր մեջ պարունակում էր սոցիալիզմի տարրեր. նա ոչ միայն ակտիվ քաղաքական և տնտեսական կյանքի էր հրավիրում բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանը, այլև նախադրյալներ ստեղծում խոշոր սեփականատերերի ունեզրկման, տնտեսության կարևորագույն բարձունքների ազգայնացման և դեմոկրատական ագրարային ռեֆորմի անցկացման համար:

Դեկրետի կենսագործման հետևանքով երկրում արվեց դասակարգային, իսկ Ազգային ճակատում՝ պարտիական պայքարը: Կոմունիստական պարտիան՝ հենվելով աշխատավոր լայն մասսաների վրա, վճռական պայքար ծավալեց դեմոկրատական ագրարային ռեֆորմի անցկացման համար, այլ կերպ ասած՝ Կոշիցյան ծրագրի հերթական միջոցառումների կենսագործման համար:

1945 թվականի հունիսի 21-ին ընդունվեց դեկրետ (№ 12)[12], ըստ որի անվճար կերպով բռնագրավվեցին այն հողային տարածությունները, անտառները, կենդանի և անշարժ գույքը, անասունները և պահեստային ունեցվածքը, որոնք պատկանում էին հիտլերականներին և նրանց համախոհներին: Բռնագրավված անտառային տարածությունները համարվում էին պետության սեփականություն, իսկ հողային տարածությունները՝ որպես մասնավոր սեփականություն (8—13 հեկտարի չափով նայած որակին), բաժանվում էին բատրակների, հողազուրկ, սակավահող և բազմանդամ գյուղացիական ընտանիքների միջև: Կարիքավոր բանվորները, ծառայողները և արհեստավորները կարող էին ստանալ հող՝ մինչև 0,5 հեկտարի չափով: Հողի վարձը հանրամատչելի էր՝ տատանվում էր մեկից-երկու տարվա բերքի արժեքի միջև: Հանրամատչելի դին էր

---

[11] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 461:

[12] Տե՛ս „Основные законодательные акты по аграрным преобразованиям в зарубежных социалистических странах", выпуск 2, М., 1958, стр. 75—84.

սահմանվում նաև բնակարանների, շարժական գույքի և անասունների վրա։

Գյուղացիական լայն մասսաները, որոնք դարեր շարունակ և-բաղել էին մի կտոր հող[13] և պայքարել դրա համար, բանվոր դասակարգի ձեռքով ստացան այդ։ Նրանք մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղան ռեֆորմի կենսագործմանը։ Տեղական Ազգային կոմիտեներին կից ստեղծվեցին 10 հոգուց բաղկացած գյուղացիական տեղական և շրջիկ հանձնաժողովներ, որոնց անդամ կարող էր ընտրվել միայն այնպիսի գյուղացի, որն, ըստ դեկրետի, հող և գյուղատնտեսական այլ ունեցվածք ստանալու հավակնորդ էր։ Այդպիսով գյուղացիական հանձնաժողովները, որոնք ստանձնեցին դեկրետի կենսագործումը, ըստ էության գյուղական չքավորության՝ բատրակների և չունևոր գյուղացիության դասակարգային կազմակերպություններ էին։ Չնայած ռեակցիայի կատաղի դիմադրությանը, Չեխոսլովակիայի ներքին շրջաններում բռնագրավվեց ավելի քան 100 հազար հեկտար հողատարածություն, որը բաժանվեց 66 հազար գյուղացիական ընտանիքների միջև, և ավելի քան 300 հազար հեկտար անտառներ, որոնք պետականացվեցին։

Սլովակիայում, որտեղ դեկրետի կենսագործման կենտրոնական օրգանը («Գյուղատնտեսության և հողային ռեֆորմի վարչությունը») դեկավարում էին սլովակյան դեմոկրատական պարտիայի անդամները, ռեակցիային հաջողվեց որոշ դեպքերում ոչ միայն կասեցնել դավաճան կալվածատերերի ունեցվածքի բռնագրավումը, այլև անդամ դատապարտել առանձին գյուղացիական կոմիտեների անդամների, որոնք բռնագրավել և բաժանել էին կալվածատիրական մի շարք հողեր։ Սլովակյան ռեակցիայի աշխատությանը նպաստում էր նաև այն, որ Կոմունիստական պարտիայի դեկավա-

---

[13] Բավական է նշել, որ 1937 թվականի տվյալներով Չեխոսլովակիայի ամբողջ վարելահողերի կեսից ավելին (55 տոկոսը) գտնվում էր կալվածատերերի ու կուլակների ձեռքին, որոնք կազմում էին ամբողջ հողատերերի ընդամենը 5 տոկոսը, իսկ հողատերերի 70 տոկոսը ունեին անբերրի ու փոքրիկ հողակտորներ (5 հեկտարից ոչ ավելի) և միասին վերցրած տիրում էին երկրի վարելահողերի միայն 15 տոկոսին (տե՛ս В. Золотарев, Б. Исаев, Борьба за подъем сельского хозяйства в европейских странах народной демократии. „Вопросы экономики", 1955, № 6, стр. 94)։ Մինչ-մյունխենյան Չեխոսլովակիայի գյուղացիության հողատարածությունը հասնում էր 40 միլիարդ քրոնի, այն դեպքում, երբ ամբողջ վարելահողերը գնահատվում էին 19 միլիարդ քրոն (տե՛ս „Komuniste a zemědělská otázka", Praha, 1945, str. 7)։

ության մեջ սողոսկել էին բուրժուական նացիոնալիստներ Գուսակը, Նովոմեսկին, Կլեմենտիսը և ուրիշներ։ Վերոհիշյալ հանգամանքների հետևանքով մինչև 1948 թվականի փետրվարը Սլովակիայում բռնագրավվեց ընդամենը 150 հազար հեկտար հող և վերաբաժանվեց 72 հազար հեկտար հող, այնինչ բռնագրավման և վերաբաժանման ենթակա էին 545 946 հեկտար հող և անտառներ[14]։

Ելնելով շորս տերությունների Պոտսդամյան համաձայնությունից և երկրի անվտանգության շահերից, ժողովրդա-դեմոկրատական կառավարությունը 1945 թվականի ամռանը ձեռնամուխ եղավ Չեխոսլովակիայի սահմանամերձ շրջաններից այն գերմանացիների և հունգարացիների ունեցվածքի անվճար բռնագրավման և նրանց երկրի սահմաններից մասսայական արտաքսման գործին, որոնք համագործակցել էին հիտլերականների հետ։ Միաժամանակ ընդունվեց դեկրետ, ըստ որի Չեխոսլովակիայի ներքին շրջանների հողազուրկ և սակավահող գյուղացիները տեղափոխվում էին երկրի սահմանամերձ վայրերը և նրանց վրա հաստատում մշտական բնակություն։ Այդ դեկրետով սկսվեց 1945 թվականի հունիսի 21-ի ագրարային ռեֆորմի պրակտիկ կենսագործումը Չեխոսլովակիայի սահմանամերձ շրջաններում։ Արդեն 1946 թվականի սկզբին այդ շրջաններում հաշվվում էին 36 226 չեխ և սլովակ գյուղացիական տնտեսություններ, որոնց ձեռքում կենտրոնացված էր մոտ 450 հազար հեկտար հող[15]։

Վերոհիշյալ 3 հիմնական ագրարային դեկրետների անցկացումով ավարտվում է Չեխոսլովակիայում դեմոկրատական ագրարային ռեֆորմների կենսագործման առաջին էտապը, որի ընթացքում երկրի հողատարածությունները զգալի վերաբաշխման ենթարկվեցին։ Բռնագրավվեցին մոտ 3 միլիոն հեկտար հողային և անտառային տարածություններ, որոնցից 2150 հազար հեկտարը՝ երկրի սահմանամերձ շրջաններում, 450 հազար հեկտարը՝ ներքին շրջաններում և 588 հազար հեկտարը՝ Սլովակիայում (փետրվարյան դեպքերից հետո)։ Անտառային տարածությունները, որոնք կազմում էին 1200 հազար հեկտար, գրեթե ամբողջությամբ անցան պետության ձեռքը։ Վարելահողերից՝ 1477 հազար հեկտարը բաժանվեց

---

[14] *Մանրամասն այդ մասին տես՝* А. И. Недорезов, Аграрные преобразования в народно-демократической Чехословакии, М., 1954.

[15] *Տե՛ս* J. Kotátko, Zemědělská osidlovací politika, Praha, 1947, str. 36.

396 հազար հողազուրկ և սակավահող գյուղացիական տնտեսությունների միջև, իսկ 224 հազար հեկտար տրամադրվեց նորաստեղծ պետական հողագործական տնտեսություններին, հասարակական և կոոպերատիվ կազմակերպություններին[16]։

Բայց ագրարային ռեֆորմների առաջին էտապը մինչև վերջը չլուծեց հողային հարցը և լրիվ կերպով չվերացրեց կալվածատիրական հողատիրությունը։ Այսպես, օրինակ, Չեխոսլովակիայի ներքին շրջաններում դեռևս մնացին 14 հազար կալվածատերեր, որոնք կազմելով հողատերերի միայն 1 տոկոսը, տիրում էին 1400 հազար հեկտար վարելահողերի, այսինքն՝ ամբողջ վարելահողերի 30 տոկոսին[17]։

Չնայած դրան, դեկրետները էապես խարխլեցին կալվածատիրական հողատիրության հիմքերը, փոխեցին չեխոսլովակյան գյուղի սոցիալական կառուցվածքը։ Երկրում և, հատկապես, նրա սահմանամերձ շրջաններում աճեց միջակ գյուղացիության տեսակարար կշիռը։

Ստանալով հող բանվոր դասակարգի ձեռքից, գյուղացիական լայն մասսաները դարձան նրա հուսալի պատվարը։ Ամրապնդվեց և ընդլայնվեց պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության դաշինքը, բանվոր դասակարգի հեգեմոն դիրքը և ծավալվեց կոմունիստների ազդեցությունը գյուղական շրջաններում։

Հենվելով բանվոր դասակարգի և գյուղացիական լայն մասսաների օրավուր ամրապնդվող դաշինքի վրա, ՉԿՊ-ն վճռական պայքար ծավալեց արդյունաբերության կարևորագույն բարձունքների ազգայնացման համար, առանց որի հնարավոր չէր երկրում ժողովրդա-դեմոկրատական կարգերի ամրապնդումը և նրա սոցիալիզմի ճանապարհով զարգացումը։ 1945 թվականի հուլիսին Հյուսիսային Չեխիայի 58 հանքահորերի բանվորներ համատեղ կոչով դիմեցին կառավարությանը, որով կտրականապես պահանջում էին «անմիջապես և առանց փոխհատուցման ձեռնամուխ լինել հանքահորերի ազգայնացման մասին օրենքի հրատարակմանը։ Ածխային հարստությունը,—ընդգծված էր կոչում,—պետք է պատկանի միայն պետությանը, միայն ժողովրդին»[18]։

---

[16] Տե՛ս „Zemědělské noviny", 28.I.1948 (Հետագայում— «Զեմեդելսկե նովինի»)։

[17] Տե՛ս նույն տեղում, 29.II.1948։

[18] Տե՛ս «Ռուդե պրավո», 28.X.1950։

նման ոգով հանդես եկան նաև արդյունաբերության մյուս ճյուղերի բանվորները։ 1500 ազգային կառավարչությունների ներկայացուցիչների համագումարը, որը տեղի ունեցավ 1945 թվականի ամռանը Պրագայում, միահամուռ կերպով ընդունած իր բանաձևի առաջին կետում պահանջում էր անհապաղ ազգայնացնել «բոլոր բանկերը և ապահովագրական ընկերությունները, բոլոր ակցիոներական ընկերությունները, բոլոր խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, ամբողջ ռազմական արդյունաբերությունը, բնական ու էներգետիկ ռեսուրսները։ Ամեն տեսակի հապաղումը,—ընդգծված էր վերջում,—համազոր է մեծ նյութական կորուստների մեր ռեսպուբլիկայի և նրա ժողովրդական տնտեսության համար»[19]։

Արտահայտելով բանվոր դասակարգի վճռականությունը արդյունաբերության կարևորագույն ճյուղերի ազգայնացման պայքարում, Միացյալ Ռևոլյուցիոն պրոֆմիությունական շարժման Կենտրոնական խորհրդի նախագահ Անտոնին Զապոտոցկին 1945 թվականի հուլիսի 16-ին իրավացիորեն ընդգծեց. «Առանց արդյունաբերության առաջատար ճյուղերի ազգայնացման այսօր բանվորներին ոչ ոք չի կարող ստիպել, որ աշխատեն»[20]։

Բուրժուական պարտիաները, որոնք չէին համարձակվում բացահայտ կերպով հակադրվել մասսաներին, ջանում էին՝ ձգձգելով դեկրետի ընդունումը, խափանել այն։ Այդ նպատակով ազգայնասոցիալիստների կենտրոնական օրգանը («Սվոբոդնե սլովո») հատուկ ուղերձում ընդգծում էր, որ ազգայնացում «փարելի է կատարել միայն հասուն դատողությամբ, ստատիճանաբար, որակյալ և մանրակրկիտ անալիզից հետո»[21], որ գործարանային խորհուրդները՝ ընդունելով արդյունաբերության ազգայնացման մասին կրակոտ բանաձևեր, «անտեղի էներգիա են վատնում», որ «Ռուդե պրավո»-ն «անտեղի է այդ բանաձևերը տպագրում և դրանց նշանակություն տալիս»[22]։

Ձայնակցելով ազգային-սոցիալիստներին, ժողովրդական (կաթոլիկական) պարտիան պահանջում էր ընդհանրապես օրակարգից հանել արդյունաբերության ազգայնացման հարցը։ «Ներկայումս,—ընդգծում էր ժողովրդական պարտիայի կենտրոնական օրգան

---

[19] „Sjezd národních správců", Protokol, Praha, 1945, str. 170.

[20] A. Zápotocký, Nová odborová politika, Praha, 1949, str. 25.

[21] Տե՛ս „Svobodné slovo", 19.IX.1945 (Հետագայում՝ «Սվոբոդնե սլովո»)։

[22] Տե՛ս նույն տեղում, 21—24.IX.1945։

«Լիդովա դեմոկրացիե» օրաթերթը,— կառավարությանը ոչինչ այնքան անհրաժեշտ չէ, որքան ժամանակը և հանդիստը»[23]։

Ռեակցիոնների ընդհանուր երգչախմբում հատկապես բարձր էր հնչում դավաճան սոցիալ-դեմոկրատներ Մայերի և Լաուշմանի ձայնը։ Միայն ձախ սոցիալ-դեմոկրատներն էին, որոնք ընթանում էին կոմունիստների հետ միացյալ ճակատ կազմած։ «Մենք համոզված ենք,—հայտարարում էր Զդ. Ֆիրլինգերը,—որ արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների և բանկերի ազգայնացումը՝ նպատակասլաց պլանի հետ մեկտեղ, կդնեն մեր տնտեսության հետագա հաջող կառուցման համար հաստատուն հիմքեր»[24]։

Ռեակցիայի կատաղի դիմադրության հետևանքով սկսեց ձգձգվել արդյունաբերության ազգայնացման դեկրետի ընդունումը, որը մեծ դայրույթ առաջ բերեց աշխատավորական շրջաններում։ Հանքահորերում, ֆաբրիկաներում և գործարաններում դումարվում էին բազմամարդ միտինգներ, ուր հանդես էին գալիս բանվորները (անկախ պարտիական պատկանելությունից), դատապարտում ռեակցիոն մինիստրների ու լրագրների վարքագիծը և սպառնում դիմել պայքարի պրոլետարական մեթոդների[25]։ Հանդես գալով Չեխոսլովակիայի Միասնական ռևոլյուցիոն պրոֆմիութենական շարժման անունից, Անտոնին Զապոտոցկին 1945 թվականի հոկտեմբերի 3-ի իր ռադիոելույթում ընդգծեց, որ բանվոր դասակարգը անհամբեր սպասում է ազգայնացման դեկրետին։ «Խոստացել էիք, որ այդ պետք է լիներ սեպտեմբերին,— դիմեց նա ռեակցիոն մինիստրներին,—բայց արդեն հոկտեմբերն է... Անհրաժեշտ է շտապել։ Արդյունաբերության և բանկերի ազգայնացման դեկրետը պետք է հրատարակվի մինչև Ազգային ժողովի ընտրությունները»[26]։

Ակնհայտ է, որ նման պայմաններում դեկրետի հետագա ձգձգումը հղի էր բանվորական լուրջ հուզումներով և ելույթներով։ Ուստի չեխոսլովակյան ռեակցիան Բեներշի դլխավորությամբ համաձայնեց դեկրետի ընդունմանը, պայմանով, որ. 1. ազգայնացվող ձեռնարկությունների տերերին լրիվ կերպով փոխհատուցվի տվյալ օբյեկտի արժեքը և 2. այդ ձեռնարկատերերը մնան որպես կառավարիչներ[27]։

---

[23] Տե՛ս „Lidova demokracie". 26.IX.1945 (Հետագայում— «Լիդովա դեմոկրացիե»)։

[24] «Ռուդե պրավո», 3.V.1946։

[25] Տե՛ս նույն տեղում, 27.IX—8.X.1945։

[26] «Տվորբա», № 41, 1950։

[27] Տե՛ս «Սվոբոդնե սլովո», 9.X.1945։

Կոմունիստները ոչ միայն վճռական հարված տվեցին ռեակցիոներների նոր մեքենայությանը, որը համազոր էր դեկրետի փաստական չեղյալությանը, այլև դեկրետի տեքստում մտցրին ձեռակերպումներ, ըստ որոնց ազգայնացվող ձեռնարկությունները անցնելու էին պետության ձեռքը, իսկ նրանց կառավարման մեջ պետք է անմիջական մասնակցություն ունենար բանվոր դասակարգը՝ ի դեմս բանվորների կողմից ընտրյալ պրոֆմիութենական ներկայացուցիչների։

Բանվոր դասակարգի դործը հաղթանակեց։ 1945 թվականի հոկտեմբերի 24-ին պրեզիդենտը ստիպված ստորագրեց կառավարության կողմից ներկայացրած չորս դեկրետներ (№ 100—103)։

Ըստ այդ դեկրետների ազգայնացման ենթակա էին. 1. բոլոր բանկերը և ապահովագրական մասնավոր ընկերությունները, 2. լեռնային, էներդետիկական, մետալուրդիական, ռազմական մագնեզիտի և ցեմենտի, ինչպես նաև շաքարի և սպիրտի արտադրության բոլոր (անկախ զբաղված բանվորների թվից) արդյունաբերական ձեռնարկությունները, 3. մետաղամշակության, էլեկտրատեխնիկական, ճշդրիտ մեքենաշինության այն ձեռնարկությունները, որոնց մեջ զբաղված էին 500-ից ավելի բանվորներ, ի վերջո՝ քիմիական, տեքստիլ, սննդի, փայտամշակման ապրանքարտադրության և կաշվի, ապրանքի, թղթի արտադրության այն ձեռնարկությունները, որտեղ զբաղված էին 150—500 բանվորներ (նայած տվյալ ձեռնարկության նշանակությանը և արտադրական հզորությանը)։ Ընդ որում ազգայնացված ձեռնարկությունների արժեքը չէր փոխհատուցվում, եթե նրանք պատկանում էին գերմանացիներին և հունգարացիներին, կամ՝ Գերմանիայի ու Հունգարիայի հպատակներին և այն չեխերին ու սլովակներին, որոնք համագործակցել էին օկուպանտների հետ։ Հատուկ մի դեկրետ (№ 104) օրենսդրական կարգով սահմանում էր ֆաբրիկա-գործարանային խորհուրդների ֆունկցիաները, ամրագրելով ռևոլյուցիայի ընթացքում նրանց նվաճած իրավունքները և մասնակից դարձնում ազգայնացված ձեռնարկությունների կառավարմանը։

Վերոհիշյալ հինգ դեկրետները ցնծությամբ ընդունվեցին բանվոր դասակարգի և աշխատավորության լայն խավերի կողմից։ Հաջորդ օրը, հոկտեմբերի 25-ին, ամբողջ երկրով մեկ տեղի ունեցան բազմամարդ միտինգներ։ Այդ օրը Պրագայի Վացլավյան հրապարակում հավաքվել էր ավելի քան քառասուն միլիոն մարդ։ Ողջույնի ճառերով հանդես եկան Կ. Գոտվալդը. և Ա. Զապոտոցկին,

որոնք ընդգծեցին, որ ազգայնացումը ինքնին բավական չէ երկրի քայքայված տնտեսության վերականգնման, զարգացման և ժողովրդի կենսամակարդակի բարձրացման համար, որ անհրաժեշտ է ձեռնամուխ լինել համառ, քրտնաջան և անձնազոհ ստեղծագործ աշխատանքի[28]։

Չեխոսլովակյան ռեակցիոն ուժերը ամեն կերպ խոչընդոտում էին դեկրետների կենսագործմանը։ Մյուս կողմից էլ անգլո-ամերիկյան իմպերիալիստները փորձում էին ճնշում գործադրել ժողովրդա-դեմոկրատական կառավարության վրա և չափից դուրս շատ դումար կորզել ազգայնացված այն ձեռնարկությունների դիմաց, որոնք պատկանում էին օտարերկրյա կապիտալիստներին։ Միաժամանակ ամերիկյան իմպերիալիստները ջանում էին իրենց ձեռքը դցել ազգայնացված արդյունաբերական ձեռնարկությունները։ Այսպես, օրինակ, անձամբ Ֆորդը եղավ Պլզենում և ձգտում էր ձեռք դցել հանրահայտ «Շկոդովկան»։ «Վակում Օյլ կոմպանիայի» ներկայացուցիչը ամերիկյան դեսպանի հետ եղավ Կոլին քաղաքում և փորձում էր կաշառել գործարանային խորհրդի անդամներին, այնտեղի նավթամղիչ գործարանները զավթելու համար և այլն։

Օտարերկրյա իմպերիալիստների նմանօրինակ քայլերը չեռմ պաշտպանություն գտան Ազգային ճակատի բուրժուական պարտիաների կողմից։ Արձագանքելով ամերիկյան իմպերիալիստներին, ազգային-սոցիալիստական պարտիայի էքսպերտ Ի. Գեյդան, օրինակ, պահանջում էր թույլատրել օտարերկրյա մոնոպոլիաներին գնելու ազգայնացված արդյունաբերական ձեռնարկությունների ակցիաների 49 տոկոսը, որը համազոր էր նրանց կողմից այդ ձեռնարկությունների զավթմանը[29]։

ՉԿՊ-ն վճռական հակահարված հասցրեց երկրի ներսի և օտարերկրյա ռեակցիայի ստնձգությունները և, հենվելով բանվոր դասակարգի քաղաքական բարձր ակտիվության վրա, ձեռնամուխ եղավ դեկրետների կենսագործմանը։ Ընդ որում այդ դժվարին գործում հսկայական դեր խաղացին պրոֆմիությունները, գործարանային խորհուրդները և իրենք՝ բանվորները։ Նրանք խափանում էին գործարանատերերի բազմապիսի փորձերը՝ իրենց ունեցվածքը ազգայնացումից փրկելու ուղղությամբ, օգնում էին գործարանների կառավարչություններին նոր հիմունքներով արտադրության պրոցեսի

---

[28] Տե՛ս «Ռուդե պրավո», 26.X.1945։

[29] Տե՛ս «Տվորբա», № 7, 1952։

կազմակերպման, բանվորական նախաձեռնության ծավալման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և այլ հարցերում։ «Հնշտ է դեկրետ հրատարակել մասնավոր սեփականության վերացման մասին,—գրել է Վ. Ի. Լենինը,—բայց բանվորները միայն իրենք պետք է և կարող են կենսագործել այն»[30]։

Հենվելով բանվոր դասակարգի ուժեղ աջակցության վրա, ՉԿՊ-ն հաջողությամբ կենսագործեց ազգայնացման դեկրետները, որի հետևանքով ժողովրդա-դեմոկրատական կառավարության ձեռքն անցան 2867 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք միավորվեցին և կազմեցին 200 ազգային արդյունաբերական արտադրական միավորներ։ 1946 թվականի վերջին արդյունաբերության ազգայնացված սեկտորում կենտրոնացված էր երկրի բոլոր բանվորների 65 տոկոսը[31]։

Ազգայնացումը ընդգրկեց ժողովրդական տնտեսության հրամայական բարձունքները, այն է՝ բոլոր բանկերը և մասնավոր ապահովագրական ընկերությունները, ամբողջ լեռնամետալուրգիական արդյունաբերությունը, էներգետիկային արդյունաբերության 99 տոկոսը, քիմիական արդյունաբերության 77 տոկոսը, մետաղամշակության 73 տոկոսը, շաքարի արդյունաբերության 69 տոկոսը, կաշվի արդյունաբերության 59 տոկոսը և տեքստիլ արդյունաբերության 57 տոկոսը[32]։ Եթե նկատի ունենանք, որ ազգայնացված սեկտորին միացվեցին նաև երկաթուղիները, փոստը, ռադիոն, կինոն և այլն, որոնք բուրժուական ռեսպուբլիկայի ժամանակ գտնվել էին պետության ձեռքում և երկրի ազատագրումից հետո անցել ժողովրդա-դեմոկրատական պետության ձեռքը, ապա աչքի կզարնի այն կերակշռությունը, որը ստացավ ազգայնացված սեկտորը Չեխոսլովակիայի ժողովրդական տնտեսության մեջ (չհաշված գյուղատնտեսությունը)։

Բանկերի և արդյունաբերության կարևորագույն ճյուղերի ազ-

---

[30] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 26, էջ 445։

[31] Անհրաժեշտ է նշել, որ այդ ժամանակ Չեխոսլովակիայի բանվորության 11 տոկոսն էլ զբաղված էր այսպես կոչված կոնֆիսկատներում, որոնք իրենց բանվորների թվով և արտադրական հզորությամբ ազգայնացման ենթակա չէին, բայց գտնվում էին (ըստ 19.5.1945 թ. № 5 դեկրետի) ազգային կառավարչությունների ձեռքում (տե՛ս «Տվորբա», 1946, № 43, էջ 675)։

[32] Տե՛ս „Černá kniha kapitalistického hospodaření před únorem 1948“. Sbírka dokumentů, Vydálo ministerstvo informací. Praha, 1948, str. 15 (հետագայում,— «Չերնա կնիգա»)։

դայնացումը հուժկու հարված էր, որ հասցրեց Չեխոսլովակիայի ժողովուրդը բուրժուազիային և ուղի հարթեց երկրի սոցիալիզմի ուղիով զարգացման համար։ Այդ նշանակում էր, որ վերընթաց զարգացող ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան թևակոխեց մի նոր, ավելի բարձր էտապ, երբ նա համադեմոկրատական միջոցառումներին զուգընթաց, ինչպիսին էր ագրարային ռեֆորմը, լուծում էր արդեն ավելի բարդ, իրենց բնույթով «զուտ» սոցիալիստական ռևոլյուցիայի հարցեր։

Բանկերի և արդյունաբերության կարևորագույն ճյուղերի ազգայնացումով երկրի էկոնոմիկայում հանդես եկավ արմատապես նոր, իր բնույթով սոցիալիստական կազմաձև, որին պատկանում էր երկրի ապագան։ Բայց դա հին, բուրժուական արտադրական հարաբերությունների լիկվիդացման և նոր, սոցիալիստական արտադրական հարաբերությունների ստեղծման միայն սկիզբն էր։ Բավական է նշել, որ 1945 թվականի ազգայնացումից ուղիղ երկու տարի անց բուրժուազիայի ձեռքում դեռևս մնում էին տնտեսության կարևոր ճյուղերը, հատկապես թեթև արդյունաբերության ասպարեզում, այն է. սննդի արդյունաբերության՝ 47 տոկոսը, փայտամշակման՝ 42 տոկոսը, գինու և օղու արդյունաբերության՝ 46 տոկոսը, թղթի արդյունաբերության՝ 63 տոկոսը, շինանյութերի՝ 76 տոկոսը և այլն։ Բացի այդ, բուրժուազիան անհամեմատ լայն դիրքեր էր զբաղեցնում առևտրի ասպարեզում (83 տոկոս), այն դեպքում, երբ ազգայնացված սեկտորին բաժին էր ընկնում միայն 5 տոկոս և կոոպերատիվ առևտրին՝ 12 տոկոս։ Ի վերջո, արդյունաբերության մի շարք ճյուղեր, ինչպես, օրինակ, պորֆիրաֆարդյունաբերությունը, ամբողջությամբ մնացին բուրժուազիայի ձեռքում[33]։

Կոմունիստական պարտիայի հմուտ ղեկավարությամբ բանվոր դասակարգը մերթ այս, մերթ այն բնագավառում ձեռնարկում էր նորանոր գրոհներ բուրժուազիայի զբաղեցրած դիրքերի վրա։ Այսպես, օրինակ, 1945 թվականի հոկտեմբերի վերջին ընդունվեց դրամական ռեֆորմ, ըստ որի նոյեմբերի 1-ից մտցվում էր միասնական դրամական սիստեմ[34]։ Դրամի միասնությունը համարվեց չեխոսլովակյան քրոնը։ Նախկին չեխական և սլովակյան քրոնները 1:1 հա-

---

[33] Տե՛ս «Զերնա Կնիգա», էջ 15։

[34] Օկուպացիայի տարիներին, ինչպես նաև երկրի ազատագրումից հետո շրջանառության մեջ գտնվում էին հինգ տարատեսակ արժեքագրկված և անկայուն դրամանիշներ, որոնք ծնում էին հսկայական տնտեսական և ֆինանսական դժվարություններ։

բարերությամբ փոխանակվում էին չեխոսլովակյան քրոնով. ընդ որում յուրաքանչյուր քաղաքացի կարող էր փոխանակել ընդամենը 500 քրոն։ Բանկերում և խնայդրամարկղներում գտնված ավանդները վերցվեցին կալանքի տակ և բացառիկ դեպքերում էին փոխանակվում չեխոսլովակյան քրոններով, որը լուրջ հարված էր ֆինանսական և արդյունաբերական կապիտալին։ Դրամական ռեֆորմի շնորհիվ վերջ դրվեց քրոնի արժեքազրկմանը, բարձրացվեց նրա արժողությունը, որի հետևանքով կայունացավ երկրի դրամա-ֆինանսական սիստեմը։

Դրամական ռեֆորմի հետ մեկտեղ կառավարությունը եռակի անգամ (1939 թվականի համեմատությամբ) բարձրացրեց արդյունաբերական բանվորների և ծառայողների աշխատավարձը, ընդ որում ցածր աշխատավարձ ստացող բանվորների և կանանց աշխատավարձը ավելի շատ էր (3—5 անգամ) բարձրացվում։ Բացի այդ, 1945 թվականի դեկտեմբերի 1-ից մտցվեց աշխատավարձի հավելում՝ երեխաների դաստիարակության ֆոնդ։ Սահմանվեցին արդյունաբերական լայն ապառման ապրանքների հանրամատչելի և հասանելի գներ։

Այդ միջոցառումները նպաստեցին բանվոր դասակարգի և աշխատավորական լայն զանգվածների կենսամակարդակի բարձրացմանը։ Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ընդլայնման և հետագա ամրապնդման համար ՉԿՊ-ն ձեռնամուխ եղավ արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների արժեքների միջև գոյություն ունեցող «մկրատի», անհամապատասխանության լիկվիդացմանը։ Ընդ որում այդ «մկրատի» վերացմանը կոմունիստները մտադիր էին գյուղացիության դասակարգային շերտավորման տեսանկյունից։ Այսպես, օրինակ, 1945 թվականի ամռանը բարձրացվեցին մթերվող գյուղատնտեսական ապրանքների գները. ընդ որում միջակ և մանր գյուղացիներից մթերվող ցորենը և հաճարը գնահատվում էին գրեթե 2 անգամ ավելի, քան կալվածատերերից մթերվող նույնաքանակ և նույն որակի ցորենը և հաճարը։ Այնուհետև, նույն թվականի հոկտեմբերին 71 տոկոսով բարձրացվեց մթերվող անասնապահական և թռչնաբուծական մթերքների գինը, որում հիմնականում շահագրգռված էր մանր և միջակ գյուղացիությունը[35]։ Ի վերջո՝ օրենքով կիսով չափ իջեցվեց

[35] Տե՛ս J. Krblich, Stara a nova zemědělska politika, Praha, 1946, str. 11.

հողի արենդային վարձը, որով սահմանափակվեցին կալվածատերերի և կուլակների կողմից գյուղացիության շահագործման հնարավորությունները։

Գյուղատնտեսական մթերքների արժեքի բարձրացմանը զուգընթաց ժողովրդա-դեմոկրատական կառավարությունը իջեցնում էր գյուղատնտեսական մեքենաների, գործիքների, պարարտանյութերի և գյուղացիությանը անհրաժեշտ այլ արդյունաբերական ապրանքների գները, որի հետևանքով սեղմվում էր գների գոյություն ունեցող «մկրատը», նվազում արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների գների անհամապատասխանությունը, դիսպրոպորցիան։

Ժողովրդա-դեմոկրատական կառավարության քաղաքականության հետևանքով աճեց ժողովրդական լայն մասսաների, այդ թվում նաև միջակ գյուղացիության և ինտելիգենցիայի վստահությունը դեպի կառավարությունը և, հատկապես, դեպի բանվոր դասակարգը, նրա առաջատար ջոկատը՝ Կոմունիստական պարտիան։ Դրա փայլուն ապացույցն է ՉԿՊ անդամների թվի անօրինակ աճը։ 1945 թվականի մայիսին ֆաշիստական ընդհատակից նոր դուրս եկած ՉԿՊ-ն ուներ ընդամենը 27 հազար անդամ. միայն մեկ ամսվա ընթացքում նրա անդամների թիվը հասավ 500 հազարի, իսկ 1946 թվականի մարտին այն անցավ մեկ միլիոնից[36]։

Նվաճելով մեծ մասսայականություն և ամրապնդելով իր դիրքերը, ՉԿՊ-ն շարունակում էր անընդհատ խորացնել ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան և ապահովել նրա խաղաղ ճանապարհով, առանց զինված ապստամբության և արյունահեղ ու ավերիչ քաղաքացիական կռիվների սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճման պրոցեսը։

2. ՊԱՅՔԱՐ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԵՏԱԳԱ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ (1946—1947)

1946 թվականի մարտի 28-ին հրավիրվեց ՉԿՊ VIII համագումարը, որը նշանակալից իրադարձություն էր երկրի կյանքում։ Համագումարի նախօրյակին ՉԿՊ ԿԿ հատուկ նամակով դիմեց կոմունիստներին, որտեղ հանրագումարի բերելով պարտիայի վեր-

[36] Էնդ որում այդ թվերի մեջ չի մտնում Կոմունիստական պարտիայի անը Սլովակիայում, որի շարքերում 1945 թվականի օգոստոսին արդեն հաշվվում էր 200 հազար անդամ (Տե՛ս Sněm budovatelů Šťastné a silné republiky. Praha, 1946, str. 58)։

չին տասնամյակի գործունեությունը[37], լուսաբանեց նրա անցած պայքարի և հաղթանակների փառապանծ ուղին, բնութագրեց ժողովրդա-դեմոկրատական կարգերի հիմնական միջոցառումները, տվեց երկրի հասարակական-քաղաքական կյանքի ընթացիկ շրջանի վերլուծությունը և որոշեց հետագա անելիքները:

Համագումարին մասնակցում էին 1038 պատգամավոր խորհրդակցական ձայնով: Նրանք ներկայացնում էին 1031 հազար պարտիականների, որոնց 58 տոկոսը բանվորներ էին, 13 տոկոսը՝ գյուղացիներ: Սլովակիայի Կոմունիստական պարտիան, որ շարունակում էր մնալ ինքնուրույն պարտիական միավոր, համագումարում ներկայացված էր 50 պատգամավորներով: Պարտիայի գործունեության գլխավոր քաղաքական գիծը,—ընդգծեց համագումարը,—ձևոք բերած բոլոր քաղաքական, սոցիալական և էկոնոմիկական նվաճումների կոնսոլիդացիոն ամրապնդումն է և բուրժուազիայի նկատմամբ բանվոր դասակարգի խաղաղ ճանապարհով վերջնական հաղթանակի նվաճումը: ՉԿՊ-ի գլխավոր քաղաքական գծի կենսագործման համար անհրաժեշտ է՝ 1. պայքարել Ազգային կոմիտեների, որպես իշխանության օրգանների, կոնսոլիդացիոն ամրապնդման համար, 2. հասնել սոցիալ-տնտեսական դեմոկրատական նվաճումների, այդ թվում նաև չեխերի ու սլովակների իրավահավասարության կոնսոլիդացիոն ճանաչման, 3. ավարտել արդյունաբերության ազգայնացումը, 4. ավարտել ագրարային ռեֆորմը, 5. ամրապնդել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, 6. բարելավել աշխատավորների նյութական և կենցաղային պայմանները, 7. վերանայել հարկային քաղաքականությունը, մտցնել սոցիալական ապահովագրության նոր սիստեմ և այլն:

1946 թվականի ապրիլին տեղի ունեցավ Չեխոսլովակիայի Միացյալ ռևոլյուցիոն պրոֆմիութենական շարժման (որի շարքերում հաշվվում էին մոտ 2 միլիոն բանվորներ ու ծառայողներ) անդրանիկ համագումարը: Այստեղ միավորվեցին չեխական և սլովակյան պրոֆմիությունները, ստեղծվեց մեկ ընդհանուր գլխավոր օրգան՝ պրոֆմիությունների Կենտրոնական խորհուրդը, Անտոնին Զապոտոցկու գլխավորությամբ: Համագումարը ջերմորեն ողջունեց ՉԿՊ VIII համագումարի պատմական որոշումները և ընդգծեց Միասնա-

---

[37] ՉԿՊ VII համագումարը տեղի է ունեցել 1936 թվականին:

կան ռևոլյուցիոն պրոֆմիութենական շարժման խնդիրները՝ այդ որոշումների կենսագործման ուղղությամբ։

ՁԿՊ-ի և Միացյալ ռևոլյուցիոն պրոֆմիութենական շարժման հաջողությունները, նրանց վճռականությունը ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան՝ սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճելու ուղղությամբ, բուրժուական շրջաններում առաջ բերեցին մեծ ապնադ։ Ակտիվացնելով իր գործունեությունը, ռեակցիան ջանում էր Ազգային օրենսդիր ժողովի առաջիկա ընտրություններում հասնել հաղթանակի, իր ձեռքը վերցնել իշխանության օրգանները, լիկվիդացնել ժողովրդական մասսաների նվաճումները և վերականգնել բուրժուական կարգերը։ Ընդ որում ռեակցիայի գործունեությանը նպաստում էր այն հանգամանքը, որ դեռևս 1945 թվականի նոյեմբերին սովետական զորքերը դուրս էին բերվել Չեխոսլովակիայից, որ միջազգային ասպարեզում ևս աշխուժացել էր ռեակցիան։

Ռեակցիոն մտահղացումը կենսագործելու նպատակով բուրժուական պարտիաները սկսեցին ոչ միայն համախմբել իրենց ուժերը, այլև դաշնի համաձայնություններ կնքել արգելված ֆաշիստական և կիսաֆաշիստական պարտիաների նախկին պարագլուխների հետ, որպեսզի ապահովեն նրանց համախոհների ձայներն ու աջակցությունը առաջիկա ընտրություններում։ Այսպես, օրինակ, Պյոտր Չեհիկի ջանքերով ազգային-սոցիալիստական պարտիայի մեջ ընդունվեց և այդ պարտիայի Կենտրոնական քարտուղարության դյուղատնտեսական բաժնի վարիչ նշանակվեց արգելված ֆաշիստական «Ազգարային պարտիայի» պարագլուխ, օկուպացիայի տարիներին պրոտեկտորատի «կառավարության» մինիստր, կալվածատեր Լ. Ցիլերաբենդը։

Ազգային-սոցիալիստներից ետ չմնացին ալովակյան դեմոկրատները, որոնք Յան Ուրբինի նախաձեռնությամբ ընտրություններից մեկ ամիս առաջ կնքեցին դաշնի համաձայնություն գլինկայական ֆաշիստական ընդհատակի հետ և պարտավորվեցին ընտրություններից հետո՝ որպես փոխհատուցում, նրանց տրամադրել պետական սպարատում և տնտեսական հիմնարկներում ձեռք բերած պոստերի 70 տոկոսը։ Նման միջոցների դիմեցին նաև Չեխոսլովակիայի ժողովրդական (կաթոլիկական) պարտիայի պարագլուխները։

Համախմբելով խայտաբղետ ռեակցիոներներին իրենց շուրջը, բուրժուական պարտիաները լայն կամպանիա սկսեցին ընդդեմ կոմունիստների և նրանց ձեռնարկած միջոցառումների։ «Մենք

դեմ ենք եղել արդյունաբերության ազգայնացման դեկրետին, որովհետև ազգայնացումը բարոյապես պարալիզում է նախաձեռնությունը, շահագրգռվածությունը և վարպետությունը։ Ընտրություններից հետո մենք կանցկացնենք դեկրետի արմատական վերանայում»,—հայտարարում էր ժողովրդական պարտիայի դեպուտատ Ներմուտ Պեկոը նախընտրական ժողովներից մեկում[38]։

Ռեակցիան միաժամանակ բազմապիսի հերյուրանքներ էր տարածում կոմունիստների հասցեին, որոնք, իբր, ձգտում են «բռնության և տեռորի», ջանում են վերացնել ամեն տեսակի սեփականություն և կրոնը, ցանկանում են խզել «մաղձմի և ձեռնատս» փոխհարաբերությունները Արևմուտքի հետ և այլն, և այլն։ Սատանալով մեծամասնություն, հայտարարում էին նրանք, մենք «կշտկենք, կվերանայենք ռևոլյուցիայի բոլոր մեղքերը», այդ թվում նաև Կոշիցյան ծրագիրը, որը, նրանց խոսքերով ասած, «Արևելյան ծրագիր է և մեր պայմաններում անընդունելի»[39]։

Նման ելույթներին տոն էր տալիս ռեսպուբլիկայի պրեզիդենտը։ Բավական է նշել, որ նա անգամ ժամանակավոր Ազգային ժողովի ամբիոնից հայտարարում էր, որ «Ազգային օրենսդիր ժողովի ուղղակի խնդիրը կլինի՝ նորից ուսումնասիրել բոլոր դեկրետները, այս կամ այն ձևով փոփոխել դրանք և, հնարավոր է, հասուն քննարկումից հետո՝ վերացնել»[40]։

Կոմունիստների դեմ մղած նախընտրական պայքարում մեծ ակտիվություն էր ցուցաբերում կաթոլիկ եկեղեցին, որը գործում էր Վատիկանի ուղղակի թելադրանքով։ «Ընտրությունները,—քարոզում էին հոգևորականները,—դաղտնի են աշխարհիկ իշխանություններից։ Աստծո աչքերը թափանցում են և՛ ծրար, և՛ ընտրական արկղ, և՛ մարդու հոգի։ Կոմունիստների օգտին քվեարկողը գործում է մեծ մեղք, աններելի մեղք աստծո և ազգի առջև»[41]։

Ռեակցիոներների անդրկուլիսյան գործարքներին, նրանց դեմագոգիային և հակակոմունիստական ելույթներին ՀԿՊ-ն հակադրեց ժողովրդա-դեմոկրատական կարգերի ամրապնդման, ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի հետագա խորացման և սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճման պարզ ու մատչելի հասկանալի ծրագիր, որը տպագրվեց մայիսի 12-ին և կրում էր «Հանուն

---

[38] «Լիդովա դեմոկրացիե», 22.V.1946։

[39] Մեջ է բերված ըստ «Ռուդե պրավո», 23.V.1946։

[40] Նույն տեղում, 28.X.1950։

[41] Մեջ է բերված ըստ „Pravda", 17.V.1946; 1.VI.1946.

երջանիկ ու ուժեղ Չեխոսլովակյան ռեսպուբլիկայի» խորագիրը: Դա ստեղծագործ շինարարության ծրագիր էր, այդտեղ շարադրված էին երկրի տնտեսության վերականգնման ու զարգացման ապագա երկամյա պլանի հիմնական ցուցանիշները և կոնստիտուցիայի սկզբունքները: «Կոմունիստների հաղթանակը առաջիկա ընտրություններում,—ընդգծված էր այդ պատմական փաստաթղթում,— նշանակում է, որ ռեսպուբլիկան այլևս երբեք ետ չի դնա, այլ կընթանա միայն առաջ՝ սոցիալիզմի ուղիով»[42]: Նույնանման նախընտրական ծրագրով հանդես եկավ նաև Սլովակիայի Կոմունիստական պարտիան:

1946 թվականի մայիսի 26-ին տեղի ունեցան Ազգային օրենսդիր ժողովի ընտրությունները, որի արդյունքները լուրջ հարված էին ակտիվացած ռեակցիային և վկայում էին, որ կոմունիստները ժողովրդական մասսաների մեջ մյուս պարտիաների համեմատությամբ զբաղեցնում են առաջատար տեղ: Չեխիայում, Մորավիայում և Սիլեզիայում Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիան հավաքեց բոլոր ձայների 40,2 տոկոսը, այն դեպքում, երբ ազգային-սոցիալիստական պարտիան ստացավ ձայների միայն 23,7 տոկոսը, ժողովրդական (կաթոլիկական) պարտիան՝ 20,2 տոկոսը, իսկ սոցիալ-դեմոկրատական պարտիան՝ 15,9 տոկոսը: Ընտրությունները, այդպիսով, ամրապնդեցին ժողովրդական դեմոկրատիայի հիմքերը, խափանեցին ներքին և արտաքին ռեակցիայի բոլոր հաշվարկները:

Միաժամանակ ընտրությունները ցույց տվեցին, որ բուրժուական և մանրբուրժուական պարտիաները դեռևս վայելում են ժողովրդի որոշ մասի վստահությունը: Դրությունը հատկապես անմխիթար էր Սլովակիայում, ուր որոշ ազգային կոմիտեների մեջ սողոսկել էին այնպիսի տարրեր, որոնք բացահայտ կերպով հանդես էին գալիս ընդդեմ ժողովրդա-դեմոկրատական ռեժիմի: Սլովակիայի Կոմունիստական պարտիան հավաքել էր ձայների ընդամենը 30,4 տոկոսը:

Համաձայն ընտրությունների փաստական արդյունքների, կոմունիստները Հիմնադիր Ազգային ժողովում[43] ստացան 114 ման-

---

[42] «Ռուդե պրավո», 12.V.1946:

[43] Քանի որ 1946 թվականի Ազգային օրենսդիր ժողովը կոչված էր երկրի հասարակական, քաղաքական և պետական ամբողջ կյանքի կոնստիտուցիոն հիմունքների մշակման և կոնստիտուցիայի ընդունման համար, ապա այն անվանվեց նաև Հիմնադիր Ազգային ժողով:

դատ, ազգային-սոցիալիստները՝ 56, ժողովրդական (կոմունիստական) պարտիան՝ 46, սլովակյան դեմոկրատները՝ 43, սոցիալ-դեմոկրատները՝ 39 և 2 մանդատ էլ՝ անպարտիականները։ Այսպիսով, թեպետև Ազգային Ճակատի պարտիաների շարքում կոմունիստները զբաղեցնում էին առաջին տեղը, բայց Հիմնադիր ժողովում չունեին մեծամասնություն։ Ավելին. անգամ սոցիալ-դեմոկրատների հետ միասին վերցրած նրանք կարող էին կազմել միայն աննշան մեծամասնություն (153:147)։

Ընտրությունների շնորհիվ կոմունիստների դիրքերը բավականաչափ ամրապնդվեցին տեղական ազգային կոմիտեներում, որոնց 55 տոկոսի նախագահներ ընտրվել էին կոմունիստներից, իսկ չեխական հողերի ընդամենը 163 շրջանային ազգային կոմիտեների՝ 128-ի նախագահ դարձյալ ընտրվել էին կոմունիստներից։

1946 թվականի հուլիսի 2-ին կազմակերպվեց Ազգային Ճակատի նոր, հերթական՝ երրորդ կառավարությունը, որի ընդամենը 26 մինիստրական տեղերից 9-ը զբաղեցրին կոմունիստները (նախկին 2 կառավարություններում նրանք զբաղեցրել են 8-ական տեղ)։ Հաս սոցիալ-դեմոկրատ Զդենեկ Ֆիրլինգերի փոխարեն կառավարության նախագահ դարձավ Կլեմենտ Գոտվալդը։ Այդ տեղաշարժերը իրենց արտահայտությունը գտան կառավարության գործունեության ծրագրում։ Եթե Կոշիցյան ծրագիրը երկրում սկսված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի ընդհանուր ծրագիր էր, ապա Ազգային Ճակատի երրորդ կառավարության ծրագիրը ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան՝ խաղաղ ճանապարհով հաղթական սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճման մանրակրկիտ և նպատակասլաց ծրագիր էր։

Ծրագրի տնտեսական մասի կենսագործման համար անմիջապես կազմակերպվեց Բարձրագույն տնտեսական խորհուրդ և Կենտրոնական պլանային հանձնաժողով, որոնք պարտավոր էին կարճ ժամանակամիջոցում մշակել և ներկայացնել ժողովրդական տնտեսության վերականգնման երկամյա պլան։ Այդ գործում նրանց մեծ օգնություն էին ցույց տալիս պրոֆմիությունները, որոնք ակտիվ կերպով մասնակցում էին արդյունաբերության պատենցիալ հնարավորությունների բացահայտման և զարգացման կոնկրետ ցուցանիշների կանխորոշման գործին։

1946 թվականի հոկտեմբերի 26-ին Ազգային ժողովն ընդունեց օրենք երկամյա պլանի մասին, որը նախատեսում էր.

1. Լրիվ կերպով վերականգնել օկուպացիայի տարիներին քայքայված ժողովրդական տնտեսությունը և 10 տոկոսով գերազանցել

արդյունաբերության 1937 թվականի մակարդակը՝ ապահովելով արտադրության միջոցների արտադրության («Ա» խումբ) առավել արագ աճ։

2. Գյուղատնտեսության արտադրանքով հասնել նախապատերազմյան մակարդակին և ավարտել գյուղում սոցիալ-տնտեսական բարեփոխումների անցկացումը, հատկապես՝ ագրարային ռեֆորմը։

3. Դնել Սլովակիայի ինդուստրացման հիմքերը ի հաշիվ տեղի արդյունաբերական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և այնտեղ չեխական մարզերից որոշ արդյունաբերական օբյեկտների տեղափոխման։

4. Ապահովել սահմանամերձ մարզերի վերաբնակեցումը չեխերով և սլովակներով այնպես, որ լրիվ կերպով օգտագործվեն նրանց արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության հնարավորությունները։

5. Բարելավել ժողովրդական լայն մասսաների նյութական վիճակը և կենցաղային պայմանները։

Այդ խնդիրների կենսագործման համար երկամյա պլանը նախատեսում էր կապիտալ ներդրումներ՝ 70 միլիարդ չեխոսլովակյան քրոնի չափով, ընդ որում 25 միլիարդ քրոն՝ արդյունաբերության մեջ, 15 միլիարդ քրոն՝ տրանսպորտում, 14 միլիարդ քրոն՝ բնակարանային շինարարության մեջ և 5,2 միլիարդ քրոն՝ գյուղատնտեսության մեջ։ Սլովակիայի ինդուստրացման հիմքերը դնելու նպատակով պլանով նախատեսված ամբողջ կապիտալ ներդրումներից (70 միլիարդ քրոնից) 22 միլիարդ քրոնը ներդրվում էր նրա արդյունաբերության և տրանսպորտի զարգացման մեջ։

Շնորհիվ կոմունիստների ջանքերի Գոտվալդի կառավարությունը հրաժարվեց իմպերիալիստական տերություններից ստրկացուցիչ վարկեր վերցնելուց և վերոհիշյալ կապիտալ ներդրումները կատարեց գլխավորապես ի հաշիվ երկրի ներքին աղբյուրների, առաջին հերթին՝ աղգայնացված արդյունաբերական ձեռնարկություններից ստացվող եկամտի։ Երկամյա պլանի կատարումը ապահովելու համար կոմունիստների պահանջով կազմակերպվեց Հիմնադիր Ազգային ժողովի հատուկ կոմիտե, որը մշտապես պետք է հսկեր պլանի կատարման ընթացքը և այդ մասին տեղյակ պահեր կառավարությանը։

Ռեակցիան թեպետև սկզբունքորեն դեմ չարտահայտվեց երկամյա պլանին, որը նախատեսված էր 1947—1948 թվականների համար, բայց զգալի պայքար ծավալեց նրա դեմ։ Այդ «պլանը ոչ

այլ ինչ է, եթե ոչ միայն ծրագիր, անամեջ ռեկլամ»,—գրում էր ազգային-սոցիալիստների կենտրոնական օրգանը[44]: «Ինչպես կարելի է սկսել արտադրություն,—ձայնակցում էր նրան ժողովրդական (կաթոլիկական) պարտիայի կենտրոնական օրգանը,—նախորդը այն կաշկանդելով ինչ-որ թվերով, այն էլ այնպիսի, որ կատարել անհնար է»[45]:

Ի հակադրություն ռեակցիայի, բանվոր դասակարգը և աշխատավորական լայն մասսաները մեծ խանդավառությամբ ընդունեցին երկամյա պլանը և ձեռնամուխ եղան նրա կենսագործմանը: Շնորհիվ աշխատանքային վերելքի, որ առաջ բերեց երկամյակը, նրա առաջին օրը՝ 1947 թվականի հունվարի 2-ին ամենուր դերակատարվեց պլանային առաջադրանքը: Պոլդին Գուտ մետալուրգիական կոմբինատը երկամյակի առաջին ամսվա պլանը կատարեց 15 օրում, իսկ հունվարի 26-ին երկրի գրեթե բոլոր ձեռնարկությունները ավարտեցին այդ ամսվա պլանի կատարումը:

Բանվորական ուժի հսկայական պակասը, որ զգացվում էր երկրում, դրացնելու նպատակով արտադրության մեջ ընդգրկվեցին պետական, պարտիական և պրոֆմիութենական ապարատի շատ ծառայողներ (շուրջ 100 հազար հոգի), կանայք և կիսաաշխատունակներ:

Կոմունիստական պարտիան և պրոֆմիությունները լայն պայքար սկսեցին աշխատանքային կարգապահության և աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի ինքնարժեքի իջեցման և արտադրության մեջ մրցության ծավալման ուղղությամբ: Լայն տարածում ստացավ աշխատանքային կամավորական բրիգադների կազմակերպումը, որոնք, շարաթօրյակների և կիրակնօրյակների ձևով, անվճար կերպով աշխատում էին օկուպացիայի տարիներին ավերված կամուրջների, երկաթուղիների և արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման վրա:

Ռեակցիոներներն ամեն կերպ ջանում էին խոչընդոտել և տապալել երկամյակի կենսագործումը, ընդ որում հիմնական հարվածը ուղղել էին ազգայնացված ձեռնարկությունների դեմ: Օգտվելով այն հանգամանքից, որ մի շարք ազգայնացված ձեռնարկություններ 1947 թվականին դեռևս աշխատում էին որոշ դեֆիցիտով, ռեակցիան պահանջում էր այդ ձեռնարկությունները վերադարձնել իրենց

---

[44] «Մոնդոն սյոմո», 11.VII.1946.

[45] «Լիդովա դեմոկրացիե», 27.X.1946.

նախկին տերերին, կամ էլ՝ կոնցեսիայով տալ օտարերկրյա իմպերիալիստներին։ Ռեակցիան դիմում էր նաև դիվերսիոն ակտերի՝ ազդայնացված ձեռնարկությունների պայթեցումների, հրկիզումների և այլն։

Ռեակցիոներներին ընկճելու և երկամյա պլանի կենսագործումը ապահովելու նպատակով կոմունիստներն առաջ քաշեցին և օրենսդրական կարգով հրատարակեցին հատուկ որոշում, որը վնասարարներին սպառնում էր կալանքով (1 ամսից—10 տարի ժամկետով) և մեծ տուգանքով (100 քրոնից մինչև 1 միլիոն քրոնի չափով)։ Անդրադառնալով ռեակցիայի գործունեությանը և երկամյա պլանի կատարման ընթացքին, ՉԿՊ Կենտկոմի 1947 թվականի Հունվարյան պլենումը ընդգծեց, որ «ապարդյուն են ռեակցիայի ճիգերը, ոչինչ մեզ չի կարող ստիպել հրաժարվելու երկամյակի կոնտրոլ թվերի կատարումից», որ «երկամյակը լավ սկսվեց» և, որ կարևոր է, «երկամյակի գաղափարը տիրապետեցնել է մասսաներին և դարձել նյութական մեծ ուժ»[46]։

Ելնելով կառավարության ծրագրից, հողագործության մինիստրությունը, որը գլխավորում էր կոմունիստ Յու. Դյուրիշը, 1946 թվականի ամռանը մշակեց գյուղում դեմոկրատական բարեփոխումների հետագա ծավալման 6 նախագծեր։ Դրանցից առավել կարևորներն էին. 1. 1919 թվականի ապրարային ռեֆորմի[47] վերանայման

---

[46] «Ռուդ պրավո», 23.I.1947։

[47] Ըստ 1919 թվականի ապրիլի 12-ի դեմոկրատական ագրարային ռեֆորմի, որն ընդունվել էր ռեակցիոնի շարժման համընդհանուր ճնշման տակ, կառավարությունը պարտավորվել էր դնել և մատչելի գներով գյուղացիությանը վերավաճառել 150 հեկտար վարելահողից և 250 հեկտար գյուղատնտեսական հողից ավելի ունեցողների հողատարածությունները։ Բայց ծանոթագրության մեջ շեշտված էր, որ «այն հողային տարածությունները, որոնց վրա նրանց տերերը ունեն անշարժ գույք, շարարի և գարեջրի գործարաններ, ճակնդեղի պլանտացիաներ, գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկություններ, կամ այդ հողերում կան պատմական հուշարձաններ, ընական գեղեցկություններ և կուլտուրական արժեքներ, այդ հողերը գնման և վերավաճառման ենթակա չեն»։ Այդ «հոյակապ» վերապահումը հմտորեն օգտագործեցին կալվածատերերը, որի հետևանքով գնման և վերավաճառման ենթակա 4 միլիոն հեկտար հողից մինչև 1937 թվականը գնվեց և վերավաճառվեց ընդամենը 1700 հազար հեկտար։ Ընդ որում դրանից միայն 640 հազար հեկտարն էր (16 տոկոս) վաճառվել գյուղացիությանը, իսկ մնացածը [այսպեսից էլ հենց ծագում է «մնացորդային հողակտորներ» անունը („остаточные") կամ՝ չնիներին— „збытковые" имения] խոշոր հողակտորներով (միջին հաշվով 100 հեկտար) վաճառվել էր խոշոր կուլակներին, որը ռեֆորմի մի նոր խախտում էր։ Ուստի 1919 թվականի դեմոկրատական ագ-

և նրա կենսագործման չարաշահումների շտկման, 2. որսի կալվածատիրական մենաշնորհ իրավունքի վերացման, 3. գյուղացիության հողերի ընդմիջվածության լիկվիդացման՝ ի հաշիվ կալվածատիրական և կուլակային հողատարածությունների, 4. երկամյակի խնդիրների կատարման գործում գյուղացիությանը էական օգնություն ցույց տալու նախագծերը և այլն։

Ազգային-սոցիալիստական, ժողովրդական և Սլովակիայի դեմոկրատական պարտիաների ներկայացուցիչները վճռականապես դեմ արտահայտվեցին այդ նախագծերին. «Մենք դեմ ենք այն խոշոր կալվածատերերի տնտեսությունների վերացմանը,—հայտարարեց Գուբերտ Ռիպկան,—որոնք պահպանել են իրենց գոյությունը առաջին ռեսպուբլիկայում անցկացրած (1919 թվականին—Ս. Հ.) ագրարային ռեֆորմից հետո»[48]։ Ստանալով կառավարության նման անդամներից ակտիվ աջակցություն, ռեակցիան ակտիվացրեց իր քայքայիչ գործունեությունը. գյուղերում սկսեցին տարածել հակակոմունիստական թերթիկներ, կուլակային տարրերից կազմակերպել զինված բանդաներ և այլն։ Միաժամանակ ռեակցիան ուժեղացրեց պայքարը արդյունաբերության աղգայնացված ձեռնարկությունների, երկամյա պլանի և մյուս դեմոկրատական միջոցառումների դեմ։ Գնալով բուրժուական պարտիաները ավելի էին ակտիվացնում իրենց գործունեությունը և ձգտում Աղգային ճակատի ներսում ու իշխանության օրգաններում կազմակերպել հակակոմունիստական միասնական բլոկ։

1947 թվականի հունվարին հրավիրվեց ՉԿՊ ԿԿ պլենում, որը քննարկելով Աղգային ճակատում ու երկրում ստեղծված իրադրությունը և ելնելով ՉԿՊ VIII համագումարի՝ ռևոլյուցիայի խաղաղ զարգացման մասին պատմական որոշումներից, ընդգծեց, որ ներկա դրության առանցքային հարցը՝ ժողովրդի միաժամանակության, այդ թվում նաև միջակ գյուղացիության նվաճումը և Կոմունիստական պարտիայի շուրջը համախմբումն է։ Ուստի անհրաժեշտ է վճռական և համառ պայքար ծավալել ժողովրդի կենսական պա-

---

բարային ռեֆորմի հետևողական կենսագործումը լուրջ հարված կլիներ կալվածատիրական և խոշոր կուլակային հողատիրությանը։ Հենց դա էր պատճառը, որ ՉԿՊ-ն առաջ քաշեց 1919 թվականի ագրարային ռեֆորմի վերանայման և նրա կենսագործման չարաշահումների շտկման հարցը, որը միաժամանակ գյուղացիական լայն մասսաների շուրջ 30 տարվա անընդհատ պայքարի առարկա էր դարձել։

[48] Մեջ է բերված ըստ «Ռուդե պրավո», 13.III.1947։

հանջների բավարարման համար և այդ պայքարի ընթացքում մինչև վերջ մերկացնել ռեակցիոներներին, դիմակազերծել նրանց, առանց դեմքին և դիրքին նայելու անվանակոչել յուրաքանչյուրին, ով հակադրվում է ժողովրդին, որպեսզի ժողովուրդն իմանա, թե ով է իր կոնկրետ թշնամին։ Արդի պայմաններում նվաճել ժողովրդի մեծամասնությունը, նշանակում է «կատարել նոր նշանակալից քայլ դեպի առաջ, դեպի մեր վերջնական նպատակը, դեպի սոցիալիզմ»[49]։

Զինված ՀԿԳ ԿԿ հունվարյան պլենումի կոնկրետ ցուցումներով, կոմունիստները մարտի նետվեցին հանուն ժողովրդի մեծամասնության նվաճման, հանուն խաղաղ ճանապարհով սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի։ Այդ ժամանակ կոմունիստների ու ոչ-կոմունիստական պարտիաների պայքարի հիմնական օղակներից էր արդյունաբերական այն ձեռնարկությունների բախտը, որոնք համաձայն 1945 թվականի մայիսի 19-ի (№ 5) դեկրետի կոնֆիսկացվել էին գերմանացիներից, հունգարացիներից և նրանց չեխ ու սլովակ գործակալներից, բայց իրենց սակավ արտադրական հզորության հետևանքով չէին ազգայնացվել (ըստ 1945 թվականի հոկտեմբերի 24-ի № 100—103 դեկրետների) և մնացել էին ազգային կառավարչությունների ձեռքում։

Կոնֆիսկատները, ինչպես անվանվեցին այդ ձեռնարկությունները, թեպետև փոքր էին, բայց ունեին զգալի տեսակարար կշիռ երկրի արդյունաբերության մեջ։ Նրանցում զբաղված էր երկրի ամբողջ բանվոր դասակարգի 13 տոկոսը։ Ահա թե ինչու կոնֆիսկատների բախտի որոշման շուրջը ծավալվեց ուժեղ պայքար։ Արտահայտելով բուրժուազիայի իղձերը, ազգային-սոցիալիստական պարտիան ընդունեց հատուկ բանաձև, որտեղ ընդգծում էր, որ իբր «ազգայնացված արդյունաբերության գոյություն ունեցող ծավալը արդեն այժմ առաջ է բերում կառավարության մեջ անչափ տնտեսական դժվարություններ» և պահանջում «ազգայնացված արդյունաբերության ծավալը չընդլայնել՝ միացնելով նրան կոնֆիսկացված մանր և միջակ ձեռնարկությունները»[50]։

Բուրժուական պարտիաները դրանով չսահմանափակվեցին։ Նրանք ջանում էին այդ ձեռնարկությունները խլել ազգային կառավարչություններից և վերադարձնել նախկին տերերին, ընդ որում նման մեքենայությունները ձևակերպվում էին «օրինական» կարգով,

---

[49] «Ռուդե պրավո», 23.I.1947։

[50] «Սվոբոդնե սլովո», 10.IX.1946։

որովհետև Արդարադատության մինիստրությունը գտնվում էր ազգային-սոցիալիստների պարագլուխներից մեկի՝ Պրոկոպ Դրտինայի ձեռքում։

Կոմունիստները եռանդուն պայքար ծավալեցին ռեակցիայի դեմ և դեկավարեցին բանվոր դասակարգի հակադրումները։ 1947 թվականի մարտի սկզբին, երբ «դրտինյան դատարաններից» մեկը որոշում կայացրեց նախկին տիրոջը վերադարձնել Վարնսդորֆի խոշոր տեքստիլ կոմբինատը, այնտեղ ծագեց գործադուլ, որին մասնակցեցին շուրջ 10 հազար բանվորներ, այդ թվում նաև բուրժուական պարտիաների շարքային անդամները։ Գործադուլավորները պահանջում էին կոնֆիսկատների անհապաղ ազդայնացում։ Նման գործադուլներ տեղի ունեցան նաև Զեսկե-Բուդեյովիցում, Սեբեդում, Պոպրադում և այլուր, որոնք ստիպեցին ռեակցիային նահանջել։ Շատ չանցած ընդունվեց որոշում կոնֆիսկատների ազդայնացման մասին։

Կոնֆիսկատների համար մղվող պայքարում կոմունիստները բացահայտում և ընդգծում էին այն հակամարտությունը, որ գոյություն ուներ ռեակցիոն պարտիաների դեկավարության և նրանց շարքային անդամների միջև. ընդ որում կոմունիստական լրագրերը և ռադիոն հաղորդում էին ռեակցիոներների հակաբանվորական ելույթները՝ անվանակոչելով հեղինակին, նրա պարտիականությունը և պետական ապարատում զբաղեցրած տեղը, որով և օգնում էին մասսաներին ազատվելու նրանց վնասակար ազդեցությունից։

Կոմունիստները այնուհետև առաջ քաշեցին «Հողը պատկանում է նրան, ով վրան աշխատում է» սկզբունքը և դրեցին կալվածատիրական հողատիրության լրիվ վերացման հարցը[51]։ 1947 թվականի ապրիլի 4-ին Գրաձեց-Կրալով քաղաքում տեղի ունեցավ գյուղացիության հսկայական միտինգ, ուր գյուղատնտեսության մինիստրը հանդիսավորեն շարադրեց ագրարային քաղաքականության կոմունիստների առաջ քաշած նոր ծրագիրը։ Գրաձեցյան ծրագիրը, ինչպես այն անվանվեց հետագայում, նախատեսում էր. 1. հողի առավելագույն չափ (50 հեկտար), որից ավելին ենթակա էր պետության կողմից գնման և շունչոր գյուղացիությանը վերաբաժանման. 2. գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացում՝ պե-

[51] Դա երկրի հասարակական-քաղաքական կյանքի առանցքային հարցերից էր, քանի որ այնտեղ դեռևս կային 13 հազար կալվածատերեր, որոնց ձեռքում կենտրոնացված էր ավելի շատ հող, քան 350 հազար սակավահող գյուղացիության ձեռքում (տե՛ս «Զեմեդելսկե նովինի», 29.II.1948)։

տական մերենա-տրակտորային կայանների հիմնադրման միջոցով. 3. գոյություն ունեցող գյուղական ոչ-արտադրողական կոոպերատիվների դեմոկրատացում և միավորում. 4. միասնական գյուղատնտեսական հարկի և գյուղացիության սոցիալական ապահովագրության անցկացում և այլ արմատական դեմոկրատական միջոցառումներ:

Ռեակցիան, որը համառորեն ձգձգում էր Դյուրիշի վաղուց արդեն ներկայացրած 6 նախագծերի քննարկումը, լսել անգամ չէր կամենում Դրագոյան ծրագրի մասին և ամեն կերպ ջանում էր խափանել այն:

Մերկացնելով պառլամենտի[32] ռեակցիոն պատգամավորներին, կոմունիստները գյուղացիական լայն մասսաներին պայքարի կոչեցին: Նրանց նախաձեռնությամբ սկսեցին հրավիրվել գյուղացիության բազմամարդ միտինգներ, որոնք դատապարտելով ռեակցիոներներին, պահանջում էին անհապաղ կերպով ընդունել Դյուրիշի ներկայացրած օրենքների նախագծերը: Գյուղացիները ոչ միայն այդ միտինգների բացաշանչ բանաձևերն էին ուղարկում Պրագա՝ կառավարությանը և ռեակցիոն մինիստրներին, այլև հատուկ պատվիրակություններ: Միայն մայիս-հունիս ամիսներին Պրագա ժամանեցին տասնյակ հազարավոր գյուղացիական պատվիրակություններ, կառավարությանը ուղարկվեցին հարյուր հազարավոր կրքոտ բանաձևեր: Չսպասելով օրենքների ընդունմանը, չբավոր և միջակ գյուղացիությունը (անկախ պարտիական պատկանելությունից) ձեռնամուխ եղավ գյուղացիական հանձնաժողովների կազմակերպմանը, որոնք հաշվարկի էին ենթարկում կալվածատերերի և կուլակության հողատարածությունները ու կազմում հողի հավակնորդների ցուցակները:

Գյուղացիական շարժման ճնշման տակ ռեակցիան նահանջեց. 1947 թվականի հուլիսի 11-ին ընդունվեց օրենք 1919 թվականի ագրարային ռեֆորմի վերանայման, նրա կենսագործման վերատեսության և չարաշահումների շտկման մասին, որով և սկսվում է ժողովրդա-դեմոկրատական Չեխոսլովակիայում արմատական ագրարային ռեֆորմների անցկացման երկրորդ փուլը: Ըստ այդ օրենքի պետության կողմից հետգնման (վճարումը կատարվելու էր հողի 1913—1915 թվականների միջին գնով) և վերաբաժանման էր ենթակա շուրջ 1 միլիոն հեկտար հող, որը 1919 թվականի ագրարային

[32] Չեխոսլովակիայի օրենսդիր ազգային ժողովը դրականության մեջ անվանվում է նաև պառլամենտ:

ռեֆորմի խեղաթյուրման և շարաշահման հետևանքով կենտրոնացվել էր 423 խոշոր կալվածատերերի և 1884 այսպես կոչված «մնացորդային» տնտեսությունների ձեռքում։

Ռեակցիան կատաղի դիմադրում էր այդ օրենքի կենսագործմանը։ Նրա ակտիվացմանը նպաստեց վրա հասած՝ երկրի պատմության մեջ, անհնարին երաշտը ու անբերրիությունը, որի հետևանքով ոչնչացվեց հացաբույսերի 1947 թվականի ամբողջ բերքի 40 տոկոսը, իսկ կարտոֆիլի և շաքարի ճակնդեղի բերքի կեսից ավելին։ Երաշտի տված վնասը հասնում էր 15 միլիարդ քրոնի, այսինքն՝ գյուղատնտեսության ամբողջ արտադրանքի արժեքի 25 տոկոսի, որը կազմում էր երկրի ազգային եկամտի 10 տոկոսը և պետական բյուջեի $^1/_5$ մասը։

Կառավարությունը ստիպված իջեցրեց բնակչությանը տրվող մթերքների քարտային նորմաները։ Մեղադրելով կոմունիստներին տարերային աղետից ծագած տնտեսական դժվարությունների մեջ, տարածելով հերյուրանքներ նրանց հասցեին, ռեակցիան ջանում էր խորացնել այդ դժվարությունները, քայքայել երկրի առանց այն էլ քայքայված տնտեսությունը, խափանել բնակչության պարենավորման հնարավորությունները և առաջ բերել մասսայական դժգոհություններ, հուզումներ, տապալել ժողովրդա-դեմոկրատական կարգերը և վերականգնել բուրժուական ռեժիմը։

Ռեակցիան կոչ էր անում դյուղացիությանը չկատարել պետական պարտադիր մթերումները, մոռածել վաղվա՝ «առավել ևս» օրվա մասին։ Կալվածատերերը և կուլակները սկսեցին միաձայնավոր կերպով թաքցնել գյուղատնտեսական մթերքները, անգամ ոչնչացնել, չկատարել պետական պարտավորությունները, որպեսզի վատթարացնեն կառավարության և ժողովրդի վիճակը։ Ռեակցիան գործում էր ըստ սկզբունքի՝ «որքան վատ է ռեսպուբլիկայի համար, այնքան լավ է մեզ համար»։

Օգտագործելով տնտեսական դժվարությունները, ռեակցիան միաժամանակ ջանում էր Չեխոսլովակիան կտրել սոցիալիզմի և դեմոկրատիայի լագերից և երկիրը վերադարձնել իմպերիալիստական լագեր։ Ընդ որում ռեակցիային նպաստում էր այն հանգամանքը, որ առևտրի ասպարեզում բուրժուազիան զբաղեցնում էր դեռևս զգալի դիրք, իսկ արտաքին առևտրի մինիստրությունը գտնվում էր ազգային-սոցիալիստ Գուրնրտ Ռիպկայի ձեռքում։ Արդյունքը եղավ այն, որ 1947 թվականին շեշտակի նվազեց Չեխոսլովակիայի և ՍՍՌՄ-ի միջև եղած ապրանքաշրջանառության ծավալը (21 տո-

կոսից հասավ 14 տոկոսի) և ընդլայնվեց նրա և արևմտյան տերությունների տպրանքաշրջանառությունը։ Որպեսզի պարզ լինի, թե այդ տպրանքաշրջանառությունը ինչպիսի հիմունքներով էր կատարվում և դեպի ուր էր տանում, բավական է նշել, որ այդ կարճ ժամանակամիջոցում անգամ Չեխոսլովակիան թաղվեց զգալի պարտքի մեջ. ԱՄՆ-ին՝ ավելի քան մեկ միլիարդ քրոն և Անգլիային՝ ավելի քան կես միլիարդ քրոն։ Չվստահելով ժողովրդա-դեմոկրատական կառավարությանը, բուրժուազիան այդ երկրներում վաճառած ապրանքներից գոյացած դրամարները ներդնում էր ամերիկյան բանկերը, որի հետևանքով սկսվեց չեխոսլովակյան կապիտալի և վալյուտայի հոսք դեպի արտասահման, երկրում առաջ եկավ ինֆլյացիայի լուրջ վտանգ[53]։

Բուրժուազիան, որը վաճառում էր երկրի ազգային անկախությունը հանուն իր դասակարգի շահերի, լայն պայքար ծավալեց տխրահռչակ «Մարշալի պլանի» ընդունման համար։ Պրեզիդենտ Բենեշը, որին բնորոշ էր ձեռնպահություն և առավելագույն տատանողականություն («բենեշականություն»), ցույց արեց անսպասելի ձեռներեցություն. նա հատուկ նամակով դիմեց կառավարությանը, որտեղ ընդգծելով «Մարշալի պլանի» օգտակարությունը, պահանջում էր անհապաղ ընդունել այն։ Բուրժուական գործիչները ոչ միայն երկինք բարձրացրին «ամերիկյան մեծահոգությունը», «Մարշալի պլանը», այլև սկսեցին նսեմացնել Սովետական Միության եղբայրական օգնությունը, նրա դերը Պրագայի ազատագրման և կործանումից փրկելու գործում։

Մերկացնելով ռեակցիայի հետևն դնացող նպատակները և ելնելով երկրի ազգային ազատության և պետական անկախության շահերից, Կոմունիստական պարտիան վճռականապես մերժեց «Մարշալի պլանը» և համաձայնվեց ընդհանուր հիմունքներով հացամթերքներ դնել ԱՄՆ-ից։ Չեխոսլովակիայի ժողովրդին սովի ճիրաններում խեղդելու և ընկճելու նպատակով ամերիկյան իմպերիալիստները ոչ միայն դեմոնստրատիվ կերպով հրաժարվեցին Չեխոսլովակիային հացամթերքներ վաճառելուց, այլև ակտիվացրին իրենց ավերիչ գործունեությունը նրա տնտեսության մեջ։ Գոր-

[53] Երկրի ներքին և արտաքին ռեակցիայի համատեղ գործունեությունը, որը զգալի վնաս հասցրեց ժողովրդական տնտեսությանը, փաստական հարուստ նյութերի հիման վրա բացահայտված է 1948 թվականի փետրվարյան դեպքերից հետո Պրագայում լույս տեսած «Զերնա կնիգա» փաստաթղթերի ժողովածուում։

ծի դնելով սեփական, ինչպես նաև Վատիկանից[54] և հիտլերյան Գերմանիայից[55] ժառանգած գիվերսանտների լայն ցանցը, նրանք դավադրություններ էին նյութում ժողովրդա-դեմոկրատական կառավարության դեմ, հրկիզում գործարանները, ֆաբրիկաները, հացի շտեմարանները, պայթեցնում հանքեր և կամուրջներ, ներմուծում կուլտուրապային բղեղներ ու այլ վնասատուներ։

Սովի վտանգը կախվեց բնակչության գլխին։ Պարենավորման մինիստրությունը, որը գլխավորում էր աջ սոցիալ-դեմոկրատ Վացլավ Մայերը, ոչ միայն չէր մտածում բնակչության պարենավորման բարելավման մասին, այլև միտումնավոր կերպով ավելի վատթարացնում էր այն, պրովոկացիոն հայտարարություններով բնակչության մեջ առաջ բերում խուճապ, դյուզատնտեսական մթերքների շուկայական գների ոստիկուլյատիվ բարձրացում և այլն։

ՉԿՊ-ն վճռական միջոցառումներ ձեռնարկեց երկիրը սովից փրկելու և ներքին ու արտաքին ռեակցիան սանձահարելու համար։ Նրա նախաձեռնությամբ ժողովրդա-դեմոկրատական կառավարությունը պարենային օգնություն խնդրեց Սովետական Միությունից և դեմոկրատական լագերի երկրներից։ Կարճ ժամանակամիջոցում ՍՍՌՄ-ը Չեխոսլովակիային ավելի 400 հազար տոննա ցորեն, 200 հազար տոննա անասնակեր, 60 հազար տոննա արհես-

---

[54] Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, 1946 թվականին, Հռոմի պապ Պիոս 12-րդը Չեխոսլովակիայում ունեցած իր ամբողջ հետախուզական ցանցը, որը մասնագետների գնահատմամբ «աշխարհում ամենալավ կազմակերպված» հետախուզական ցանցերից էր, վաճառեց ամերիկյան իմպերիալիստներին, ստանալով տարեկան 5 միլիոն դոլար (տե՛ս Л. Свобода и др., Заговор Ватикана..., стр. 65)։

[55] Չեխոսլովակիայի Բավարական սահմանից ոչ հեռու գտնվող Շտեխովից ընակավայրում հիտլերականները Գերմանիայի վերջնական ջախջախման նախօրյակին հողում թաղել էին Չեխոսլովակիայում իրենց ունեցած «խիստ գաղտնի» հետախուզական ցանցի փաստաթղթերը, այդ թվում ամբողջ արխիվը, լրտեսների ցուցակները, նրանց պայմանանշանները և այլն։ Հոտոտելով այդ, ամերիկյան հետախուզությունը ամեն ջանք գործադրեց շտեխովիցյան արխիվն իր ձեռքը գցելու համար։ Բանն այնտեղ հասավ, որ 1946 թվականին ամերիկյան գինվորների մի հատուկ ջոկատ՝ խախտելով Բավարա-Չեխոսլովակյան սահմանը, թափանցեց Շտեխովից և կայծակի արագությամբ հափշտակեց ամբողջ արխիվը։ Այդպիսով հիտլերյան Գերմանիայի Չեխոսլովակիայում ունեցած «խիստ գաղտնի» հետախուզական ցանցը անցավ ամերիկյան իմպերիալիստների ձեռքը (տե՛ս Зд. Фирлингер, Международное значение февральских событий 1948 года в Чехословакии, „Новая и новейшая история", 1958, № 2, стр. 8)։

տական պարարտանյութ, ինչպես նաև մեծ քանակությամբ արդյունաբերական հումք (բամբակ, նավթ, երկաթ, մարգանեց և այլն), որոնք ապահովեցին նրա ոչ միայն բնակչության պարենավորումը, այլ նաև արդյունաբերության նորմալ աշխատանքը: Սովյալ Չեխոսլովակիային եղբայրական օգնության ձեռք մեկնեցին նաև Ռումինիան (25 հազար վագոն եգիպտացորեն), Հունգարիան (30 հազար տոննա եգիպտացորեն) և դեմոկրատական լագերի մյուս երկրները: Ընդ որում օգնությունը կատարվում էր Չեխոսլովակիայի համար բացառիկ նպաստավոր պայմաններով. բավական է նշել, որ ԵՊԼ Չեխոսլովակիան ՍՍՌՄ-ից ստացած միայն հացամթերքները գներ միջազգային կապիտալիստական շուկայում, ապա նա դրա համար պետք է վճարեր 1931 միլիոն քրոն կայուն ոսկով ավելի:

ՉԿՊ-ն շտահմանափակվեց արտաքինից պարենային օգնության կազմակերպումով և ձեռնամուխ եղավ ռեակցիայի ճնշման ու ներքին միջոցների հայթայթմանը: Մերկացնելով ռեակցիայի կողմից պարենավորման ասպարեզում արհեստականորեն ստեղծած դժվարությունները և դրանց հետևում գնացող քաղաքական նպատակները, կոմունիստները գյուղացիական լայն մասսաներին կոչ արեցին ոչ մի ջանք չխնայել պետական պարտադիր մթերումները կատարելու համար: Աշխատավոր գյուղացիությունը ջերմորեն արձագանքեց կոմունիստների կոչին, որի հետևանքով մի շարք շրջաններում ոչ միայն կատարվեցին, այլև գերակատարվեցին պետական մթերումների նորմաները: Տարեվերջին գրությունը զգալիորեն բարելավվեց. չեխական հողերում պետական հացամթերումների պլանը կատարվեց 75 տոկոսով, իսկ Սլովակիայում՝ 90 տոկոսով:

Կոմունիստների նախաձեռնությամբ կազմակերպվեցին պարենային արտակարգ հանձնաժողովներ, որոնք հետապնդում, հայտնաբերում և բռնագրավում էին կալվածատերերի, կուլակների և սպեկուլյանտների կողմից միտումնավոր կերպով թաքցրած գյուղատնտեսական մթերքները: Նրանց օգնությամբ պետական հսկողության օրգանները միայն Սլովակիայում հայտնաբերեցին և բռնագրավեցին 2,3 հազար ցենտներ ալյուր, 14 հազար ցենտներ ցորեն, 240 հազար մետր տեքստիլ գործվածքեղեն և այլն, որոնց պետական արժեքը կազմում էր 66 միլիոն քրոն, իսկ շուկայական գներով՝ 200 միլիոն քրոն: Սկսյալ 1947 թվականի օգոստոս ամսին Չեխոսլովակիայի աշխուժացած «սև շուկաներում» կալանքի վերցվեց 125 վագոն հաց:

Երաշտից առաջացած գյուղացիությանը էական օգնություն ցույց

տալու նպատակով կոմունիստները պահանջում էին արտակարգ հարկ նշանակել միլիոնատերերի վրա։ Ի դեպ՝ երկրում այդ ժամանակ հաշվվում էր շուրջ 35 հազար արդյունաբերական և հողային մագնատներ, որոնց ունեցվածքը գնահատվում էր շուրջ 50 միլիարդ քրոն և որոնց միայն 1947 թվականի եկամուտը հասնում էր 15 միլիարդ քրոնի։ Ազգային-սոցիալիստական, չեխական ժողովրդական և սլովակյան դեմոկրատական պարտիաների ներկայացուցիչները վճռականապես դեմ արտահայտվեցին կոմունիստների կողմից կառավարությանը ներկայացված՝ միլիոնատերերի արտակարգ հարկադրման օրենքի նախագծին։ Սեպտեմբերի 2-ի կառավարական նիստում այդ պարտիաների մինիստրները (12 հոգի) դեմ քվեարկեցին նախագծին, և այն մերժվեց[56]։ Միաժամանակ ընդունվեց օրենք (դարձյալ նրանց ձայներով), ըստ որի երաշտից տուժած գյուղացիությանը պետք է ցույց տրվի օգնություն ի հաշիվ քաղաքի և գյուղի աշխատավորներից գանձվող հարկերի։

«Թո՛ղ վճարեն հարուստները» ուղղությամբ ՉԿՊ-ն կարճ ժամանակամիջոցում համախմբեց մասսաներին և ուժի հանեց ընդդեմ կառավարության սեպտեմբերի 2-ի որոշման, որն ըստ էության պայքար էր ընդդեմ ռեակցիոն պարտիաների և նրանց 12 մինիստրների։ Ինչպես միշտ, այժմ էլ՝ պայքարի առաջին շաբաթներում ընթանում էր բանվոր դասակարգը։ Երկրի խոշորագույն մետալուրգիական կոմբինատներից մեկի (Վիտկովիցի) 35-հազարանոց բանվորությունը արդեն սեպտեմբերի 4-ին ընդդեմ, որ «Կոմբինատի աշխատողները համաձայն են այն մինիստրների նախագծի հետ, որոնք առաջարկում են գյուղացիությանը օգնություն ցույց տալ՝ միլիոնատերերին հարկադրելու ճանապարհով։ Իրենց աշխատանքով բանվորները արդեն բազմիցս ապացուցել են իրենց սերը դեպի ռեսպուբլիկան։ Ուստի թող 35 հազար նորաթուխ միլիոնատերերը զոհաբերեն իրենց 50 միլիարդից որոշ տոկոս հօգուտ տուժած գյուղացիության»[57]։ Մի քանի օրում նման բանաձևերով հանդես եկան

---

[56] Այն ժամանակ, երբ ռեակցիոն մամուլը միարերան գոչում էր, որ Չեխոսլովակիայում չկա անգամ դեթ մեկ միլիոնատեր, կոմունիստական մամուլը տպագրում էր միլիոնատերերի ցուցակները, հասցեները և թվարկում նրանց ունեցվածքը։ Բաղաքական պայքարի նման ձևը ունեցավ մեծ նշանակություն մասսաներին կոմպարտիայի շուրջը համախմբելու և այդ պայքարին ժամանակից դարձնելու գործում։ Բացի այդ, հրապարակվեցին այն 12 մինիստրների անունները և պարտիական պատկանելությունը, որոնք դեմ էին քվեարկել նախագծին։

[57] «Ռուդե պրավո», 5.IX.1947։

երկրի գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների բանվորները։

Ինչպես բանվորները, այնպես էլ գյուղացիական լայն մասսաները (անկախ պարտիական պատկանելությունից) միահամուռ կերպով հանդես եկան հօգուտ կոմունիստների ներկայացրած նախագծի ընդունման։ Գյուղերում տեղի էին ունենում մասսայական գյուղացիական միտինգներ, որոնք դատապարտում էին ազգային-սոցիալիստներին, ժողովրդական և Սլովակիայի դեմոկրատական պարտիաների պարագլուխների գործունեությունը և պահանջում գյուղացիությանը օգնել ի հաշիվ միլիոնատերերի։

Աշխատավորական լայն զանգվածների ճնշման տակ Չեխոսլովակիայի սոցիալ-դեմոկրատական պարտիայի ղեկավարությունը, որտեղ այդ ժամանակ գերակշռում էին ձախերը՝ Ֆիրլինգերի ղեկավարությամբ, որոշեց սահմանազատվել ռեակցիոն պարտիաներից և համագործակցել կոմունիստների հետ։ 1947 թվականի սեպտեմբերի 11-ին ՉԿՊ ԿԿ և Սոցիալ-դեմոկրատական պարտիայի ղեկավարությունը համաձայնություն եկան միասնաբար պայքարել միլիոնատերերին արտակարգ հարկադրելու, Ազգային ճակատը, որը ռեակցիոն պարտիաների պատակտիչ (ֆրակցիոնիստական) քաղաքականության հետևանքով զգալիորեն խարխլվել էր, ամրապնդելու, դեմոկրատական կոնստիտուցիա ընդունելու և մի շարք այլ ընթացիկ հարցերի լուծման գործում։ Չնայած աջ սոցիալիստների (Մայեր, Վիլիմ, Լաուշման) որոշակի դիմադրությանը, Կոմունիստական և Սոցիալ-դեմոկրատական պարտիաների ղեկավար օրգանները միասնական կոչով դիմեցին տեղական կազմակերպություններին, հայտնեցին ձեռք բերված համաձայնության մասին և պահանջեցին ամրապնդել սոցիալ-դեմոկրատների և կոմունիստների միասնական գործողությունները՝ վարից մինչև վեր։

Այդ համաձայնությունը մեծ խանդավառությամբ ընդունեցին շարքային պարտիականները, որոնք մինչ այդ էլ միասնաբար էին հանդես գալիս ընդդեմ ռեակցիայի բազմապլիսի մերենայությունների։ Ռեակցիան այլևս անկարող էր դիմադրել «ներքևից» եկող միասնական ճնշմանը և նորից ստիպված էր նահանջել։ Հոկտեմբերի 21-ին կառավարությունը վերանայեց իր սեպտեմբերի 2-ի որոշումը և ընդունեց կոմունիստների առաջարկած նախագիծը՝ միլիոնատերերի արտակարգ հարկադրման մասին։

Ըստ այդ օրենքի, կառավարությունը միլիոնատերերից գանձեց ավելի քան 6 միլիարդ քրոն, որը, որպես օգնություն, տրվեց երաշ-

տեղ քայքայված և տուժած գյուղացիությանը։ Պարզ է, որ նման միջոցառումը չէր կարող չընդլայնել կոմունիստների ազդեցության ոլորտները գյուղական շրջաններում։

ՉԿՊ-ի վճռական միջոցառումները և Սովետական Միության անշահախնդիր օգնությունը ապահովեցին ոչ միայն երաշտի և ներքին ու արտաքին ռեակցիայի գործունեության ծանր հետևանքների հաղթահարումը, այլ նաև երկամյա պլանի առաջին տարվա նորմաների կատարումը։ Արդյունաբերության զարգացման 1947 թվականի պետական պլանը կատարվեց 100,9 տոկոսով, որի հետևանքով այն իր արտադրանքով 2 անգամ գերազանցեց 1945 թվականի մակարդակը և գրեթե (98 տոկոս) հասավ նախապատերազմյան մակարդակին։ Սլովակիա տեղափոխվեցին և գործարկվեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, որի շնորհիվ նրա արդյունաբերությունը արդեն 1947 թվականի վերջին տվեց 67,8 տոկոսով ավելի արտադրանք, քան 1937 թվականին։ Ընդ որում, որը բնորոշ է և կարևոր, արդյունաբերության ազգայնացված սեկտորը ցույց տվեց իր անհամեմատ առավելությունները մասնավոր կապիտալիստական ձեռնարկությունների նկատմամբ, որոնցում և՛ աշխատանքի արտադրողականության աճը, և՛ պետական պլանների կատարողականը նշանակալից չափով ցածր էր, քան արդյունաբերության ազգայնացված սեկտորում։

Զինված ՉԿՊ 8-րդ համագումարի պատմական որոշումներով, Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիան հետհամագումարյան ժամանակաշրջանում, այդպիսով, ձեռք բերեց հսկայական նվաճումներ. երկամյակի՝ առաջին տարվա պլանները արդյունաբերության բնագավառում կերակատարվեցին, հաղթահարվեցին 1947 թվականի երաշտի ծանր հետևանքները, ամրապնդվեցին նրա ազատությունը և անկախությունը, ընդլայնվեց տնտեսության սոցիալիստական սիստեմը և խորացվեց ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան։ Ուստի պատահական չէ, որ 8-րդ համագումարը մտավ երկրի և ՉԿՊ-ի պատմության մեջ «Ստեղծագործողների համագումար» անվան տակ։ Լինելով չեխոսլովակյան ժողովրդի բոլոր նվաճումների ոգեշնչողը և կազմակերպիչը, ՉԿՊ-ն, ինչպես վերը տեսանք, ձեռք բերեց մեծ մասսայականություն, որը Չեխոսլովակիայում սոցիալիստական ռևոլյուցիայի խաղաղ ճանապարհով հաղթանակի գրավականն էր։

3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդա-դեմոկրատական կարգերի հաստատման առաջին իսկ օրից շեխոսլովակյան ռեակցիան դավադրություն էր նախապատրաստում նրա դեմ: Ստանալով հարված հարվածի ետևից և քայլ առ քայլ կորցնելով իր երբեմնի ազդեցության մնացորդները մասսաների վրա, Չեխոսլովակիայի ներքին ռեակցիոն ուժերը 1947 թվականի երկրորդ կեսից ձեռնամուխ եղան դավադրության և պետական հեղաշրջման տենդագին նախապատրաստմանը: Ռեակցիոնիստների անընդհատ աճող մասսայազրկումը խոսում էր այն մասին, որ դավադրության միջոցով պետական հեղաշրջումը դարձել էր այն միակ հնարավոր ուղին, որով դեռևս կարելի էր վերջ տալ ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի խորացմանը և բացարձակ բռնությունների օգնությամբ վերադարձնել կորցրածը, վերականգնել բուրժուական կարգերը:

«Անցումը կապիտալիզմից կոմունիզմին,—ուսուցանում է Վ. Ի. Լենինը,—մի ամբողջ պատմական դարաշրջան է: Քանի այն չի ավարտվել, շահագործողների մեջ անխուսափելիորեն մնում է restauration-ի հույսը, իսկ այդ հույսը restauration-ի փորձերի է վերածվում: Եվ առաջին լուրջ պարտությունից հետո՝ տապալված շահագործողները... տասնապատկված եռանդով, կատաղի կրքով, հարյուրապատիկ ուժեղացած տենչությամբ նետվում են դեպի մարտի և նետվում՝ հանուն խլված «դրախտի» վերադարձման...»[58]:

Պետական հեղաշրջման նախապատրաստման գործում առաջատար դեր էր խաղում Չեխոսլովակիայի ազգային-սոցիալիստական պարտիայի ղեկավարությունը, որը սկսեց մորիլիզացնել և իր շուրջը համախմբել երկրի բոլոր խավարամոլ ուժերին՝ բուրժուական և մանրբուրժուական պարտիաներից մինչև ֆաշիստական ու կիսաֆաշիստական ընդհատակը: Դավադիրների առաջին նշանակալից քայլը ազգային-սոցիալիստական պարտիայի ղեկավար գործիչների 1947 թվականի հունիսի խորհրդակցությունն էր, որը տեղի ունեցավ խիստ գաղտնի՝ Կարլովի Վարիի կուրորտում: Խորհրդակցությունը որոշեց լիկվիդացնել բոլոր տարաձայնությունները Չեխոսլովակիայի ժողովրդական (կաթոլիկական) և Սլովա-

---

[58] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 319:

կիայի դեմոկրատական պարտիաների հետ և ստեղծել միասնական հակակոմունիստական բլոկ, պայքարել Չեխոսլովակիայի սոցիալ-դեմոկրատական պարտիայում աջերի հաղթանակի համար և այդ պարտիան ընդգրկել հակակոմունիստական բլոկի մեջ, ամրապնդել իշխանության օրգաններում իրենց զբաղեցրած դիրքերը և միջազգային «բարենպաստ իրադրության» դեպքում կատարել պետական հեղաշրջում, որտեղ, ինչպես ընդգծված էր որոշման մեջ, ազգային-սոցիալիստական պարտիան պրեզիդենտի հետ մեկտեղ կոչված է ղեկավար դեր խաղալու։

1947 թվականի սեպտեմբերին այդ պլանը կոնկրետացվեց, նրանում հատուկ տեղ հատկացվեց զինված բանդաների կազմակերպման, կաթոլիկ եկեղեցու օգտագործման, երաշտի ծանր հետևանքների խորացման, դիվերսիոն գործունեության ծավալման, օտարերկրյա իմպերիալիստների և, առաջին հերթին, ամերիկյան օգնության և այլ հարցերին։

Չեխոսլովակիայի ժողովրդական (կաթոլիկական) և Սլովակիայի դեմոկրատական պարտիաների լիդերները, որոնք մինչ այդ էլ համագործակցում էին ազգային-սոցիալիստների հետ, ողջունեցին նրանց նախաձեռնությունը և կազմեցին միասնական հակակոմունիստական բլոկ։ Անհամեմատ դժվար էր այդ բլոկի մեջ ներքաշել սոցիալ-դեմոկրատական պարտիային, որի ղեկավարությունը մնում էր ձախ սոցիալ-դեմոկրատների ձեռքում՝ Զդենեկ Ֆիրլինգերի գլխավորությամբ։ Ուստի, ինչպես ընդգծեց Էդուարդ Բենեշը դավադիրների սեպտեմբերյան դպտնի խորհրդակցությունում, անհրաժեշտ է նախ՝ պարտիայի ղեկավարությունից արտաքսել ձախերին, Ֆիրլինգերին, որը կոմունիստների «բացահայտ գործակալն է», ապա այն հանձնել աջերին, Մայերին, կամ, հակառակ դեպքում, «ցենտրիստ» Լաուշմանին։

1947 թվականի նոյեմբերի 13-ին Բռնոյում բացվեց Չեխոսլովակիայի Սոցիալ-դեմոկրատական պարտիայի XX համագումարը։ Աջերը կատաղի պայքար ծավալեցին ընդդեմ ձախերի, որոնք կանգնած էին կոմունիստների հետ սերտ համագործակցության դիրքերի վրա։ Ծածանելով սոցիալ-դեմոկրատիայի վաղուց ի վեր ապականված «ինքնուրույն և անկախ» քաղաքականության դրոշը, աջերը ջանում էին վերցնել պարտիայի ղեկավարությունը իրենց ձեռքը, խզել կապերը Կոմպարտիայի հետ և համագործակցել բուրժուական պարտիաների հետ։ Զորաօրյա համառ պայքարից հետո պարտիայի նախագահ ընտրվեց Լաուշմանը, որի համախոհները և

մայերականները պարտիայի ղեկավար օրգաններում կազմեցին բացարձակ մեծամասնություն։ «Անհրաժեշտ էր,—գրում է այդ կապակցությամբ Չեխոսլովակիայի Սոցիալ-դեմոկրատական պարտիայի գլխավոր քարտուղար, աջ սոցիալ-դեմոկրատ Վիլիմը,— հեռացնել անցանկալի տարրերին պարտիայի ղեկավարությունից։ Հենց այդ էլ արեց Բանոյում տեղի ունեցած համագումարը»[59]։

Աջերի հաղթանակը ոգևորեց ու գոտեպնդեց չեխոսլովակյան ռեակցիային և նրա պարագլուխ Էդուարդ Բենեշին։ «Սոցիալ-դեմոկրատական պարտիայի նախագահի պաշտոնից Ֆիրլինգերի արտաքսման օրը,—հայտարարել է նա ընկերական շրջանում,—իմ ամենապատվավոր օրն է՝ սկսած 1945 թվականից»[60]։

Ազգային-սոցիալիստների ղեկավարությունը միջոցների դիմեց Սոցիալ-դեմոկրատական պարտիան հակակոմունիստական բլոկի մեջ ներքաշելու և, այդպիսով, կոմունիստներին պառլամենտում և կառավարական օրգաններում մեկուսացնելու ուղղությամբ։ Վերջնական համաձայնության գալու նպատակով դեկտեմբերի վերջին Դրտինայի բնակարանում հրավիրվեց դավադիրների նոր գաղտնի խորհրդակցություն։ Մայերը ջերմորեն պաշտպանեց ազգային-սոցիալիստների առաջարկը՝ Սոցիալ-դեմոկրատական պարտիան հակակոմունիստական բլոկի մեջ ընդգրկելու և պետական հեղաշրջում ձևակերպելու ուղղությամբ։ Լուշմանը ոչ միայն դեմ չարտահայտվեց այդ առաջարկին, այլև ողջունեց այն։ Բայց, վախենալով ձախերից, որոնք Ֆիրլինգերի գլխավորությամբ համախմբվել էին «Սեմներ» ամսագրի շուրջը և լայն պայքար ծավալել աջերի դեմ, տատանվում էր։ Խորհրդակցությունն ավարտվեց կոմպրոմիսային որոշմամբ, ըստ որի Սոցիալ-դեմոկրատական պարտիան իր սոցիալական, տնտեսական և կուլտուրական քաղաքականության մեջ «կարող է գործել ինքնուրույն», բայց պարտավորվում է համագործակցել ազգային-սոցիալիստների (ուստի և մյուս բուրժուական պարտիաների) հետ «պառլամենտական դեմոկրատիայի, քաղաքացիական ազատությունների և իրավունքների» համար մղվող պայքարում[61]։

---

[59] *Մեջ է բերված ըստ* „За прочный мир, за народную демократию!", 1.V.1948.

[60] *Մեջ է բերված ըստ* И. Веселый, Хроника февральских дней 1948 года в Чехословакии, перевод с чешского. М., 1960, стр. 44 (*հետագայում* И. Веселый. Хроника...)։

[61] *Տե՛ս «Ռուդե պրավո», 17.II.1948։*

Կոմունիստական պարտիան ուշի-ուշով հետևում էր ռեակցիայի գործերին և միջոցներ ձեռնարկում նրանց խափանման համար։ Արդեն 1947 թվականի սեպտեմբերին անվտանգության օրգանները Սլովակիայում հայտնաբերեցին հակապետական խոշոր դավադրություն, որի ակտիվ մասնակիցներից էին Սլովակիայի դեմոկրատական պարտիայի երկու գլխավոր քարտուղարները (Յան Կեմպնին և Միլոշ Բուգարը), կառավարության նախագահի տեղակալ Յան Ուրբանին, նրա մամուլի գծով ռեֆերենտը (Օտտո Օրուբը) և դեմոկրատական պարտիայի այլ գեկավար գործիչներ։ Սեպտեմբերի 19-ին ձերբակալվեց դավադիրների միջուկը (159 մարդ)։ Հետաքննությունից պարզվեց, որ դավադիրները մշտապես կապ են ունեցել ԱՄՆ-ում սլովակյան վատրանդիների կազմակերպած «Սլովակիայի գործողության կոմիտեի» հետ, որի նախագահն էր Ֆերդինանդ Դուրչանսկին, իսկ նպատակը՝ ժողովրդա-դեմոկրատական կառավարության տապալումը։ Ապացուցվեց նաև ամերիկյան իմպերիալիստների և Վատիկանի դերը Սլովակիայում հակապետական հեղաշրջման կազմակերպման գործում։

Սլովակյան ռեակցիայի հակապետական գործունեությունը երկրում առաջ բերեց ուռոյցիոն վերելք։ Սլովակիայի Կոմպարտիայի նախաձեռնությամբ հոկտեմբերի 30-ին Բրատիսլավայում համաբվեց ֆաբրիկա-գործարանային խորհուրդների ներկայացուցիչների համասլովակյան համագումարը, որը պահանջեց հրաժարական տալ Սլովակյան ազգային լիազորների կոլեգիայի անդամներին[62], ժողովրդի վստահությունը վայելող անձանցից կազմակերպել նորը, որը պարտավորվի զեկավարել երկիրը՝ ելնելով Գոտվալդի կառավարության ծրագրից։ Մասսայական շարժման և ծանրաքշիռ փաստերի ճնշման տակ Ուրբանին, ինչպես և սլովակյան ազգային լիազորների Կոլեգիան հրաժարական տվեցին։ Սլովակյան ազգային լիազորների նոր Կոլեգիա կազմակերպելու նպատակով նոյեմբերի 4-ին հավաքվեց չեխերի ու սլովակների միասնական Ազգային ճա-

---

[62] *Սլովակյան ազգային լիազորների կոլեգիան* (Коллегия словацких национальных уполномоченных), *որը գրականության մեջ անվանվում է նաև Սլովակյան ազգային լիազորների Կորպուս (կամ՝ կրճատ – լիազորների Կոլեգիա, լիազորների Կորպուս) ծագել էր 1944 թվականի սլովակյան ապըստամբության ժամանակ՝ որպես Սլովակյան ազգային խորհրդի գործադիր օրգան։ Երկրի ազատագրումից հետո լիազորների Կորպուսը դարձել էր գործադիր իշխանության ազգային օրգան, որտեղ 1946 թվականի ընտրությունների հետևանքով բացարձակ մեծամասնություն էին ստացել սլովակյան դեմոկրատները և վերածել այն ռեակցիայի հենակի։*

կատի ընդլայնված խորհրդակցությունը: Ազգային-սոցիալիստները և ժողովրդական պարտիայի լիդերները ջանում էին հովանավորել սլովակյան դավադիրներին և, հատկապես, դեմոկրատական պարտիայի ղեկավարներին, ձգձգել նոր Կոլեգիայի կազմակերպումը, որով և խորացնել կառավարական ճգնաժամը Սլովակիայում:

Կոմունիստական պարտիայի կոչով ոտքի ելավ պրոլետարիատը: Նոյեմբերի 5-ին Սլովակիայի բանվոր դասակարգը անցկացրեց մեկժամյա գործադուլ և սպառնաց հայտարարել համընդհանուր գործադուլ, եթե ռեակցիան շարունակի խոչընդոտել նոր Կոլեգիայի կազմակերպմանը: Նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ Սլովակիայի գյուղացիական հանձնաժողովների ներկայացուցիչների համագումարը, որը, դատապարտելով ռեակցիայի դավերը, պահանջեց անհապաղ իրագործել ֆաբրիկա-գործարանային խորհուրդների ներկայացուցիչների համագումարի որոշումը և լիկվիդացնել կալվածատիրական հողատիրությունը: Նման պահանջներ առաջ քաշեց նաև Սլովակիայի պարտիզանների միությունի համագումարը, ինչպես նաև մի շարք այլ մասնավորական դեմոկրատական կազմակերպություններ:

Ռեակցիան ստիպված նահանջեց: Նոյեմբերի 19-ին կազմակերպվեց Սլովակիայի նոր կառավարությունը, որտեղ դեմոկրատները նախկին 9 տեղի փոխարեն զբաղեցրին ընդամենը 6 տեղ և, այդպիսով, զրկվեցին իրենց բացարձակ գերակշռությունից: Սլովակյան դեմոկրատների դիրքերը խարխլվեցին նաև տեղական իշխանության օրգաններում:

Սլովակյան դավադրությունը, որը շոշափում էր ռեսպուբլիկայի գոյության հարցը, չեխոսլովակյան ռեակցիայի հակապետական գործունեության էպիզոդներից էր միայն: Նրա ձախողումը առանձնապես չընկճեց համապետական ռեակցիային, որը նախապատրաստվում էր վճռական հարձակման ընդդեմ կոմունիստների: ՉԿՊ-ն, որ լավատեղյակ էր ռեակցիոներների բազմաթիվ դավադրի խորհրդակցություններին և նրանցում մշակվող պետական հեղաշրջման պլաններին, միջոցներ ձեռնարկեց ռեակցիային խորտակիչ հակահարված հասցնելու համար:

1947 թվականի նոյեմբերի վերջին տեղի ունեցավ ՉԿՊ ԿԿ պլենումը, որը մինչև վերջը մերկացրեց ռեակցիայի դավերը. «Բոլոր ճեղքերը սողոսկող ռեակցիան... կցանկանար հարմար մոմենտում առաջ բերել կառավարական ճգնաժամ և փորձել կազմել չինովնիկների կառավարություն»: Քաղաքականորեն այդպիսի

քայլը պլենումը դնահատեց որպես «ռեակցիոն պուտչի փորձ», որպես «պետական ռեակցիոն հեղաշրջման փորձ», որը «զատապարտված է պարտության»։ Բայց «անկյունում սեղմված ռեակցիան,—ընդգծեց պլենումը,—կարող է ծայրահեղ ռիսկի դիմել, հատկապես՝ եթե արտաքինից ստանա հրաման»[63]։

Ազգային ճակատի ընդլայնման և ամրապնդման նպատակով ՀԿՊ-ն պահանջում էր նրա մեջ ընդգրկել համազգային խոշորագույն մասնագիտական դեմոկրատական կազմակերպություններ, ինչպիսին էին Ռևոլյուցիոն պրոֆմիութենական շարժումը, Հողագործների միասնական միությունը, Նախկին քաղաքական բանտարկյալների միությունը և այլն, որոնք Ազգային ճակատին կտային առավել ժողովրդական բնույթ և կապահովեին նրա նորմալ և արդյունավետ գործունեությունը։

Ռեակցիան կատաղի դիմադրում էր։ Նա ջանում էր տապալել ոչ միայն Ազգային ճակատի, այլ նաև նրա հանձնաժողովների գործունեությունը։ Այսպես, օրինակ, Կոնստիտուցիոն հանձնաժողովում անընդհատ վեճեր էին դնում Կոնստիտուցիայի յուրաքանչյուր հոդվածի և յուրաքանչյուր նախադասության ձևակերպման շուրջը, որի հետևանքով նրա նիստերն ավարտվում էին անարդյունք։ Անհամեմատ լարված վիճակ էր տիրում Ազգային ժողովի Հողագործական կոմիտեում, որը փետրվարի 12-ին ընդհանրապես հրաժարվեց քննարկել Գրաղեցյան ծրագիրը։

Չնայած ՀԿՊ ԿԿ Նոյեմբերյան պլենումի լուրջ նախազգուշացումներին, ռեակցիան շարունակում էր նաև իր պրովոկացիոն գործունեությունը։ Այսպես, օրինակ, Գրտինյան Բարձրագույն կառավարչական դատարանը կայացրեց հատուկ որոշում, ըստ որի Պրագայի «Օրիոն» գործարանը, որը ռեսպուբլիկայի խոշորագույն կարամելի կոմբինատն էր, պետք է վերադարձվեր նախկին տիրոջը զուտ այն պատրվակով, որ այնտեղ իբր առ 1-ը հունվարի 1938 թվականի զբաղված են եղել 500-ից պակաս բանվորներ և ծառայողներ (496)[64]։

---

[63] «Ռուդե պրավո», 30.XI.1947։

[64] Բանվորները, իհարկե, ոտքի կանգնեցին այդ որոշման կենսագործումը (տես «Ռուդե պրավո», 7.II.1948)։ Բարձրագույն դատարանը նրման որոշումներ էր կայացրել նաև Ռոկովնիկի գարեջրի գործարանի, Տիշնովի թղթի գործարանի, Բլանսկի էլեկտրաշվման կայանի և էլեկտրաչափիչ գործիքների գործարանի վերաբերյալ (տես «Ռուդե պրավո», 24.II.1948)։

Բայի նման պրովոկացիոն ակտերից, ռեակցիան դեմագոգիկ նպատակներով պահանջում էր պետական ծառայողների, որոնց թիվը 1937 թվականի համեմատ կրկնապատկվել էր և հասել 700 հազարի, աշխատավարձի բարձրացում 25 տոկոսով։ Նման միջոցառման դեպքում ժողովրդա-դեմոկրատական կառավարությունը, որի բյուջեում առանց այն էլ կար զգալի դեֆիցիտ, ստիպված պետք է աներ ամսական լրացուցիչ ծախսեր 6 միլիարդ քրոն։ Այլ կերպ ասած, ռեակցիան կամենում էր մեկ գնդակով խփել երկու նպատակ՝ պատակել Միասնական պրոֆմիութենական շարժումը, իր կողմը քաշել պետական ծառայողներին և, մյուս կողմից՝ ծանր ֆինանսական կացության մեջ դնել կառավարությանը, երկրում առաջ բերել ինֆլյացիա։ Տարբեր մեքենայությունների միջոցով ռեակցիոն մինիստրներին հաջողվեց ձայների թվաբանական մեծամասնություն ստեղծել և փետրվարի 10-ի կառավարական նիստով անցկացնել համապատասխան որոշում։ Ընդ որում, սկսած 1945 թվականից դա առաջին դեպքն էր, երբ նման կարևոր միջոցառման քվեարկության ժամանակ կոմունիստ-մինիստրները մնացին մենակ և պարտություն կրեցին։

Հարբած իր առաջին «լուրջ հաղթանակով», ռեակցիան դոտեպընդվեց։ Բայց դեպքերն ունեցան այլ զարգացում. պրոֆմիությունների Կենտրոնական խորհրդի նախագահությունը որոշեց փետրվարի 22-ին հրավիրել ֆաբրիկա-գործարանային խորհուրդների ներկայացուցիչների համապետական համագումար և քննության առնել արդյունաբերության հետագա ազգայնացման, ագրարային ռեֆորմների կենսագործման, ծառայողների աշխատավարձի բարձրացման, Աղգային ճակատում ստեղծված իրադրության և այլ քաղաքական ու տնտեսական հրատապ հարցեր։ Բանվոր դասակարգին չերմորեն արձագանքեց գյուղացիությունը։ Գյուղացիական օկրուգային հանձնաժողովների ներկայացուցիչների խորհրդակցությունը որոշում կայացրեց փետրվարի 28—29-ին Պրագայում հրավիրել գյուղացիական հանձնաժողովների ներկայացուցիչների համագումար և քննարկել Գրագեցյան ծրագրի կենսագործման համար անհրաժեշտ միջոցառումների, ինչպես նաև ընթացիկ մի շարք կարևոր հարցեր։

Այդ որոշումները, որոնք վկայում էին բանվոր դասակարգի և գյուղացիության վերահաս հուժկու հարձակման մասին, բուրժուական շրջաններում առաջ բերեցին որոշ շտապողականություն։ Հակառևոլյուցիան որոշեց պետական հեղաշրջում կատարել ավելի

շուտ, քան տեղի կունենան այդ համագումարները և, այնուհետև, հեշտությամբ խափանել դրանք։ Ուստի որոշվեց անհապաղ կերպով սկսել հարձակում ընդդեմ կոմունիստների և նրանց կողմից ղեկավարվող ներքին գործոց մինիստրության։ Փետրվարի 13-ին հրապարակվել էր կառավարության արտակարգ խորհրդակցություն, որը պետք է քննարկեր աշխատավորների սոցիալական ապահովագրության նոր նախագիծ։ Նիստի հանդիսավոր բացումից անմիջապես հետո խոսք վերցրեց Արդարադատության մինիստր Պրոկոպ Դրտինան և հորինված փաստարկների հիման վրա մեղադրեց Ներքին գործերի մինիստրությանն ու Ազգային անվտանգության կորպուսին, որոնք իբր «դադարել են ռեսպուբլիկային ծառայելուց և դարձել են կոմունիստների հենակներ»։ Ռեակցիայի մարտահրավերը պահանջում էր չեղյալ համարել ռեսպուբլիկայի ներքին գործոց մինիստրի հրամանը՝ Մեծ Պրագայի[65] ազգային անվտանգության կորպուսի ութ շրջանային պետերին այլ աշխատանքի փոխադրելու մասին։ Ի պատասխան դրան կառավարության նախագահ Կ. Գոտվալդը առաջարկեց հաշվի առնել, որ ներքին գործոց մինիստր Վացլավ Նոսեկը հիվանդ է (նա նիստին ներկա չէր) և այդ հարցը հետաձգել մինչև հաջորդ նիստը։ Դավադիրները մեծ աղմուկ բարձրացրին, և երբ բանը հասավ քվեարկության՝ ընդունվեց ազգային-սոցիալիստների առաջարկը։

Այսպիսով, մեկ շաբաթվա ընթացքում ռեակցիոն մինիստրները վայելեցին իրենց «երկրորդ հաղթանակը» և միասնական ոչ-կոմունիստական բլոկի օգնությամբ «պարտության մատնեցին» ամենամեծ և ղեկավար կառավարական պարտիային։ Դա ոգևորեց ոչ միայն դավադիրներին և նրանց արևմտյան հովանավորներին, այլև երկրի բոլոր ռեակցիոն ուժերին։ Փետրվարի 16-ին խոշոր առևտրականները և արդյունաբերողները կնքեցին դաշնի դրծարք, ըստ որի պարտավորվեցին դավադիրներին տրամադրել 5 միլիոն քրոն։

ՉԿՊ-ի լուրջ նախազգուշացումները չեխոսլովակյան ռեակցիան դիտում էր որպես նրա «թուլության» ու «խուճապահարության» արտահայտություն և, ստանալով արևմտյան իմպերիալիստների աջակցությունը[66], նետում նրան մարտահրավեր։ Կոմպարտիան

---

[65] Պրագայի թաղամասերից է։

[66] «Վաշինգտոնը, Լոնդոնը և Փարիզը,— գրում է անցքերին լավատեղյակ մասնակից և ականավոր պատմաբան Ինդրժիխ Վեսելին,— ցուցաբերում էին դեպի Պրագան բացառիկ հետաքրքրություն... Օր չէր անցնում, որ

ստիպված վճռեց ռեակցիային զիջավոր ճակատամարտ տալ բանվորների և գյուղացիների ներկայացուցիչների առաջիկա համապետական համագումարներում. ընդ որում ոչ թե սահմանափակվել նվաճումների պաշտպանությամբ, այլ ձեռնարկել հարձակում բուրժուազիայի և կալվածատերերի դեմս ղեկավարած դիրքերի վրա, այսինքն՝ պահանջել այն բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացում, որոնց մեջ կրավված են ավելի քան 50 բանվորներ և ծառայողներ, պետական մենաշնորհի սահմանում արտաքին առևտրի բնագավառում, Գրաղեցյան-Ծրագրի փենտագրում և այլն։

1948 թվականի փետրվարի 16-ին տեղի ունեցավ ազգային-սոցիալիստական պարտիայի ղեկավար վեցյակի գաղտնի խորհրդակցությունը, ուր որոշվեց «կառավարական քողարկված ճգնաժամը», որով նա առաջադրում է վերջին ժամանակները, վերածել «բացահայտ ճգնաժամի» և, այդպիսով, հասնել Գոտվալդի կառավարության հրաժարականի, Զենկլի գլխավորությամբ նոր կառավարության կազմակերպմանն։ «Շատ հնարավոր է ու ցանկալի» նաև չինովնիկային կառավարության կազմակերպումը, որի նախագահ պրեզիդենտը պայմանավորվել էր նշանակել իր դրասենյակի քաղաքական բաժնի վարիչ Յոնին[67], ներքին գործոց մինիստր՝ անգլիական հետախուզության հնագույն գործակալ գեներալ Բարտիկին, ազգային պաշտպանության մինիստր՝ գեներալ Պիկային (դարձյալ անգլիական հետախուզության գործակալ) և ժողովրդի այլ գահիճներ։ Սովետական դրքերի բացակայությունը երկրում,—գաղում էին դավադիրները,—բացառում է նրա կողմից զինված միջամտության հնարավորությունը և նպաստում հեղաշրջմանը։ Ստանալով պրեզիդենտի համաձայնությունը, ռեակցիոներները խափանեցին կա-

---

ազգային-սոցիալիստական պարտիայի լիդերներից մեկը չլիներ ամերիկյան դեսպանատանը։ Ինքը Ռիպկան սերտ կապ էր պահպանում ֆրանսիական դեսպանության հետ։ Յարոսլավ Ստրանսկին իր հերթին հաճախակի հանդիպում էր անգլիական դեսպանի հետ։ Վատիկանի ներկայացուցչի՝ պապական նունցիայի մոտ ժողովրդական պարտիայի լիդերները իրենց մարդիկ էին...։ Լրտեսական ընդհատակն աշխուժացավ։ Վաշինգտոնը, Լոնդոնը և Փարիզը պնդում էին՝ մի՛ դանդաղեք։ Դրսե՛ր։ Մի՛ վախեցեք» (И. Веселый. Хроника... стр. 73—75)։

[67] Յոնը ձևականորեն էր գրաղեցնում այդ պաշտոնը։ Իրականում նա պրեզիդենտի անձնական հետախուզական ցանցի կազմակերպիչն ու ղեկավարն էր։

ռավարության նաև փետրվարի 17-ի նիստը։ Միակ որոշումը, որ ընդունվեց այդ նիստում, դա փետրվարի 20-ին կառավարության արտահերթ նիստ հրավիրելու մասին էր։

Կառավարության նիստի խափանումից անմիջապես հետո ՀԿՊ ԿԿ նախագահությունը քննության առավ երկրում տիրող քաղաքական իրադրությունը, մերկացրեց ռեակցիայի դավերը և ժողովրդին կոչ արեց զգոնություն։ Ռեակցիան ձգտում է,—ընդգծված էր կոչում, որը տպագրվեց երևկոյան լրագրերում և հաղորդվեց ռադիոյով,—հակադեմոկրատական և հակակոնստիտուցիոն ճանապարհով դեռ մինչև առաջիկա ընտրությունները կազմակերպել արտապառլամենտային շինովնիկական կառավարություն։ «Այս լուրջ ժամին անհրաժեշտ է, որպեսզի ամբողջ աշխատավոր ժողովուրդը—բանվորները, գյուղացիները, մանր ձեռնարկատերերը, ինտելիգենցիան, բոլոր դեմոկրատորեն և պրոգրեսիվ տրամադրված անձինք՝ անկախ պարտիական պատկանելությունից, բոլոր շերտերը և սլովակները լինեն զգաստ, քաջ պատրաստ հենց սաղմում խեղդելու ռեակցիայի քայքայիչ մտայնությունները և պաշտպանելու պետության ու ազգի շահերը»[68]։

ՀԿՊ ԿԿ նախագահությունը ժողովրդին կոչ էր անում շտապեցնել ձեռք բերած նվաճումների պաշտպանումով և ամրապնդումով, այլ, որը առավել կարևոր էր, անցնել հակահարձակման, խորտակել ռեակցիան և ազգային դեմոկրատական ռևոլյուցիան հասցնել մինչև հաղթական վախճանը։ Անհրաժեշտ է, ընդգծված էր կոչում, «ոչ միայն պաշտպանել մեր ազգային ռևոլյուցիայի մեծ գործը, այլ նաև հաջողությամբ շարունակել այն ժողովրդական դեմոկրատիայի և սոցիալիզմի ոգով»։

ՀԿՊ ԿԿ նախագահության կոչը ջերմ արձագանք գտավ ժողովրդական լայն շրջաններում և, առաջին հերթին, բանվոր դասակարգի կողմից։ Սկսեցին ծագել բանվորական առաջին մարտական խմբերը, որոնք հսկողության տակ վերցրին գործարանները և ֆաբրիկաները։ ՀԿՊ Պրագայի մարզկոմի նախաձեռնությամբ, որի առաջին քարտուղարն էր ներկայիս պրեզիդենտ Անտոնին Նովոտնին, նույն երեկոյան տեղի ունեցավ Մեծ Պրագայի գործարանային պարտիական կազմակերպությունների ներկայացուցիչների ժողով։ Ելույթ ունեցողները ընդգծում էին, որ ռեակցիայի գործելակերպը խիստ վրդովմունք է առաջ բերել բանվորների մեջ, որ նրանք արդեն

[68] «Ռուդե պրավո», 18.II.1948։

պատրաստ են ընդունելու ռեակցիայի մարտահրավերը և սաղմում խեղդելու պետական հեղաշրջման յուրաքանչյուր փորձ։ Ուշ երեկոյան և գիշերը նման ժողովներ տեղի ունեցան Պրագայի բոլոր թաղամասերում և այլ քաղաքներում։ Կոմպարտիայի կոչով երկրի բանվոր դասակարգը ոտքի ելավ հանուն ռևոլյուցիայի նվաճումների պահպանման և հետագա ծավալման։

Անտեսելով բանվոր դասակարգի կամքը և նրա վճռականությունը, ռեակցիան ջանում էր անդրկուլիսյան բանակցությունների և գործարքների միջոցով կենսագործել իր պլանները։ Ընդ որում դավադիրներին ոգևորում և ասն էր տալիս ինքը՝ ռեսպուբլիկայի պրեզիդենտը։ Փետրվարի 18-ին Զենկլը և Ռիպկան եղան նրա մոտ։ Բացելով շուրջ երկուժամյա գաղտնի խորհրդակցությունը, Բենեշը ընդգծեց, որ «այժմ ամեն ինչ կախված է ձեր համառությունից։ Անհրաժեշտ է կանգնել հաստատ և չ՛զիջել»... Ընդհատելով նրան Ռիպկան նկատեց, որ «հասել է վճռական պահը, երբ չեխոսլովակյան կառավարության քաղաքականությունը պետք է հնարավորին չափով շուտ վերածել բացահայտ ճգնաժամի»։ «Դուք, ճիշտ եք,— հաստատեց պրեզիդենտը,— Դուք կտեսնեք, որ կոմունիստներին ոչինչ չի կարող ստիպել նահանջել, բացի կառավարական ճգնաժամից։ Հարվածեցեք...»[69]։

Առավել համառությամբ չեխոսլովակյան ռեակցիային վճռական հույժ էին մղում իմպերիալիստական տերությունները և, առաջին հերթին, ԱՄՆ-ը։ Ամերիկյան դեսպան Ստեյնդարդը ոչ միայն լավատեղյակ էր Պրագայում կատարվող իրադարձություններին, այլև ակտիվ մասնակից։ Փետրվարի 19-ին նա շտապեցրեց կերպով ժամանեց Պրագա և դեռ օդանավակայանում հայտարարեց, որ հասել է Չեխոսլովակիայի կառավարության մեջ «կոմունիստների տիրապետության» վերջին ժամը, որ առաջիկա ընտրությունները տեղի կունենան «առանց կոմունիստների», որ նոր կառավարությունը կապահովի Չեխոսլովակիայի մասնակցությունը «Մարշալի պլանին», որ ԱՄՆ-ը նրան կտրամադրի վարկ 20 հազար դոլարի չափով։

Այնուհետև Ստեյնդարդը կոնտակտ հաստատեց Չեխոսլովակիայի խոսվարար մինիստրներից շատերի հետ, ոգևորեց «նրանց նախաձեռնությունը» և նույն օրը երեկոյան հայտարարեց, որ ժամանակին և տեղին է Չեխոսլովակիայում կառավարական ճգնաժամը, որը «կբարձրացնի չեխոսլովակյան կառավարության հեղինա-

---

[69] И. Веселый, Хроника..., стр. 85—87.

կությունը ԱՄՆ-ում։ Ցավալի է, որ այն տեղի չի ունեցել մեկ տարի առաջ»[70]։

Ամերիկյան իմպերիալիստները ոչ միայն ոգևորում ու պայքարի էին կոչում չեխոսլովակյան ներքին ռեակցիոն ուժերին, բարոյական և նյութական աջակցություն ցույց տալիս նրանց, այլ նաև նախատեսում անմիջական օգնություն։ Պատահական չէ, որ փետրվարի 20-ին Բեռլինից Պրագա ժամանեցին 42 ամերիկյան սպա[71], *իսկ Արևմտյան Գերմանիայում, Չեխոսլովակիայի ուղղակի սահմանի մոտ կենտրոնացվեցին հատուկ դնացքներ՝ բեռնված ամերիկյան զենքով և զինամթերքով։*

Ոչ պակաս ակտիվություն էր ցուցաբերում Վատիկանը, որը գործում էր ամերիկյան իմպերիալիստների ուղղակի թելադրանքով։ Փետրվարի 18-ին Հռոմի պապը չեխոսլովակյան արքեպիսկոպոս Բերանից պահանջեց, որ եկեղեցին բոլոր միջոցներով (քարոզներով, նյութական, զինված ելույթներով և այլն) նպաստի խռովարար մինիստրների հաղթանակին։ Կատարելով Վատիկանի պահանջը, նրա հնազանդ ծառա Բերանը իր մոտ հրավիրեց Զենկլին և խորհուրդ տվեց գործել վճռականորեն ու հաստատ՝ խոստանալով նրան բաղմապիսի օգնություն ու աջակցություն կաթոլիկ եկեղեցու, Վատիկանի և ամերիկյան իմպերիալիստների կողմից։ «Սեփական ուժերով իշխանության գրաված անհաջողության դեպքում,—ընդգծեց Բերանը,—անհրաժեշտ է սահմանը բացել օտարերկրյա օկուպացիոն բանակների և գերմանացիների առջև, որոնք «իսկույն հաշիվ կտեսնեն կոմունիստների հետ»[72]։

Ոգևորված պրեզիդենտի և արևմտյան իմպերիալիստների կողմից, ռեակցիան փետրվարի 20-ին սկսեց վճռական հարձակում։ Ազգային-սոցիալիստական պարտիայի կենտրոնական օրգան «Զվոբոդնե սլովո» այդ օրը լույս տեսավ «Մենք թույլ չենք տա ստալինյան ռեժիմ» մարտահրավերով։ Ոչ պակաս մարտական էին կոմունիստների հասցեին ուղղված հերյուրանքները,

---

[70] *Մեջ է բերված ըստ* А. Свобода, Л. Тучкова, В. Свободова, Так было в феврале, М., Издательство Иностранной литературы, 1950, стр. 67 (*Հետագայում կրճատ*— А. Свобода и др. Так было в феврале).

[71] *Նրանք ժամանեցին իբր թե տեղի պատմական հուշարձաններին ծանոթանալու պատրվակով։*

[72] *Մեջ է բերված ըստ* А. Свобода и др., Заговор Ватикана...; стр. 153—154.

որոնք կրում էին «Մենք դեմ ենք մետերնիխյան ոստիկանական մեթոդներին», և կարմրատիպ այլ խորագրեր։ Այդ նույն օրը 3 բուրժուական պարտիաների 12 դավաղիր մինիստրները[73] պաշտոնապես հրաժարական տվեցին, որը ջերմորեն ողջունեց պրեզիդենտը և մանրամասն ասաց. «Ես, ինքնին հասկանալի է, չեմ ընդունի ձեր հրաժարականը։ Պետք է որ կոմունիստները կապիտուլացվեն... Նրանք ստիպված կլինեն նահանջել։ Դրանից հետո հարկ կլինի շտապ նախապատրաստել ընտրությունները... կարող եք ապավինել ինձ։ Ես թույլ չեմ տա ոչ մի կոմպրոմիս»[74]։

Խորհրդարանների հրաժարականից անմիջապես հետո դումարվեց ՉԿՊ ԿԿ Նախագահության խորհրդակցությունն։ Քանի որ կառավարության 26 անդամներից հրաժարական էին տվել միայն 12-ը, ապա խորհրդակցությունը՝ ելնելով գոյություն ունեցող պառլամենտական նորմաներից և ռևոլյուցիայի խաղաղ զարգացման ռեալ հնարավորություններից, որոշեց պահանջել, որ պրեզիդենտը անհապաղ կերպով ընդունի նրանց հրաժարականը և հանձնարարի կառավարության նախագահին կառավարության կազմը լրացնել այդ նույն պարտիաների այնպիսի անդամներով, որոնք հավատարիմ են Ազգային ճակատին և ժողովրդա-դեմոկրատական կարգերին։

Միաժամանակ ՉԿՊ ԿԿ Նախագահությունը միջոցներ ձեռք առավ ժողովրդական լայն մասսաներին մոբիլիզացնելու և ընդդեմ դավադիրների նրանց պայքարը առավել ծավալելու համար։ Նախագահությունը «ամբողջ Չեխոսլովակիայի ժողովրդին» ուղղեց նոր կոչ, որում շեշտելով երկրի ներքաղաքական իրադրության բացառիկ լրջությունը, բացատրեց, որ ռեակցիայի խափանիչ գործու-

---

[73] Նրանց պարտիական պատկանելությունը, դեմքը և կառավարության կազմում զբաղեցրած տեղը հետևյալն է. Ազգային-սոցիալիստական պարտիայից՝ Ջենկլ (կառավարության Նախագահի տեղակալ), Ռիպկա (արտաքին առևտրի մինիստր), Ցար. Ստրանսկի (լուսավորության մինիստր), Դրտինա (արդարադատության մինիստր), ժողովրդական (կաթոլիկական) պարտիայից՝ Շրամեկ (կառավարության Նախագահի տեղակալ), Գալա (փոստի մինիստր), Յան Կոպեցկի (տեխնիկայի մինիստր), Պրոխազկա (առողջապահության մինիստր), Սլովակյան դեմոկրատական պարտիայից՝ Կովչարա (կառավարության Նախագահի տեղակալ), Գիլետոր (հաղորդակցության ճանապարհների մինիստր), Ֆրանեկ (օրենքների կոդիֆիկացման գործերի մինիստր), Լիխներ (ազգային պաշտպանության ստատս-քարտուղար)։

[74] Մեջ է բերված ըստ Zd. Fierlinger. Zrada československé buržoasie a jejich spojenců. Praha, 1951, str. 172 և И. Веселый. Хроника..., стр. 95.

նեությունը հասել է իր կուլմինացիոն կետին՝ 12 ռեակցիոն միներ տվել են հրաժարական, որ հակադեմոկրատական այդ խմբավորման նպատակն է լիկվիդացնել ժողովրդա-դեմոկրատական կարգերը, որ այդ հրաժարականով նրանք իրենց դուրս են հայտարարել Ազգային ճակատից և հակադրվել ժողովրդա-դեմոկրատական կառավարությանը, որ Գոտվալդի կառավարությունը առանց տատանվելու մնացել է իր դիրքերում, որպեսզի պաշտպանի ժողովրդական դեմոկրատիայի, ազգի և պետության մեծ գործը։

«Այս վճռական պահին,—ընդգծված էր վերջում,—ՉԿՊ ԿԿ Նախագահությունը կոչ է անում քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորներին..., բոլոր իսկական չեխերին ու սլովակներին համախմբվել կուռ միասնական Ազգային ճակատի մեջ, որը կդառնա Գոտվալդի կառավարության հաստատուն հենարան..., կպաշտպանի ազգային ռևոլյուցիայի մեծ գործը և կստեղծի պայմաններ մեր հետագա նորմալ զարգացման համար, ինչպես նաև կամրապնդի մեր եղբայրական դաշնակցային հարաբերությունները ՍՍՌՄ-ի և մյուս սլավոնական ժողովուրդների հետ»[75]։

Ի պատասխան ՉԿՊ ԿԿ Նախագահության նոր կոչի, ամբողջ երկրի գործարաններում և ֆաբրիկաներում տեղի ունեցան բանվորական միտինգներ ու ժողովներ, որոնք ընթանում էին «Դավաճանները և գործակալների խնամակալները չպետք է վերադառնան կառավարության կազմը», «Մենք թույլ չենք տա կառավարության մեջ ազդայնացման և ժողովրդա-դեմոկրատական կարգի թշնամիների առկայություն», «Դավաճաններին դուրս պե՛տք է շպրտել կառավարությունից» և այլ մարտական լոզունգների ներքո։ Ռազմական պատրաստ վիճակի բերվեց բանվորական միլիցիան։ Ֆաբրիկաների և գործարանների, հասարակական կարգի և հանգստի պահպանումը բանվորները վերցրին իրենց հսկողության տակ[76]։

Շաբաթ օրը՝ փետրվարի 21-ին, չնայած վաղ առավոտյան սառնամանիքին, Պրագայի և նրա արվարձանների աշխատավորությամբ լեփ-լեցուն էր Չեխոսլովակիայի մայրաքաղաքի Ստարոմեստյան հրապարակը, որտեղ կառավարական ճգնաժամի, աշխատավորական մասսաների հրատապ խնդիրների և Ազգային ճակատի գործո-

---

[75] «Ռուդե պրավո», 21.II.1948։

[76] Տե՛ս А. Свобода и др., Так было в феврале, стр. 74—75, 95—98, 127.

զությունի կոմիտեների կազմակերպման անհրաժեշտության մասին ելույթ ունեցավ Կլեմենտ Գոտվալդը[77]։

Այդ նույն ժամին մասսայական բանվորական միտինգներ տեղի ունեցան Չեխոսլովակիայի համարյա բոլոր արդյունաբերական կենտրոններում և բանվորական ավաններում։ Ամենուրեք մասսաները պահանջում էին, որ «ռեսպուբլիկայի պրեզիդենտը ընդունի աղգային-սոցիալիստական, ժողովրդական և սլովակյան դեմոկրատական պարտիաների մինիստրների հրաժարականը, որոնք... դավաճանել են Աղգային ճակատին և անցել օպոզիցիայի՝ ընդդեմ կառավարության։

Մենք պահանջում ենք,—ընդգծված էր բանաձևում,—որպեսզի համաձայն կոնստիտուցիայի և դեմոկրատական սովորույթների, պրեմիեր-մինիստր Կլեմենտ Գոտվալդը լրացնի կառավարությունը Աղգային ճակատի ծրագրին հավատարիմ նոր անդամներով, որոնք պատրաստ լինեն անձնազոհ կերպով ծառայել ժողովրդի և ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկայի շահերին»[78]։ Միտինգն ավարտվեց մասսայական ցույցով։ Արձագանքելով ՉԿՊ-ի կոչին, ժողովուրդը ձևնամուխ եղավ Աղգային ճակատի գործողության կոմիտեների կազմակերպմանը, որոնք դարձան ժողովրդա-դեմոկրատական կարգերի պաշտպանության և ռեակցիայի դեմ պայքարի օրգաններ։

Այսպիսով, կառավարական ճգնաժամի լուծման և ռևոլյուցիայի հետագա խորացման կոմունիստական ծրագիրը ընդամենը մեկ օրվա ընթացքում տիրապետեց Չեխոսլովակիայի ժողովրդին և ստացավ նյութական մեծ ուժ, որով և վճռվեց ռեակցիոներների պետական հեղաշրջման լուրջ փորձի ձախողման անխուսափելիությունը։

Դավադիրները, որոնք չէին սպասում անցքերի նման զարգացում, մտահոգվեցին կառավարության կազմում իրենց դիրքերի պաշտպանությամբ։ Միակ ուղին, գտնում էին նրանք, դա այն է, որ պրեզիդենտը չընդունի հրաժարականը և այդ դիրքերը կպաշտպանվեն։ Պրեզիդենտը, որը կիսում էր նրանց հույսերը և դերադնահատում իր հնարավորությունները, հանկարծակի եկավ, երբ Ստարոմեստյան հրապարակում ընտրված բանվորական պատգամավորու-

[77] Տես К. Готвальд, Избранные произведения, том II, стр. 185—190.

[78] „Что произошло в Чехословакии?“ Сборник документов, Прага, 1948, стр. 24—26 (Հետագայում կրճատ— „Что произошло в Чехословакии“).



Պրոգայի աշխատավորության միանգամ Սատրոմնոյան հրապարակում (21 փետրվարի 1948 թ.)

թյան ներկայացուցիչը իր՝ պրեզիդենտի կաբինետում վճռականապես հայտարարեց. «Պարոն պրեզիդենտ, ես միայն հասարակ բանվոր եմ, բայց գիտեմ, որ երբ ժողովրդի մեծամասնությունը ցանկանում է ինչ-որ բան, ապա դրան Դուք ևս, որպես պրեզիդենտ, պարտավոր եք ենթարկվել»։

«Մենք դեռ այնքան հեռուն չենք գնացել,—ընդհատեց նրան վրդովմունքից հավասարակշռությունը կորցրած Բենեշը,—որ փոքրը վճռի, թե պարտավոր եմ ես, Ռեսպուբլիկայի պրեզիդենտս, թե պարտավոր չեմ հրաժարականը (դավադիր մինիստրների—Ս. Հ.) ընդունելու»[79]։ Դա հին երգ էր, որը շատ լավ կկատարեր նա, բայց պատմական ժամանակաշրջանը և կոնկրետ իրադրությունն այլ էին։

Փետրվարի 22-ին առավոտյան ժամը 10-ին մայրաքաղաքի Արդյունաբերության պալատում բացվեց Չեխոսլովակիայի ֆաբրիկա-գործարանային խորհուրդների ներկայացուցիչների Համապետական համագումարը, որին մասնակցում էին մոտ 8 հազար պատգամավորներ։ Մի շարք բացաշնչ ելույթներից հետո համագումարը ամբողջ Չեխոսլովակիայի բանվոր դասակարգի անունից պահանջեց ռեակցիոներների անհապաղ վտարում կառավարությունից, հետագա ռևոլյուցիոն-դեմոկրատական միջոցառումների կենսագործում և, առաջին հերթին, միջակ արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացում, արտաքին առևտրի ասպարեզում պետական մենաշնորհի սահմանում, ներքին մեծածախ առևտրի ազգայնացում, աշխատավորների սոցիալական ապահովագրության անհապաղ օրինականացում, շահագործման լիկվիդացում և երկրի սոցիալիզմի ուղիով զարգացման ապահովում, պետական ու հասարակական ծառայողների աշխատավարձի կարգավորում, նվաճումների կոնսոլիդացիան ամրապնդում և այլն։ Համագումարը ողջունեց գյուղացիական համագումարի հրավիրումը և հավանություն տվեց, որ բանվոր դասակարգը կգործադրի բոլոր միջոցները գյուղացիության պահանջների բավարարումը ապահովելու համար։ Ի համաձայնություն և պաշտպանություն վերոհիշյալ որոշումների, համագումարը Չեխոսլովակիայի ամբողջ բանվոր դասակարգին կոչ արեց փետրվարի 24-ին անցկացնել մեկժամյա համընդհանուր գործադուլ։

---

[79] Մեջ է բերված ըստ А. Свобода и др., Так было в феврале, стр. 113.

Այդ նույն օրը, փետրվարի 22-ին, Պրագայի Ազգային թատրոնի շենքում տեղի ունեցավ «Չեխոսլովակո-սովետական բարեկամության ընկերության» համապետական համագումար։ Կառավարական ճգնաժամ առաջ բերողները փորձում են փոխել մեր ոչ միայն ներքին քաղաքականության կուրսը՝ վերադարձնել երկիրը դեպի կապիտալիզմ,—ընդգծեց համագումարը,—այլև արտաքին քաղաքականության կուրսը՝ կտրել երկիրը ՍՍՌՄ-ից և վերադարձնել այն իմպերիալիստական աշխարհ։ «Մեր ժողովրդական դեմոկրատիայի բախտը, ուսուցիչոն նվաճումների բախտը սերտորեն շաղկապված են ՍՍՌՄ-ի հետ մեր ունեցած դաշինքի բախտի հետ ...Ուստի մեր ժողովուրդը պետք է հոգ տանի այն մասին, որ օրենքի հաստատ ձեռքը պատժի յուրաքանչյուրին, ով կփորձի սասանել մեր արտաքին քաղաքականությունը և, դրանով իսկ, մեր պետության հիմքերը»[80]։

Ուշ երեկոյան նորից գումարվեց ՉԿՊ ԿԿ Նախագահության նիստ, որը ընդգծեց, որ երկօրյա պայքարի արդյունքները գոհացուցիչ են, բայց պայքարը ավարտված չէ։ Հենց այդ պահին էր, որ լուր ստացվեց այն մասին, թե ինչպես դավադիրների մի մեծ խումբ հարձակում է գործել ռադիոկայանի շենքի վրա՝ այն գրավելու կամ, հակառակ դեպքում՝ շարքից դուրս բերելու նպատակով, և ձերբակալվել Ազգային անվտանգության կորպուսի աշխատողների կողմից։ Բանտարկվածների նախաքննությունից և որոշ խուզարկություններից պարզվել է,—ընդգծված էր հաղորդագրության մեջ,—որ ազգային-սոցիալիստական պարտիան ձևնամուխ է եղել զինված պետական հեղաշրջման պլանի կենսագործմանը, որ այդ պլանում զգալի տեղ է հատկացված բանակի սպայական կազմին, որոնց ձեռքում կան զինանոցներ, որ, ի վերջո, դավադրության շտաբը ազգային-սոցիալիստական պարտիայի կենտրոնական քարտուղարությունն է։

Ի պատասխան դրան, անմիջապես մոբիլիզացվեց և մարտական դրության մեջ հայտարարվեց Ազգային անվտանգության կորպուսը, որն իր հսկողության տակ վերցրեց մայրաքաղաքի կամուրջները, թունելները, կայարանները, հեռագրատունը, կենտրոնական հեռախոսակայանը, ռադիոն, կառավարական տունը և այլ կարևորագույն օբյեկտներ։ Միաժամանակ մոբիլիզացվեց և զինվեց բանվորական միլիցիան. 15 հազար բանվորական գվարդիականներ

---

[80] «Ռուդե պրավո», 24.II.1948։

ստացան 13 հազար հրացան, 30-ական փամփուշտ և 2 հազար ավտոմատ։ Հրամանով արգելվեց զինվորներին և, հատկապես, բանակի սպայական կազմին դուրս գալ իրենց զորանոցներից։ Փակվեցին Չեխոսլովակո-ավստրիական և Չեխոսլովակո-արևմտագերմանական սահմանները, խստացվեց երկրի սահմանների հսկողությունը և այլն։

Բանվորական միլիցիան փետրվարյան օրերին

Մոբիլիզացնելով զինված ռևոլյուցիոն ուժեր և սաղմում խեղդելով հակապետական հեղաշրջման ամեն մի փորձ, ՉԿՊ շարունակում էր պայքարել կոնստիտուցիոն ճանապարհով կառավարական ճգնաժամի լուծման համար։ Այդ նույն դիշեր խռովարար պարտիաների ռեակցիոն ղեկավարությանը հակադրված օպոզիցիոն խմբավորումների ներկայացուցիչներ ցանկություն հայտնեցին ռեակցիոն մինիստրների փոխարեն մտնել կառավարության կազմի մեջ։

Կոնստիտուցիոն հիմունքներով նոր կառավարության կազմակերպումը, այդպիսով, ռեալ փաստ էր և ժամերի հարց։ Բայց Բենեշը, որը ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիստներից ստացել էր նոր ցուցում՝ «չ'նահանջել» և «դիմադրե՛լ» ժողովրդին, ըն-

դունեց խռովարար մինիստրներին և, խրախուսելով նրանց, հայտարարեց, որ ոչ մի դեպքում չի կատարի ժողովրդի պահանջը. «Ես ավելի շուտ կտամ հրաժարական,— հավաստիացրեց նա,—քան կփոխեմ իմ դիրքը... Դրանում դուք կարող եք ինձ վստահել»[81]: Ոգևորված խռովարարները փորձեցին կազմակերպել բուրժուական տարրերի և ուսանողության ելույթ ընդդեմ կոմունիստների. ընդ որում նրանց հաջողվեց փողոց դուրս բերել մի քանի հարյուր անբան երիտասարդների: Աշխատելով մեծացնել այդ փոքրիկ ցույցի նշանակությունը, պրեզիդենտը հարկ համարեց ընդունել նրանց պատվիրակությունը և շնորհակալություն հայտնել նրանց կողմից «ռեսպուբլիկայի» և «դեմոկրատիայի» պաշտպանության համար: Դա միակ ցույցն էր, որ ամբողջ փետրվարյան դեպքերի ընթացքում կարողացան կազմակերպել ազգային-սոցիալիստները:

Ռեակցիայի դեմ ծավալած պայքարում բանվոր դասակարգը, ամբողջ ժողովուրդը ցուցաբերեց սքանչելի ուռուցիոն նախաձեռնություն, որի հետևանքով կյանքի կոչվեցին պայքարի բազմաթիվ հասարակ, բայց բավականին ազդու ձևեր: Այսպես, օրինակ, Թղթի գործարանի բանվորները հրաժարվեցին ռեակցիոն լրագրերին և հրատարակչություններին թղթով մատակարարել, երկաթուղայինները հրաժարվեցին փոխադրել նրանց գրագրությունները և դրամականությունը, տպագրիչները հրաժարվեցին լույս ընծայել նրանց մամուլը, կոչերը և այլն:

Շնորհիվ կոմունիստների առանցքային գործունեության, ընդամենը 2 օրվա ընթացքում, երկիրը ծածկվեց Աղգային ճակատի գործողության կոմիտեների խիտ ցանցով: Անկախ պարտիական պատկանելությունից այդ կոմիտեների մեջ ընդգրկվում էին բոլոր նրանք, ում թանկ էին ժողովրդա-դեմոկրատական կարգերը, ռեսպուբլիկայի ապագան: Փետրվարի 23-ին արդեն չկար մի գործարան, հիմնարկ և ձեռնարկ, ուր կազմակերպված չլիներ Աղգային ճակատի գործողության կոմիտե, որը ակտիվ պայքար չծավալեր տվյալ գործարանում, հիմնարկում կամ ձեռնարկությունում եղած ռեակցիոներների դեմ:

Ուշագրավ է, որ գործողության կոմիտեներ կազմակերպվեցին նաև այն մինիստրություններում, որոնց ղեկավարները հրաժարական էին տվել: Զսպասելով, որ պրեզիդենտն ընդունի նրանց հրաժարականը, ժողովուրդը այդ ընդունեց և տեղական գործողու-

---

[81] Մեջ է բերված ըստ И. Веселый, Хроника..., стр. 145.

թյան կոմիտեների միջոցով սկսեց պաշտոնազրկել, ուղղակի արտաքսել ավյալ մինիստրություններից խոտվարար մինիստրներին և նրանց արբանյակներին։ Այսպես, օրինակ, փետրվարի 23-ին իրենց կաբինետներից արտաքսվեցին Պիետորը, Սարանսկին, Ռիպկան և մյուսները։ Փոստի մինիստր Գալան, որը դեռ չէր եկել «աշխատանքի»[82], փոստատարի միջոցով ստացավ «իր մինիստրության» գործադրության կոմիտեի հետևյալ որոշումը. «Մենք արդելում ենք Ձեզ ներս մտնել փոստի մինիստրության շենքը։ Եթե Դուք խախտեք այս արդելումը, մենք կօգտագործենք պայքարի բոլոր միջոցները, որոնք հատուկ են բանվոր դասակարգին»[83]։ Մինիստրների և նրանց համախոհ չինովնիկների արտաքսումից անմիջապես հետո գործադրության կոմիտեները ժամանակավորապես ստանձնում էին նրանց պարտականությունները։

Համաձայն ֆաբրիկա-գործարանային խորհուրդների համապետական համագումարի որոշման, փետրվարի 23-ին Պրագայի Քաղաքային տանը բացվեց կարևոր խորհրդակցություն, որի միակ նպատակն էր վերակազմակերպել շեխերի և սլովակների միասնական Ազգային Ճակատը, ընդլայնել և ամրապնդել այն, ընդգրկելով նրա մեջ ոչ միայն գոյություն ունեցող քաղաքական պարտիաների առաջադեմ խմբավորումներին, այլ նաև մասսայական դեմոկրատական համազգային կազմակերպություններին։ Խորհրդակցությանը ներկա էին ՉԿՊ-ի և ռևոլյուցիոն պրոֆմիությունների պատգամավորները, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատական, ազգային-սոցիալիստական, ժողովրդական, դեմոկրատական պարտիաների պրոդրևսիվ խմբավորումների ներկայացուցիչները, ի վերջո՝ գյուղացիության միասնական միության, կոոպերատիվների, պարտիզանների, գրողների, նախկին քաղաքական բանտարկյալների միությունների և մի շարք այլ անպարտիական մասսայական դեմոկրատական կազմակերպությունների շուրջ 300 պատգամավորներ։

Բացելով խորհրդակցությունը, Ա. Զապոտոցկին ընդգծեց. «Մեր պետական նավը վտանգի տակ է։ Մի շարք թիավարողներ

---

[82] Հրաժարական տված մինիստրները, որպես կանոն, գնում էին «աշխատանքի», բայց չէին աշխատում։ Այդ իսկ պատճառով գրականության մեջ օգտագործվում է հատուկ տերմին՝ «նստակյաց գործադուլ» (sitzenstreik, կամ ռուսերեն՝ сидячая забастовка— տե՛ս J. Vesely, Prag, Februar 1948 Berlin, 1959)։

[83] Մեջ է բերված ըստ А. Свобода и др., Так было в феврале, стр. 149.

գցել են թիերը... Լքյալների փոխարեն մենք որոնում ենք ուժեր, որ մեր նավը անվտանգ տեղ հասցնեն։ Հենց դրա համար էլ մենք հրավիրել ենք այս խորհրդակցությունը»[84]։ Հանգամանորեն անդրադառնալով ռեակցիոնների քայքայիչ գործունեությանը, խորհրդակցությունը ապացուցեց Ազգային ճակատի ընդլայնման և վերակառուցման հրատապ անհրաժեշտությունը և ռեալ հնարավորությունը։ Ելույթ ունեցողները ընդգծում էին ոչ միայն Ազգային ճակատի, այլ նաև մի շարք քաղաքական պարտիաների զոման ու վերածնման անհրաժեշտությունը։ «Մեզ, հին ազգային-սոցիալիստներիս,—ընդգծեց այդ պարտիայի ավագ սերնդի ներկայացուցիչ Պատկովը,—մեր պարտիայում հալածում են մարդիկ, որոնք սողոսկել են նրա մեջ և երբեք չեն եղել ազգային-սոցիալիստներ։ Մենք պետք է թարմացնենք մեր պարտիան, որպես իրականում ազգային և սոցիալիստական պարտիա»[85]։

Խորհրդակցությունը ընտրեց Ազգային ճակատի վերակառուցման նախապատրաստական կոմիտե, որը բանակցությունների մեջ մտավ տարբեր քաղաքական պարտիաների պրոգրեսիվ խմբավորումների, Կոմունիստական պարտիայի, ինչպես նաև անպարտիական մասսայական դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և, համաձայնության գալով, փետրվարի 25-ին ավարտեց նոր, վերածնված Ազգային ճակատի, կամ, ինչպես անվանվում է, Ազգային ճակատի գործողության կենտրոնական կոմիտեի ձևավորումը։ Վերածնված Ազգային ճակատը, որի հեղինակն դիրքերում կանգնած էր բանվոր դասակարգը՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, աշխատավորական ամենալայն խավերի քաղաքական դաշինքի կազմակերպական արտահայտությունն էր, ժողովրդա-դեմոկրատական կարգերի անսասան հիմքը։ «1948 թվականի փետրվարին, երբ սոցիալ իրմի ներքին և արտաքին թշնամիները փորձեցին վերականգնել Չեխոսլովակիայում կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը,—ընդգծել է Ն. Ս. Խրուշչովը Պրագայի «ՇԿՊ-Սոկոլովո» մեքենաշինական գործարանի բանվորների 1957 թվականի հուլիսի 11-ի միտինգում,—Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիան համախմբեց և դլխավորեց բոլոր ուժերը, որոնք կանգնած էին սոցիալիզմի կառուցման դիրքերի վրա, Ազգային ճակատի ուժերը»։

Անընդհատ ճզմելով խռովարարներին և նրանց համախոհնե-

---

[84] Մեջ է բերված ըստ Л. Свобода и др., Так было в феврале, էջ 157։

[85] Մեջ է բերված ըստ И. Веселый. Хроника..., стр. 152.

յին, խլելով նրանցից նորանոր դիրքեր, բանվոր դասակարգը աճող արագությամբ մոտենում էր պայքարի հաղթական ավարտին։ Համաձայն ֆաբրիկա-գործարանային խորհուրդների պատգամավորների համապետական համագումարի որոշման փետրվարի 24-ին ժամը 12-ին հնչեցին երկրի բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների սուլիչները, երկրի ամբողջ կյանքը մեկ ժամով ընդհատվեց։ Այդ պատմական համընդհանուր գործադուլով Չեխոսլովակիայի բանվոր դասակարգը ցույց տվեց, թե ով է երկրի տերն ու անօրենը, նրա բախտը որոշողը՝ պրեզիդենտը, խոռվարարները, մի բուռն անբան երիտասարդները, բուրժուական տարրերը, թե՞ բազմամիլիոն ժողովուրդը։ Գործադուլն ապացուցեց Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի ահռելի ուժն ու հնարավորությունները, բանվոր դասակարգի և ամբողջ ժողովրդի պատրաստակամությունը կոմունիստների առաջին իսկ կոչով մարտի նետվելու և սրբելու այն ամենը, ինչ խոչընդոտում է երկրի սոցիալիզմի ուղիով զարգացմանը։

Նույն օրը երեկոյան ժողովուրդը երկրին ընդգծեց, որ նա այլևս չի հանդուրժի կառավարական ճգնաժամի կոմունիստական ճանապարհով լուծման հետագա դանդաղեցում։ Աշխատանքը ավարտվելուն պես բանվորական շարասյունները բանվորական զինված միլիցիոներների հետ մեկտեղ ուղևորվեցին դեպի Պրագայի կենտրոնական փողոցներն ու հրապարակները։ Ստացվեց զինված և անզեն բանվորների փողոցային հսկայական մի ցույց, որի կազմակերպման ու ղեկավարման գործում մեծ դեր խաղաց ՉԿՊ Պրագայի մարզկոմը՝ Ա. Նովոտնու ղեկավարությամբ։ Երգելով ռևոլյուցիոն երգեր, ցուցարարներն անցնում էին փողոցներով և սարսափեցնում բուրժուազիային։ Վերջինս, որ քաջ գիտակցում էր, թե ինչ է նշանակում զինված պրոլետարիատ, անկարող էր որևէ ազդու բան ձեռնարկել։

Պրեզիդենտը դեռ դիմադրում էր, բայց միաժամանակ զգում, որ այդ համազոր է ինքնամերկացման։ Տեսնելով դավադրության վերջնական կրախը և ժողովրդի հաղթանակը, փետրվարի 25-ին նա ընդունեց խռովարար մինիստրների հրաժարականը և հաստատեց վերածնված Ազգային ճակատի կառավարության կազմը։

Փետրվարյան օրերին գյուղացիական լայն մասսաներն ընթանում էին բանվոր դասակարգի հետ ձեռ-ձեռքի տված։ Այդ մասին է վկայում գյուղացիական պատգամավորների համապետական համագումարը, որը տեղի ունեցավ փետրվարի 28—29-ին Պրագա-

յում։ Լսելով նոր կառավարության անդամների ելույթները, համադումարը ողջունեց նրա ագրարային քաղաքականության ծրագիրը և պահանջեց հնարավորին չափով շուտ կենսագործել այն։ Գյուղացիական պատգամավորների համապետական համադումարն ավարտվեց նոր կառավարությանը վստահություն արտահայտող մասսայական դեմոնստրացիայով։

Գյուղացիական պատգամավորների ցույցը

Այսպիսով, ժողովրդական լայն մասսաների ռևոլյուցիոն բարձր դգոնությունը, քաղաքական աննախընթաց հասունությունը, մարտունակությունը, ռևոլյուցիոն նախաձեռնությունը և հիանալի համախմբվածությունը բանվոր դասակարգի ու նրա ավանգարդ Կոմպարտիայի շուրջը վճռական դեր խաղացին փետրվարյան հակառևոլյուցիոն խռովության տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման գործում։

«Կապիտալիզմից կոմունիզմին անցնելը... չի կարող չբերել քաղաքական ձևերի ահագին առատություն և բազմազանություն,— գրել է Վ. Ի. Լենինը իր «Պետություն և ռևոլյուցիա» աշխատության մեջ,—բայց դրանց բոլորի էությունն անխուսափելիորեն մեկ է լինելու՝ պրոլետարիատի դիկտատուրան»[86]։

[86] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 533։

Ընդ որում, 1948 թվականի փետրվարին Չեխոսլովակիայում ստեղծված դասակարգային ուժերի ռեալ հարաբերակցության և միջազգային բարենպաստ իրադրության[87] շնորհիվ ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան վերաճեց հաղթական սոցիալիստական ռևոլյուցիայի, բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրան իր տեղը զիջեց «զուտ» պրոլետարիատի դիկտատուրայի՝ առանց զինված ապստամբության և արյունահեղ քաղաքացիական կռիվների, խաղաղ ճանապարհով, պայքարի պառլամենտական ձևերի օգնությամբ։ Ռեակցիայի ներկայացուցիչների արտաքսումը կառավարությունից և պրոլետարիատի դիկտատուրայի հիմնադրումը իրականացվեց Չեխոսլովակիայում գոյություն ունեցող պառլամենտական և պարտիական պայքարի նորմաների, կոնստիտուցիոն սկզբունքների և սովորույթների խստագույն պահպանմամբ։

Ուշագրավ է, որ սոցիալիստական ռևոլյուցիայի նման ճանապարհով հաղթանակի ռեալ հնարավորություններ եղել են նաև ցարական Ռուսաստանում՝ այնտեղ 1917 թվականի փետրվարին հաղթանակած բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հետագա զարգացման որոշակի էտապներում և, անգամ՝ 1917 թվականի հոկտեմբերի առաջին կեսում։ «Իրենց ձեռքն առնելով ամբողջ իշխանությունը,—գրել է Վ. Ի. Լենինը 1917 թվականի հոկտեմբերի 9—10-ին,—Սովետները կարող կլինեին դեռ այժմ էլ,—և, հավանաբար, այդ նրանց վերջին շանսն է,—ապահովել ռևոլյուցիայի խաղաղ զարգացումը, ժողովրդի կողմից իր դեպուտատներին խաղաղ կերպով ընտրելը, պարտիաների խաղաղ պայքարը Սովետների ներսում, զանազան պարտիաների ծրագրի փորձելը գործնականում, իշխանության խաղաղ անցումը մի պարտիայի ձեռքից մյուսի ձեռքը»[88]։

Այն, ինչ մի շարք ներքին և արտաքին օբյեկտիվ գործոնների հետևանքով 1917 թվականին չհաջողվեց ռուսական կոմունիստներին, այն 31 տարի հետո հաջողվեց չեխոսլովակյան կոմունիստներին։ Աղգային-դեմոկրատական ռևոլյուցիայի խաղաղ զարգացման

---

[87] Միջազգային դեմոկրատական հզոր լագերի առկայությունը ՍՍՌՄ-ի գլխավորությամբ բացառեց միջազգային ռեակցիայի անմիջական և զինված օգնության հնարավորությունը Չեխոսլովակիայի ներքին ռեակցիոն ուժերին, ինչպես նաև՝ օտարերկրյա ինտերվենցիայի հնարավորությունը։

[88] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 64 (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

ճանապարհին, պարտիաների խաղաղ պայքարի միջոցով, պառլամենտական պայքարի խաղաղ ձևերի օգնությամբ լուծվեց «ով-ում?» հարցը՝ հօգուտ սոցիալիզմի, երկրում հաղթանակեց սոցիալիստական ռևոլյուցիան, հաստատվեց պրոլետարիատի դիկտատուրա։

«1948 թվականի փետրվարյան հիշարժան օրերին բանվոր դասակարգը վճռական մարտ տվեց բուրժուազիային և վերջնականապես իր օգտին լուծեց պետական իշխանության հարցը,—շնորհված է հիտլերյան Գերմանիայի կապիտուլյացման և Պրագայի ազատագրման 10-ամյակին նվիրված ՉԿՊ ԿԿ թերներում,—...Փետրվարյան հաղթանակով հիմնականում ավարտվեց ազգային և դեմոկրատական ռևոլյուցիան սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճման պրոցեսը։ Այդ ռևոլյուցիոն պրոցեսի ընթացքում ժողովրդական դեմոկրատիայի հիմքը դարձավ պրոլետարիատի դիկտատուրան»[89]։

Վերլուծելով Չեխոսլովակիայում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի պրոցեսը, Ա. Ի. Միկոյանը ընդգծել է, որ այնտեղ «ստեղծված հետպատերազմյան բարենպաստ իրադրության շնորհիվ սոցիալիստական ռևոլյուցիան կատարվեց խաղաղ ճանապարհով. իշխանության գլուխ անցան կոմունիստները, դաշինք կնքելով ոչ միայն իրենց մոտիկ աշխատավորական պարտիաների հետ, այլև ընդհանուր Ազգային ճակատը պաշտպանող բուրժուական պարտիաների հետ։ Չեխոսլովակիայում ժողովուրդը հաղթանակեց ռևոլյուցիայի խաղաղ զարգացման ճանապարհին»[90]։

Թե ինչպիսի դոհունակությամբ ընդունեց ժողովուրդը նոր կառավարության կազմը[91], վկայում է անգամ դեպքերի ականատես անգլիական պառլամենտի դեպուտատ Պլեսս-Միլսը. «Ես Պրագա ժամանեցի չորեքշաբթի օրը, փետրվարի 25-ին..., ականատես եղա, ինչպես պրեմիեր-մինիստրը հայտարարում էր նոր կառավարության կազմը։ Նա այդ կատարում էր Վացլավյան հրապարակում, ուր հա-

---

[89] „Nová mysl", 1955, № 5 (Հետագայում—«Նոր միտք»)։

[90] Ա. Ի. Միկոյան, Նատ. ՍՄԿՊ 20-րդ համագումարում, Երևան, 1956, էջ 28։

[91] Նոր կառավարությունը բաղկացած էր 24 հոգուց, որոնցից 11-ը ՉԿՊ-ի և ՍԿՊ-ի անդամներ էին, 3-ը՝ սոցիալ-դեմոկրատ, 2-ը՝ ժողովրդական պարտիայի ներկայացուցիչ, 2-ը՝ ազգային-սոցիալիստ, 1-ը՝ սլովակյան դեմոկրատ, 1-ը փետրվարյան օրերին Սլովակիայում կազմակերպված Ազատության պարտիայի ներկայացուցիչ, 2-ը՝ Պրոֆմիությունների կենտրոնական խորհրդի անդամ (ընդ որում, մեկը՝ կոմունիստ, մյուսը՝ սոցիալ-դեմոկրատ) և երկու անպարտիական։ Կառավարության նախագահն էր Կ. Գոտվալդը, նրա տեղակալները՝ Վ. Շերոկին, Ա. Զապոտոցկին։ (Տե՛ս «Ռուդե պրավո», 26.II.1948)։

վաքված էր շուրջ 200 հազար, կամ ավելի շատ մարդ։ Ես երբեք չեմ տեսել այդպիսի բազմություն... Ժողովուրդը շատ գոհ էր նրանից, ինչ տեղի էր ունեցել... Հատուկ, բացառիկ ընդունելության արժանացան պրեմիեր-մինիստր Գոտվալդի և այն մինիստրների անունները, որոնք Կոմունիստական պարտիայի անդամներ էին»[92]։

Միտինգը վերածվեց խանդավառ ցույցի, որը տևեց մինչև ուշ երեկո, և որի նկարագրության համար առնվազն անհրաժեշտ է ունենալ ճարտար լեզու և բանաստեղծական տաղանդ։ Հասարակական փոթորիկը, որ ճայթեց կոմունիստների կոչով, մոլեգնեց 120 ժամ և սրբեց երկրի ռեակցիոն ուժերին, իր տեղը զիջեց ժողովրդի ստեղծագործ աշխատանքին, որը դավադիրների մեղքով դրեթե ընդհատվել էր։ «Հաջորդ օրը (փետրվարի 26-ին—Ս. Հ.) առավոտյան,—վկայում է անգամ ամերիկյան «Կոլամբիա Բրոդկաստինգ սիստեմ» ռադիոկամպանիայի դիրեկտոր Գոլարդ Կ. Սմիտը իր «Վերջին դնացքը Բեոլինից» գրքում,—...Պրագան լրիվ հանդիստ էր։ Մարդիկ, ինչպես միշտ, աշխատանքի էին գնում։ Այստեղ-այնտեղ անգեն ուսանողները կարգավորում էին փողոցային շարժումը և ուրիշ ոչինչ։ Թվում էր, թե այդ ամենը (ինչ նա տեսել և ապրել էր փետրվարի 20-ից 25-ը—Ս. Հ.) միայն երազ էր, ինչ-որ ճնշող կախարդանք»[93]։

Բուրժուական պատմաբանները քիչ ճիգեր չեն գործադրել փետրվարյան դեպքերի խեղաթյուրման ուղղությամբ։ Նրանք փորձել և փորձում են չեխոսլովակյան ժողովրդի պատմական այդ մեծ հաղթանակը ցույց տալ որպես «կոմունիստների բռնության», որպես «մոսկովյան գործակալների գործունեության» արդյունք և այլն[94]։ Այդ հերյուրանքներն այնքան ակնարկ են, որ հերքվել են անգամ կոմունիստների և մեր երկրի այնպիսի ոխերիմ թշնամիների կողմից, ինչպիսին են վերը նշված անգլիական պարլամենտի

---

[92] Մեջ է բերված ըստ А. Свобода и др., Так было в феврале, стр. 195.

[93] Մեջ է բերված ըստ И. Веселый, Хроника..., стр. 187.

[94] Տես, օրինակ, «Չեխոսլովակիա» հոդվածների հատուկ ժողովածուն, որը հրատարակվել է 1957 թվականին Նյու-Յորքում, այսպես կոչված «Ազատ Եվրոպայի կոմիտեի միջնադարյան հետազոտական կենտրոնի» կողմից (Czechoslovakia. A volume in the Mid European Studies Center series. New-York, Praeger, 1957)։

անդամ Պլեսս-Միլսը[95], հանրահայտ լորդ Բրյուս Լոկարտը[96] և ուրիշներ։

Նոր կառավարության գործունեության ծրագրում իրենց արտացոլումը գտան այն բոլոր միջոցառումները, որոնք նախատեսված էին 1946 թվականի ծրագրում, բայց ռեակցիայի դիմադրության հետևանքով չէին կենսագործվել, ինչպես նաև փետրվարյան հախուռն օրերին կայացած բանվորների և գյուղացիության ներկայացուցիչների համապետական համագումարների պահանջները, որոնք ապահովում էին ժողովրդա-դեմոկրատական կառուցման տնտեսական ու քաղաքական ամրապնդում և երկրում սոցիալիզմի տարրական հիմքերի կառուցման նախադրյալների ստեղծում։

1948 թվականի մարտի 10-ին Ազգային օրենսդիր ժողովը միաձայն հաստատեց այդ ծրագիրը, որը նախատեսում էր արտաքին առևտրի պետական մենաշնորհի սահմանում, միջակ արդյունաբերական ձեռնարկությունների, որոնցում դրսևորված են 50-ից ավելի բանվորներ և ծառայողներ, և նեղոին մեծածախ առևտրի ազգայնացում, նոր ապրանքային ռեֆորմի անցկացում, կոնստիտուցիայի ընդունում, հողատ աշխատավորների՝ հարկային և վարկային սիստեմների վերակառուցում, կրթական սիստեմի, բանակի, նախարարնչական և դատաբանական պատգամների դեմոկրատականացում, հին պետական ապարատի մնացորդների վերջնական խորտակում, սոցիալիստական դեմոկրատիայի հետևողական կենսագործում և այլն, իսկ արտաքին քաղաքականության ասպարեզում՝ Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների հետ սերտ բարեկամության և փոխադարձ օգնության հետագա ամրապնդում և ընդլայնում։

Կենսագործելով «Հողը պատկանում է նրան, ով վրան աշխա-

---

[95] Պլեսս-Միլսը, որն հայտնի է իր հակակոմունիստական ելույթներով։ 1948 թվականի փետրվարին, վերադառնալով Լոնդոն, պրես-կոնֆերանսում հայտարարեց, որ ինքը, որպես իրավաբան, գտնում է, որ «նոր կառավարությունը Չեխոսլովակիայում կազմակերպվել է խիստ կոնստիտուցիոն ճանապարհով» (Տես И. Веселый, Хроника..., стр. 210)։

[96] Անգլիական «Ինտելիջենս սերվիս» հետախուզական գործակալության հնագույն և ճանաչված ագենտ Բրյուս Լոկարտը, որը բազմաթիվ հաջողվածական պրովոկացիաների հեղինակ է եղել, ամերիկյան «Ֆորին աֆֆերս» ամսագրի 1948 թվականի հուլիսյան համարում դեռևս գրած իր «Չեխոսլովակյան սերյուզիա» հոդվածում տեսված է եղել ընդունելու, որ «Ռուսաստանը չի եղել այդ դեպքերի (փետրվարյան— Ս. Հ.) նախաձեռնողը և նա չի ընտրել մոմենտը, երբ պետք է ելույթի դիմել»։

տում է» սկզբունքը, Ազգային օրենսդիր ժողովը 1948 թվականի մարտի 21-ին ընդունեց հինգ գյուղատնտեսական օրենքներ, որոնցով երկրում սկսվեց ագրարային ռեֆորմների անցկացման նոր, հերթական՝ երրորդ փուլը։ Ըստ այդ օրենքների 50 հեկտարից ավելի հող ունեցողների, ինչպես նաև հողը անձամբ չօգտագործողների հողատարածությունները դնվում էին պետության կողմից և վերաբաժանվում սակավահող գյուղացիությանը և բատրակներին։ Ընդ որում արգելվում էր հողի վաճառքը և վարձով տալը։ Լիկվիդացվեց գյուղացիական հողերի մասնատվածությունը, մտցվեց միասնական պրոգրեսիվ հարկային սիստեմ, որը խարսխված էր հողի չափի, նրա եկամտաբերության, հողատիրոջ ընտանեկան վիճակի և աշխատունակության մակարդակի հաշվառքի վրա։ Պետությունը պարտավորվեց հանրամատչելի սկզբունքներով գյուղացիությանը վարկավորել՝ նրանց տնտեսության մեքենայացման, գյուղատնտեսական գույքի ձեռքբերման և այլ պահանջների բավարարման համար։ Ընդունվեց նաև օրենք սոցիալական ապահովագրության մասին, որը երկրի բնակչության 95 տոկոսին ապահովում էր կյանքի նորմալ պայմաններ՝ ծերության և աշխատունակության կորստի դեպքում։

Վերոհիշյալ օրենքների կենսագործման շնորհիվ արմատապես փոխվեց չեխոսլովակյան գյուղի հողաբաշխման, հարկադրման, վարկավորման, ապահովագրության ամբողջ պատկերը՝ հօգուտ աշխատավոր և, առաջին հերթին, հողազուրկ ու սակավահող գյուղացիության։ Ըստ էության դա կատարյալ ագրարային ռևոլյուցիա էր, որով մեկընդմիշտ վերջ տրվեց կալվածատիրական և այլատիպ խոշոր հողատիրությանը, լիկվիդացվեց հողազրկությունը, աճեց միջակ և նվազեց սակավահող գյուղացիական տնտեսությունների տեսակարար կշիռը, մանրապրանքային տնտեսությունները իշխող դիրք նվաճեցին Չեխոսլովակիայի գյուղատնտեսության մեջ։

1948 թվականի ապրիլի 28-ին Ազգային ժողովը ընդունեց օրենք, ըստ որի ազգայնացվեցին արդյունաբերական այն բոլոր ձեռնարկությունները, որոնցում զբաղված էին 50-ից ավելի բանվորներ։ Ընդ որում ամբողջությամբ ազգայնացվեցին (անկախ զբաղված բանվորների թվից) քիմիական, դեղագործական, կերամիկային, ռեզինի, ապակու, տորֆի, աղյուսի, կաշեմշակման և մի շարք այլ արդյունաբերական ճյուղերի ձեռնարկություններ։ Այս օրենքի կենսագործման շնորհիվ արդյունաբերության մասնավոր կապիտալիստական սեկտորը կրճատվեց և 53,4 տոկոսից (ըստ

ձեռնարկությունների թվի) հասավ 31,6 տոկոսի, իսկ ըստ զբաղված բանվորների թվի 20,4 տոկոսից կրճատվեց և հասավ 5,1 տոկոսի։ Սոցիալիստական սեկտորը համապատասխանաբար աճեց՝ 46,6 տոկոսից հասավ 68,4 տոկոսի (ըստ ձեռնարկությունների թվի) և 79,6 տոկոսից (ըստ զբաղված բանվորների թվի) հասավ 94,9 տոկոսի[97]։

Պետական մենաշնորհ հաստատվեց արտաքին առևտրի ընագավառում, ուր մասնավոր առևտրական ֆիրմաները մինչ այդ ունեին իշխող դիրք (նրանց ձեռքումն էր գտնվում երկրի ամբողջ ներմուծման 70 տոկոսը և արտահանման 35 տոկոսը)։ Ներքին մեծածախ առևտրի ազգայնացման հետևանքով լիկվիդացվեցին 10 հազար առևտրական ֆիրմաներ, որոնց ձեռքումն էր գտնվում ամբողջ ներքին առևտրի 75 տոկոսը։ Նրանց կապիտալները, ապրանքները, գույքը և սարքավորումները անցան պետության ձեռքը։ Շնորհիվ այդ օրենքների ժողովրդա-դեմոկրատական պետությունը մոնոպոլ դիրք նվաճեց արտաքին առևտրի և իշխող դիրք՝ ներքին առևտրի ընագավառներում։

Սովետական Բանակի կողմից Պրագայի ազատագրման երրորդ տարեդարձի օրը՝ 1948 թվականի մայիսի 9-ին Ազգային ժողովը հանդիսավոր կերպով ընդունեց Չեխոսլովակյան ռեսպուբլիկայի Կոնստիտուցիան[98], որը ապրիլի 18-ից դրված էր համաժողովրդական քննարկման և դարձել էր ջերմ հավանություն։ Ըստ կոնստիտուցիայի առաջին հոդվածի, Չեխոսլովակիան երկու իրավահավասար սլավոնական ազգերի՝ չեխերի և սլովակների միասնական ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկա է, որում ժողովուրդն է հանդիսանում «ամբողջ իշխանության միակ աղբյուրը»։ Ռեսպուբլիկայի գերագույն օրենսդիր օրգանը՝ մեկպալատանի Ազգային ժողովը (300 պատգամավոր) ընտրվում է բնակչության կողմից 6 տարի ժամանակով՝ ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության միջոցով։ Ազգային ժողովը ընտրում է նախագահություն, որը և 7 տարի ժամկետով ընտրում է ռեսպուբլիկայի պրեզիդենտ։ Գործադիր իշխանության գերագույն օրգանը՝ կառավարու-

---

[97] Մանրամասն արդյունաբերության ազգայնացման այդ, այսպես կոչված՝ երկրորդ էտապի արդյունքների մասին (1948 թվականի մայիսի 1-ի տվյալներով) տե՛ս աղյուսակ «Статистический ежегодник», № 7—8, 1948։

[98] Չեխոսլովակիայի ժողովրդա-դեմոկրատական Ռեսպուբլիկայի 1948 թվականի մայիսի 9-ի Կոնստիտուցիայի տեքստը տե՛ս ժողովածուում՝ „Конституции европейских стран народной демократии". Госполитиздат, М., 1954.

թյունը հաշվետու է Ազգային ժողովի առաջ։ Կառավարության անդամները, ինչպես և պրեմիեր-մինիստրը նշանակվում ու արձակվում են պրեզիդենտի կողմից։ Պետական իշխանության իրական տեղական օրգաններ օրենսդրական կարգով հաստատվեցին Ազգային կոմիտեները։

Ժողովրդա-դեմոկրատական Չեխոսլովակիայի տնտեսությունը,—ընդգծված էր Կոնստիտուցիայի 12-րդ հոդվածում,—խարսխված է «հողի ընդերքի, արդյունաբերության, մեծածախ առևտրի և ֆինանսական հիմնարկների ազգայնացման վրա, ըստ սկզբունքի՝ «Հողը պատկանում է նրան, ով վրան աշխատում է»—հողային սեփականության վրա... Ելնելով հասարակության շահերից, պետությունը միասնական տնտեսական պլանի միջոցով վարում է երկրի ամբողջ էկոնոմիկական գործունեությունը»։

Ազգային ժողովն ընդունեց նաև օրենքներ ժողովրդական բանակի և միլիցիայի վերակառուցման ու ամրապնդման, դատա-քննչական պրոցեսների դեմոկրատականացման, վարչական ու պետական ապարատից ռեակցիոն չինովնիկների արտաքսման և այլնի մասին, որոնցով ավարտվեց հին՝ բուրժուական պետական մեքենայի խորտակման և նոր՝ պրոլետարական պետական մեքենայի ստեղծման պրոցեսը։

Արմատական սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական միջոցառումները ծնեցին և ձևավորեցին նոր՝ սոցիալիստական արտադրական հարաբերություններ, որոնք նպաստեցին երկրի արտադրողական ուժերի արագ զարգացմանը, խթան հանդիսացան Չեխոսլովակիայի տնտեսության վերականգնման և հետագա զարգացման երկամյա պլանի հաջող (101,5 տոկոսով) կենսագործման համար։ 1948 թվականի վերջին արդյունաբերության նախապատերազմյան (1937) մակարդակը ոչ միայն վերականգնվեց, այլև գերազանցվեց 8,5 տոկոսով, իսկ 1945 թվականի համեմատությամբ արդյունաբերության արտադրանքի ծավալն աճեց ավելի քան 2 անգամ[99]։ Ընդ որում անհամեմատ արագ աճեց արտադրության միջոցների («Ա» խումբ) արտադրությունը, որը լայն հնարավորություններ և ռեալ նախադրյալներ ստեղծեց երկրի արդյունաբերության սո-

---

[99] Երկամյակի կատարման մանրամասն տվյալները (ըստ արդյունաբերության առանձին ճյուղերի և այլն) տե՛ս «Պրացա», 6.II.1949։

ցիալիստական ինդուստրացման անցնելու համար[100]։ Վերականգնվեցին նաև ճանապարհները և հաղորդակցության միջոցները։

Փետրվարյան հաղթանակի արդասիքը հանդիսացած սոցիալ-տնտեսական միջոցառումները փոխեցին ժողովրդական տնտեսության մեջ գոյություն ունեցող տնտեսական սեկտորների փոխհարաբերությունը հօգուտ սոցիալիստականի։ Համաձայն Չեխոսլովակյան ինֆորմացիայի մինիստրության տվյալների, տնտեսական սեկտորների (ըստ զբաղված բանվորների թվի) տոկոսային փոխհարաբերությունը պատկերը հետևյալն է (համեմատության նպատակով մեջ բերենք նաև տվյալներ մինչփետրվարյան հաղթանակի ժամանակաշրջանից)[101].

Տնտեսական սեկտոր	1948 թ. փետրվարի նախօրեին		1948 թ. փետրվարից հետո	
	արդ. մեջ	ժողտնտ. մեջ	արդ. մեջ	ժողտնտ. մեջ
Սոցիալիստական	81,6	35,4	96,4	41,3
Մանրապրանքային	0,4	40,8	0,1	41,0
Կապիտալիստական	18,0	23,8	3,5	17,7

Դասակարգային ուժերի տեղաշարժը հօգուտ սոցիալիստական սեկտորի ծնեց Ազգային ճակատի մեջ մտած պարտիաների էական տեղաշարժեր։ Փետրվարյան խոովարար պարտիաների շարքային անդամները՝ դուրս շպրտելով ռեակցիոներներին և ղեկավար օրգաններում ընտրելով դեմոկրատական գործիչների, կազմեցին որակապես նոր պարտիաներ, որոնք աղղարարեցին իրենց անվերապահ համերաշխությունը վերածնված Ազգային ճակատի հետ[102]։ Բացի քաղաքական պարտիաներից Ազգային ճակատի մեջ

---

[100] Արտադրության միջոցների արտադրության («Ա» խումբ) և սպառման միջոցների արտադրության փոխհարաբերության պատկերը 1937—1948 թվականների ընթացքում, տե՛ս «Սատիստիկի սպրավոչայ», 1949, № 6, էջ 214։

[101] Տե՛ս „Plánované hospodářství", № 4—5, 1950 (Հետագայում— «Պլանովանն գոսպոդարժստվի»), ինչպես նաև „Бюллетень иностранной коммерческой информации", 21.VIII.1948 (Հետագայում կրճատ— „БИКИ")։

[102] Տե՛ս, օրինակ, Йозеф Плойгар. Успешное и плодотворное сотрудничество, „Проблемы мира и социализма", 1960, № 12 (28), стр. 42—47.

ընդգրկվեցին ոչ միայն պրոֆմիությունները, որոնք իրենց շարքերում համախմբել էին 2 միլիոնից ավելի բանվորների ու ծառայողների, այլ նաև երիտասարդական միությունը, որն ուներ մեկ միլիոնից ավելի անդամներ, կոոպերատիվների միությունը, սպորտային «Սոկոլ» ընկերությունը, կանանց միությունը, Չեխոսլովակոսովետական բարեկամության ընկերությունը և այլ մասսայական դեմոկրատական կազմակերպություններ։ Վերածնված Ազգային ճակատում գլխավոր ու առաջատար ուժը Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիան էր, որը դարձել էր կառավարող պարտիա։ Վերածնված Ազգային ճակատի սոցիալական էությունը պրոլետարիատի և քաղաքի ու գյուղի մանրբուրժուական էլեմենտների, ինչպես նաև պրոգրեսիվ ինտելիգենցիայի քաղաքական դաշինքն էր՝ բանվոր դասակարգի հեգեմոնիայի պայմաններում։

1948 թվականի մայիսին տեղի ունեցան Ազգային ժողովի ընտրությունները, որոնց Ազգային ճակատի պարտիաները և կազմակերպությունները մասնակցեցին նախընտրական թեկնածուական միասնական ցուցակով։ Ընտրություններին մասնակցեց բոլոր ընտրողների 93,5 տոկոսը, որի 89,2 տոկոսը քվեարկեց Ազգային ճակատի թեկնածուների օգտին։ Ազգային ճակատի փայլուն հաղթանակից հետո օտարերկրյա իմպերիալիստների դործակալ պրեզիդենտ Բենեշը հիվանդության պատրվակով հրաժարական տվեց։ Ազգային ժողովը միաձայն ռեսպուբլիկայի պրեզիդենտ ընտրեց ՉԿՊ նախագահ Կլեմենտ Գոտվալդին, իսկ պրեմիեր-մինիստր նշանակվեց երկրի բանվորական շարժման վետերան Անտոնին Զապոտոցկին։

Չեխոսլովակիայի սոցիալ-դեմոկրատական պարտիայի զուտը և նրա համատեղ պայքարը ՉԿՊ-ի հետ հանդիսացան ռեալ բազա այդ երկու բանվորական պարտիաների միաձուլման համար, որն իրագործվեց 1948 թ. հունիսին։ Միասնական պարտիայի կազմակերպչական բազան հանդիսանում էր դեմոկրատական ցենտրալիզմը, իսկ իդեականը՝ մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքը։ 1948 թվականի սեպտեմբերին ՉԿՊ-ի հետ միաձուլվեց նաև Սլովակիայի Կոմունիստական պարտիան։

Այդպիսով, վերջ տրվեց Չեխոսլովակիայի բանվոր դասակարգի քաղաքական (պարտիական) պառակտմանը, որը հսկայական նշանակություն ունեցավ երկրում պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման և սոցիալիզմի հիմքերի կառուցման համար։

Հանրագումարի բերելով Չեխոսլովակիայի պատմական դար-

զացումը 1945—1948 թվականներին, կարելի է ընդգծել, որ հակաֆաշիստական, ազգային-ազատագրական պայքարի բովում բանվոր դասակարգը ՀԿՊ ղեկավարությամբ նվաճեց հեգեմոն դիրքեր, որոնք ամրապնդվեցին 1944 թվականին երկրում սկսված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի ընթացքում։ Շնորհիվ Սովետական Միության տարած համաշխարհային-պատմական հաղթանակի ստեղծվեցին բարենպաստ պայմաններ, և այդ ռևոլյուցիան 1945 թվականի մայիսին պսակվեց հաղթանակով՝ երկրից արտաքսվեցին օկուպանտները, վերականգնվեց նրա ազգային անկախությունը, այնտեղ կառուցվեցին ժողովրդա-դեմոկրատական հասարակական-պետական կարգեր և անցկացվեցին արմատական դեմոկրատական միջոցառումներ։ Օգտագործելով իր հեգեմոն դիրքը հաղթական ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայում, բանվոր դասակարգը Կոմպարտիայի ղեկավարությամբ առաջատար տեղ զբաղեցրեց ժողովրդա-դեմոկրատական կառավարության մեջ և սկսեց անընդհատ խորացնել հաղթանակած ռևոլյուցիան, տալով նրան սոցիալիստական ուղղություն։ Արդեն 1945 թվականի հոկտեմբերին անցկացված արդյունաբերության կարևորագույն բարձունքների, բանկերի և ապահովագրական ընկերությունների ազգայնացումը դուռ սոցիալիստական բնույթի կարևոր միջոցառում էր։ Ստանալով հարված հարվածի ետևից և մասնայաղրիվելով, բուրժուազիան իր քաղաքական պարտիաների ղեկավարությամբ 1948 թվականի փետրվարին փորձեց հակառևոլյուցիոն պետական հեղաշրջման միջոցով կասեցնել ռևոլյուցիայի հետագա առաջխաղացումը, ճնշել ժողովրդական մասսաներին և երկրում վերականգնել կապիտալիստական կարգերը։ Շնորհիվ կոմունիստների և նրանց շուրջը համախմբված բանվոր դասակարգի ու աշխատավորական լայն զանգվածների վճռական հակահարվածի բուրժուազիայի այդ փորձը միայն արագացրեց ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան հաղթական սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճման պրոցեսը։ Դասակարգային և պարտիական ախոյան ուժերի հնգօրյա կատաղի և բացահայտ, բայց անարյուն և խաղաղ գոտեմարտում հաղթանակեցին Կոմունիստական պարտիան, բանվոր դասակարգը, ժողովուրդը, սոցիալիստական ռևոլյուցիան։ Երկրում հիմնադրվեց պրոլետարիատի դիկտատուրա և այն հաստատուն քայլերով ընթացավ սոցիալիզմի ուղիով։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ

Փետրվարյան հաղթանակի և նրան հաջորդած սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական միջոցառումների հետևանքով երկրում ստեղծվեցին ռեալ նախադրյալներ ամբողջ ճակատով սոցիալիստական շինարարության անցնելու համար։

1948 թվականի հոկտեմբերին, երբ արդեն ավարտված էր երկամյա պլանով նախատեսված ժողովրդական տնտեսության հետպատերազմյան վերականգնման պրոցեսը; Ազգային ժողովը հաստատեց Չեխոսլովակիայի տնտեսության սոցիալիստական վերակառուցման և զարգացման առաջին հնգամյա պլանը (1949—1953), որի հիմնական նպատակն էր երկրում սոցիալիզմի հիմքերի կառուցումը։ Այն նախատեսում էր արդյունաբերության համախառն արտադրանքի աճ (1948 թվականի համեմատ) 57%, այդ թվում արտադրության միջոցների արտադրության աճ՝ 66% և սպառման միջոցների արտադրության աճ՝ 44%։ Հատկապես մեծ տեղ էր հատկացված ծանր արդյունաբերության և, առաջին հերթին, նրա սրտի՝ մեքենաշինության զարգացմանը և թողնված էր նույնը թեթև արդյունաբերության զարգացման առանց այն էլ բարձր տեմպերը։ Գյուղատնտեսության ասպարեզում, ուր երկամյակը կատարվել էր ընդամենը 80,5%, նախատեսվում էր համախառն արտադրանքի աճ 37%։ Հատկապես մեծ էր (86%) անասնապահության զարգացման ցուցանիշը։ Առաջին հնգամյա պլանում հատուկ ուշադրություն էր դարձված հետամնաց մարզերի և, հատկապես, ապրարային կցորդ Սլովակիայի ինդուստրացմանը, ուր նախատեսված էր արդյունա-

բերության համախառն արտադրանքի աճ 75%։ Հնգամյակի տարիներին բնակչության կենսամակարդակը պետք է բարձրանար 35%[1]։

Ելնելով հնգամյակի առաջին և երկրորդ տարիների ամփոփումներից և հենվելով ժողովրդական լայն զանգվածների աշխատանքային բուռն վերելքի վրա, ՉԿՊ ԿԿ երկու անգամ (1950 և 1951 թվականների վերջերին) վերանայեց առաջին հնգամյակի նորմաները և մոտ կիսով չափ (41%) բարձրացրեց այն։ 1953 թվականին արդյունաբերության համախառն արտադրանքը 1948 թվականի համեմատությամբ պետք է աճեր 98%, արտադրության միջոցների արտադրությունը՝ 130% և այլն։

Առաջին հնգամյակը, որը մտավ Չեխոսլովակիայի պատմության մեջ ինդուստրացման հնգամյակ անվան տակ, իր բարձրացված պլանային նորմաներով հանդերձ, արդյունաբերության ասպարեզում կատարվեց 102%, տալով արդյունաբերության արտադրանքի 15% տարեկան միջին աճ։ Զգալի հաջողություններ ձեռք բերվեցին նաև գյուղատնտեսության և, հատկապես, անասնապահության զարգացման ասպարեզում։ Բայց պլանով նախատեսված աճը գյուղատնտեսության մեջ չապահովվեց։

Չնայած երկրի ինդուստրացման ասպարեզում ձեռք բերած հսկայական նվաճումներին, առաջին հնգամյակի վերջում Չեխոսլովակիայի ժողովրդական տնտեսության մեջ հանդես եկան որոշ աններդաշնակություններ, դիսպրոպորցիաներ. այսպես, օրինակ, վառելիքի, էներգետիկ աղբյուրների, հումքի բազաների զարգացումը նշանակալից չափով ետ մնաց անհամեմատ արագ աճող արդյունաբերության պահանջներից և սկսեց խոչընդոտել նրա հետագա զարգացումը։ Հատկապես ետ մնաց գյուղատնտեսությունը։ ՉԿՊ ԿԿ և կառավարությունը կոնկրետ միջոցներ ձեռք առան տնտեսության հախուռն վերելքի հետևանքով ծագած այդ դժվարությունների, անհամամասնությունների վերացման ուղղությամբ։ 1954 և 1955 թվականներին Չեխոսլովակիայի ժողովրդական տնտեսությունը զարգանում էր ըստ տարեկան պլանների, որոնցում մեծ տեղ էր հատկացված տնտեսության հենց այդ ճյուղերի զարգացմանը։ Ընդ որում, 1954 թվականի պետական պլանը կատարվեց 102,5%, իսկ 1955 թվականինը՝ 103,1%։

Չեխոսլովակիայի ժողովրդական տնտեսության զարգացման

[1] Տե՛ս „Первый пятилетный план развития народного хозяйства Чехословакии". М., 1950.

երկրորդ հնգամյա պլանը, որը ջերմ հավանություն գտավ համաժողովրդական քննարկման ժամանակ և հաստատվեց 1956 թվականի հունիսին, նախատեսված էր 1956—1960 թվականների համար։ Նրա գլխավոր նպատակն էր երկրում սոցիալիզմի նյութական-արտադրական բազայի ստեղծման ավարտումը և գյուղատնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի վճռական գերակշռության ապահովումը։ Այն նախատեսում էր արդյունաբերության համախառն արտադրանքի աճ 56% և գյուղատնտեսության արտադրանքի աճ՝ 30%։ Այդ կարևորագույն խնդիրների լուծման գրավականը ՉԿՊ իրավացիորեն տեսնում էր երկրի բնական և էկոնոմիկական ռեսուրսների առավելագույն նպատակահարմար օգտագործման և աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման մեջ, գործոններ, որոնք ապահովում էին երկրի արտադրողական ուժերի և բնակչության կենսամակարդակի շեշտակի վերելք։

1958 թվականի հունիսին տեղի ունեցավ ՉԿՊ XI համագումարը, որը, հանրագումարի բերելով երկրի սոցիալիստական շինարարության ասպարեզում ձեռք բերած նվաճումները, առաջ քաշեց հինգ հիմնական խնդիրներ, որոնց լուծումը ապահովում էր սոցիալիզմի հաղթանակը Չեխոսլովակիայում։ Այդ խնդիրներն էին.

1. Առաջիկա երկու տարում հիմնականում ավարտել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

2. Կուլակության և քաղաքի բուրժուական տարրերի ասոցիացիոնական սահմանափակման և արտամղման միջոցով հասնել անտագոնիստական դասակարգերի մնացորդների լիկվիդացման։

3. Հենվելով բարձր տեխնիկայի, հատկապես՝ արտադրության մեքենայացման, հողային սիստեմի կազմակերպման, ավտոմատացման և քիմիականացման վրա, արագացնել արտադրողական ուժերի զարգացումը։ Հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով հասնել ժողովրդի կենսամակարդակի հետագա բարելավման։

4. Բաղմակողմանի խորացնել և կատարելագործել սոցիալիստական դեմոկրատիան, ավելի լայն չափով ընդգրկել աշխատավորներին պետության և ժողովրդական տնտեսության կառավարման մեջ։

5. Ամրապնդել ժողովրդի բարոյա-քաղաքական միասնությունը և ավարտել կուլտուրական ռևոլյուցիան[2]։

---

[2] Տե՛ս „XI съезд Коммунистической партии Чехословакии". М., 1959, стр. 201—202.

Ընդամենը երկու տարվա ընթացքում այդ խնդիրները հաջողությամբ լուծվեցին և երկրում հաղթանակեց սոցիալիզմը, որն իր օրենսդրական արտացոլումը գտավ 1960 թվականի հունիսին Ազգային ժողովի կողմից ընդունած նոր, սոցիալիստական Կոնստիտուցիայում, ինչպես նաև երկրի անվանակոչման մեջ։ Չեխոսլովակյան Ռեսպուբլիկան (ՉՍՌ) վերանվանվեց Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկա (ՉՍՍՌ)։

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ի տարբերություն ժողովրդական դեմոկրատիայի մյուս երկրների, Չեխոսլովակիան մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը արդյունաբերական տեսակետից զարգացած կապիտալիստական երկիր էր։ Եթե նա իր տերիտորիայով Եվրոպայում զբաղեցնում էր 14-րդ տեղը, բնակչությամբ՝ 10-րդ, ապա արդյունաբերությամբ զբաղեցնում էր 5—6-րդ տեղը։ Արդյունաբերության, արհեստի և տրանսպորտի մեջ զբաղված էր երկրի բնակչության 42,9%, իսկ գյուղատնտեսության մեջ՝ 33,09%։

Բայց հիմնականում զարգացած էր թեթև արդյունաբերությունը. բավական է նշել, որ նախապատերազմյան Չեխոսլովակիայի միայն տեքստիլ արդյունաբերության մեջ զբաղված էին ավելի շատ բանվորներ, քան լեռնագործության, մետաղամշակության, քիմիական և էլեկտրաարդյունաբերության մեջ միասին վերցրած։ Բացի այդ, գոյություն ունեցող ծանր արդյունաբերությունը զարգացած էր խիստ միակողմանի. բավականին բարձր էր զարգացած տրանսպորտի և սննդարդյունաբերական մեքենաշինությունը, այն դեպքում, երբ ծանր արդյունաբերության սարքավորումներ շատ քիչ էին արտադրվում, իսկ տեքստիլ արդյունաբերության սարքավորումներ, որոնց պահանջարկը երկրում շատ մեծ էր, գնդատանցքակալներ և այլն բոլորովին չէին արտադրվում։

Երկրի ամբողջ արդյունաբերական ձեռնարկությունների 70% ընդգրկված էր տարատեսակ մոնոպոլիստական կազմակերպությունների, կարտելների և սինդիկատների մեջ, որոնցում մեծ տեղ էր զբաղեցնում (25%) օտարերկրյա և առաջին հերթին, գերմանական, անգլո-ֆրանսիական և ամերիկյան կապիտալը[3]։

---

[3] Բավական է նշել, որ 1937 թվականին օտարերկրյա կապիտալ ներդրումները Չեխոսլովակիայի արդյունաբերության մեջ հասնում էին 3,6 միլիարդ քրոնի (այսինքն՝ երկու անգամ ավելի էին, քան Չեխոսլովակյան կապիտալ ներդրումները արտասահմանում)։ Չեխոսլովակիայի պետական պարտ-

Երկրի տարբեր մարզեր դանվում էին արդյունաբերական զարգացման տարբեր մակարդակի վրա։ Արևմտաչեխական հողերում կենտրոնացված էր երկրի արդյունաբերության 90%, իսկ մնացած հսկայական տերիտորիայում՝ միայն 10%-ը։ Հատկապես հետամնաց էր Սլովակիան, որին բուրժուական Չեխոսլովակիայի կառավարող շրջանները դիտում էին որպես չեխական հողերի ապրանքային կցորդ և խոչընդոտում նրա արդյունաբերության զարգացմանը։ Բավական է նշել, որ 1937 թվականին Սլովակիան, ուր բնակվում էր ամբողջ Չեխոսլովակիայի բնակչության 1/4 մասը, տալիս էր երկրի արդյունաբերության համախառն արտադրանքի միայն 6,7%։

Անդրադառնալով Չեխոսլովակիայի արդյունաբերության զարգացման վերոհիշյալ անկանոն վիճակին, որը թապես չէր կարող փոխվել և չէր փոխվել վերականգնման ժամանակաշրջանում, 1947 թվականի վերջին կենտրոնական պլանային հանձնաժողովը ընդգծեց, որ երկրի տնտեսության կառուցվածքը հիմնականում ձևավորվել է Ավստրո-Հունգարիայի ժամանակաշրջանում, մինչև 1918 թվականը, որ դա չի համապատասխանում մեր օրերի նոր տնտեսական ու քաղաքական պահանջներին։ Եթե պահպանվի երկրի արդյունաբերության ներկա անբավարար կառուցվածքը, ապա նրա տնտեսությունը կընկնի լուրջ ցնցումների վտանգի տակ և հնարավոր չի լինի ապահովել նրա լրիվ և ներդաշնակ զարգացումը։

Երնելով կապիտալիստական տնտեսությունից զարգացած Չեխոսլովակիայի կոնկրետ իրադրությունից և սոցիալիստական շինարարության հիմնական օրենքներից, ՉԿՊ ձեռնամուխ եղավ երկրի սոցիալիստական ինդուստրացման, որովհետև դա էր այն հիմնական օղակը, որից բռնելով հնարավոր էր բաշել և բարձրացնել ամբողջ ժողովրդական տնտեսության մակարդակը, կերպարանափոխել երկիրը։ Այդ էր ուսուցանում ՍՍՌՄ-ի հարուստ փորձը։

Բայց ձեռնամուխ լինելով Չեխոսլովակիայի ինդուստրացման, որի հիմնական գծերը համընկնում են սոցիալիզմի առաջին երկրի ՍՍՌՄ-ի ինդուստրացման հիմնական գծերին, ՉԿՊ հենվում էր սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ինդուստրիալ հզորության վրա, մի բան, որից իր ժամանակին զրկված էր Սովետական Միությունը հասնում էր 44 միլիարդ քրոնի, որից 7 միլիարդը արտաքին պարտք էր և վերցված էր ԱՄՆ-ից, Անգլիայից և Ֆրանսիայից։ (Տե՛ս «Գոսպլանդարժ», 1950, № 43, էջ 5, ինչպես նաև «Ռուդե պրավո», 27.XI.1952, К. Льюис. Страны-должники и страны-кредиторы. М., 1947, стр. 87. «Չեխոսլովենսկի Զասոպիս հիստորիկի», № 3, 1959, էջ 473—478)։

թյունը։ Գլխավորապես այստեղից և երկրի կապիտալիստական զարգացման յուրօրինակությունից է, որ բխում են Չեխոսլովակիայի ինդուստրացման առանձնահատկությունները. նա կարիք չուներ զարգացնելու արդյունաբերության բոլոր ճյուղերը այնպիսի լարված տեմպերով, ինչպես ստիպված էր այդ անել ՍՍՌՄ-ը։ Ուստի ՉԿՊ և ժողովրդա-դեմոկրատական կառավարությունը զարկ տվեցին երկրի արդյունաբերության այնպիսի ճյուղերի, որոնց զարգացման համար այնտեղ կային առավել նպաստավոր բնական ու էկոնոմիկական պայմաններ, նյութական ռեսուրսներ, համապատասխան կադրեր և այլն։

Չեխոսլովակիայի բնական և էկոնոմիկական պայմանները առավել նպաստավոր էին մետաղամշակման, մեքենաշինության, ածխարդյունաբերության և նշանակալից չափով էներգետիկայի ու քիմիական արդյունաբերության զարգացման համար։ Ելնելով դրանից և հաշվի առնելով երկրի տնտեսության ու արտահանման պահանջները, ՉԿՊ և կառավարությունը ժողովրդական տնտեսության վերակառուցման և զարգացման պլաններում նախատեսում էին արդյունաբերության հենց այդ ճյուղերի առավելագույն աճ, արտադրողական միջոցների հավասարաչափ տեղաբաշխում երկրի տարբեր մարզերում, ծանր և թեթև արդյունաբերության տեսակարար կշռի անհամամասնության վերացում և այլն։

Վերցնելով սոցիալիստական շինարարության կուրս, ՉԿՊ Կենտկոմը 1949 թ. հունվարին հատուկ նամակով դիմեց ժողովրդին, որտեղ շարադրեց պարտիայի և աշխատավորների դխավոր խնդիրները՝ սոցիալիզմի հիմքերի կառուցման անցնելու կապակցությամբ։ Սոցիալիզմի կառուցման դրավականը,—ընդգծված էր նամակում,—Կոմունիստական պարտիայի ղեկավար դերի հետագա ամրապնդման, ժողովրդական մասսաների աշխատանքային ակտիվության բարձրացման, նրանց ստեղծագործ մտքի և կարողության սանձաղերծման և սոցիալիստական մրցության լայն ծավալման մեջ է[4]։

Պարտիայի կոչը և նրա կողմից սոցիալիստական շինարարության լոզունգների արձակումը, ինչպես, օրինակ՝ «Յուրաքանչյուր բանվոր պե՛տք է լինի հարվածային», «Կառուցելով հայրենիքը՝ ամրապնդում ե՛ս խաղաղությունը», «Ամեն մի աշխատավոր իր ձեռնարկության տե՛ր է, նրա պատասխանատո՛ւն» և այլն, առաջ բե-

---

[4] Տե՛ս «Ռուդե պրավո», 14.I.1949։

ռեցին աշխատանքային բուռն վերելք: Երկրի խոշորագույն մետալուրգիական կոմբինատի (Վիտկովիցի) 35-հազարանոց բանվորական կոլեկտիվի նախաձեռնությամբ սկսվեց մասսայական շարժում արտադրական նորմաների գերակատարման համար: Այդ շարժումը, որը մտավ երկրի պատմության մեջ «Նվեր Ռեսպուբլիկային» անվան տակ, ընդգրկեց շուրջ 230 հազար բանվոր և նպաստեց Չեխոսլովակիայում սոցիալիստական մրցության լայն ծավալմանը:

Ի պատիվ պարտիայի IX համագումարի, որը կայացավ 1949 թվականի մայիսին և կոչվեց երկրի սոցիալիստական ինդուստրացման համագումար, ամենուր բանվորները գերակատարեցին իրենց առաջադրանքները, տալով հայրենիքին արտապլանային արտադրանք 5 միլիարդ քրոնի արժողությամբ: Համագումարը և նրա պատմական որոշումները, որոնք մասսաներին զինեցին երկրի սոցիալիստական շինարարության մանրակրկիտ և նպատակասլաց ծրագրով, էլ ավելի խթանեցին ժողովրդի ստեղծագործ աշխատանքը, երկրում սոցիալիստական մրցության ծավալումը: Եթե 1949 թվականին սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված էր երկրի բանվորության միայն 30%, ապա 1950 թվականին սոցմրցմանը ակտիվ մասնակցում էր նրա արդեն 65%:

Սոցիալիստական մրցության ծավալման ընթացքում հանդես եկան, այսպես կոչված, «հարվածային հերթափոխություններ», իսկ այնուհետև՝ «հարվածային շաբաթներ» շարժումը, որը կապիտալիզմի լծից ազատագրված ժողովրդի աշխատանքային նախաձեռնության և սխրագործության արտահայտություն էր: Այդ շարժման նախակարապետներից էր Բոնո քաղաքի Յան Շվերմայի անվան մեքենաշինական գործարանի զոդող բանվոր Յան Բրզորոդատին, որը իր հերթափոխային առաջադրանքը կատարեց 512,5%: Բավական էր նախաձեռնությունը, որ շարժումը, ինչպես լեռնային հեղեղ, ողողեր ամբողջ երկիրը: Շաղափող Հադիսլավ Կրեյչին, կանդնելով հարվածային հերթափոխի, իր առաջադրանքը կատարեց 706%, հղկող բանվոր Կարել Կիզլինգը՝ 1320% և այլն: Արդեն 1950 թվականին հարվածային հերթափոխության շարժումը վերաճեց հարվածային շաբաթ շարժման և ընդգրկեց ավելի քան 200 հազար բանվորների:

Սոցիալիզմի վիթխարի կառույցները, ինչպես կոչվեցին Օստրավայի մետալուրգիական կոմբինատը (Կունչիցում), Գուտնի (Կոշիցեի մոտ) մետալուրգիական կոմբինատը Սլովակիայում (ԳՈՒԿՕ); Եվրոպայի խոշորագույն (Սլապյան և Վիրյան) էլեկտրակայանները,



Օսարավայի մեծալուբիական կոմբինատի գլոցահատասդնեբից յուրաքանչյուրը կշռում է 5500 տոննա և իր արտադրողականությամբ համազորը չունի Եվրոպայում

Վագյան կասկադը և այլն, կյանքի կոչեցին մասսաների աշխատանքային աննախընթաց վերելք։ Այդ շինությունների վրա մեծ խանդավառությամբ էին աշխատում բազմաթիվ կամավորական, ինչպես նաև հատուկ երիտասարդական բրիգադներ, որոնք ցույցերում էին աշխատանքային սխրագործության կատարյալ նմուշներ։

Սոցիալիստական շինարարության և սոցիալիստական մրցության ծավալման պրոցեսում ստեղծագործվեց բանվոր դասակարգի աշխատանքային ստեղծագործ միտքը, որի փայլուն արտահայտությունն էր նորարարական շարժման ծնունդը։ Արդեն 1948 թվականի հեռանկարային ժամանակաշրջանում բանվորները արեցին 20 796 նորարարական առաջարկ, որոնց կիրառումը արտադրության մեջ այդ նույն տարում պետությանը տվեց 300 միլիոն քրոնի արժողությամբ օգուտ։ Գնալով շարժումը ծավալվեց. 1949 թվականին եղել է 110 հազար նորարարական առաջարկ, որոնց իրացումը տվեց 3 միլիարդ քրոնի օգուտ։ 1950 թվականի միայն երկրորդ կեսում բանվորները կատարել են երկու անգամ ավելի նորարարական առաջարկ, քան ամբողջ 1948 թվականին։

Կոմունիստների նախաձեռնությամբ սկսեցին կազմակերպվել կոմպլեկսային բրիգադներ, որոնց մեջ ընդգրկվում էին բանվորներ, տեխնիկներ և ինժեներներ։ Այդ բրիգադները խոր կերպով ուսումնասիրում էին տվյալ աշխատանքի պրոցեսը և կատարում համապատասխան առաջարկություններ այն կատարելագործելու ուղղությամբ։ Բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների կոմպլեկսային բրիգադների կազմակերպումը իրենից ներկայացնում էր նորարարական շարժման ավելի բարձր էտապ։ Բավական է նշել, որ Պրագայի «ՉԿԴ-Սոկոլովո» գործարանում կազմակերպված կոմպլեկսային բրիգադներից միայն մեկը 1950 թվականին արել է 30 նորարարական առաջարկ, որոնց իրացումը նույն տարում տվել է 4 միլիոն քրոնի արժողությամբ օգուտ։

Սոցմրցման և նորարարական շարժման արմատավորմանը և լայն ճյուղավորմանը զգալի չափով նպաստեց չեխոսլովակյան աշխատավորների կողմից սովետական արդյունաբերության առաջավորների առանձնահատկություններում կուտակած հսկայական փորձի յուրացումը։ Հետևելով սովետական խառատներ Պ. Բիկովի և Գ. Բորտկևիչի օրինակին, Չեխոսլովակիայի Գ. Դիմիտրովի անվան գործարանի խառատ Վացլավ Սմորոդան առաջիններից էր, որ անցավ մետաղի կտրման արագ մեթոդի և միաժամանակ սկսեց աշխատել

չորս դաղդահների վրա։ 1950 թվականի հոկտեմբերի 14-ին նա ավարտեց առաջին հնգամյա պլանով նախատեսված իր առաջադրանքը և արժանացավ պետական մրցանակի։ ՉԿՊ-ի կոչով նրան հետևեցին շատ-շատերը[3]։

Սովետական Միությունում «հանուն հումքի տնտեսման» շարժման նախակարապետներից մեկը՝ Լիդիա Կորաբելնիկովան 1950 թվականի վերջում եղավ Չելյոսկովակիայում, շատ բանվորների մոտիկից ծանոթացրեց աշխատանքի իր մեթոդներին, որը նպաստեց այնտեղ «Լիդիա Կորաբելնիկովայի շարժման» ծավալմանը։ Ըստ էության դա պայքար էր աշխատանքում հումքի տնտեսման համար։ Այդ շարժումը, որը լայնորեն ծավալվեց Չելյոսկովակիայում, երկրին տվեց հսկայական օգուտ։ Բավական է նշել, որ միայն կոշկի «Սվիտ» գործարանը 1951 թվականի ընդամենը 11 ամսվա ընթացքում տվեց հումքի խնայողություն 6,5 միլիոն քրոնի արժողությամբ, ի հաշիվ որի թողարկեց 16 հազար զույգ կոշիկ և 12 հազար զույգ գուլպա։ Պայքարը հումքի խնայողության համար լայնորեն ծավալվեց երկրում և ընդգրկեց արդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերը։ Տրնավա քաղաքի «Կովոսմալտ» մեքենաշինական գործարանի բանվորները դարձան երկրում մետաղի կոմպլեքսային տնտեսման շարժման նախաձեռնողներ, որը 1952 թվականին արդեն ընդգրկեց երկրի շատ մետաղամշակման և մեքենաշինական գործարաններ։

Չելյոսկովակիայում լայն արձագանք գտավ նաև սովետական նորարար Վալենտինա Գագանովայի հայրենասիրական նախաձեռնությունը։ Չեխ և սլովակ շատ բանվորներ, հետևելով նրա օրինակին, թողնում էին իրենց շահավետ աշխատանքը և գործի անցնում ժողովրդական անտեսության կամ տվյալ ձեռնարկության ետ մնացող օղակներում, օգնում իրենց ընկերներին բարձրացնելու տվյալ օղակի գործունեությունը, առաջավորներին հասնելու։

Սոցիալիստական մրցության հետագա ծավալման և սոցիալիստական հասարակարգի կառուցման մեջ աշխատավորների գիտակցական և ակտիվ գործունեության հանդես գալու ժամանակակից բարձր ձևը, ինչպես ընդգծեց վերջերս ՉԿՊ Կենտկոմը, սոցիալիստական աշխատանքի բրիգադների կազմակերպումն է, որոնք կյանքի կոչվեցին երկրում սոցիալիստական շինարարության ավարտման և սոցիալիզմի հաղթանակի էտապում։ Ընդ որում Չե-

---

[3] Տե՛ս «Ռուդե պրավո», 15—17.X.1950։

խոսլովակիայում այդ շարժման ծագման և ծավալման վրա զգալի ազդեցություն գործեց վերջին տարիներս ՍՍՌՄ-ում կազմակերպված կոմունիստական աշխատանքի բրիգադների ոգեշնչող օրինակը: Այդ շարժման նախակարապետներից էր «Տատրա» վագոնաշինական խոշոր գործարանի (Պրագա-Սմիխով) կոլեկտիվը, ուր 1959 թվականի մայիսին 35 հոգուց բաղկացած սլեսարների բրիգադը պայքար նախաձեռնեց հանուն սոցիալիստական աշխատանքի բրիգադի պատվավոր կոչման:

Շարժումը, որի նպատակն էր ժողովրդատնտեսական պլանների կատարման մեջ աշխատավորների ակտիվության առավելագույն բարձրացումը, կայծակի արագությամբ ծավալվեց: Ներկայումս Չեխոսլովակիայի ավելի քան 13 հազար ձեռնարկությունների կոլեկտիվներ, որոնցում ընդգրկված են շուրջ 130 հազար բանվորներ, պայքարում են սոցիալիստական աշխատանքի բրիգադի պատվավոր կոչման համար: Սոցիալիստական մրցության այդ բարձրագույն ձևն ընթանում է սոցիալիզմի կառուցման ավարտման և ստիճանաբար կոմունիստական շինարարությանը անցման նշանաբանի ներքո: Շարժման մեջ ընդգրկվող յուրաքանչյուր կոլեկտիվ պատասխանատու է իր անդամների արտադրական, հասարակական-քաղաքական գործելակերպի համար: Սոցիալիստական աշխատանքի բրիգադների գործունեությունը դուրս է գալիս զուտ արտադրական շրջանակներից և ընդգրկում նրա անդամների կենցաղի, նիստուկացի, կուլտուրայի և ուսման ոլորտները: Նրանց նշանաբանն է՝ «Սոցիալիստական աշխատել և սոցիալիստական ապրել»:

Սոցիալիստական շինարարության և սոցմրցման պրոցեսում հանդես եկավ սոցիալիստական աշխատանքի հերոսների ամբողջ մի պլեադա: Ռոժնավի (Արևելյան Սլովակիա) Սեգլովյան հանքի սոցիալիստական աշխատանքի բրիգադի բրիգադիր Յան Յարաբեկը առաջիններից էր, որ 1960 թ. մայիսին արժանացավ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչման:

Սոցիալիստական մրցության անընդհատ ծավալման և խորացման, ինչպես նաև բանվորների կողմից դեպի աշխատանքն ունեցած նոր, սոցիալիստական վերաբերմունքի շնորհիվ շեշտակի աճեց աշխատանքի արտադրողականությունը, որը, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, ունի վճռական նշանակություն սոցիալիզմի կառուցման գործում: Բավական է նշել, որ Չեխոսլովակիայում ժողովրդա-դեմոկրատական կարգերի գոյության ընդամենը մեկ տասնամյակում



Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Յան Յարարեկը

(1946—1959) աշխատանքի արտադրողականությունն աճել է 2,5 անգամ, ընդ որում տարեկան միջին աճը (1950—1957) կազմում էր 8,2%, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում այն 2,1% է, իսկ Անգլիայում՝ 1,9%: Հատկապես մեծ էր աշխատանքի արտադրողականության աճը Չեխոսլովակիայի մեքենաշինության և քիմիական արդյունաբերության մեջ:

Աշխատանքի հասարակական արտադրողականության հակայական աճը, որը հատուկ է միայն սոցիալիզմին-կոմունիզմին, չի կարելի բացատրել կապիտալիզմի լծից ազատագրված ժողովրդի զուտ աշխատանքային խանդավառությամբ և սոցմրցմամբ, որոնք, ինչպես վերը տեսանք, ունեին որոշիչ նշանակություն: Այն բացատրվում է նաև մի շարք այլ գործոններով և, առաջին հերթին, սոցիալիստական շինարարության պրոցեսում բանվոր դասակարգի որակական ու քանակական աճով: Եթե 1938 թվականին Չեխոսլովակիայում հաշվվում էին 1 206 հազար արդյունաբերական բանվորներ, ապա 1948 թվականին այնտեղ արդեն կային 1 264 հազար արդյունաբերական բանվորներ, իսկ 1958 թվականին՝ 1 618 հազար: Բանվոր դասակարգի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվում հասավ 26%, որը երկրի արդյունաբերության սոցիալիստական ընդլայնման պրոցեսի օրինաչափ արդյունքն էր:

Հիմնվելիս պետական աշխատանքային ռեզերվների ուսումնարաններ, արդյունաբերական ձեռնարկություններին կից բացվեցին մասնագիտական դպրոցներ, կարճատև դասընթացներ, երեկոյան ու հեռակա բաժիններ և այլն, որոնցում մասսայաբար ընդլայնվում էին բանվորները և ստանում անհրաժեշտ տեխնիկական գիտելիքներ, բարձրացնում իրենց որակավորումը: Բավական է նշել, որ միայն 1957—1958 ուսումնական տարում Պետական աշխատանքային ռեզերվների ուսումնարաններում իրենց տեխնիկական մակարդակը բարձրացնում էին 79,4 հազար բանվորներ, իսկ գործարանային աշխատանքային դպրոցներում՝ 88,2 հազար բանվորներ: Հատուկ ուշադրություն էր դարձվում նաև ինժեներա-տեխնիկական կադրերի պատրաստման վրա. 1958—1959 ուսումնական տարում Չեխոսլովակիայի արդյունաբերական տեխնիկումներում սովորում էր 9 անգամ ավելի շատ մարդ (62 հազար) և տեխնիկական բուհերում՝ 5 անգամ ավելի շատ, քան 1936—1937 ուսումնական տարում:

Աշխատանքի արտադրողականության նման աճը պայմանավոր-

ված էր նաև արդյունաբերության տեխնիկական մակարդակի բարձրացմամբ։ Արդյունաբերական նոր ձեռնարկությունների կապիտալ շինարարության ծավալման և գոյություն ունեցող ձեռնարկությունների տեխնիկական կատարելագործման շնորհիվ բանվորների արտադրական հիմնական ֆոնդերով զինվածությունը աճեց (1948—1956) 31%, ընդ որում մեքենաներով և այլ արտադրական սարքավորումներով զինվածությունը՝ 51%։ Առաջին հերթին մեքենայացվում էին ածխարդյունաբերության, հանքարդյունաբերության, անտառարդյունաբերության և արդյունաբերության այլ ճյուղերի առավել ծանր և աշխատատար պրոցեսները։ Արդեն 1958 թ. Օսարավա-Կարվինյան ածխավազանում ածխային կոմբայնների միջոցով հանվեց նրա ամբողջ հանույթի 15% և մեքենայացվեց երկրի ամբողջ հանքահորերի բեռնման աշխատանքների 65%։

Աշխատանքի արտադրողականության վերելքին նպաստեցին նաև արտադրական պրոցեսների ավտոմատացումը, պոլիֆիկացումը, էլեկտրիֆիկացումը, հոսքային արտադրության կազմակերպումը և այլն, որոնք նշանակալից տարածում գտան էլեկտրատեխնիկական, մետալուրգիական և քիմիական արդյունաբերության մեջ։ Բավական է նշել, որ արդյունաբերական յուրաքանչյուր բանվորի տարեկան միջին էլեկտրաղինվածությունը (1948—1956) աճել է 6,5%։ Աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ կարևոր դեր խաղացին նաև արտադրության և աշխատանքի կազմակերպման, նրանց ֆինանսավորման ու վարձատրման, պլանավորման ու տնտեսաշվարկի նոր, ավելի կատարելագործված սիստեմի անցկացումը (1958 թվականի փետրվար), որը խթանեց արտադրողի նյութական շահագրգռվածությունը, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկությունների անցումը երկհերթափոխային և եռհերթափոխային աշխատանքի[6]։

---

[6] Անհրաժեշտ է նշել, որ աշխատանքի հասարակական արտադրողականության բարձրացման վերոհիշյալ հնարավորությունները Ղեխոսլովակիայում դեռ լրիվ կերպով իրացված չեն. 1959 թվականին ոչ միայն եռհերթափոխային աշխատանք արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպված չէր, այլ անգամ երկրորդ հերթափոխության մեջ ընդգրկված էին առաջին հերթափոխության բանվորների թվի միայն 26%, որը խիստ անբավարար էր (տե՛ս «Ռուդե պրավո», 17.XI.1959)։ Ներկայումս ՉԿՊ և կառավարությունը համապետական պայքար են ծավալել արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասում երկհերթափոխային և եռհերթափոխային աշխատանքային սիստեմի անցնելու ուղղությամբ։ Բանվորական ուժի պակասը, որ զգացվում է երկրում, ՉԿՊ և կառավարությունը աշխատում են

Չեխոսլովակիայի արդյունաբերության սոցիալիստական ինդուստրացման, ինչպես և սոցիալիզմի կառուցման գործում մեծ դեր խաղաց դեմոկրատիայի և սոցիալիզմի միջազգային հզոր լագերը, հատկապես Սովետական Միությունը։ Անվճար կերպով վերջինս ժողովրդա-դեմոկրատական կառավարությանը հանձնեց այն բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները (այդ թվում նաև Մոստի խոշորագույն քիմկոմբինատը), որոնք, որպես վնասհատուցում (ռեպարացիա), ստացել էր երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Նա մեծ և բազմակողմանի օգնություն ցույց տվեց և այժմ էլ ցույց է տալիս Չեխոսլովակիայում արդյունաբերական նոր ձեռնարկությունների կառուցմանը։ Առանց այդ օգնության, իրավացիորեն ընդգծել է «Ռուդե պրավոն», ընդհանրապես անհնար էր, օրինակ, Օստրավայի մետալուրգիական կոմբինատի, ԳՈՒԿՕ-ի, Սլապյան և Վիրյան էլեկտրակայանների, ինչպես նաև մի շարք այլ արդյունաբերական հսկաների կառուցումը։

Չեխոսլովակիա արտահանելով նորագույն կոնստրուկցիայի յեռնարդյունաբերական, մետալուրգիական և շինարարական բարդ սարքավորումներ, ՍՍՌՄ-ն էապես օգնեց նրա հին արդյունաբերական ձեռնարկությունների տեխնիկական վերակազմմանը և աշխատատար պրոցեսների մեքենայացմանը։ Ընդ որում, այդ արտահանումը նա կատարում էր Չեխոսլովակիայի համար բացառիկ նպաստավոր պայմաններով։ Այսպես, օրինակ, 1951 թվականին Սովետական Միությունը Չեխոսլովակիա արտահանեց արդյունաբերական 20 օբյեկտների սարքավորումներ, որոնք ԵԲԵ Չեխոսլովակիան դներ միջազգային կապիտալիստական շուկայից, ապա պետք է 4 միլիարդ քրոն ավելի վճարեր[7]։

Սովետական Միությունը Չեխոսլովակիայի ինդուստրացմանը նպաստեց նաև իր գիտա-տեխնիկական նվաճումներով։ Բավական է նշել, որ միայն 1948—1956 թվականների ժամանակաշրջանում ՍՍՌՄ-ն Չեխոսլովակիային տվել է կապիտալ շինարարության 74

լրացնել տնային տնտեսուհիներին, թերաշխատունակներին և վարչական ապարատի ծառայողների որոշ մասին նյութական արտադրության պրոցեսի մեջ ավելի լայնորեն ներքաշելու միջոցով։ Պարզ է, որ այդ միջոցառումների հետևողական կենսագործումը զգալի չափով կբարձրացնի արդյունաբերության աշխատանքի հասարակական արտադրողականությունը, որը կարևորագույն գործոն է երկրում հասուն սոցիալիստական հասարակարգի կառուցման և աստիճանաբար կոմունիստական շինարարության անցման պրոցեսում։

[7] Տե՛ս „ՊՅԵ", 1953, № 266, стр. 2.

նախագծեր, մեքենաների և սարքավորումների 305 կոմպլեկտ գծագրեր և արտադրության տեխնոլոգիական պրոցեսների 200 նկարագրություններ։ Սովետական մասնագետները Չեխոսլովակյան Ռեսպուբլիկային օգնեցին նավթի հայտնագործման և հանույթի ժամանակակից մեթոդների յուրացման, սինթետիկ կաուչուկի ստացման, գետային նավերի և ածխային կոմբայնների կառուցման և բազմաթիվ այլ գործերում։

Արտադրության տեխնիկայի ու փորձի համակողմանի փոխանակում է կազմակերպված նաև Չեխոսլովակիայի և սոցիալիզմի լագերի մյուս երկրների միջև, որը, ինչպես ընդգծել է Ն. Ս. Խրուշչովը, «բացառիկ հնարավորություններ է բացում արտադրական և հումքի ռեսուրսները լավագույն ձևով օգտագործելու համար»[8]։ Այդ նպատակին է ծառայում նաև աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանումը, որի կազմակերպման գործում մեծ դեր է խաղում 1949 թվականին հիմնադրված Եվրոպայի սոցիալիստական երկրների Տնտեսական փոխադարձ օգնության խորհուրդը։

Շնորհիվ ՉԿՊ հմուտ ղեկավարության, երկրի բանվոր դասակարգի քրտնաջան աշխատանքի, ինչպես նաև Սովետական Միության ու դեմոկրատական երկրների անշահախնդիր օգնության հաջողությամբ կենսագործվեցին առաջին հնգամյակի, 1954 և 1955 թվականների պետական պլանների և երկրորդ հնգամյակի արդյունաբերական զարգացման նորմաները, որի հետևանքով արմատապես փոխվեց Չեխոսլովակիայի ամբողջ պատկերը, այն դարձավ ինդուստրիալ և հզոր սոցիալիստական երկիր։

Եթե Չեխոսլովակիայի արդյունաբերության համախառն արտադրանքի 1948 թվականի մակարդակն ընդունենք 100%, որը, ինչպես վերը տեսանք, 8,5% ավելի էր նախապատերազմյան (1937 թ.) մակարդակից, ապա նրա աճը կունենա հետևյալ պատկերը[9]։

Արդյունաբերության համախառն արտադրանքի աճի նման ցուցանիշները հանդիսանում են սոցիալիստական արդյունաբերության առավելությունների վայելուն արտահայտությունը։

Այդ մասին են վկայում նաև Չեխոսլովակիայի արդյունաբերության զարգացման բարձր տեմպերը։ Բավական է նշել, որ 1948

---

[8] Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ ԿԿ հաշվետու զեկուցում պարտիայի XX համագումարին, Հայպետհրատ, 1956, էջ 9։

[9] Տե՛ս հաջորդ էջի առաջին աղյուսակը, որը կազմված է ըստ տվյալների «Մատեմատիցկա սոչենկա», 1958, էջ 119, «Ռուդե պրավո», 11.II.1959, 9.II.1960։

Թվականից հետո երկրի արդյունաբերության համախառն արտադրանքի տարեկան միջին աճը կազմում է 11,7%, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում այն կազմում է ընդամենը 3,4%, Անգլիայում՝ 3,7%։ Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ յուրաքանչյուր տոկոսին ընկնող արդյունաբերական արտադրանքի ծավալի բացարձակ աճը։

	1953 թ.	1954 թ.	1955 թ.	1959 թ.	1960 թ.
Արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը	193	202	224	333	336
այդ թվում՝					
«Ա» խումբ	219	227	247	380	388
«Բ» խումբ	166	175	198	282	277

Արդյունաբերության կարևորագույն ճյուղերի արտադրանքի բացարձակ աճի պատկերը հետևյալն է.

Արդյունաբերության ճյուղեր	Չափման միավոր	1-ին հնգամյակ	2-րդ հնգամյակ
Էլեկտրաէներգիա	մլրդ կվտժ	4,9	9,2
Կոքսացվող ածուխներ	միլիոն տոննա	1,5	2,7
Կոքս	»	1,2	1,3
Պողպատ	»	1,7	2,3
Ցեմենտ	»	0,7	1,8
Պրոստոմասսա	հազար տոննա		24,4
Ագրոքիմական պարարտանյութ	»	6,1	13,8
Ֆոսֆորական պարարտանյութ	»	15,8	12,1

Չնայած սոցիալիզմի լագերի մյուս երկրների արդյունաբերության պլանաչափ, պրոպորցիոնալ զարգացման արտահայտությունն է արտադրության միջոցների արտադրության («Ա» խումբ) և սպառման միջոցների արտադրության («Բ» խումբ) զարգացման տեմպերի փոխհարաբերությունը։ Արդյունաբերության արտադրության այդ երկու խմբերի անհերդաշնակությունը, որ գոյություն ուներ միջպատերազմյան ժամանակաշրջանում (1937 թվականին «Ա» խումբը կազմում էր երկրի ամբողջ արդյունաբերական արտադրանքի 40%, իսկ «Բ» խումբը՝ 60%), վճռականապես հաղթահարվեց (արդեն 1948 թ. համապատասխանաբար կազմում էր՝ 57,6% և 42,4%)։ Նկնելով երկրի արդյունաբերության

սոցիալիստական ընդլայնված վերարտադրության պահանջներից, պլանաչափ, համամասնաբար, ինչպես այդ երևում է մեջբերված աղյուսակից, ապահովվել է արտադրության միջոցների արտադրության («Ա» խումբ) առավել արագ աճ։

Շնորհիվ նպատակասլաց կապիտալ ներդրումների և աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման, որի հետևանքով Չեխոսլովակիայի ծանր արդյունաբերությունը ապահովվեց անհրաժեշտ հումքով և արտադրանքի պահանջարկով, այն ապրեց շեշտակի վերելք։

Հատկապես արագ տեմպերով է զարգանում ծանր ինդուստրիայի սիրտը՝ մեքենաշինությունը, որը դարձել է երկրի ամբողջ ժողովրդական տնտեսության որոշիչ և առաջատար ճյուղը։ Նրա ծավալը 1948—1957 թվականների ընթացքում ավելացել է 4,5 անգամ, ընդ որում շոգեկաթսաների արտադրությունն ավելացել է 5 անգամ, շոգետուրբինների և դիզելների՝ 8 անգամ, փոփոխական հոսանքի գեներատորների և տրանսֆորմատորների՝ 6 անգամ և այլն։ Շահագործման են հանձնվել նոր ջերմաէլեկտրակայաններ և ջերմաէլեկտրացենտրալներ՝ 1305 հազար կիլովատ կարողությամբ, քարածխի և դորշածխի հանքեր՝ 19 միլիոն տոննա կարողությամբ, 10 դոմնային, 16 մարտենյան հնոցներ և այլն, այն ժամանակ, երբ բուրժուական Չեխոսլովակիայի գոյության 20 տարում կառուցվել են ընդամենը 1 դոմնային և 1 մարտենյան հնոցներ։ Մեծ վերելք է ապրել ծանր մեքենաշինությունը, որը լրիվ կերպով բավարարում է երկրի արդյունաբերության ընդլայնված սոցիալիստական վերարտադրության պահանջմունքները։ Բավական է նշել, որ երկրի արդյունաբերության համախառն արտադրանքի $^1/_3$ մասը ներկայումս կազմում է ծանր մեքենաշինության արտադրանքը։ Ծանր մեքենաշինության զարգացման այդպիսի բարձր տեմպեր, որպիսիք չի տեսել աշխարհում և ոչ մի կապիտալիստական երկիր, հիմնականում ձեռք բերվեցին շնորհիվ նոր արտադրական կարողությունների գործարկման։ 1948—1958 թվականներին Չեխոսլովակիայում կառուցվեցին 50 նոր և վերակառուցվեցին ու ընդլայնվեցին գոյություն ունեցող 54 ծանր մեքենաշինական գործարաններ։ Օստրավայի մարզը, Պրագան, Պլզենը, Բռնոն դարձան երկրի ծանր մեքենաշինության սիրտը։

Չեխոսլովակիայի ծանր մեքենաշինական արդյունաբերությունը ներկայումս արտադրում է էլեկտրակայանների (հիդրո և ջերմա), քիմիական, ցեմենտի, շաքարի, սպիրտի և այլ գործարանների կոմպլեկտ սարքավորումներ, որոնք բավարարում են ոչ միայն

սեփական երկրի պահանջները, այլ նաև նպաստում սոցիալիզմի լագերի մյուս երկրների արդյունաբերության սոցիալիստական ինդուստրացմանը։ Երկրի ամբողջ արտահանության 40% կազմում է նրա ծանր մեքենաշինության արտադրանքը, այն դեպքում, երբ 1937 թ. այն կազմում էր նրա միայն 6,4%, իսկ 1948 թ.՝ 23%։ «Չեխոսլովակիայի ծանր մեքենաշինության հախուռն զարգացումը ժողովրդական կարիքների օրոք,—նկատել է դեռ 1953 թվականին Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի «Վիրտշաֆտ» տընտեսագիտական շաբաթաթերթը,—նպաստում է ոչ միայն սեփական երկրում սոցիալիզմի կառուցմանը, այլ նաև սոցիալիզմի ամբողջ լագերի տնտեսական բազայի ամրապնդմանը»։

Չեխոսլովակիայի ծանր մեքենաշինությունը յուրացրել է այնպիսի բարդ և հսկա արդյունաբերական սարքավորումների արտադրությունը, ինչպիսին են հանքահորային վերամբարձ մեքենաները, որոնցից յուրաքանչյուրը՝ փոխարինելով հազարավոր բանվորների ձեռքի աշխատանքի, ընդունակ է 2 րոպեում բարձել 23 մ³ տարողությամբ հանքահորային և երկաթուղային վագոններ, ահռելի կարուսելային դազգահներ, որոնք ի վիճակի են մշակելու 120 տոննանոց դետալներ, խառատային դազգահներ, որոնք կարող են պատրաստել 200 տոննա քաշ ունեցող և 15 մետր տրամագիծ ունեցող դետալներ և այլն։ 1955 թվականից մասսայաբար արտադրվում և Օստրավա-Կարվինյան ավազանի մակերեսային ածխահանքերում լայնորեն օգտագործվում են հայրենական մեքենաշինության «Գլուբինյակ» ածխի կոմբայնը և բազմաթիվ այլ բարդ արդյունաբերական սարքավորումներ։

Հսկայական հաջողություններ են ձեռք բերված Չեխոսլովակիայի դազգահաշինության ասպարեզում, որի ծավալը 1937 թվականի համեմատ դրեթե հնգապատկվել է (1957 թվականին 450%)։ Ըստ բնակչության շնչին ընկնող գործող դազգահների թվի Չեխոսլովակիան հավասարը չունի աշխարհում[10]։ Դազգահաշինությամբ նա զբաղեցնում է աշխարհում հինգերորդ տեղը, իսկ դազգահների արտահանությամբ՝ չորրորդ տեղը[11]։

---

[10] 1959 թվականին Չեխոսլովակիայի մեքենաշինական գործարաններում հաշվվում էին մոտ 178 հազար տարատեսակ դազգահներ ու մեքենաներ (տե՛ս «Ռուդե պրավո», 30.IX.1959)։

[11] Դազգահաշինությամբ Չեխոսլովակիան աշխարհում առաջնությունը զիջում է միայն ԱՄՆ-ին, ՍՍՌՄ-ին, ԳՖՌ-ին և Անգլիային։ Միայն 1957 թվականին Չեխոսլովակիան աշխարհիս 90 երկրներ է արտահանել իր դազգահաշինության արտադրանքի 70% (տե՛ս „БИКИ", 12, XII.1957)։

Չեխոսլովակիայի ծանր մեքենաշինության մեջ զգալի տեսակարար կշիռ ունի տրանսպորտային մեքենաշինությունը։ Պլզենի Վ. Ի. Լենինի անվան աշխարհահռչակ մեքենաշինական գործարանը վերակառուցվել է և սկսած 1958 թվականից բաց է թողնում ոչ միայն ճեպընթաց շոգեքարշներ, այլ նաև էլեկտրաքարշներ, որոնք ժամում կարող են ընթանալ 120 կմ արագությամբ։ Պրագայում,



Վ. Ի. Լենինի անվան մեքենաշինական գործարանի պարծանքն է վիթխարի կարուսելային գազգահը

Մլադա-Բոլեսլավում, Մնիխովո-Գրադիշտում, Կոպրշիվնիցում կենտրոնացված են Չեխոսլովակիայի ավտոմոբիլային գործարանները, որոնց արտադրանքը («Տատրա» և «Շկոդա» մարդատար ու բեռնատար ավտոմեքենաները, ինչպես նաև ավտոբուսները, «Ցավա» մոտոցիկլետները և այլն) նվաճել է համաշխարհային

համբալ[12]։ Նախապատերազմյան Չեխոսլովակիան տարեկան թողարկում էր ընդամենը 2 հազար բեռնատար ավտոմեքենա, իսկ 1959 թվականին՝ 14,5 հազար։ Հատկապես աճում է մարդատար ավտոմեքենաների արտադրությունը. 1960 թվականին թողարկվել է շուրջ 30 հազար մարդատար ավտոմեքենա, իսկ 1965 թվականին միայն Մլադա-Բոլեսլավյան ավտոգործարանը օրական կթողարկի 350 ավտոմեքենա։

Հնգամյակների տարիներում մեծ հաջողություններ են ձեռք բերվել Չեխոսլովակիայի մեքենաշինության նորագույն՝ գյուղատնտեսական մեքենաշինության ասպարեզում, որը մեծ դեր խաղաց երկրի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և մեքենայացման գործում։ Երկրում լայն տարածում են գտել «Զետոր-35» թրթուրավոր և անիվավոր տրակտորները։ Յան Շվերմայի անվան գործարանը սկսած 1955 թվականից մասսայական մասշտաբով թողարկում է «Զետոր Սուպեր-35» տիպի տրակտորներ, որոնք ունեն բարձր տեխնիկական հատկություններ։ Բավական է նշել, որ 1937 թվականին Չեխոսլովակիայում արտադրվել է ընդամենը 200 տրակտոր, իսկ 1959 թ.՝ 29 հազար։

Ներկայումս Չեխոսլովակիայում լայնորեն տարածված է զտիչ կայանների արտադրությունը, որոնցից յուրաքանչյուրի վրա աշխատում է ընդամենը 2 հոգի, բայց այն մեկ ժամում զտում է 1,5—2 տոննա ցորեն, դարի և այլ հացահատիկներ։ Պրոստեյովում կենտրոնացված է հնձիչ և կալսիչ մեքենաների սերիական արտադրությունը, Ռոզնիցում՝ ցանիչ մեքենաների և կուլտիվատորների, Յիչինում՝ կարտոֆիլի և շաքարի ճակնդեղի հավաքման մեքենաների, Պելզրժիմովում՝ անասնապահական մեքենաների ու սարքավորումների մասսայական արտադրությունը և այլն։

Սկսած 1955 թվականից բուռն վերելք է ապրում Չեխոսլովակիայի ճշգրիտ մեքենաշինությունը, որի արտադրանքն ունի մեծ նշանակություն շատ արտադրական պրոցեսների մեքենայացման և ավտոմատացման, միջուկային ֆիզիկայի և էներգետիկայի հետագա զարգացման համար։ Հատկապես մեծ է քիմիական արդյունաբերության սարքավորումների թողարկումը, որի հետևանքով ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերությունը նշանակալից չափով ընդլայնվել է, իսկ նրա արտադրանքը աճել է ավելի քան 3 անգամ։

---

[12] Չեխոսլովակիայի արտնասպորտային մեքենաշինության զարգացման մասին տե՛ս „Чехословакия", 1960, № 5, стр. 10.

Չեխոսլովակիայի մեքենաշինության արտադրանքի մեջ զգալի տեղ է գրավում լայն և հարատև օգտագործման սարքավորումների, ինչպես, օրինակ, ռադիոընդունիչների, հեռուստացույցների, կենցաղային սառնարանների և լվացքի մեքենաների, ֆոտոապարատների, կարի մեքենաների, հեծանիվների և այլ իրերի արտադրությունը[13]:

Չնայած արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ թեթև արդյունաբերության տեսակարար կշռի պլանաչափ կրճատման, որը երկրի սոցիալիստական ինդուստրացման ուղղակի հետևանքն էր[14], նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատ զգալի աճել է թեթև արդյունաբերության ծավալը և տեսակը: Երկրի թեթև արդյունաբերության մեջ առաջատար տեղ է գրավում տեքստիլ արդյունաբերությունը, որի արտադրանքը 1948 թվականի համեմատ աճել է 113%: Ըստ բնակչության շնչին ընկնող գործվածքների արտադրության ներկայումս Չեխոսլովակիան աշխարհում զբաղեցնում է առաջին տեղերից մեկը, իսկ բրդյա գործվածքների արտադրության քանակի՝ նա վաղուց արդեն առաջ է անցել ԱՄՆ-ից: Մեծ համբավ է նվաճել Չեխոսլովակիայի կաշվի-կոշկի արդյունաբերությունը, որի ամբողջ արտադրանքի $^2/_3$ մասը տալիս է Գոտվալդով քաղաքի «Սվիտ» խոշորագույն կոմբինատը (նախկին՝ «Բատյա»): Ըստ բնակչության շնչին ընկնող կոշկի արտադրության քանակի Չեխոսլովակիան աշխարհում համաշորը չունի:

Եթե Չեխոսլովակիայի արդյունաբերության կարևորագույն ճյուղերի արտադրանքի 1948 թվականի մակարդակն ընդունենք 100, ապա նրանց աճի փոքրիշատե ամբողջական պատկերը կլինի այսպես[15].

Բերված տվյալները վկայում են, որ նշված ժամանակաշրջանում ոչ միայն ապահովվեց արդյունաբերության սոցիալիստական վերակառուցումը և արագ զարգացումը, այլ նաև հաղթահարվեց արդյունաբերության տարբեր ճյուղերի անցյալից ժառանգած հա-

---

[13] Տե՛ս վիճակագրական տվյալներ «Ստատիստիկա ոչենկա», 1958, էջ 154—155:

[14] Ներկայումս թեթև արդյունաբերությունը գրագրվում է երկրի արդյունաբերության ընդհանուր ծավալի միայն 15%-ը, այն դեպքում, երբ 1937 թվականին նա ուներ բացարձակ իշխող (60%) դիրք (տե՛ս «Ռուդե պրավո», 9.II.1960):

[15] Տե՛ս 164 էջի աղյուսակը:



Մի տեսարան Գոտվալդով քաղաքից. Նրա բարեկարգմանը ընակչությունը նվիրաբերել է 8,5 միլիոն ժամյա սնվճար աշխատանք։ Ձախում՝ կոշկի «Սվիտ» գործարանի նորակառույց կորպուսը

բարերակությունը։ Ծանր արդյունաբերությունը և, հատկապես, նրա սիրտը՝ մեքենաշինությունը զարգացան անհամեմատ արագ և առաջատար տեղ նվաճեցին ժողովրդական տնտեսության մեջ, որը արդյունաբերության սոցիալիստական ինդուստրացման պրոցեսի ընդհանուր և բնորոշ գիծն է։ «Չեխոսլովակիայի, ինչպես և մյուս սոցիալիստական երկրների, օրինակն ու փորձը,—ընդգծել է Ն. Ս. Խրուշչովը Մոսկվայում «Չեխոսլովակիան 1960 թվականին» ցուցահանդեսի բացման կապակցությամբ,—ցույց են տալիս, որ կապիտալիզմի արատներից ազատված նոր հասարակարգը ապահովում է ոչ միայն աճի բարձր տեմպեր, այլ նաև տնտեսության բազմա-

Արդյունաբերության ճյուղեր	1953	1955	1958
Վառելիքի	140	159	218
Էներգետիկայի	165	206	278
Սև մետալուրգիայի	210	230	297
Գունավոր մետալուրգիայի	151	163	230
Մեքենաշինության	294	341	497
Քիմիական	238	291	413
Շինանյութերի	184	240	400
Ապակու և կերամիկայի	122	154	216
Տեքստիլ	139	171	213
Կաբի	181	203	253
Կաշվի	122	148	204
Սննդի	181	199	241

կողմանի և ներդաշնակ զարգացում, որը ամբողջությամբ ծառայում է ժողովրդի բարօրությանը։ Սոցիալիստական տնտեսության ամբողջ պրակտիկան ուսուցանում է, որ տնտեսական առավելագույն էֆեկտ ստացվում է այն պայմաններում, երբ խստորեն պահպանվում է ժողովրդական տնտեսության պլանավորումը, էկոնոմիկայի զարգացման պլանաչափությունը և պրոպորցիոնալությունը»[16]։

Արդյունաբերության ճյուղերի արատավոր փոխհարաբերության հաղթահարմանը զուգընթաց անցկացվեց արտադրողական ուժերի հավասարաչափ տեղաբաշխում, որի հետևանքով լիկվի-

[16] „Правда", 4.V.1960.

դացվեց երկրի առանձին շրջանների և առաջին հերթին, Սլովակիայի տնտեսական հետամնացությունը։ Ձեռնամուխ լինելով Սլովակիայի սոցիալիստական ինդուստրացման, ՀԿԿ և կառավարությունը ելնում էին այն հանգամանքից, որ այնտեղ կենտրոնացված է ռեսպուբլիկայի պղնձի, երկաթի, մարգանեցի, մագնեզիտի և աղի պաշարների մեծ մասը, էլեկտրաէներգիայի հսկայական աղբյուրներ և այլն։

Եթե երկամյակի տարիներին դրվեցին Սլովակիայի սոցիալիստական ինդուստրացման միայն հիմքերը, ապա առաջին հնգամյակի ընթացքում արդեն արմատապես փոխվեց նրա տնտեսության ամբողջ պատկերը։ Այնտեղ կառուցվեցին 125 նոր արդյունաբերական ձեռնարկություններ և վերակառուցվեցին ու ընդլայնվեցին 109 արդյունաբերական այլ օբյեկտներ։ Դրանց թվումն էին այնպիսի խոշոր գործարաններ և հիդրոէլեկտրակայաններ, ինչպիսիք էին, օրինակ, Վադ և Օրվա գետերի հիդրոէլեկտրակայանները, Սվատ, Կրիժ (Գրոնի վրա) և Իստերն քաղաքների մետալուրգիական գործարանները, Մարտին, Կոմարնո, Կոշիցե, Կիսուցկե, Նովե-Մեստո և Բրեզնո քաղաքների մեքենաշինական գործարանները, 3 քիմիական, 12 փայտամշակման, 8 թեթև և 45 սննդարդյունաբերական նոր գործարաններ և այլն։

Հանքարդյունաբերության արագ զարգացման հետևանքով Սլովակիան ներկայումս առաջատար տեղ է գրավում ռեսպուբլիկայի հանքարդյունաբերության մեջ։ Այնտեղ կառուցված ալյումինի, պղնձի, գնդատանցքակալների և նավաշինարարական ձեռնարկությունները ունեն համապետական նշանակություն։ Սլովակիայի տնտեսական զարգացման համար զգալի նշանակություն ունեցավ Սովետական Միություն—Չեխոսլովակիա երկաթգծի կառուցումը, որն անցնում է Սլովակիայի տերիտորիայով (Բոգոմին—Կոշիցե—Զերնա)։

1961 թվականին ավարտվեց «Բարեկամություն» նավթամուղի՝ Սովետական Միություն—Չեխոսլովակիա հատվածի կառուցումը, որը սովետական նավթ է մատակարարում Բրատիսլավայի «Սլովնավթ» խոշորագույն նավթամշակման կոմբինատին, տալով երկրին տարեկան 200 միլիոն քրոնի տնտեսում։ ՍՍՌՄ-ի անմիջական օգնությամբ 1958 թվականին սկսվեց Սլովակիայում 150 հազար կիլովատ կարողությամբ ատոմային էլեկտրակայանի կառուցումը, իսկ Սլանյան լեռների ստորոտում (700 հեկտար տարածության



Դումենի (Արևելյան Սլովակիա) կապրոնի նորակառույց գործարանը

վրա) հիմնադրվեց ժամանակակից Եվրոպայի ամենախոշոր՝ Արևելասլովակյան մետալուրգիական կոմբինատը.[17]:

Վերոհիշյալ և մի շարք այլ միջոցառումների շնորհիվ Սլովակիան վերածվեց ռեսպուբլիկայի ինդուստրիալ-ագրարային շրջանի: Բավական է նշել, որ նրա արդյունաբերության համախառն արտադրանքը արդեն 1956 թվականին գերազանցեց նախապատերազմյան մակարդակը 5 անգամ, իսկ ծանր արդյունաբերության արտադրանքը՝ ավելի, քան 7 անգամ: Վերջնականապես վերացվեցին կապիտալիզմից ժառանգած ազգային-գաղութային հնության տնտեսական հետևանքները: Արդեն 1957 թվականին Սլովակիան տվեց ռեսպուբլիկայի արդյունաբերության ամբողջ արտադրանքի 16,7%:

Սլովակիայի սոցիալիստական ինդուստրացման շնորհիվ արմատապես փոխվեց նրա ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքի մեջ գյուղատնտեսության և արդյունաբերության արտադրանքի փոխհարաբերությունը: Արմատապես փոխվեց նաև արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ «Ա» և «Բ» խմբերի փոխհարաբերության պատկերը և վճռական դերակշռություն ստացավ արտադրության միջոցների արտադրությունը:

Առաջին հնգամյակի, ժողովրդական տնտեսության զարգացման 1954 և 1955 թվականների պետական պլանների և երկրորդ հնգամյակի արդյունաբերության զարգացման ցուցանիշների կենսագործման շնորհիվ էապես ամրապնդվեց Չեխոսլովակիայի ինդուստրիալ բնույթը. եթե 1937 թվականին չեխոսլովակյան արդյունաբերությունը տալիս էր երկրի ազգային եկամտի միայն կեսը (53%), ապա 1958 թվականին նա տալիս էր նրա արդեն 67%:

Իր ինդուստրիալ հզորությամբ Չեխոսլովակիան կարճ ժամանակամիջոցում զգալի առաջադիմեց միջազգային ասպարեզում. նա հասավ և անցավ այնպիսի վաղ զարգացած կապիտալիստական երկրներից, ինչպիսիք Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան և Շվեյցարիան էին: Ըստ բնակչության շնչին ընկնող արդյունաբերության կարևորագույն ճյուղերի արտադրանքի քանակի ներկայումս Չեխոսլովակիան հաջողությամբ մրցակցում է աշխարհիս ամենազարգացած կապիտալիստական երկրների հետ, ինչպիսիք են Ամերիկայի Միացյալ Նահանգները, Գերմանական Ֆեդերատիվ Ռես-

---

[17] Տե՛ս „Экономическая газета", 14.VII.1962, стр. 38.

պուբլիկան և երբեմնի «աշխարհի արհեստանոց» Մեծ Բրիտանիան։ Եթե Չեխոսլովակիայի արդյունաբերության կարևորագույն ճյուղերի արտադրանքը (ըստ բնակչության շնչին ընկնող քանակի) ընդունենք որպես 1, ապա այդ մրցակցությունը կունենա հետևյալ պատկերը.[18]

Երկիր	Էլեկտրաէներգիա		Քարածուխ		Պողպատ		Ցեմենտ		Ծծմբաթթու	
	1937	1958	1937	1958	1937	1958	1937	1958	1937	1958
ԱՄՆ	4	2,8	3	1,2	2,5	1,1	1,8	1	3,1	2,5
ԳԴՌ	2,5	1,3	3,1	1,3	2,5	1,1		1,2		1,4
Մեծ Բրիտանիա	1,8	1,3	4,4	2,3	1,8	0,9	1,8	0,7	2	1,6

Այս տվյալները խոսում են այն մասին, որ Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկան հաջողությամբ լուծում է բնակչության մեկ շնչին ընկնող արդյունաբերության արտադրանքի քանակով ամենազարգացած կապիտալիստական երկրներին հասնելու և անցնելու տնտեսական ժամանակակից կարևորագույն խնդիրը։

Սոցիալիստական Չեխոսլովակիան, որը իր տերիտորիայով և բնակչությամբ գասվում է աշխարհի փոքր երկրների շարքում, լուրջ ավանդ է ներդնում միջազգային սոցիալիստական և կապիտալիստական սիստեմների տնտեսական մրցակցության գործում։ Զբաղեցնելով մեր մոլորակի տերիտորիայի միայն 0,08% և բնակչության 0,5%, նա տալիս է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի արդեն 2%։

Սխալ կլիներ կարծել, թե Չեխոսլովակիայի արդյունաբերության սոցիալիստական վերակառուցումը և նրա վերոհիշյալ արագ զարգացումը ընթացել է միապաղաղ, հարթ ճանապարհով, առանց լուրջ դժվարությունների և խոչընդոտների։ Նա ունեցել է լուրջ թերություններ, ապրել և հաղթահարել մեծ դժվարություններ։ Այսպես, օրինակ, արդյունաբերության ընդլայնումը միշտ չէ, որ զուգորդվել է նրա արտադրանքի ինքնարժեքի իջեցման և որակական ցուցանիշների բարձրացման հետ։ 1949—1951 թթ. նշանակալից չափով ուռճացավ վարչական ապարատը, այն դեպքում, երբ բանվորական ձեռքի պակասի հետևանքով մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ գործում էին թերբեռնվածությամբ։

[18] Տե՛ս «Ռուդե պրավո», 7.XI.1959։

Այնուհետև, աշխատավարձի աճը զգալի չափով առաջ անցավ աշխատանքի արտադրողականության աճից, որի հետևանքով արդյունաբերությունը, չնայած իր զարգացման բարձր տեմպերին, զգալի չափով ետ մնաց բնակչության գնողունակության աճից։ Նյութական բարիքների արտադրության և սպառման միջև ծագած անհամապատասխանությունը 1951 թվականի ամռանը հասավ այնպիսի աստիճանի, որ կառավարությունը ժամանակավորապես վերականգնեց հացի և մի շարք այլ մթերքների բաշխման քարտային սիստեմը, որպեսզի վերջ տա երկրում աշխուժացած սպեկուլյացիային, շարաշահումներին, հերթերին և ապահովի բնակչության նորմալ մատակարարումը։

Առաջին հնգամյակի վերջում լուրջ դիսպրոպորցիաներ հանդես եկան հենց արդյունաբերության տարբեր ճյուղերի զարգացման միջև. էլեկտրաէներգիայի և վառելանյութերի արտադրության տարեկան միջին աճը (1948—1953 թվականներին՝ 7%) անհամեմատ ետ էր մնում արդյունաբերության մյուս ճյուղերի աճից (15%) և խոչընդոտում նրանց հետագա զարգացումը։ Հատկապես ետ էր մնում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և զարգացման պրոցեսը։

Բայց այդ դժվարությունները, անհամամասնություններն ու խոչընդոտներն ունեին մեկ կարևոր առանձնահատկություն՝ դրանք տնտեսության հախուռն աճի, անընդհատ վերելքի ժամանակավոր, անցողիկ դժվարություններ, անհամամասնություններ ու խոչընդոտներ էին և ոչ թե անկման, որոնք հաջողությամբ հաղթահարվում էին ՁԿՊ-ի և ժողովրդա-դեմոկրատական կառավարության կողմից։

Այդ դժվարությունների և աններդաշնակությունների շտկման գործում կարևոր նշանակություն ունեցավ բարեհոգի և ինքնագոհ արամադրությունների հաղթահարումը, որը ծագել էր Կոմունիստական պարտիայի որոշ անդամների մոտ երկրում սոցիալիստական շինարարության հսկայական հաջողությունների հետևանքով։ Նրանցից շատերը աչքաթող էին արել մասսաների մեջ քաղաքական աշխատանքի ծավալման անհրաժեշտությունը, անցել վարչարարության, տուրք տվել բյուրոկրատիզմին և թուլացրել կապերը մասսաների հետ։ Բանը նրանումն էր, որ Կլիմենտ Գոտվալդը, ընտրվելով պրեզիդենտ, դրեթե կլանվել էր այդ պոստի աշխատանքներով։ Օգտվելով դրանից, ինչպես նաև նրա վատառողջ վիճակից, պարտիայի փաստական ղեկավարությունը ստանձնել էր Ռուդոլֆ Սլանսկին, որը, մեծարելով Գոտվալդի անձը, կարողացել էր նրան որոշ չափով

մեկուսացնել պարտիական մասսաներից և ժողովրդից։ Խախտելով ներպարտիական դեմոկրատիան և, ընդհանրապես, պարտիական կյանքի լենինյան նորմաները, Սլանսկին և նրա համախոհները (Շվարը, Տաուսիգովան և մյուսները) պարտիական և պետական ղեկավար աշխատողների շրջաններում ստեղծել էին փոխադարձ անվստահության մթնոլորտ, կազմակերպել «եռյակներ» ու «հընդյակներ», որոնց միջոցով և դատաստան տեսել պարտիայի և կառավարության բազմաթիվ անձնվեր գործիչների հետ։ Ելնելով անձնական նվիրվածության սկզբունքից, նրանք յուրայիններին հատկացրել էին պետական և պարտիական ղեկավար պաշտոններ, որոնց օգնությամբ ջանում էին իրենց ձեռքը վերցնել պարտիայի ղեկավարությունը և պետական իշխանությունը։

Անդրադառնալով ստեղծված վիճակին, ՀԿՊ ԿԿ 1951 թվականի Հունիսյան ու Սեպտեմբերյան պլենումները և ՀԿՊ 1952 թվականի դեկտեմբերյան Համապետական կոնֆերանսը մինչև վերջը վեր հանեցին և մերկացրին Սլանսկու և նրա համախոհների վնասակար գործունեությունը, որով և նպաստեցին պարտիական կյանքի լենինյան նորմաների վերականգնմանը, մասսաների հետ պարտիայի կապերի ամրապնդմանը, ինչպես նաև տնտեսական վերելքի ժամանակավոր ու անցողիկ անհամամասնությունների, խոչընդոտների լիկվիդացմանը։ Արդեն 1953 թ. սկզբին վերացվեց քարտային սիստեմը և անցկացվեց դրամական նոր ռեֆորմ, ըստ որի Չեխոսլովակյան քրոնը կապակցվեց ժամանակի ամենակայուն դրամի՝ սովետական ռուբլու հետ։ Ընդ որում 1 քրոն 80 հելլերը հավասարվեց այն ժամանակվա սովետական 1 ռուբլուն։ Զարկ տրվեց էլեկտրաէներգիայի և վառելանյութերի արտադրությանը, որի շնորհիվ արդեն 1954—1955 թթ. դրությունը նորմալացավ։ Բավական է նշել, որ այդ երկու տարում Չեխոսլովակիայի էլեկտրակայանների հզորությունն աճեց ավելի (711 հազար կիլովատ), քան ամբողջ առաջին հնգամյակում (635 հազար կիլովատ)։

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Չեխոսլովակիայի ինդուստրացումը, մեքենաշինության առավելագույն զարգացումը հանդիսացան անհրաժեշտ պայման և հզոր լծակ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։ Ելնելով Սովետական Միության գյուղատնտեսության կո-

լեկտիվացման հարուստ փորձից, որը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մարքս-լենինյան ուսմունքի կենդանի հայելին էր, ՀԿՊ գտնում էր, որ անհնարին է ժողովրդա-դեմոկրատական կարգերը փոքրիշատե երկար ժամանակ թողնել երկու, տրամադիր հակադիր հասարակական հիմքերի վրա՝ զարգացած սոցիալիստական ինդուստրիայի և մասնատված, հետամնաց, մանրապրանքային գյուղացիական տնտեսությունների վրա։ Ահա թե ինչու ՀԿՊ և կառավարությունը, հետևողականորեն վարելով երկրի ինդուստրացման քաղաքականություն, մեծ ուշադրություն էին դարձնում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման վրա։ Արդեն ՀԿՊ IX համագումարը (1949) ամենայն սրությամբ դրեց միասնական գյուղատնտեսական կոոպերատիվների (ՄԳՏԿ)[19] կազմակերպման և այդ հիման վրա կուլակության ասոիճանական սահմանափակման և արտամղման հարցերը։ «Առանց գյուղի սոցիալիզմի անցման մեզ մոտ սոցիալիզմ չի լինի»,—ընդգծեց համագումարը։

---

[19] Դեռևս վաղ ժամանակներից Ձեխոսլովակիան ծածկված էր գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների լայն ցանցով, որոնք կազմակերպում էին գյուղացիների պայքարն ընդդեմ կալվածատերերի և կուլակների, ապահովում նրանց մթերքների վաճառքը, ինչպես նաև մատակարարում արդյունաբերական ապրանքներով և այլն։ Այդ կոոպերատիվները վայելում էին գյուղական բնակչության համակրանքը և նրանց գիտակցության մեջ ունեին խոր արմատներ։ 1945—1947 թվականներին ՀԿՊ և կառավարությունը նպաստում էին այդ կոոպերատիվների զարգացմանը, վերակրտատեսանացմանը, տրամադրում նրանց գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ, վարկ և այլն, որի հետևանքով սպառողական կոոպերատիվները, ստանալով որոշակի արտադրողական բնույթ, լայնորեն ծավալվում էին։ Եթե 1945 թվականին Երկրում հաշվվում էին 10591 կոոպերատիվներ, որոնք կրում էին զուտ սպառողական բնույթ և ունեին 3177 հազար անդամներ, ապա 1947 թվականին այնտեղ կային արդեն 15381 կոոպերատիվներ, որոնք կրում էին որոշակի արտադրողական բնույթ և ունեին 4264 հազար անդամներ. ընդ որում մեկ գյուղում կային մի քանի այդպիսի կոոպերատիվներ (տե՛ս „Družstevní věstník“, 1948, № 26, էջ 401)։

Ձեռնամուխ լինելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը, ՀԿՊ և կառավարությունը օգտագործեցին վերոհիշյալ կոոպերատիվները և Երկրի գյուղացիության կոոպերացիոն սովորությունները։ 1949 թվականի փետրվարի 23-ին Ազգային օրենսդիր ժողովը ընդունեց որոշում, ըստ որի տվյալ գյուղի և գյուղական շրջանի բոլոր կոոպերատիվները միավորվում էին մեկ միասնական գյուղատնտեսական կոոպերատիվի մեջ։ Այստեղից էլ հենց ծագեց Ձեխոսլովակիայի կոլեկտիվ տնտեսությունների անվանակոչումը՝ ՄԳՏԿ-ներ (տե՛ս «Ռուդե պրավո», 24—27.II.1949)։

Ինչպես արդյունաբերության սոցիալիստական ինդուստրացման, այնպես էլ գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցում ՉԿՊ ելնում էր ոչ միայն ՍՍՌՄ-ի հարուստ փորձից, այլ նաև Չեխոսլովակիայի կոնկրետ պատմական, ազգային, սոցիալ-էկոնոմիկական պայմաններից և միջազգային իրադրությունից։ Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը Չեխոսլովակիայում սկսվեց և ծավալվեց որոշակի պատմական նպաստավոր պայմաններում. առկա էր ՍՍՌՄ-ի փորձը, նրա անշահախնդիր տ. բաղմակողմանի օգնությունը։ Բայց այն ուներ նաև զգալի բացասական կողմ. եթե ՍՍՌՄ-ում գյուղատնտեսության կոլեկտիվացումը տեղի ունեցավ ամբողջ հողի ազգայնացման պայմաններում, ապա Չեխոսլովակիայում այն տեղի էր ունենում հողի մասնավոր սեփականության որոշակի պահպանման, նրա մասնակի ազգայնացման պայմաններում։

Ստեղծագործաբար կենսագործելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լենինյան կոոպերատիվ պլանը Չեխոսլովակիայի ուրույն պատմական պայմաններում, ՉԿՊ ձեռնամուխ եղավ ՄԳՏԿ-ների քառաստիճան սիստեմի կազմակերպմանը, որը հնարավորություն էր տալիս հաշվի առնելու գյուղացիության տարբեր շերտերի և գյուղական առանձին շրջանների սոցիալիստական վերակառուցման հասունությունը։

ՄԳՏԿ-ների առաջին տիպում հողակտորները, գյուղատնտեսական գործիքները և անասունները չեն համայնացվում և մնում են որպես նրանց տերերի մասնավոր սեփականություն։ Բայց գյուղացիները միասին են կատարում գյուղատնտեսական աշխատանքները, ընդհանուր ցանքատարածությունները, միասին օգտագործում գյուղատնտեսական գործիքները, մեքենաները, քարշող ուժը և այլն։ ՄԳՏԿ-ների առաջին տիպի յուրաքանչյուր անդամի հողակտորից ստացվող բերքը համարվում է նրա մասնավոր սեփականությունը։

ՄԳՏԿ-ների երկրորդ տիպում հողակտորների սահմանային միջնորմները, ցանկապատները և այլն վերացվում են, հողակտորները միացվում, բայց անասունները մնում որպես նրանց տերերի մասնավոր սեփականություն։ Յուրաքանչյուր անդամ, որպես մասնավոր սեփականություն, ստանում է ոչ թե իր հողակտորի բերքը, այլ տվյալ ՄԳՏԿ-ի ընդհանուր բերքից այդ հողակտորի չափին բաժին ընկնող մասը։ Բերքահավաքից հետո ՄԳՏԿ-ի անդամների ընդհանուր ժողովը որոշում է, թե յուրաքանչյուր հեկտարի բերքի

որ մասի արժեքը պետք է առանձնացվի որպես կոոպերատիվի անբաժան ֆոնդ։

ՄԳՏԿ-ների երրորդ տիպում բացի հողի և գյուղատնտեսական գույքի համայնացումից, համայնացվում են նաև անասունները։ Ստացվող եկամտի մեծ մասը (85—90%) բաշխվում է ըստ աշխատօրերի, իսկ մնացած չնչին մասը (10—15%)՝ ըստ տվյալ անդամի հողակտորի, անասունների քանակի և այլն։ ՄԳՏԿ-ների չորրորդ տիպը երրորդ տիպից տարբերվում է նրանով, որ այստեղ ամբողջ եկամուտը բաշխվում է ըստ աշխատօրերի, անկախ նրա անդամների նախկինում ունեցած սեփականության չափից և տեսակից։ Ընդ որում, ապահովվում էր անցումը առաջին տիպից՝ պարզ արտադրական կոոպերացիայից, ուր միայն աշխատանքն էր համայնացված (I և II տիպերից), դեպի բարդը՝ սոցիալիստականը, ուր համայնացված էին նաև հողը, արտադրության միջոցները (III և IV տիպերը)։

Շնորհիվ ՉԿՊ վարած գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մարքս-լենինյան ստեղծագործ քաղաքականության, արդեն I հնգամյակի վերջում երկրում հաշվվում էին 7129 կոոպերատիվներ։ 1953 թվականին տեղի ունեցավ ՄԳՏԿ-ների առաջին համագումարը, որը հաստատեց Միասնական գյուղատնտեսական կոոպերատիվների օրինակելի կանոնադրությունն։

Ըստ այդ կանոնադրության, որը վերանայվեց և լրացվեց ՄԳՏԿ-ների երրորդ (1957 թվականի մարտ) և չորրորդ (1959 թվականի մարտ) համագումարներում, գյուղացին կամավոր կերպով մտնելով կոոպերատիվ, նրան էր հանձնում իր հողակտորը, գյուղատնտեսական գործիքները և մեքենաները[20], իսկ անասուններ հանձնելիս ստանում նրանց արժեքի 80%[21]։

Կազմակերպչական տեսակետից ՄԳՏԿ-ները հենված են լայն դեմոկրատական սկզբունքների վրա. կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովը ընտրում է նախագահ, կառավարչություն և

---

[20] 1957 թվականին, երբ կոոպերատիվները անտեսապես արդեն ամրապնդված էին, ՄԳՏԿ-ների երրորդ համագումարը չտվեց օրինակելի կանոնադրության այդ կետը, ըստ որի գյուղացուն իրավունք տրվեց ստանալու կոոպերատիվին հանձնած իր գյուղատնտեսական գործիքների և մեքենաների արժեքի 80%։ Կոոպերատիվ մտնելիս գյուղացին անվճար կերպով նրան էր հանձնում միայն իր հողակտորը։

[21] Շնորհիվ օրինակելի կանոնադրության այդ կետի կանխվեց կոոպերացման պրոցեսում անասունների դիմաքանակի կորուստի հնարավորությունը։

վերատուգիչ հանձնաժողով, որոնք իրենց գործունեության մասին հաշվետու են ընդհանուր ժողովին: ՄԳՏԿ-ների անդամներին տրվում է տնամերձ հողակտոր (վարելահող՝ մինչև 0,5 հեկտար, կամ արոտավայր՝ մինչև 1 հեկտար): Յուրաքանչյուր անդամի տնամերձի կոնկրետ չափը (վերոհիշյալ շրջանակներում) որոշում է կոոպերատիվի ընդհանուր ժողովը:

Գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպվում են ըստ բրիգադների, որոնք բաժանվում են օղակների: ՀԿՊ նախաձեռնությամբ ծավալվեց ներկոոպերատիվային և արտակոոպերատիվային սոցիալիստական մրցություն[22]: Աշխատանքի վարձատրությունը կատարվում է ըստ աշխատօրերի, որը անվանվում է «աշխատանքային միավոր». ընդ որում տարեցտարի աճում է աշխատօրերի դրամական և նվազում մթերային վարձատրությունը: Արդեն 1956 թվականին յուրաքանչյուր աշխատօրի վարձատրության 74,3% կատարվել էր դրամով, իսկ մնացած 25,7%-ը՝ մթերքով: Մեքենատրակտորային կայանների կատարած աշխատանքը ՄԳՏԿ-ները վարձատրում են համապատասխան գնացուցակով, ըստ աշխատանքի որակի, տեսակի և չափի. ընդ որում մինչև 1954 թվականը այդ վճարումը կատարվում էր զուտ դրամով, իսկ 1954 թվականից սկսած՝ նաև մթերքով: ՄԳՏԿ-ների տարեկան եկամտի 7%-ը մտնում է նրանց անբաժան ֆոնդի մեջ:

Պետք է նշել, որ կոոպերատիվ շարժումը, սկսվելով 1949 թվականին, անընդհատ վերելք չապրեց: 1952 թվականի երկրորդ կեսից նկատելի դարձավ կոոպերատիվ շարժման որոշ լճացում, իսկ 1953 թվականի աշնանից սկսվեց նրա անկումը, որը տևեց մինչև 1955 թվականի ամառը. ընդ որում կազմալուծվեցին 651 միասնական գյուղատնտեսական կոոպերատիվներ: Անկմանը հաջորդեց կոոպերատիվ շարժման լճացումը, որը տևեց մինչև 1956 թվականի վերջը և միայն 1957 թվականի սկզբից ապահովվեց նրա նոր, հուժկու վերելքը:

ՀԿՊ ԿԿ 1953 թվականի Սեպտեմբերյան պլենումը, իսկ այնուհետև ՀԿՊ 10-րդ համագումարը (1954) վեր հանեցին գյուղատնտեսու-

---

[22] Մինչև 1955 թվականը գյուղատնտեսության մեջ սոցիալիստական մրցությունը թույլ էր ծավալված. շատ կոոպերատիվների առանձին անդամներ, ամբողջական օղակներ և անգամ բրիգադներ չունեին իրենց կոնկրետ առաջադրանքները: Այդ լուրջ թերությունը ՀԿՊ-ի նախաձեռնությամբ լիկվիդացվեց ՄԳՏԿ-ների երկրորդ համագումարում, որը տեղի ունեցավ 1955 թվականի փետրվարին (տե՛ս «Ռուդն պրավդա», 20—21.II.1956):

թյան սոցիալիստական վերակառուցման ասպարեզում թույլ տրված լուրջ սխալները և թերությունները, որոնց զգալի մասը արդյունք էր Սլանսկու և նրա համախոհների գործունեության։ Այդ սխալներից և թերություններից հիշատակության արժանի են պարտիայի քաղաքական գծից շեղվելը և կոոպերացման կամավորության սկզբունքի խախտումը, կուլակային տարրերի բայքայիչ գործունեությունը և դրա թերագնահատումը[23], նոր կազմակերպվող և տնտեսապես թույլ կոոպերատիվներին ցույց տրվող պետական անբավարար օգնությունը և այլն։ «Հապճեպ կոոպերացումը,—նշել է Վ. Շիրոկին,—որ տեղ է գտել 1951—1952 թվականներին և որոշ շրջաններում ընթացել համատարած կոլեկտիվացման նշանաբանի տակ, հակասության մեջ է մտել մեր գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի հետ։ Մեծ է գյուղատնտեսական մեքենաների և պարարտանյութերի պակասը»[24]։

ՀԿՊ X համագումարում հանդես գալով ողջույնի խոսքով, ՍՄԿՊ պատվիրակության ղեկավար Ն. Ս. Խրուշչովը ընդգծեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կոոպերացման պրոցեսում կամավոր սկզբունքի խստագույն պահպանման, ՄԳՏԿ-ներին պետական օգնության ու պարտիական ղեկավարության ապահովման և գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման անհրաժեշտությունն ու նշանակությունը։

Համագումարը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ կոոպերատիվ շարժման անկումը կասեցնելու և նրա փական վերելքն առաջիկա 2—3 տարում ապահովելու ուղղությամբ։ Այդ գործում ՀԿՊ-ին և կառավարությանը լուրջ աջակցություն և կոնկրետ օգնություն ցույց տվեց Սովետական Միությունը։ Նա Չեխոսլովակիային տրամադրեց հարյուր հազարավոր տրակտորներ, կոմբայններ, ծեծիչ ու կալսիչ և գյուղատնտեսական այլ մեքենաներ, մեծ քանակությամբ արհեստական պարարտանյութեր, գյուղատնտեսական կուլտուրաների բարձրորակ սերմեր և այլն։ Սովետական մասնագետները օգնեցին չեխոսլովակյան արդյունաբերության մի շարք ձեռնարկություններին առանձին ցեխեր արագ կերպով վերակառուցելու և կարճ ժամանակամիջոցում մասսայական մասշտաբով գյու-

---

[23] 1954 թվականին երկրում հաշվում էին ընդամենը 13623 գյուղական պարտիական կազմակերպություններ, որոնց մի մասը գործում էր անբավարար վճռականությամբ։ 625 գյուղերում ընդհանրապես չկային պարտիական կազմակերպություններ (տես «Նովա միալ», № 7, 1954, էջ 702)։

[24] Տես «Նովա միալ», № 5, 1955, էջ 456։

գյուղատնտեսական մեքենաներ ու արհեստական պարարտանյութեր արտադրելու գործում։

ՉԿՊ 1956 թվականի Հունիսյան համապետական կոնֆերանսը, ուր ժամանակակից դրության և պարտության խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ ՉԿՊ ԿԿ առաջին քարտուղար Անտոնին Նովոտնին, անդրադառնալով պարտության 10-րդ համագումարի դիրեկտիվների կենսագործմանը, վերացրեց գյուղատնտեսության կոոպերացման ասպարեզում տեղ գտած թերությունները և նշեց նրա հետագա զարգացման ուղիները։ Կենսագործելով պլենումի որոշումները, կառավարությունը ընդլայնեց կոոպերատիվներին ցույց տրվող տնտեսական և տեխնիկական օգնությունը, պարտիական ու պետական ապարատի բազմաթիվ աշխատողների գործուղեց գյուղ և այլն։

Այդ միջոցառումների հետևանքով ոչ միայն կասեցվեց կոոպերատիվ շարժման անկումը, այլև այն արագ կերպով սկսեց աճել։ Կոլեկտիվացման շեշտակի վերելքը սկսվեց հատկապես 1957 թվականի ամռանը. միայն կես տարվա ընթացքում կազմակերպվեցին 2500 բարձր (III և IV տիպի) կոոպերատիվներ, ասպարեզից վերջնականապես դուրս եկան կոոպերատիվների ստորին (I և II) տիպերը, որոնք իրենց պատմական միսիան արդեն կատարել էին[25]։

Չեխոսլովակիայի գյուղում սոցիալիստական արտադրական կոոպերատիվների հիմնական ձևերի (III և IV տիպի կոոպերատիվների) կազմակերպման պատկերը հետևյալն է[26]։

Գյուղում սոցիալիստական արտադրական կոոպերատիվների հիմնական ձևերի վերոհիշյալ աճի հետևանքով արմատապես փոխ-

---

[25] 1950 թվականին կոոպերատիվների ստորին (I և II) տիպերը կազմում էին երկրի ամբողջ միասնական գյուղատնտեսական կոոպերատիվների 69%, 1951 թ.՝ 52,2%, 1952 թ.՝ 43,2%, 1953 թ.՝ 19,7%, 1954 թ.՝ 12,9%, 1955 թ.՝ 3,1%, 1956 թ.՝ 0,4։ Ամբիճանարար իրենց տեղը գիջելով ՄԳՏԿ-ների բարձր (III և IV) տիպերին, նրանք, այդպիսով, 1957 թվականին լրիվ անհետացան։ Ուշագրավ է, որ գրեթե նույնանման պրոցես տեղի է ունեցել նաև Սովետական Միությունում։ ՍՍՌՄ-ում հողի համատեղ մշակման ընկերությունները, որոնք շատ բաներով հիշեցնում են չեխոսլովակյան ՄԳՏԿ-ների I և II տիպերին, 1929 թ. կազմում էին ենթակա բոլոր կոլտնտեսությունների 60,2%, 1930 թ.՝ 17,3%, 1933 թ.՝ 1,9% (տես „Социалистическое строительство в СССР", М., 1935, стр. 320)։

[26] Տես հաջորդ էջի առաջին ծանոթագրությունը, որի տվյալները վերցված են «Ստատիստիկան սպրավին», 1957, № 1, 1959, № 2, „Чехословакия", 1960, № 5, стр. 14.

վեց երկրի գյուղատնտեսության մեջ տնտեսական սեկտորների փոխհարաբերությունը՝ հօդուտ սոցիալիզմի։

Թվականներ	III և IV տարի ՄԳՏ-ների քիմիա	Գյուղացիական անհատական քիմիա (հազար տոննա)	Սովխոզների քիմիա (հազար տոննա)	Հողատիրոջ քիմիա (հազար տոննա)	Գյուղացիական տնտեսության քիմիա (հազար տոննա)	Տնտեսության հողի չափը (հազ. հեկտար)	Տնտեսության մարդկային հոգիների չափը (հազ. հեկտար)
1948	28		—	—	—	—	—
1953	6679	261	381	2048	1540	124	103
1956	8016	241	395	2109	1600	127	101
1957	11090	437	656	3257	2460	204	162
1958	12140	593	852	3996	2988	293	230

Չեխոսլովակիայի գյուղատնտեսության մեջ տնտեսական սեկտորների հարաբերակցության և տեղաշարժերի պատկերը (արտահայտված տոկոսներով ըստ զբաղեցրած հողաքանակի) հետևյալն է.

Տնտեսական սեկտորներ	1948	1953	1958
Սոցիալիստական	—	60	71,5
Մանրապրանքային	45	32	26,9
Կապիտալիստական	55	8	1,6

Տվյալները վկայում են, որ արդեն 1958 թվականի վերջին սոցիալիստական սեկտորը երկրի գյուղատնտեսության մեջ ուներ բացարձակ իշխող դիրք, որ Չեխոսլովակիայի գյուղը հիմնականում արդեն վերակառուցված էր սոցիալիզմի բազայի վրա։

Մանրապրանքային գյուղացիական տնտեսությունները, ինչպես երևում է աղյուսակից, դեռևս ունեին զգալի տեսակարար կշիռ (մոտ 27%)։ Բայց դա ոչ այնքան երկրի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրոցեսի անավարտության արդյունք էր, որքան այսպես կոչված գոմկարժների[27] գոյության և

[27] Գոմկարժները հիմնականում զբաղված են արդյունաբերության մեջ, բայց տարբերային ռենտների հետևանքով նրանք ստացան փոքրիկ հողակտորներ (մինչև 0,5 հեկտար)։ Արդյունաբերական բանվորների կենսամա-

մասամբ էլ այն բանի, որ Չեխոսլովակիայի լեռնային որոշ շրջաններում ու մարզերում, ուր դեռևս չէին ստեղծվել բարենպաստ պայմաններ եկամտաբեր խոշոր կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման համար, Չեխոսլովակիայի Կոմպարտիան և կառավարությունը նպաստում էին մանրապրանքային տնտեսությունների հաջող զարգացմանը։

Կուլակության սահմանափակման և աստիճանական արտամղման քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ նրա տեսակարար կշիռը երկրի գյուղատնտեսության մեջ, ինչպես այդ երևում է աղյուսակից, խիստ կերպով նվազել և արդեն 1958 թ. հասել էր չնչին թվի (1,6%)։ Բացի այդ, կոոպերատիվ շարժման հսկայական հաջողությունները խարխլել էին կուլակության զարգացման սոցիալ-տնտեսական բազան, մեկուսացրել նրան գյուղացիական մասսաներից և ստեղծել ռեալ հնարավորություններ կուլակությունը, որպես դասակարգ, լիկվիդացնելու համար, ընդ որում առանց բռնի միջոցների գործադրման, մի բան, որը հնարավոր չեղավ ՍՍՌՄ-ում։ Չեխոսլովակիայում կուլակության լիկվիդացումը հիմնականում ընթանում է նրա աշխատանքային վերադաստիարակման միջոցով։ ՄԳՏԿ-ների նոր կանոնադրության մեջ, որը հաստատվեց 1959 թվականի մարտին, նախատեսված է կետ, ըստ որի նախկին կուլակային տնտեսությունները կարող են անհատական կարգով ընդգրկվել կոոպերատիվների մեջ, եթե նրանք բարեխղճորեն կատարեն այդ կանոնադրությունից բխող բոլոր պարտականությունները։ Բայց ոչ բոլոր կուլակներն են ցուցաբերում նման հնազանդություն և ենթարկվում աշխատանքային վերադաստիարակման, որոնց նկատմամբ ՉԿՊ և կառավարությունը ստիպված կիրառում են նաև որոշ ռեպրեսիվ միջոցներ։

Գյուղատնտեսության սոցիալիստական կոոպերացումը լայն հնարավորություններ ստեղծեց արտադրական պրոցեսների մեքենայացման համար. եթե 1937 թվականին երկրի վարելահողերի յուրաքանչյուր 2 հազար հեկտարին ընկնում էր 3 տրակտոր, ապա 1957 թվականին ընկնում էր 12 տրակտոր և բազմաթիվ գյուղա-

---

կարգակի շնչտակի վերելքի հետևանքով դոմկարժները հետագայում սկսեցին իրենց հոդակտորները կամավոր կերպով հանձնել ՄԳՏԿ-ներին և դառնալ «գուտա» արդյունաբերական բանվորներ։ Նրանցից ոմանք, ընդհակառակը, իրենց հոդակտորով ընդգրկվեցին ՄԳՏԿ-ների մեջ և դարձան «գուտա» կոոպերատիվ գյուղացիներ։

տնտեսական այլ մեքենաներ։ 1957—1958 թվականներին երկիրը ծածկված էր մեքենատրակտորային կայանների խիտ ցանցով, որոնք տարեկան էին 6 անգամ ավելի հողատարածություն (11400 հազար հեկտար), քան 1950 թվականին։

Շատ կոոպերատիվներ սեփական միջոցներով ձեռք են բերում տրակտորներ և այլ գյուղատնտեսական մեքենաներ, ընդ որում կառավարությունը դա խրախուսում է և ցույց տալիս ֆինանսական օգնություն։ Բավական է նշել, որ այդ ուղղությամբ կառավարությունը 1956 թվականին ծախսել է 11349 միլիոն քրոն, այսինքն՝ 65% ավելի, քան 1953 թվականին, իսկ 1957 թվականին՝ շուրջ 15 միլիարդ քրոն։ ՄԳՏԿ-ների տնտեսական ամրապնդման շնորհիվ նրանք 1957 թվականին կարողացան գնել այդ տարում մեքենատրակտորային կայանների ստացած գյուղատնտեսական մեքենաների 67%։

1959 թվականին շեշտակի աճեց կոոպերատիվների կողմից մեքենատրակտորային կայանների գյուղատնտեսական գույքի և տարբերումների գնումը։ ՄԳՏԿ-ների IV համագումարից (1959 թվականի մարտ), որն ընդունեց այդ մասին հանգամանալից որոշում, մինչև հոկտեմբերն ընկած ժամանակաշրջանում կոոպերատիվների ձեռքն անցավ մեքենատրակտորային կայանների ունեցվածքի դրեթե կեսը, այդ թվում՝ անիվավոր տրակտորների 49%, թրթուրավոր տրակտորների 25%, կալսիչ մեքենաների՝ 62%, խոտակալ մեքենաների՝ 57% և բազմաթիվ այլ մեքենաներ՝ 518 միլիոն քրոն ընդհանուր արժողությամբ։ Ընթացիկ տարում ավարտվում է ՄՏԿ-ների ունեցվածքի վաճառքը Միասնական գյուղատնտեսական կոոպերատիվներին։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հետևանքով լայն հնարավորություններ ստեղծվեցին գյուղատնտեսական շատ պրոցեսների ոչ միայն մեքենայացման, այլ նաև քիմիականացման ու էլեկտրիֆիկացման համար։ Բավական է նշել, որ 1957—1958 թվականներին Չեխոսլովակիայի վարելահողերի յուրաքանչյուր հեկտարին բաժին էր ընկնում 4 անգամ ավելի շատ աղոտային, կալիումական և ֆոսֆորային պարարտանյութեր, քան 1936—1937 թվականներին, որ 1957 թվականի վերջին արդեն էլեկտրիֆիկացված էր Չեխոսլովակիայի բոլոր բնակավայրերի 95,6%, այդ թվում չեխական հողերի բնակավայրերի՝ 99,2% և Սլովակիայի բնակավայրերի՝ 84,1%, այն դեպքում, երբ 1937 թ. էլեկտրիֆիկացված էր երկրի բնակավայրերի ընդամենը 59,9%, այդ թվում

չեխական հողերի՝ 70,3%, իսկ Սլովակիայի բնակավայրերի՝ միայն 24,4%:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, նրա

Ոռոգումը Կոքզովիցյան ՄԳՏԿ-ի ցանքերում

մեքենայացման, քիմիականացման և էլեկտրիֆիկացման զուգընթաց սկսեց աճել բերքատվությունը: Բավական է նշել, որ ՄԳՏԿ-ների զբաղեցրած յուրաքանչյուր հեկտարի բերքատվությունը

(ըստ կայուն արժեքի) 1954 թվականին կազմում էր 3186 քրոն, իսկ 1957 թվականին՝ 4188 քրոն։

Եթե համեմատենք ՄԳՏԿ-ների և մենատնտեսների զբաղեցրած յուրաքանչյուր հեկտարի բերքատվությունը, ապա ակնառու կդառնան այն առավելությունները, որոնք ունեն սոցիալիստական խոշոր տնտեսությունները անհատական տնտեսությունների նկատմամբ. 1957 թվականին ՄԳՏԿ-ների յուրաքանչյուր հեկտար վարելահողից ստացել է 2,6 ցենտներ ավելի ցորեն, 1,1 ցենտներ՝ հաճար, 2,6 ցենտներ՝ վարսակ, 38,8 ցենտներ ավելի շաքարի ճակնդեղ և այլն, քան անհատական տնտեսություններում։ Եթե 1955 թվականին մենատնտես գյուղացու մեկ հեկտարից ստացվող բերքի (ըստ համապատասխան գյուղատնտեսական կուլտուրայի) չափը ընդունենք 100 միավոր, ապա կոոպերատիվների մեկ հեկտարից ստացվող ցորենի քանակը կլինի 110,1, հաճարինը՝ 109,2, գարունը՝ 111, շաքարի ճակնդեղինը՝ 103,6 և այլն։ Ընդ որում պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ՄԳՏԿ-ների յուրաքանչյուր հեկտարի վրա թափվում է շուրջ կիսով չափ ավելի քիչ ձեռքի աշխատանք, քան անհատական տնտեսություններում։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, մեքենայացման և այդ հիման վրա ձեռք բերած նրա բերքատվության վերելքին զուգընթաց աճեցին ՄԳՏԿ-ների եկամուտները։ Եթե իրենց զբաղեցրած գյուղատնտեսական հողի յուրաքանչյուր հեկտարից ՄԳՏԿ-ները 1953 թվականին ստանում էին 1717 քրոնի դրամական ընդհանուր եկամուտ, ապա 1954 թվականին նրանք ստանում էին 2249 քրոնի եկամուտ, 1955 թվականին՝ 2615 քրոնի, 1956 թվականին՝ 2686 քրոնի և այդպես շարունակ։

ՄԳՏԿ-ների դրամական ընդհանուր եկամուտների ավելացման հետ մեկտեղ աճեցին նրանց անդամների դրամական ընդհանուր եկամուտները։ Եթե 1953 թվականին ՄԳՏԿ-ների III և IV տիպերում յուրաքանչյուր աշխատորին միջին հաշվով (երկրում) վճարվել է 11,9 քրոն, ապա 1954 թվականին վճարվել է 13,0 քրոն, 1955 թվականին՝ 15,0 քրոն, 1956 թվականին՝ 15,9 քրոն և այդպես շարունակ։

Անհատական տնտեսությունների նկատմամբ կոլեկտիվ տնտեսությունների ակնառու առավելությունները և շահավետությունը արմատապես փոխեցին միջակ գյուղացիության վերաբերմունքը դեպի ՄԳՏԿ-ները։ Ընդ որում բեկման կետ հանդիսացավ 1957 թվականը, երբ միջակ գյուղացիությունը մասսայաբար

սկսեց ընդգրկվել կոլեկտիվ տնտեսությունների մեջ. եթե մանրադյուղացիական տնտեսությունները, որոնցից յուրաքանչյուրի հողատարածությունը ավելին չէր 5 հեկտարից, կազմում էին մինչև 1957 թվականը ՄԳՏԿ-ների մեջ ընդգրկված ամբողջ գյուղացիական տնտեսությունների համարյա կեսը, իսկ միջակ գյուղացիությունը, որոնցից յուրաքանչյուրի հողատարածությունը հասնում էր 15 հեկտարի, միայն՝ 37%, ապա 1957 թվականին կազմակերպված կոոպերատիվների մեջ միջակ գյուղացիությունը կազմում էր նրանցում ընդգրկված բոլոր գյուղացիական տնտեսությունների 44,6%։

Միջակ գյուղացիության մասսայական մասշտաբով ներգրավումը ՄԳՏԿ-ների մեջ նպաստեց ոչ միայն կոլտնտեսային շարժման հետագա վերելքին, այլ նաև՝ ՄԳՏԿ-ների ամրապնդմանը և խոշորացմանը. եթե 1955 թվականի հունիսին յուրաքանչյուր ՄԳՏԿ-ի մեջ (միջին հաշվով) ընդգրկված էին 270 գյուղացիական տնտեսություններ, ապա 1957 թվականի օգոստոսին նրանց թիվը հասավ 325-ի։ Բացի այդ, եթե նկատի ունենանք, որ միջակ գյուղացիության ձեռքումն էին գտնվում ավելի արդյունավետ և ընդարձակ հողատարածություններ, զգալի շարժական և անշարժ գյուղատնտեսական գույք, մեծ քանակությամբ անասուններ, ապա պարզ կլինի, թե ինչպես ամրապնդվեցին և խոշորացան ՄԳՏԿ-ները՝ նրանց մեջ միջակ գյուղացիությունը մասսայաբար ներգրավելու ճանապարհով. բավական է նշել, որ 1957 թվականի ամռանը յուրաքանչյուր ՄԳՏԿ-ին նրա անդամների տնամերձի հետ միասին միջին հաշվով բաժին էր ընկնում 280 հեկտար հողատարածություն, իսկ 1958 թվականի սկզբին՝ 320 հեկտար, ընդ որում առանց անդամների տնամերձ տարածությունների հաշվարկի։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շնորհիվ աճեց գյուղատնտեսական աշխատանքների արտադրողականությունը։ Բավական է նշել, որ 1930-ական թվականների համեմատ 1958 թվականին Չելյաբինսկի ցանքատարածությունները կրճատվել էին շուրջ կես միլիոն հեկտարի չափով[28]։ Միաժամանակ մոտ կիսով չափ (44%) կրճատվել էր Չելյաբինսկի

[28] 30-ական թվականների համեմատ Չելյաբինսկի ցանքատարածությունների նման կրճատումը բացատրվում է սահմանամերձ շրջանների, ուր կենտրոնացված էր երկրի ամբողջ ցանքատարածությունների 1/5 մասը, չելյաբինսկներով դանդաղ ու համեմատաբար նոսր վերաբնակեցմամբ (տես «Զեմլեդելական նովինի», 22.III.1958, «Սոտսիալիստիչեսկայա սելսկայա», 1958, № 2, «Ռուսսկոյե սելսկոյե», 11.II.1959)։

գյուղատնտեսության մեջ աշխատող ձեռքերի թիվը[29]։ Բայց գյուղատնտեսական աշխատանքների արտադրողականության շեշտակի վերելքի (մոտ 2 անգամ) հետևանքով 1958 թվականին Չեխոսլովակիայի գյուղատնտեսությունը լրիվ կերպով հասավ, իսկ որոշ ճյուղերի արտադրանքով արդեն գերազանցեց նախապատերազմյան մակարդակը։

Ըստ վերջին վիճակագրական տվյալների Չեխոսլովակիան գյուղատնտեսության ինտենսիվության տեսակետից (այսինքն՝ ըստ 1 հեկտարից ստացվող արտադրանքի) առաջ է անցել Անգլիայից, Ֆրանսիայից ու մի շարք այլ երկրներից և ներկայումս Եվրոպայում գրավում է 8-րդ տեղը։ Ցորենի արտադրության բացարձակ ծավալով Չեխոսլովակիան Եվրոպայում զբաղեցնում է 8-րդ տեղը, շաքարի ճակնդեղի և կարտոֆիլի արտադրության բացարձակ ծավալով՝ 6-րդ տեղը և այլն։ Բնակչության մեկ շնչին ընկնող ցորենի և կարտոֆիլի քանակով արդեն 1958 թվականին Չեխոսլովակիան առաջ անցավ Գերմանական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայից և Ֆրանսիայից։

Հատկապես մեծ հաջողություններ ձեռք բերվեցին Չեխոսլովակիայի անասնապահության սոցիալիստական վերակառուցման և զարգացման մեջ, որն իր արտադրանքի ծավալով արդեն 1956 թվականին գերազանցեց նախապատերազմյան մակարդակը։

Ըստ Չեխոսլովակիայի Գյուղատնտեսության մինիստրության տվյալների 1952—1955 թվականներին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ՄԳՏԿ-ներում աճել է 32% (ընդ որում կովերի գլխաքանակը՝ 39%), խոզերի՝ 63%, ոչխարների՝ 70% և այլն։ Արդեն 1957 թվականին Չեխոսլովակիայի գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորում էր կենտրոնացված երկրի խոշոր եղջերավոր անասունների 34%, խոզերի՝ 38,8%, ոչխարների՝ 59% և այլն։

ՄԳՏԿ-ներում անասունների գլխաքանակի նման աճին զուգընթաց աճեց յուրաքանչյուր անասունի տարեկան միջին մթերա-

---

[29] Գյուղատնտեսության մեջ աշխատող ձեռքերի նման կրճատումը բացատրվում է ոչ միայն օկուպացիայի տարիներին տված հսկայական մարդկային կորուստներով և ամբողջական գյուղերի կործանումով, այլ նաև սահմանամերձ շրջաններից գերմանացիների արտաքսմամբ։ Բացի այդ, երկրի արագ զարգացող արդյունաբերությունը կլանում էր զգալի քանակությամբ գյուղական աշխատավորներ (տես «Չեխոսլովենսկո մեժի IX—XI սյեզդեմ ԳՍԶ», էջ 80)։

տվությունը։ Այսպես, օրինակ, 1957 թվականին ՄԳՏԿ-ների III և IV տիպերում յուրաքանչյուր կովից միջին հաշվով ստացվել է 1775 լիտր կաթ, այն դեպքում, երբ մենատնտեսները ստացել են 1658 լիտր կաթ։ Անասնապահության ինտենսիվության տեսակետից Չեխոսլովակիան հասավ և անցավ այնպիսի զարգացած երկրներից, ինչպիսին էին Անգլիան, Ֆրանսիան և անգամ ԱՄՆ-ը։ Եթե 1956 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների անասնապահական յուրաքանչյուր հեկտարից միջին հաշվով ստացվել է 128 լիտր կաթ և 28,2 կգ միս, ապա Չեխոսլովակիայում ստացվել է 510 լիտր կաթ և 68,1 կգ միս։

Սիասնական գյուղատնտեսական կոոպերատիվներից բացի, Չեխոսլովակիայի գյուղատնտեսության մեջ կարևոր դեր են խաղում պետական հողագործական տնտեսությունները (ՊՀԳՏ-ները, կամ, ինչպես անվանում են՝ պետական տնտեսությունները, գոսխոզները), որոնք երկրի գյուղատնտեսության սոցիալիստական կազմակերպման հիմնական, համեմատաբար ավելի բարձր ձևն են և շատ բաներով հիշեցնում են մեր սովխոզներին։ 1958 թվականին երկրում հաշվվում էր 164 խոշոր պետական հողագործական տնտեսություն, որոնց ձեռքումն էր կենտրոնացված երկրի ամբողջ գյուղատնտեսական հողատարածությունների 14% և վարելահողերի՝ 14,2%[30]։

Գոսխոզները աչքի են ընկնում գյուղատնտեսական աշխատանքների բարձր մեքենայացմամբ։ 1959 թվականի սկզբին նրանց տրամադրության տակ էր գտնվում երկրի սոցիալիստական սեկտորի ամբողջ տրակտորների 18%, կոմբայնների 25% և բազմաթիվ գյուղատնտեսական այլ մեքենաներ։

Պետական հողագործական տնտեսություններում, ինչպես և ՄԳՏԿ-ներում յուրաքանչյուր հեկտարի տարեկան միջին բերքավությունը անհամեմատ ավելին է, քան մանրապրանքային տնտեսություններում։ Այսպես, օրինակ, 1957 թվականին մենատնտեսների համեմատությամբ ՊՀԳՏ-ներում յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 2,5 ցենտներ ավելի ցորեն, 1,3 ցենտներ գարի, 14

---

[30] Տես «Ziemědělské noviny», 1960, էջ 114։ Եթե 1949 թվականի սկզբին պետական տնտեսությունները գրաղեցնում էին երկրի գյուղատնտեսական հողատարածությունների ընդամենը 1,9%, ապա տարեվերջին նրանք գրաղեցնում էին արդեն 6,0%, 1950 թ.՝ 7,7%, 1951 թ.՝ 8,2%, 1954 թ.՝ 9,8%, 1955 թ.՝ 10,75% (տես Suchý-Vrba. Základy organisace státních statků. Praha, 1955, str. 17)։

տոննա ավելի շաքարի ճակնդեղ և այլն: Գոսխոզներում զգալի տարածում է ստացել բարձր տեսակի սերմերի և պտղատու ծառերի բազմացումը, որը մեծ նշանակություն ունի երկրի գյուղատնտեսական և պտղաբուծական կուլտուրաների արագի բարձրացման և տեսակների բազմացման գործում:

Պետական հողագործական տնտեսությունները զգալի նվաճումներ ունեն նաև անասնապահության և անասնաբուծության ասպարեզում: Անասունների միջին մթերատվությունը ՊՀԳՏ-ներում, որպես կանոն, բարձր է, քան ՄԳՏԿ-ներում և անհամեմատ բարձր, քան անհատական տնտեսություններում[31]: Բավական է նշել, որ 1957 թվականին մենատնտեսները յուրաքանչյուր կովից (միջին հաշվով) ստացել են 1658 լիտր կաթ, իսկ ՊՀԳՏ-ները՝ 2240 լիտր կաթ և այլն:

Չնայած այն բանին, որ գոսխոզների տեսակարար կշիռը երկրի գյուղատնտեսության մեջ այնքան էլ մեծ չէ, նրանք նշանակալից դեր են խաղում բնակչությանը գյուղատնտեսական մթերքներով բավարարելու համապետական լուրջ գործում: Բավական է նշել, որ 1955 թվականին գոսխոզները զբաղեցնում էին երկրի գյուղատնտեսական հողատարածությունների ընդամենը 10,75%, իսկ վարելահողերի՝ 11,37%, բայց տալիս էին պետական ամբողջ հացամթերումների 13%, մսամթերումների՝ դրեթե 20%, ձիթապտղատուբուսների մթերման՝ 27%, արակչալ սերմերի և ծառատեսակների՝ շուրջ 30% և այլն:

Շնորհիվ ՉԿՊ և կառավարության հմուտ քաղաքականության, շեշտակի աճել է երկրի գյուղատնտեսության ապրանքային արտադրությունը. եթե Չեխոսլովակիայի գյուղատնտեսության արտադրանքի ընդհանուր ծավալը 1959 թվականին աճել է (1949 թվականի համեմատ) 20%, ապա նրա ապրանքային արտադրանքը աճել է 55,7%:

Չեխոսլովակիայի գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը ներկայումս երկրի գյուղատնտեսության մեջ առաջատար տեղ է գրավում ոչ միայն իր մշակած հողատարածություններով (6,3 միլիոն հեկտար, որը կազմում է երկրի ամբողջ վարելահողերի 86,2%), այլ նաև իր գյուղատնտեսական մթերքների բացարձակ և

---

[31] Այսպես, օրինակ, ՊՀԳՏ-ներում յուրաքանչյուր կովից 1955 թվականին ստացվել է 35,5% ավելի կաթ, քան ՄԳՏԿ-ներում և 43% ավելի կաթ, քան անհատական տնտեսություններում (տես «Ռուդե պրավո», 13.VII.1956):

ապրանքային արտադրության ծավալով։ Կարևորն այն է, որ երկրի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրոցեսում ոչ միայն չկրճատվեց գյուղատնտեսության արտադրանքի ծավալը, այլ այն մի շարք ճյուղերում, հատկապես անասնապահության բնագավառում, զգալի աճեց։

«Մենք հիմնականում վճռել ենք անցման ժամանակաշրջանի ամենաբարդ խնդիրներից մեկը՝ գյուղատնտեսության կոոպերացումը,—ընդգծեց Անտոնին Նովոտնին 1960 թվականի մայիսին,— ...Մենք կարևոր ենք համարում այն փաստը, որ մեր գյուղատնտեսական արտադրությունը կոոպերացման պրոցեսի ընթացքում չի կրճատվել, այլ, ընդհակառակը, որոշ ճյուղերում աճել է։ Ընդ որում շնորհիվ խոշոր տնտեսությունների հնարավորությունների ավելի լավ օգտագործման աշխատանքի արտադրողականությունը կոոպերատիվներում և պետական տնտեսություններում նախապատերազմյան մակարդակի համեմատ աճել է շուրջ 2 անգամ»[32]։

Չնայած գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և նրա զարգացման ասպարեզում ձեռք բերած հսկայական նվաճումներին, այն դեռևս մեծ չափով ետ է մնում Չեխոսլովակիայի ժողովրդական տնտեսության զարգացման մյուս ճյուղերից և, առաջին հերթին, արդյունաբերությունից։ Այս անհամամասնության հիմնական պատճառն այն է, որ արդյունաբերությունը կարճ ժամանակամիջոցում, գրեթե մեկից (2,5 տարվա ընթացքում) ամբողջությամբ վերակառուցվեց սոցիալիստական հիմքերի վրա և սկսեց արագ զարգանալ, իսկ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը տևեց շուրջ 12 տարի, որի ընթացքում մանր մասնավոր ցածրարտադրողական տնտեսությունները, պահպանելով իրենց որոշակի տեսակարար կշիռը[33], խոչընդոտում էին գյուղատնտեսության արագ զարգացմանը։

1960 թվականին հիմնականում ավարտվեց Չեխոսլովակիայի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրոցեսը, որը միաժամանակ նշանակում էր երկրում սոցիալիզմի հաղթանակ։ Սոցիալիզմի հաղթանակի հարցը մարքսիզմի կլասիկները

---

[32] „Правда", 4.V.1960.

[33] Բավական է նշել, որ անդամ 1959 թվականի վերջին գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը (ՊՀԳՏ-ները և ՄԳՏԿ-ները) զբաղեցնում էր մոտ 6 միլիոն հեկտար հողատարածություն, իսկ մանր և միջակ մենատնտես գյուղացիների ձեռքում դեռևս գտնվում էր շուրջ 1,6 միլիոն հեկտար հող (տես «Ռուդե պրավո», 9.II.1960)։

միշտ էլ կապել են գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցի հետ։ Բազմիցս անդրադառնալով այդ օրգանական կապին, Վ. Ի. Լենինը ընդգծել է, որ բուրժուազիայի նկատմամբ պրոլետարիատի տարած հաղթանակի դեպքում, արտադրողական միջոցների հանրային սեփականության դեպքում կոոպերատիվ կարգը «հենց սոցիալիզմի հասարակակարգն է»[34]։

Չեխոսլովակիայի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պրակտիկան մեկ անգամ ևս հաստատեց լենինյան կոոպերատիվ պլանի սկզբունքային ճշտությունը, նրա միջազգային նշանակությունը և հարված հասցրեց ռևիզիոնիստներին, որոնք պնդել և պնդում են, որ այդ պլանը կենսագործելի է միայն Ռուսաստանի պայմաններում[35]։

3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Չեխոսլովակիայում վերջ է տրված մարդու կողմից մարդու շահագործման բոլոր ձևերին, վերացված գործազրկությունը և կապիտալիզմի մյուս խոցերն ու արատները։ Սոցիալիզմի տնտեսական օրենքները ամենայն խորությամբ և լայնությամբ ծավալվել են երկրում։ Մարդու բազմակողմանի և հարաճուն պահանջմունքները դարձել են Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի և կառավարության ամբողջ քաղաքականության առանցքը, նրանց ելման կետը։ Սոցիալիստական շինարարության և սոցիալիզմի կառուցման օրինաչափ արդյունքը հանդիսացավ ժողովրդական լայն մասսաների նյութական մակարդակի անշեղ վերելքը։

Ազգային եկամուտը, որը երկրի տնտեսական հզորության և բնակչության բարեկեցության ընդհանուր ցուցանիշն է, սոցիալիստական շինարարության տարիներին ունեցել է աճի հետևյալ պատկերը (1948 թ.=100)[36]։

1949	1950	1951	1952	1953	1954	1955	1956	1957	1958	1959
114	126	137	150	159	165	179	189	203	219	222

Ազգային եկամտի նման աճը, որպիսին չի տեսել և ոչ մի կա-

---

[34] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 33, էջ 560։

[35] Տես «Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը» Երևան, 1960, էջ 19։

[36] Տվյալները վերցված են «Ստատիստիկի ռուչնիկա», 1958, էջ 281, „Statistický obzor", 1958, № 2 (հետագայում — «Ստատիստիկի օրգոր») և «Ռուդե պրավո», 11.II.1959 և 9.II.1960։

պիտալիստական երկիր, արդյունք է ժողովրդական անտեսության բուռն վերելքի, ժողովրդական լայն մասսաների անձնուրաց բեղմնավոր աշխատանքի։

Աղգային եկամտի շուրջ $^3/_4$ մասը, որը անվանվում է սպառման ֆոնդ, ծախսվում է բնակչության նյութական ու կուլտուրական հարաճուն պահանջմունքների բավարարման վրա։ Ընդ որում դրա կեսից ավելին, որպես կանոն, ծախսվում է բնակչության զուտ անձնական պահանջմունքների բավարարման վրա։

Չեխոսլովակիայի ազգային եկամտի բաշխման փոքրիշատե ամբողջական պատկերը (արտահայտված տոկոսներով) հետևյալն է.

Աղգային եկամուտ	1948 թ.	1953 թ.	1954 թ.	1955 թ.	1956 թ.	1958 թ.
Կուտակման ֆոնդ	31	25,7	19,5	26	25	—
Սպառման ֆոնդ	69	74,3	80,5	74	75	—
Վերջինում՝						
Անձնական սպառման ֆոնդ	64	57,0	58,0	65	65	73

Տրամագծորեն հակադիր պատկեր ունի ազգային եկամտի բաշխումը կապիտալիստական աշխարհում. ըստ պաշտոնական տվյալների ԱՄՆ-ի բնակչության 1 տոկոսը տիրապետում է ազգային եկամտի 59 տոկոսին, իսկ աշխատավորական մասսաներին, որոնք կազմում են բնակչության 87 տոկոսը, բաժին է ընկնում ազգային եկամտի միայն 8 տոկոսը։

Սոցիալիստական շինարարության տարիներին անշեղորեն աճել են աշխատավորական լայն մասսաների դրամական եկամուտները, առաջին հերթին՝ նոմինալ աշխատավարձը. ընդ որում վերացվել է կնոջ և տղամարդու աշխատավարձի տարբերությունը, որը միջնադարյան ժամանակաշրջանում հասնում էր 40%։ Բանվորների և ծառայողների ամսական միջին նոմինալ աշխատավարձը աճել է 72%։ Ընդամենը, արդյունաբերական բանվորների աշխատավարձը, որը 1948 թ. կազմում էր 715 քրոն, գրեթե կրկնապատկվել է. արդեն 1959 թվականին այն հասավ 1380 քրոնի։

Գրեթե նույն չափով աճել են նաև կոոպերատիվ գյուղացիության եկամուտները։ Որպես կանոն, ՄԳՏԿ-ների տարեկան եկամուտների 80%-ը ծախսվում է կոոպերատիվ գյուղացիության անձնական պահանջմունքների բավարարման վրա և միայն 20% ընդ-

դրկվում կոոպերատիվային ֆոնդի մեջ ու ծախսվում նրանց արտադրական-տեխնիկական բազան ամրապնդելու և ընդլայնելու վրա։ Ընդամենը տարեցտարի աճել է ՄԳՏԿ-ներից վերցվող պետական պարտադիր մթերումների արժեքը։ Այսպես, օրինակ, եթե գյուղատնտեսական ապրանքների պետական պարտադիր մթերումների 1952 թվականի արժեքը ընդունենք 100, ապա 1953 թվականին այն կլինի 110, 1954 թվականին՝ 126, 1955 թվականին՝ 142 և այդպես շարունակ։

Աշխատավորական լայն մասսաների նոմինալ աշխատավարձի բարձրացումը Չեխոսլովակիայի Կոմպարտիան և կառավարությունը դուգորդեցին երկու դրամական ռեֆորմով (1945 թ. և 1953 թ.), որոնք վերջ դրեցին չեխոսլովակյան քրոնի ինֆլյացիային և բարձրացրեցին նրա արժողությունը։ 1953 թվականի հունիսի 1-ին ամբողջովին վերացվեցին քարտային սիստեմը, ապրանքների երկակի (քարտային և շուկայական) գները և այլն։

Այդ միջոցառումները, ինչպես ընդգծել է Անատոլի Նովոտնին ՉԿԿ XI համագումարին Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ, հանգիստացան «որակական շրջադարձ՝ հիմք դնելով բնակչության ռեալ եկամուտների անընդհատ աճին»[37]։

Աշխատավորական լայն մասսաների նոմինալ աշխատավարձի և դրամական միավորի արժողության բարձրացումը համակցվեց լայն սպառման առարկաների գների սիստեմատիկ իջեցման հետ, որի արդյունքը եղավ աշխատավորական զանգվածների ռեալ աշխատավարձի անշեղ և շեշտակի վերելքը։ Այսպես, օրինակ, 1953—1959 թվականների ընթացքում 7 անգամ անց է կացվել մթերային և արդյունաբերական ապրանքների պետական հատուցման գների իջեցում, որից բնակչությունը տարեկան ստանում է 17,2 միլիարդ քրոնի տնտեսում։

Եթե բանվորների և ծառայողների նոմինալ աշխատավարձի, ապրուստի (կյանքի) արժողության և ռեալ աշխատավարձի 1953 թվականի մակարդակը ընդունենք 100, ապա նրանց զարգացման առավել ընդհանուր պատկերը կլինի հետևյալը (տե՛ս հաջորդ էջի ուղղակը)։

Տվյալները վկայում են, որ տարեցտարի աճում է Չեխոսլովակիայի բանվորների ու ծառայողների նոմինալ աշխատավարձը, նվազում կյանքի արժողությունը, որի հետևանքով շեշտակի վերելք է ապրում նրանց ռեալ աշխատավարձը, բարելավվում ապրելակերպը։

[37] „XI съезд КПЧ", М., 1959, стр. 74.

Աշխատավորական լայն զանգվածների ռեալ աշխատավարձի, տպրելակերպի վերելքը զուգորդվում է աշխատանքային օրվա տևողության կրճատման հետ։ Արդեն 1956 թվականին աշխատանքային շաբաթը կրճատվեց և հասցվեց 46 ժամի, իսկ մինչև 16 տարեկանների համար սահմանվեց 36-ժամյա աշխատանքային շաբաթ, այսինքն՝ աշխատանքային օրվա միջին տևողություն սահմանվեց 7,6 ժամ, իսկ դեռահասների համար՝ 6 ժամ։

	1954	1955	1956	1957	1958	1959
Նոմինալ աշխատավարձ	106,8	109,3	113,5	115,7	118,2	120,2
Ապրանքի արժողություն	96,7	94,1	91,7	89,9	89,7	86,8
Ռեալ աշխատավարձ	110,5	116,1	123,8	128,8	131,8	138,5

Ռեալ աշխատավարձի և ռեալ եկամուտների բարձրացման շնորհիվ անընդհատ աճում է Չեխոսլովակիայի բնակչության, ինչպես և նրա յուրաքանչյուր շնչի գնողունակությունը և, որ առավել կարևոր է, սպառողականությունը։

Չեխոսլովակիայի բնակչության յուրաքանչյուր շնչի կողմից միջին հաշվով կարևորագույն սննդամթերքների օգտագործման աճի պատկերը հետևյալն է (տես հաջորդ էջի առաջին աղյուսակը)[38]։

Տվյալները վկայում են ոչ միայն Չեխոսլովակիայի բնակչության յուրաքանչյուր շնչի կողմից (միջին հաշվով) կարևորագույն սննդամթերքների օգտագործման շեշտակի աճի մասին, այլ նաև համեղ և կալորիալի սննդամթերքների առավել օգտագործման մասին. այսպես, նշանակալից չափով աճել է մսի, թռչունի, յուղերի, ցորենից պատրաստված հացաբուլկեղենի, ձվի, շաքարի, բանջարեղենի և մրգերի օգտագործումը, այն դեպքում, երբ նվազել է հաճարի հացի և կարտոֆիլի օգտագործումը։ Արդեն 1956 թվականին ռեսպուբլիկայի բնակչության յուրաքանչյուր շնչի օրվա ընթացքում օգտագործած սննդամթերքների կալորիականությունը հասավ 3099 կալորիայի, որը 554 կալորիայով ավելին էր 1936 թվականի մակարդակից[39] և 91 կալորիայով ավելի՝ դիետականորեն նախատեսված չափից։

[38] Տես „Мировая экономика и международные отношения", 1960, № 5, стр. 42 (աղյուսակը մեջ է բերված որոշ կրճատումներով)։

[39] 1936 թվականին, որը ռեսպուբլիկայի միջնադարյան ժամանակաշրջանի ամենաբարեկեցիկ տարին էր, բնակչության յուրաքանչյուր շնչին

Բնակչության զնողունակության և սպառողականության աճի փաստն ապացուցվեցին ոչ նաև երկրում մթերային և արդյունա-

Սննդամթերքներ	Չափի միավոր	1936	1948	1958
Միս	կգ.	34,0	28,9	53,9
Թռչուն	»	2,5	1,9	4,1
Ձուկ	»	2,1	4,2	3,6
Յուղեր	»	14,1	10,5	17,5
Հացաբուլկեղեն (ցորենի)	»	11,7	11,4	21,0
Հաճարի հաց	»	84,7	74,8	74,5
Ձու.	հատ	138	114	170
Շաքար	կգ.	23,2	22,3	34,9
Կարտոֆիլ	»	118,9	113,5	107,3
Բանջարեղեն	»	65,5	92,2	77,1
Մրգեր	»	42,9	55,0	61,5

բերական ապրանքների վաճառքի ընդլայնումը, որի պատկերը (հաշված ընթացիկ գներով և արտահայտած միլիարդ քրոններով) հետևյալն է.

Հատավաճառ ապրանքաշրջանառություն	1949 թ.	1953 թ.	1957 թ.	1959 թ.
Ամբողջությամբ վերցրած	52,5	61,0	91,1	94,9
Այդ թվում՝				
Արդյունաբերական ապրանքներ	22,1	22,4	41,3	42,7
Մթերային ապրանքներ	30,4	38,6	49,8	52,2

Աղյուսակի տվյալները վկայում են, որ հիշյալ տասնամյակում վերընթաց կորագծով աճել է բնակչությանը վաճառվող արդյունա-

---

ընկնող օրական սննդամթերքների միջին կալորիականությունը 15,4% պակաս էր մարդու օրգանիզմին անհրաժեշտ սննդամթերքների օրական միջին կալորիականության դիտակետերին նախատեսված մակարդակից: Ընդսմին, եթե անգամ վերանալու լինենք բուրժուական վիճակագրության հանրահայտ կեղծիքներից, այնուամենայնիվ պետք է նկատի ունենանք, որ 1936 թվականի այսպես կոչված «միջին» տվյալները, որոնք վաղուց արդեն բացարձակորեն դերպազանցված են, վերաբերում են անտագոնիստական հասարակարգի, ուր մի բուռն իշխողներ ցոփությունից հղփանում են, ճարպակալում, իսկ աշխատավորները՝ հեծում կիսաքաղցի ճիրաններում և հյուծվում:

բերական և մթերային ապրանքների քանակը: Ընդ որում համեմատաբար ավելի շատ է աճել արդյունաբերական ապրանքների և, հատկապես՝ արդյունաբերական այն ապրանքների վաճառքը, որոնք երկարատև գործածական են, ինչպես, օրինակ, կենցաղային սառնարանների, լվացքի մեքենաների և փոշեծծիչների, ռադիոընդունիչների և հեռուստացույցների, հեծանիվների, մոտոցիկլետների, ավտոմեքենաների և այլն: Եթե բնակչությանը վաճառվող արդյունաբերական և մթերային ապրանքների վաճառքի տոկոսային փոխհարաբերությունը 1953 թվականին կազմում էր 37:63, ապա 1959 թվականին այն կազմում էր 45:55: Պետական հատավաճառ ապրանքաշրջանառության կառուցվածքային վերոհիշյալ տեղաշարժը վկայում է բնակչության սննդամթերքներով հագեցվածության մասին, որովհետև մարդը, բնականաբար, առաջին հերթին բավարարում է իր ստամոքսի պահանջը, ապա նոր միայն մտածում կենցաղային սառնարանի, կահույքի, սեփական ավտոմեքենայի և նման այլ արդյունաբերական-կենցաղային ապրանքների ձեռքբերման մասին:

Չեխոսլովակիայի բնակչության սննդամթերքներով հագեցումը հասել է այնպիսի աստիճանի, որ նա գնալով ավելի լայն հնարավորություններ է ստանում բավարարելու իր նաև կենցաղային արդյունաբերական ապրանքների պահանջմունքները: Այսպես, օրինակ, եթե 1949 թվականին բնակչությունը հնարավորություն է ունեցել գնելու ընդամենը 46,5 հազար հատ կենցաղային սառնարան, լվացքի և կարի մեքենաներ, ապա 1957 թվականին նա գնել է այդպիսիք 396 հազար հատ, այսինքն՝ 8,5 անգամ ավելի:

Ուշադրավ է, որ գյուղական բնակչության սննդամթերքներով բավարարվածության հետևանքով գնալով աճում է նաև նրա կողմից կենցաղային արդյունաբերական հարատև օգտագործման ապրանքների գնումը, որը նպաստում է քաղաքի և գյուղի բնակչության կենցաղային մակարդակների միջև եղած տարբերության վերացմանը: Այսպես, օրինակ, 1954 թվականի համեմատ էլեկտրական լվացքի մեքենաների թիվը յուրաքանչյուր գյուղում (միջին հաշվով) 1955 թվականին աճել է 4 անգամ, իսկ 1956 թվականին նախորդ տարվա համեմատությամբ աճել է 6 անգամ: Մեկ տարվա ընթացքում (1956) միայն չեխական հողերում 1239 գյուղացիներ գնել են սեփական մարդատար ավտոմեքենաներ:

Չեխոսլովակիան արդեն զգալի նվաճումներ է ձեռք բերել բնակչության նաև արդյունաբերական հարատև օգտագործման ապ-

բանքներով հագեցման ասպարեզում։ Բավական է նշել, որ 1957 թվականի վերջին Չելյաբինսկի բնակչության յուրաքանչյուր 26 ընտանիքներից մեկը արդեն ուներ սեփական մարդատար ավտոմեքենա, 21-ից մեկը՝ կենցաղային սառնարան, 19-ից մեկը՝ հեռուստացույց, 7-ից մեկը՝ մոտոցիկլետ, 2-ից մեկը՝ լվացքի մեքենա և այլն։

ՉԿՊ Կենտկոմի 1959 թվականի Մարտյան պլենումը քննարկեց և ընդունեց հանդամանալից որոշում բնակչության կենսամակարդակի հետագա բարելավման մասին։ Այդ պատմական որոշման մեջ նախատեսված է միջոցառումների ամբողջ մի շարք, որոնց կենսագործումը ապահովում է բնակչության նյութական մակարդակի աննախընթաց վերելք։

ՉԿՊ և կառավարությունը մեծ հոգ են տանում բնակչության սոցիալական ապահովագրության ուղղությամբ, որը նրա բարեկեցության կարևոր ցուցանիշներից մեկն է։ Ըստ 1948 թվականի հոկտեմբերի 1-ի սոցիալական ապահովագրության օրենքի երկրի բոլոր աշխատավորները և նրանց ընտանիքի անդամները հաշմանդամության, ընտանիքի սնուցողի կորստյան ու ծերության (կանայք՝ 55 տարեկանից, տղամարդիկ՝ 60 տարեկանից) և հիվանդության դեպքում ստանում են պետական նպաստի իրավունք։ Տարեցտարի աճում են բնակչության վրա կատարվող պետական սոցիալական ապահովագրական ծախսերը, որոնք արդեն 1957 թվականին մի քանի անգամ գերազանցում էին նախապատերազմյան ժամանակաշրջանում այդ ուղղությամբ կատարված ծախսերը։ Ծերերին և հիվանդներին տրվող պետական թոշակաչափով ներկայումս Չելյաբինսկն աշխարհում գրավում է առաջին տեղը։ Հիվանդանոցային բուժումը, ինչպես և դեղորայքը լրիվ անվճար են։

Ընտանիքավորները՝ կախված նրանց աշխատավարձի չափից և երեխաների քանակից, ստանում են հատուկ, այսպես կոչված՝ երեխաների դաստիարակության պետական նպաստ։ Ընդ որում 1948—1959 թթ. ընթացքում կառավարությունը այդ ուղղությամբ կատարվող ծախսերը ընդլայնել է ավելի քան 5 անգամ և հասցրել հսկայական գումարի՝ 4 միլիարդ քրոնի։

Մեծ արտոնություններով են օժտված չելյաբինսկյան կանայք, որոնք կազմում են երկրի ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բոլոր աշխատավորների 42,2%։ Նրանք պետությունից ստանում են հղիության, ծննդաբերության և օժիտի նպաստ, որոնց ընդհանուր գումարը եթե 1937 թվականին կազմում էր ընդամենը 92 մի-



Նորակառույց բնակելի շենքեր Բրատիսլավայի կենտրոնում՝ Ֆերբուարովյան փողոցի վրա

լիոն քրոն, ապա 1956 թվականին այն արդեն հասավ 403 միլիոն քրոնի, այսինքն՝ աճեց 4,5 անգամ։

Երկրում մեծ թափ է ստացել բնակարանային շինարարությունը, որը բնակչության ապրելամակարդակի բարելավման հիմնական ապացույցներից է։ Բավական է նշել, որ ընդամենը 10 տարվա ընթացքում (1948—1958) պետության կողմից կառուցվել և աշխատավորներին են բաժանվել ավելի քան 450 հազար բնակարաններ, որ յուրաքանչյուր շնչին ընկնում է 12 քառակուսի մետր բնակելի տարածություն (չհաշված խոհանոցը), որ բնակարանային վարձը 1937 թվականի համեմատ նվազել է 3—4 անգամ և կազմում է բանվորական ընտանիքի միջին ծախսերի հազիվ 2—2,5 տոկոսը։

Մինչև 1970 թվականը նախատեսված է շահագործման հանձնել 1200 հազար նորակառույց բնակարաններ, որով և վերջնականապես լուծել երկրում բնակարանային պահանջը։ Ընդ որում չայն տարածում է գտել տիպային՝ երկսենյականի, մեկուսացված, կոմունալ բոլոր հարմարություններով ապահովված բնակարանների կառուցումը։

Չեխոսլովակիայի Կոմպարտիան և կառավարությունը մեծ ուշադրություն են դարձնում բնակչության սան-հիգիենիկ և առողջապահական պայմանների բարելավման վրա։ Եթե 1937 թվականին մեկ բժիշկը սպասարկում էր 1218 բնակչի, ապա 1958 թվականին նա սպասարկում էր ընդամենը 610 բնակչի։ Ավելի քան երկու անգամ աճել է հիվանդանոցային մահճակալների թիվը և հասել 100 հազարի. եթե 1937 թվականին երկրի յուրաքանչյուր հազար բնակչին բաժին էր ընկնում 3,3 հիվանդանոցային մահճակալ, ապա 1957 թվականին արդեն բաժին էր ընկնում 7,2։

Երկրի աշխարհահռչակ առողջարանները, ինչպիսին են՝ Կարլովի Վարի[40], Մարիանսկե Լազնե, Տրենչիանսկե Տեպլիցի, Վիշնի Դապի, Պիեշտյանի և այլն, վերակառուցվել են և տարին բոլոր աշխատում են։ Կուրորտների բուժարանները տարեկան սպասարկում են ավելի քան 20 հազար աշխատավորների։

1945 թվականին երկրում հիմնվեցին արհմիութենական առաջին հանդստյան տները, որոնց թիվն ու հնարավորություններն անընդհատ աճում են. 1946 թվականին նրանցում արդեն իրենց հանդիստն անցկացրին 36 հազար աշխատավորներ, իսկ 1957 թվակա-

---

[40] Ի դեպ նշենք, որ Կարլովի Վարիի հանքաջրերից երկուսը իրենց քիմիական բաղադրությամբ գրեթե նույնն են, ինչ Հայկական ՍՍՌ Ջերմուկի հանքաջուրը։

Մի տեսարան Կարլովի Վարիից

նին՝ 239 հազար։ Ընդ որում պրոֆմիութենական հանդստյան տներում հանգստացողները, որպես կանոն, վճարում են ճանապարհային ծախսերի միայն կեսը և օրական ընդամենը 10 քրոն։ Շատ դեպքերում պրոֆմիությունները այդ ծախսերը ևս հատուցում են։ Երկրում լայնորեն տարածված են ալպինիզմը, տուրիզմը և սպորտը, որոնք կրում են բացառիկ մասսայական բնույթ։

Կառավարությունը մեծ հոգատարություն է ցուցաբերում մոր և մանկան նկատմամբ։ 18 շաբաթ է սահմանված հղիության վճարովի արձակուրդը։ 1958 թվականի սկզբին երկրում հաշվվում էին 6539 կանանց և երեխաների կոնսուլտացիաներ, 1167 մանկամուրներ, այսինքն՝ այդպիսիների թիվը նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատ գրեթե հնգապատկվել էր։

Վերոհիշյալ միջոցառումները նպաստեցին Չեխոսլովակիայի բնակչության մահացության նվազմանը և բնական աճի բարձրացմանը. եթե նախապատերազմյան ժամանակաշրջանում բնակչության տարեկան աճը հազիվ էր հասնում 0,3—0,4 տոկոսի, ապա ներկայումս այն 1 տոկոսից ավելին է։ Ըստ բուրժուական վիճակագրության տվյալների, մինչմյունխենյան Չեխոսլովակիայում տղամարդու կյանքի միջին տևողությունը 51,9 տարի էր, իսկ կնոջը՝ 55,2 տարի։ 1958 թվականի տվյալներով այդ տենդենցիոզ թվերն անգամ գերազանցվել են մեծ չափով և տղամարդու կյանքի միջին տևողությունը հասել է 66,7 տարվա, իսկ կնոջը՝ 71,6 տարվա։

4. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ

Ելնելով մարքսիստական այն դրույթից, որ սոցիալիզմի կառուցումն անհնարին է առանց կուլտուրայի, դիտության, արվեստի և գրականության սոցիալիստական վերակառուցման և զարգացման, առանց կուլտուրական ռևոլյուցիայի, ՉԿՊ և ժողովրդա-դեմոկրատական կառավարությունը մշտապես մեծ ուշադրություն են դարձնում երկրի կուլտուրական շինարարությանը։ Դեռևս Կոշիցյան ծրագրում շեշտված էր, որ երկրի աղատագրումից անմիջապես հետո կուլտուրայի ասպարեզում «կանցկացվի հետևողական դեմոկրատականացում, ընդ որում ոչ միայն ժողովրդի ամենալայն խավերին դպրոցները և կրթության ու կուլտուրայի մյուս աղբյուրները լրիվ մատչելի դարձնելու իմաստով, այլ նաև գաղափարական տեսակետից՝ բուն կրթական սիստեմի և հենց կուլտուրայի, ժողովրդին այնպես մոտեցնելու իմաստով, որպեսզի դրանք ծա-

ռայեն ոչ թե Հասարակության նեղ շերտի, այլ ամբողջ ժողովրդին և ամբողջ ազգին»։

Ժողովրդա-դեմոկրատական կարգերի զարգացման առաջին էտապում, որն ընդգրկում էր, ինչպես վերը տեսանք, 1945—1948 թթ., ՉԿՊ համառ. և հետևողական պայքար էր մղում կրթական սիստեմի մինչև վերջը դեմոկրատականացման, լայն դեմոկրատական հիմքերի վրա կուլտուրայի բոլոր առաջադեմ գործիչներին միավորելու, գաղափարախոսության ասպարեզում ռեակցիային ընկճելու և Կոշիցյան ծրագիրը կենսագործելու համար։ Բայց մինչև 1948 թվականը, մինչև սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը չեխոսլովակյան ռեակցիան, որը զգալի դիրքեր էր գրաղեցնում նաև ժողովրդական կրթության և կուլտուրայի ասպարեզում, ամեն կերպ խոչընդոտում էր Կոմպարտիայի բոլոր ձեռնարկումներին։

Գաղափարախոսության և կուլտուրայի ասպարեզում ռեակցիայի դեմ մղած համառ և հետևողական պայքարի բովում ՉԿՊ կարողացավ իր շուրջը համախմբել կուլտուրայի առաջադեմ գործիչներին, նշանակալից չափով դեմոկրատականացնել ժողովրդական կրթության ու լուսավորության գործը, որով և ստեղծեց ռեալ նախադրյալներ երկրում փետրվարյան հաղթանակից անմիջապես հետո կուլտուրական ռևոլյուցիայի անցնելու համար։

Կուլտուրական հեղաշրջումը Չեխոսլովակիայում ծավալվեց որոշակի նպաստավոր պայմաններում, քան այն տեղի ունեցավ ՍՍՌՄ-ում։ Կապված կապիտալիզմի զարգացման բարձր մակարդակի հետ համեմատաբար բարձր էր նաև Չեխոսլովակիայի բնակչության, հատկապես՝ բանվոր դասակարգի կուլտուրական մակարդակը, որը հեշտացնում էր երկրում կուլտուրական ռևոլյուցիայի գործը։ Բայց այն ուներ նաև իր բացասական կողմը։ Մինչպատերազմյան Չեխոսլովակիայի բուրժուա-դեմոկրատական հասարակական-պետական կարգը բուրժուական գաղափարախոսությանը տվել էր լայն հնարավորություններ բնակչության և, հատկապես՝ նրա միջին խավերի դիտակցության մեջ արձակել խոր արմատներ, որը դժվարացնում էր երկրում կուլտուրական ռևոլյուցիայի գործը։

Չեխոսլովակյան կուլտուրան ուներ ոչ միայն դրական դեմոկրատական սովորություններ և դեմոկրատական կուլտուրայի այնպիսի կարկառուն ներկայացուցիչներ, ինչպիսին էին գյուղացիական ռևոլյուցիոն պատերազմների գաղափարախոս Յան Հուսը,

ազգային դիտությունն և կուլտուրայի հիմնադիրներ՝ մանկավարժ Յա. Ա. Կոմենսկին, դրամատուրգ Ի. Կ. Տիլը, բանաստեղծ Կ. Գ. Մախը, գրող Բ. Նեմցովան, պատմաբան Ֆ. Պալացկին, բիոլոգ Յա. Է. Պուրկինյեն, հրապարակախոս Կ. Գավլիչեկ-Բորովսկին, բանաստեղծ և գրող Յան Ներուդան, կոմպոզիտոր Բ. Սմետանան, նկարիչ Մ. Ալեշը, երգիծաբան Յա. Գաշեկը և շատ ու շատ ուրիշներ։

Չեխոսլովակյան կուլտուրան ուներ նաև հանուն պրոլետարական կուլտուրայի պայքարում կուփված այնպիսի մարտիկներ, ինչպիսին էին Զդենեկ Նեդվին, Իրժի Վոլկերը, Ս. Կ. Նեյմանը, Վիտեզսլավ Նեզվալը, Մարիա Մայերովան, Իվան Օլբրախը և տասնյակ ուրիշներ, որոնց աշխարհայացքը ձևավորվել էր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ազդեցության տակ և որոնք արդեն 20-ական թվականներին իրենց տաղանդն ու գրիչը նվիրել էին պրոլետարիատի, Կոմունիստական պարտիայի ազատագրական պայքարին։

ՍՍՌՄ-ում սոցիալիստական շինարարության և սոցիալիստական կուլտուրայի հաջողությունների ազդեցության տակ Չեխոսլովակիայի պրոլետարական կուլտուրայի գործիչների բանակը համալրվեց այնպիսի գործիչներով, ինչպիսին էին՝ Յան Շվերման, Յուլիուս Ֆուչիկը, Մարիա Պուչմանովան, Ֆրանս Կրալը, Պետր Իլեմնիցկին և շատ ու շատ ուրիշներ, որոնց գործերը երկրում նվաճել էին մեծ մասսայականություն։ Պարզ է, որ պրոլետարական կուլտուրայի գործիչների այդպիսի հոծ և կուռ բանակի առկայությունը, ինչպես նաև Սովետական Միության կուլտուրական ռևոլյուցիայի ասպարեզում կուտակած մեծ փորձը, նրա բազմակողմանի և անշահախնդիր օգնությունը նպաստում էին Չեխոսլովակիայում կուլտուրական ռևոլյուցիայի ծավալմանը և հաղթանակին։

1948 թվականի ապրիլին Պրագայում տեղի ունեցավ Չեխոսլովակիայի ազգային կուլտուրայի գործիչների համապետական համագումար, ուր ՉԿՊ անունից Կլեմենտ Գոտվալդը շարադրեց երկրում կուլտուրական ռևոլյուցիայի և այդ ռևոլյուցիայում ինտելիգենցիայի կոնկրետ խնդիրները։ «Այժմ,—ընդգծեց նա,—երբ մենք աղբարկղ ենք նետել կապիտալիստական կարգերը, անհրաժեշտ է նաև անցյալի բարոյականությունից շատ բան այնտեղ նետել... Մենք այժմ սկսում ենք մեծ պլանաչափ արշավ ոչ միայն ժողովրդի տնտեսական, այլ նաև կուլտուրական վերելքի համար։

Այդ նպատակը, անխոս, պատմականորեն նոր է և պատասխանատու։ Որպեսզի մեր մարդուն հոգեպես և բարոյապես բարձրացնենք, մենք ուզում ենք նրան մատչելի դարձնել անցյալի կուլտուրական բոլոր մեծ գանձերը և լրիվ կերպով բացել նրա ուղին դեպի գիտելիքներ և գեղեցկություն... Ժողովրդին պետք է նաև նոր, ժամանակակից ներկայով ապրող և նրան օգնող կուլտուրա։ Նրան պետք են գիտություն, գրականություն, թատրոն, կինո-երաժշտություն՝ ոգեշնչված մեր հավատով դեպի երկրի բախտավոր ապագան, աշխատանքում և պայքարում՝ մեզ ամրապնդող, դեպի առաջ՝ ուղի ցույց տվող»[41]։

Ելնելով մարքս-լենինյան այն գրույթից, որ անցյալի կուլտուրայի քննադատական յուրացումը և այդ հիման վրա նոր, սոցիալիստական կուլտուրայի կերտումը անհատների, հմուտ անձանց, հանճարների գործունեության արդյունք չէ, այլ կապիտալիզմի լծից ազատագրված ժողովրդի ստեղծագործության արդյունքը, ՉԿՊ-ն և կառավարությունը լայն պայքար ծավալեցին անգրագիտության դեմ, որպես առաջին քայլ կուլտուրական ռևոլյուցիայի ճանապարհին։ Երկրի պետական բյուջեի 20% հատկացվեց լուսավորության, գիտության, կուլտուրայի և արվեստի զարգացմանը, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում, օրինակ, նման ծախսերին հատկացվում է պետական բյուջեի միայն 0,3%։ Ընդ որում եթե կապիտալիստական երկրներում տարեցտարի նվազում են պետության այդ ուղղությամբ կատարվող ծախսերը, ապա Չեխոսլովակիայում այն անընդհատ աճում է։ Բավական է նշել, որ 1960 թվականին նման ծախսերին է հատկացվել երկրի պետական բյուջեի արդեն 39%։

1948 թվականին, իսկ այնուհետև՝ 1953 թվականին ընդունվեցին օրենքներ, որոնց համաձայն արմատապես վերակառուցվեց երկրի կրթական սիստեմը և դրվեցին միասնական հանրակրթական դպրոցի հիմքերը։ Բացվեցին բազմաթիվ ցերեկային, երեկոյան և հեռակա հանրակրթական դպրոցներ, որոնցում մասսայաբար ընդգրկվեցին բոլորը՝ անկախ տարիքից և սեռից։ Արդյունքը եղավ այն, որ կարճ ժամանակամիջոցում անգրագիտությունը երկրում լրիվ կերպով վերացվեց։ 1953 թվականին Չեխոսլովակիայում մտցվեց ութամյա ընդհանուր պարտադիր և անվճար ուսուցում, որից հետո ուսումը կարելի է շարունակել տասնմեկամյա հանրակրթական ուսումնարաններում և ստանալ լրիվ միջնակարգ կրթու-

[41] К. Готвальд. Избранное произведения, том II, стр. 262—263.

թյուն, կամ էլ սովորել բազմաթիվ մասնագիտական դպրոցներում. պետական աշխատանքային ռեզերվների ուսումնարաններում և ձեռք բերել միջնակարգ մասնագիտական կրթություն։ Ընդ որում երեխաներն ընդունվում են առաջին դասարան 6 տարեկան հասակից։

Վիճակագրական տվյալները վկայում են, որ Չեխոսլովակիայում հատկապես լայն տարածում է ստացել տեխնիկական թեքում ունեցող մասնագիտական միջնակարգ դպրոցների ցանցը, որոնցում 1956—1957 ուսումնական տարում ընդգրկված էր ամբողջ սովորողների 37,7%, այն դեպքում, երբ 1936—1937 ուսումնական տարում այդպիսի դպրոցներում ընդգրկված էր ամբողջ սովորողների միայն 14%։

Մեծ հաջողություններ են ձեռք բերված նաև բարձրագույն կրթության զարգացման առաջարկում։ Երկրում հիմնվել են 37 նոր բարձրագույն ուսումնական հաստատություններ, բացվել 64 նոր ֆակուլտետներ, որոնցում միայն ստացիոնար սովորող ուսանողների թիվը նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատ գրեթե եռապատկվել է։ Ուշադրավ է, որ Սլովակիայում 1937 թվականին կար ընդամենը 1 բուհ, 2 հազար ուսանողներով, իսկ 1955 թվականին՝ արդեն 12 բուհ, 14 հազար ուսանողներով։ 1959 թվականին Կոշիցե քաղաքում բացվեց նոր համալսարան։ ՉԿՊ և կառավարությունը լուրջ ուշադրություն են դարձնում ուսուցման հեռակա և երեկոյան ցանցի ընդլայնմանը, որը լայն հնարավորություններ է տալիս աշխատավորական մասսաներին առանց արտադրությունից կտրվելու բարձրացնելու իրենց քաղաքական և գիտական մակարդակը։ Բավական է նշել, որ բուհերի հեռակա և երեկոյան բաժիններում ընդգրկված են ևս 22 հազար ուսանողներ։ Աշակերտների և ուսանողների թվով (ըստ բնակչության յուրաքանչյուր 100 հազարի) Չեխոսլովակիան արդեն 1957 թվականին գրավեց աշխարհում առաջնակարգ տեղերից մեկը։

«Կարիքավոր» աշակերտներին և ուսանողներին, այսինքն՝ նրանց, որոնց ծնողները ամսական ստանում են 1200 քրոնից պակաս աշխատավարձ, պետությունը բավարարում է հանրակացարանով և թոշակով։ Ընդամենը, թոշակ ստացողների շրջանները անընդհատ ընդլայնվում են։ Այսպես, օրինակ, 1957 թվականին երկրի բոլոր հանրակրթական դպրոցների 9—11-րդ դասարանների աշակերտության 22% ստանում էր պետական թոշակ, մասնագիտական ուսումնարանների ուսանողության՝ 35%, իսկ բուհական ուսանո-

դության՝ արդեն 65%։ Սովորողների տարիքային (հետևաբար և՝ պահանջմունքների) աճին զուգընթաց բարձրանում է նրանց թոշակաչափը։ Նույն 1957 թվականին հանրակրթական դպրոցների 9—11-րդ դասարանների աշակերտության ամսական միջին թոշակը կազմում էր 168 քրոն, մասնագիտական ուսումնարանների ուսանողության ամսական միջին թոշակը՝ 245 քրոն, իսկ բուհական ուսանողության ամսական միջին թոշակը՝ 335 քրոն։

Շնորհիվ պարտության և կառավարության վերոհիշյալ քաղաքականության ուսումը դարձել է հանրամատչելի, արմատապես փոխվել է երկրի սովորողների և, հատկապես, ուսանողության սոցիալական կազմը. եթե 1937 թ. բանվորագյուղացիական ընտանիքներից եկած ուսանողները կազմում էին երկրի ամբողջ ուսանողության միայն 5—7%, ապա 1957 թ. նրանք արդեն կազմում էին նրա գրեթե կեսը (47%)։

1957—1958 ուսումնական տարում Չեխոսլովակիայի սովորողների և ուսանողների սոցիալական կազմը (արտահայտած տոկոսներով) հետևյալն է.

Ուսումնական հաստատության անվանումը	Բանվորներ	Գյուղացիներ	Այլ[12]
Հանրակրթական դպրոցներ (9—11-րդ դասարաններ)	34,4	9,5	56,1
Մասնագիտական դպրոցներ	45,9	13,7	40,4
Բուհեր	34,4	12,6	53,0

ՉԿՊ և կառավարությունը ոչ միայն անընդհատ ընդլայնում և հանրամատչելի են դարձնում կրթական սիստեմը՝ տալով նրան իսկական ժողովրդայնություն, այլև մեծ հոգ են տանում ուսման բնույթի էական վերակառուցման, այդ սիստեմում նոր, սոցիալիստական հասարակարգի լիարժեք, բազմակողմանի զարգացած մարդիկ դաստիարակելու համար։ ՉԿՊ ԿԿ 1959 թվականի Ապրիլյան պլենումի որոշման համաձայն ուսուցման պրոցեսը սերտորեն կապակցվում է կյանքի հետ, ծառայում նոր հասարակարգի կառուցման շահերին։ Միջնակարգ դպրոցների վերջին դասարաններում, մասնագիտական ուսումնարանների և բուհերի վերջին կուրսերում

[12] Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ 1937 թվականին ուսանողության այդ մասը ուներ բուրժուա-կալվածատիրական ծագում, իսկ ներկայումս այդ ուսանողները աշխատավոր ինտելիգենցիայի և ծառայողների զավակներն են։

ուսումնական ծրագրերի զգալի մասը, որպես կանոն, կապակցված է արտադրական պրոցեսի հետ, ուր աշակերտները և ուսանողները ձեռք են բերում ֆիզիկական և, հատկապես, մասնագիտական արտադրական աշխատանքի անհրաժեշտ փորձ և որոշակի ունակություններ։ Ներկայումս շատ մասնագիտական ուսումնարաններում և բուհերում կարելի է հանդիպել դասախոսի՝ արտադրության այս կամ այն ճյուղի նորարար բանվորի։

Արմատապես վերակառուցվեց և ընդլայնվեց նաև գիտահետազոտական աշխատանքի զրվածքը։ Կառավարության որոշմամբ 1952 թվականին հիմնադրվեց Չեխոսլովակիայի Գիտությունների ակադեմիան (ՉԳԱ), իսկ 1953 թվականին՝ Սլովակիայի Գիտությունների ակադեմիան և Չեխոսլովակիայի Գյուղատնտեսական Գիտությունների ակադեմիան։ Եթե բուրժուական Չեխոսլովակիայի գիտահետազոտական հիմնարկները շատ փոքրաթիվ էին և ունեին ընդամենը 2 հազար գիտական աշխատակիցներ, ապա 1953 թվականին այնտեղ արդեն գործում էին 175 գիտահետազոտական ինստիտուտներ, որոնցում աշխատում էին ավելի քան 8 հազար գիտնականներ։

Երկրի գիտական մտքի կենտրոնը ՉԳԱ-ն է, ուր ներկայումս ստեղծագործում են 65 ակադեմիկոսներ, ՉԳԱ-ի 86 թղթակից-անդամներ, զանազան գիտությունների բազմաթիվ դոկտորներ և թեկնածուներ, որոնց թիվը տարեցտարի աճում է։ Բավական է նշել, որ միայն 1959 թվականին Չեխոսլովակիայի Գիտությունների ակադեմիայի ցանցի 5 աշխատակից ստացել են գիտությունների դոկտորի և 83 աշխատակից՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճաններ։ Չեխոսլովակիայի գիտական մտքի նշանակալից կենտրոններ են նաև Սլովակիայի Գիտությունների ակադեմիան, երկրի 40 բուհերը և, հատկապես, Պրագայի աշխարհահռչակ Կարլով համալսարանը, որը հիմնադրվել է 1348 թվականին։

Բացի գիտահետազոտական ինստիտուտներից ՉԳԱ-ին առընթեր գործում են 22 գիտական ընկերություններ, որոնցում համախմբված են շուրջ 10 հազար որակյալ գիտահետազոտական կադրեր, իսկ պրոֆիլությունների կողմից կազմակերպված 14 գիտա-տեխնիկական ընկերություններում ընդգրկված են շուրջ 25 հազար գիտա-տեխնիկական գործիչներ, գյուտարարներ, արտադրության նորարարներ, առաջավորներ և այլն։

Ակադեմիայի, նրա գիտահետազոտական ինստիտուտների և գիտական ընկերությունների գործունեությունը սերտորեն կապակց-

ված է ժողովրդի կյանքի, նրա սոցիալիստական ոգով դաստիարակման, երկրի տնտեսության սոցիալիստական զարգացման պահանջմունքների բավարարման հետ։ Չեխոսլովակիայի գիտական մտքի զարգացմանը մեծ օգնություն ու աջակցություն է ցույց տալիս աշխարհում ամենաառաջավոր՝ սովետական գիտությունը, որի նվաճումների մեծ մասը դառնում է նաև նրա սեփականություն։ Դեռ 1950 թվականին Չեխոսլովակիայում հիմնադրվեց Չեխոսլովակո-Սովետական հատուկ գիտական ինստիտուտ, որի օրգանն է «Սովետական նաուկա» ամսագիրը։ Այն ունի գիտության բոլոր ճյուղերի վերաբերյալ առանձին սերիաներ, որոնցում զետեղվում են հաղորդումներ, հոդվածներ և այլն՝ սովետական գիտության տվյալ ճյուղի նորագույն նվաճումների մասին։ Այդ գործում նշանակալից դեր է խաղում նաև Չեխոսլովակո-սովետական բարեկամության ընկերությունը, որի օրգանը («Պրագա—Մոսկվա» ամսագիրը) ոչ միայն լուսաբանում է երկու մայրաքաղաքների կապերը, կյանքը, այլ նաև գիտության, տեխնիկայի և արտադրության նորությունները։

Բացի այդ, ՉԳԱ-ն գիտական պրոբլեմների մշակման գործում սերտորեն համագործակցում է Սովետական Միության և սոցիալիզմի լագերի մյուս երկրների Գիտությունների ակադեմիաների հետ, որը զգալի չափով նպաստում է Չեխոսլովակիայում գիտական մտքի զարգացմանը։ Բավական է նշել, որ միայն 1959 թվականին ՉԳԱ-ն, որը հրատարակում է 62 անուն գիտական ամսագրեր, Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի հետ մեկտեղ մշակել է 81 գիտական լուրջ թեմաներ։

ՉԿՊ և կառավարությունը ոչ մի ջանք չեն խնայում գիտության նորանոր նվաճումները արտադրության մեջ ներդնելու, համաժողովրդական սեփականություն դարձնելու համար։ Այդ գործում նշանակալից դեր են խաղում ոչ միայն գիտական հիմնարկ-ձեռնարկությունները, ռադիոն, մամուլը, այլ նաև հասարակական կազմակերպությունները, ինչպես, օրինակ, քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերությունը, որը հիմնադրվել է 1952 թվականի հունիսին։ Ներկայումս այդ ընկերությունը ունի շուրջ 300 բաժանմունք, որոնցում ընդգրկված են 25 հազար անդամներ, այդ թվում՝ նշանավոր գիտնականներ, ինժեներներ, ուսուցիչներ, բժիշկներ, պարտիական ու պետական ապարատի աշխատողներ, գրականության ու արվեստի գործիչներ և այլն։ Բավական է նշել, որ միայն 1958 թվականին ընկերության գծով

կարդացվել են ավելի քան 80 հազար հրապարակային դասախոսություններ, որոնց ներկա են եղել 4 միլիոն մարդ։ Լայն տարածում է ստացել ունկնդիրների առանձին խմբերի համար հատուկ ծրագրով դասախոսությունների ամբողջական ցիկլերի ընթերցումը, որոնք ավյալ աուդիտորիային տալիս են յուրօրինակ ժողովրդական համա սարանների բնույթ։

Չեխոսլովակիայի բնակչության կուլտուրական մակարդակի վերելքի համար մեծ նշանակություն ունեցավ նաև մասնավոր հրատարակչությունների պետականացումը, որն անցկացվեց 1949—1950 թվականներին, և նրանց ընդլայնումը։ Նախապատերազմյան տարիների համեմատ մի քանի անգամ իջել է հրատարակվող գրքերի արժեքը։

Մինչև 1953 թվականը շնչտակի աճեցին նաև երկրում լույս տեսնող պարբերական մամուլի քանակը և տպաքանակը, բայց հիշված տարեթվից այն սկսեց որոշակիորեն կրճատվել՝ ի հաշիվ գործարանային բազմատիրաժ թերթերի հրատարակության ընդլայնման։ Ներկայումս երկրում լույս են տեսնում շուրջ 1,5 հազար անուն պարբերականներ, որոնցից 17 անուն՝ օրաթերթ, 483 անուն՝ շաբաթաթերթ, 400 անուն՝ երկշաբաթաթերթ և 426 անուն այլ հրատարակություններ՝ 1065 հազար ընդհանուր տպաքանակով։

Մեծ մասնայականություն են վայելում ՉԿՊ ԿԿ օրգան «Ռուդե պրավո» օրաթերթը և տեսական օրգան «Նովա միսլ» ամսագիրը, Սլովակիայի Կոմպարտիայի ԿԿ օրգան «Պրավդա» օրաթերթը, պրոֆմիությունների կենտրոնական օրգան «Պրացե» օրաթերթը, Չեխոսլովակիայի Երիտասարդական միության կենտրոնական օրգան «Մլադա ֆրոնտա» օրաթերթը և գյուղացիական «Զեմեդելսկե նովինի» օրաթերթը, որոնք մշտապես լուսաբանում են ոչ միայն ընթացիկ տնտեսական, քաղաքական ու միջազգային հարցեր, այլ նաև կուլտուրական շինարարության և արվեստի հարցեր, զետեղում բովանդակալից գրախոսականներ և այլն։

Գրականության հարցերին նվիրված են հատուկ շաբաթաթերթեր, ինչպես, օրինակ, Պրագայում լույս տեսնող «Լիտերարնի Նովինի» և Բրատիսլավայում՝ «Կուլտուրնի ժիվոտ»։ 1959 թվականից Չեխոսլովակիայի Գրողների միությունը հրատարակում է գրականագեղարվեստական պատկերազարդ «Պլամեն» ամսագիրը. հրատարակվում են հատուկ ամսագրեր թատրոնի, կինոյի և արվեստի այլ ճյուղերի դծով, որոնք խոր արմատներ են արձակել ժողովրդի կենցաղի մեջ, դարձել նրա սեփականությունը։

Լայն տարածում է ստացել սեղական մասսայի. շրջկենտրոններում լույս են տեսնում շրջանային լրագրեր, ֆաբրիկաներում և գործարաններում՝ գործարանային, գյուղական շրջաններում՝ գյուղատնտեսական լրագրեր և այլն, որոնք նշանակալից դեր են խաղում մասսաների մտավոր բարձրացման գործում:

Չեխոսլովակիայում լայն հնարավորություններ են ստեղծված արվեստի բազմազան ճյուղերի և ժանրերի զարգացման համար: Մշտապես աճում է երկրում գործող թատրոնների, կինոների և ակումբների, նրանցում կայացած ներկայացումների և սեանսների, ինչպես և հանդիսատեսների քանակը, որը ժողովրդի կուլտուրական մակարդակի վերելքի փայլուն ցուցանիշներից մեկն է. ընդ որում պետք է նկատի ունենալ, որ Չեխոսլովակիայի շատ բնակավայրերից հնարավոր է ընդունել երկրում գործող 3 հեռուստացույցային կայանների (Պրագայի, Բրատիսլավայի և Բռնոյի) հաղորդումները, որ ներկայումս Չեխոսլովակիայի գրեթե յուրաքանչյուր ընտանիք ունի ռադիոընդունիչ և յուրաքանչյուր ութ ընտանիքից մեկը՝ հեռուստացույց:

Շնորհիվ Չեխոսլովակիայի Կոմպարտիայի և կառավարության վերոհիշյալ քաղաքականության երկրում ստեղծվեցին բոլոր պայմանները և կուլտուրական ռևոլյուցիան ամենայն խորությամբ ու լայնությամբ ծավալվեց: Դա իր փայլուն արտահայտությունը գտավ Սոցիալիստական կուլտուրայի գործիչների համապետական համագումարում, որը նշանակալից իրադարձություն էր չեխ և սլովակ ժողովուրդների մշակութային կյանքում:

Համագումարի նախօրյակին ՉԿՊ Կենտկոմը, ելնելով պարտիայի XI համագումարի՝ կուլտուրական ռևոլյուցիան երկրում ավարտելու անհրաժեշտության մասին պատմական որոշումից, հատուկ նամակով դիմեց երկրի գիտական և կուլտուր-լուսավորական հիմնարկ-ձեռնարկություններին ու հասարակական կազմակերպություններին և կոչ արեց նրանց քննարկել երկրում կուլտուրական շինարարության հարցերը, վերհանել գիտության, կուլտուրայի և արվեստի ամենաբազմազան ճյուղերի կոնկրետ խնդիրները կարճ ժամանակամիջոցում կուլտուրական ռևոլյուցիան երկրում ավարտելու ուղղությամբ: Պարտիայի կոչը, որի նշանաբանն էր՝ «Ով ուզում է շատ և շատ վեր բարձրանալ, նա պետք է մոտենա ժողովրդին», ջերմ արձագանք գտավ գիտության, կուլտուրայի ու արվեստի գործիչների, ինչպես նաև ժողովրդական լայն մասսաների շրջաններում:

Այդ պրոցեսում նոր ուժով դրսևորվեց ժողովրդի կուլտուրական և հոգևոր աշխարհի անսպառ հարստությունը։ Գործարաններում և միասնական գյուղատնտեսական կոոպերատիվներում կազմակերպվեցին ավելի քան երկու հազար հանդիպումներ գիտության, կուլտուրայի և արվեստի գործիչների հետ։ Աշխատավորական մասսաները, լսելով նրանց հաշվետվությունները, գործարար մթնոլորտում կատարում էին լուրջ դիտողություններ, պահանջում ժամանակակից թեմաներով գեղարվեստական լիարժեք գործեր, կինոնկարներ, ներկայացումներ, երգեր ու պարեր, տալիս նրանց համապատասխան նպատակներ, որոնք վկայում էին կապիտալիզմի լծից ազատագրված ժողովրդի կուլտուրական բարձր մակարդակի և պահանջմունքների շեշտակի վերելքի մասին։

Չեխոսլովակյան ազգային կուլտուրայի գործիչների համագումարից 11 տարի անց՝ 1959 թվականի հունիսին Պրագայում բացվեց արդեն նոր, սոցիալիստական կուլտուրայի գործիչների համապետական համագումար, որն ընթացավ «դարձնել կուլտուրան ավելի կենսական, իսկ կյանքը՝ ավելի կուլտուրական» նշանաբանի ներքո։

Ցուցադրելով երկրում կուլտուրական ռևոլյուցիայի ասպարեզում ձեռք բերած հսկայական նվաճումները, ժողովրդական ամենալայն զանգվածների կուլտուրական մակարդակի էական վերելքը, համաժողովրդական սոցիալիստական կուլտուրայի ձևավորման պրոցեսը, համագումարը միաժամանակ նշեց, որ արվեստի, երգի, պարի և երաժշտության գործիչները դեռևս անբավարար չափով են օգնում ինքնագործ գեղարվեստական խմբակների աշխատանքներին, որ պարային, էստրադային և օպերետային երաժշտության ասպարեզում դեռևս կան լուրջ թերություններ, որ դրականությունը լրիվ կերպով չի արտացոլում ժողովրդի հոյակապ կյանքը, որ նա որոշակիորեն ետ է մնում ժողովրդի առաջընթացից և աճող պահանջմունքներից։

«Մեր գյուղական բնակչությունը հայտնի է իր սիրով դեպի գիրքը, և մեր կուլտուրան բացառիկ է ու գեղեցիկ հենց այն պատճառով, որ դրականությունը, որպես նրա օրգանական մաս, միշտ ընթացել է ժողովրդի կարիքների հետ ձեռք-ձեռքի տված։ Եվ մեր մարդիկ զգում են հուսախաբություն, երբ այդ կապը թուլանում է։ Իսկ դա իրոք տեղի ունեցավ,—ընդգծեց Լիբերեցի մարզի ՄԳՏԿ-ների մեկի նախագահը։—Մեր գրողների հետպատերազմյան երկերում մենք կարող ենք կարդալ շատ լավ ստեղծագործություններ

պատմության մասին, քան գործող ժամանակակից կյանքի մասին»[43]։

Նման պահանջներ առաջադրվեցին նաև գիտության, երաժշտության, նկարչության, թատրոնի և կինեմատոգրաֆիայի աշխատողներին։ Դրանք վկայում էին այն մասին, որ կուլտուրական հեղաշրջումը թափանցել է ժողովրդական լայն զանգվածների ընդերքը, աճել են նրանց էսթետիկական պահանջմունքները, որ նրանք արդեն հանդես են գալիս որպես իրենց նոր, սոցիալիստական կուլտուրայի առաջամարտիկներ։

---

[43] Մեջ է բերված ըստ "Проблемы мира и социализма", 1959, № 10, стр. 6.

ՎԵՐՋԱԲԱՆ

1945 թվականի մայիսը շրջադարձային կետ հանդիսացավ Չեխոսլովակիայի ժողովրդի կյանքում։ Հիտլերյան Գերմանիայի նկատմամբ Սովետական Միության տարած համաշխարհային պատմական հաղթանակը նպաստեց Չեխոսլովակիայում ծավալված ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակին։ Երկրի պետական իշխանությունն անցավ հակաֆաշիստական պայքարի բովում ձևավորված չեխերի ու սլովակների միասնական ազգային ճակատի ձեռքը, որի հեգեմոն դիրքերում կանգնած էր բանվոր դասակարգը իր մարտական ավանգարդի՝ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ։ Նոր էջ բացվեց Չեխոսլովակիայի պատմության մեջ, ժողովրդի իսկական տիրապետության, ժողովրդական դեմոկրատիայի դարաշրջան։

Նշեն ով բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճելու լենինյան հանճարեղ ուսմունքից և ստեղծագործաբար կիրառելով այն Չեխոսլովակիայի ուրույն պատմական պայմաններում, Կոմունիստական պարտիան երկրի ազատագրման առաջին իսկ օրերից վերցրեց հաղթական ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան անընդհատ խորացնելու և խաղաղ ճանապարհով սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճելու քաղաքական կուրս։ Ազգային ճակատի կառավարությունը «ներսից»՝ կոմունիստների և «դրսից»՝ ժողովրդական լայն զանգվածների ճնշման տակ անցկացրեց մի շարք համադեմոկրատական միջոցառումներ, որոնց մեծ մասը պարունակում էր նաև սոցիալիստական տարրեր։ Արդեն 1945 թվականի հոկտեմբերին հաջողվեց անցկացնել արդյունաբերության կարևորագույն բարձունքների և բանկերի ազգայնացում, որը լուրջ հարված էր բուրժուազիային և հանդիսացավ ազ-

գային-դեմոկրատական ռևոլյուցիան հաղթական սոցիալիստական ռևոլյուցիայի վերաճման պրոցեսի սկիզբը։ Ստանալով հարված հարվածի ետևից և մասսայազրկվելով, բուրժուազիան 1948 թվականի փետրվարին դիմեց հակառևոլյուցիոն պետական հեղաշրջման, որը շնորհիվ ժողովրդի հուժկու ելույթի ոչ միայն հենց սաղմում ձախողվեց, այլև նպաստեց երկրում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի արագացմանը։ Դասակարգային և պարտիական ուժերի մահու և կենաց, բայց անարյուն և խաղաղ բախումներն ավարտվեցին Կոմպարտիայի, բանվոր դասակարգի, ժողովրդի հաղթանակով՝ երկրում հիմնադրվեց «զուտ» պրոլետարիատի դիկտատուրա և ամենայն լայնությամբ ու խորությամբ ծավալվեց սոցիալիստական շինարարությունը։

Ընդամենը 15 տարիներ են մեզ բաժանում այդ պատմական անցքերից, որը կարճ, հասարակական զարգացման տեսակետից աննշան ժամանակաշրջան է։ Բայց չնայ ու այնվակ ժողովուրդները ՉԿՊ հմուտ ղեկավարությամբ հսկայական նվաճումներ են ձեռք բերել երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության, դիտության ու կուլտուրայի սոցիալիստական վերակառուցման և զարգացման բոլոր բնագավառներում, որոնց շնորհիվ էապես աճել է նրանց նյութական ու կուլտուրական մակարդակը։ Երկրում կառուցվել է նոր, սոցիալիստական հասարակարգ։

Նկատելով երկրի տնտեսության զարգացման մեջ տեղի ունեցած վիթխարի փոփոխություններից, ՉԿՊ Կենտկոմի 1960 թվականի Հունվարյան պլենումը քննարկեց և հաստատեց Անտոնին Նովոտնու ղեկուցումը Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայի տերիտորիալ-վարչական նոր բաժանման և սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ծավալման մասին։ Համաձայն զեկուցումում շարադրված միջոցառումների, որոնք չերմ հավանություն էին գտել համաժողովրդական քննարկման պրոցեսում, երկրում գոյություն ունեցող 19 մարզերը վերամիավորվեցին և վերաբաժանվեցին ընդամենը տասը մարզերի, իսկ նրանցում հաշվվող 270 շրջանները՝ ընդամենը 108 շրջանների։ Նոր մարզերի և նրանցում մտնող շրջանների սահմանները հիմնականում համընկան երկրում սոցիալիստական շինարարության տարիներին ձևավորված տնտեսական մարզերի և և շրջանների բնական սահմանների հետ։

Մարզերի և շրջանների խոշորացումը զուգորդվեց մարզային և շրջանային Ազգային կոմիտեների, որպես պետական իշխանության տեղական օրգանների, իրավունքների ընդլայնման հետ և

ապահովվեց նրանց գործունեության մեջ ժողովրդական ամենալայն զանգվածների ակտիվ մասնակցությունը։ Հատկապես ընդլայնվեցին Սլովակիայի Ազգային խորհրդի օրենսդիր և գործադիր իրավունքները, որը վերածվեց Սլովակիայի լիիրավ գերագույն պետական իշխանության։

Սոցիալիստական շինարարության և սոցիալիզմի կառուցման պրոցեսում սկզբունքային խոր փոփոխություններ տեղի ունեցան Չեխոսլովակիայի հասարակության դասակարգային ամբողջ կառուցվածքում։ Մեկընդմիշտ վերացվել են բուրժուական և կալվածատիրական դասակարգերը։ Երկրի զբաղված բնակչության ճնշող մեծամասնությունը (96,4%) նրա տնտեսության սոցիալիստական սեկտորի աշխատավորներ են։

Բանվոր դասակարգը (բանվորական ընտանիքի անդամների հետ միասին) կազմում է երկրի ամբողջ բնակչության 62 տոկոսը։ Նա դադարել է ընչազուրկ, ճնշվող և շահագործվող պրոլետարիատ լինելուց և դարձել որակապես նոր, սոցիալիստական հասարակարգի բանվոր դասակարգ՝ կառավարող դասակարգ, երկրի բոլոր հասարակական, քաղաքական, տնտեսական և կուլտուրական միջոցառումների նախաձեռնողն ու անցկացնողը։ Բարձրացել են նրա գիտակցությունն ու քաղաքական հասունությունը։ Երկրի հասարակության կենտրոնական դեմքը, նրա գլխավոր դիրքորոշումը բանվոր դասակարգն է։

Չեխոսլովակյան գյուղում աճել և ձևավորվել է փաստորեն նոր դասակարգ՝ կոլեկտիվ տնտեսությունների անդամ, սոցիալիզմ կառուցող գյուղացիություն, որը վաղուց արդեն որոշիչ դիրք է նվաճել երկրի գյուղատնտեսության մեջ և դարձել հասարակական առաջադիմության ակտիվ ուժ[1]։ Կուլակությունը, որպես դասակարգ, լիկվիդացվել է։ Մենատնտես գյուղացիությունը կազմում է երկրի բնակչության ընդամենը 3,2%։

Բանվոր դասակարգը և կոոպերատիվ գյուղացիությունը Չեխոսլովակիայի հասարակության երկու հիմնական, եղբայրական դասակարգերն են։ Բանվոր դասակարգի ղեկավարությամբ ամրապնդվում է նրանց դաշինքը, որի պահպանումն ու հետագա ամրա-

---

[1] Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նոր դասակարգի ձևավորումը երկարատև և ծանր պրոցես է, որ գյուղացիության ընդգրկումով կոոպերատիվների մեջ բոլորովին էլ չի ապահովում նրա սոցիալիստական ոգով վերազատիարակումը, այլ. ինչպես շեշտել է Ա. Նովոտնին, այն միայն սկսվում է (տես „XI съезд КПЧ", М., 1958, стр. 39)։

պնդումը, ինչպես շեշտել է Վ. Ի. Լենինը, պրոլետարիատի դիկտատուրայի բարձրագույն սկզբունքն է։ Այդ դաշինքը, որը սոցիալիստական կարգերի քաղաքական հիմքն է, աստիճանաբար ավելի է ամրապնդվում, նպաստելով բանվոր դասակարգի ղեկավարությամբ ժողովրդական իշխանության հետագա ամրապնդմանը։

Չեխոսլովակիայի Կոմպարտիային և կառավարությանը հաջողվեց իր կողմը դրավել հին ինտելիգենցիայի ճնշող մեծամասնությանը, հատկապես կուլտուրայի, գիտության ու տեխնիկայի առաջադեմ ներկայացուցիչներին։ Անընդհատ համալրվելով բանվորների և մնացած աշխատավորության շարքերից եկող նորանոր գործիչներով, ինտելիգենցիայի այդ մասը ստացավ նոր, ժողովրդական բնույթ և վերածվեց սոցիալիստական ինտելիգենցիայի մի կուռ բանակի, որը աշխատավոր ժողովրդի միս և արյունից է։

Սոցիալիստական շինարարության ընթացքում ձևավորվեցին նաև չեխական ու սլովակյան որակապես նոր, սոցիալիստական ազգերը, որոնց կենտրոնական դեմքը բանվոր դասակարգն է իր սոցիալիստական հայրենասիրությամբ և պրոլետարական ինտերնացիոնալիզմով։ Այդ հիման վրա ձևավորվել և ամրապնդվել է չեխ ու սլովակ ժողովուրդների անխախտ դաշինքը, որը ՉԿՊ-ի մարքս-լենինյան ազգային քաղաքականության մի նոր հաղթանակն է։

Դասակարգային ուժերի ու ազդերի վերոհիշյալ էական տեղաշարժերը հանգեցին Չեխոսլովակիայի ժողովուրդների բարոյա-քաղաքական միասնության ստեղծման և ամրապնդման, որը հնարավորություն է տալիս սոցիալիստական հասարակության արտադրողական ուժերի վերելքի և բարգավաճման օգտին լավագույն կերպով օգտագործել ազատ աշխատավորների ստեղծագործ եռանդը։

Շնորհիվ հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական արմատական որակական փոփոխությունների, երկրում հաղթանակեց սոցիալիզմը, որն իր օրենսդրական արտացոլումն ու ամրապնդումը գտավ 1960 թվականի հունիսին ընդունված նոր, սոցիալիստական Կոնստիտուցիայում։

«Հասարակական կարգը, հանուն որի մարտնչել են մեր բանվորների և բոլոր աշխատավորների ամբողջական սերունդներ և որը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի պահից եղել է նրանց համար տիպար, այժմ, Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, դարձել է իրականություն նաև մեզ մոտ։

Սոցիալիզմը մեր երկրում հաղթանակել է»,— ընդգծված է նոր Կոնստիտուցիայի «Ներածական դեկլարացիայում»։

Այդ պատմական դոկումենտի առաջին հոդվածներում շեշտված է, որ Չեխոսլովակիան երկու իրավահավասար եղբայրական ազգերի՝ չեխերի ու սլովակների միասնական սոցիալիստական պետությունն է՝ հիմնված բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի դաշինքի վրա՝ բանվոր դասակարգի գլխավորությամբ։ Այդ դաշինքի կազմակերպական արտահայտությունն է Ազգային ճակատը, որում ՉԿՊ-ի ղեկավարությամբ համախմբվում են ոչ միայն քաղաքական պարտիաները, այլ նաև աշխատավորների հասարակական կազմակերպությունները, ինչպես, օրինակ, պրոֆմիությունները, գյուղացիական կոոպերատիվների միությունը, երիտասարդական միությունը, սպորտային, կուլտուրական և մի շարք այլ մասնագիտական անպարտիական կազմակերպություններ։

Նոր Կոնստիտուցիայի կարևորագույն դրույթներից է Կոմունիստական պարտիայի առաջատար դերի օրենսդրական ամրապնդումը. «Հասարակության և պետության մեջ ղեկավար ուժը,— ասված է IV հոդվածում,—բանվոր դասակարգի ավանգարդ ջոկատն է, Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիան՝ բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի ծոցից ելած առավել ակտիվ և գիտակից քաղաքացիների կամավոր մարտական միությունը»։

Ռեսպուբլիկայի տնտեսական հիմքը սոցիալիստական տնտեսաձևն է, որը բացառում է մարդու շահագործման բոլոր ձևերը, ապահովում ժողովրդական տնտեսության պլանային զարգացումը և արտադրանքի բաշխումը՝ «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի» սկզբունքով։ «Հասարակական, սոցիալիստական սեփականությունը,— արձանագրված է VIII հոդվածում,—ունի երկու հիմնական ձև՝ պետական սեփականություն, որը ամբողջ ժողովրդի սեփականությունն է (համաժողովրդական ունեցվածք) և կոոպերատիվ սեփականություն (ժողովրդական կոոպերատիվների սեփականություն)»։ Միաժամանակ Կոնստիտուցիան չի բացառում (հոդված 9) մանր մասնավոր տնտեսությունների գոյությունը, որոնք հիմնված են անձնական աշխատանքի և ոչ թե ուրիշի աշխատանքի շահագործման վրա։ Անձնական սեփականությունը հայտարարվում է անձեռնմխելի։

Կոնստիտուցիայում իր օրենսդրական արտահայտությունն ու ամրապնդումն են գտել սոցիալիստական դեմոկրատիայի, ազգային կոմիտեների՝ որպես իշխանության տեղական օրգանների,

հասարակական կազմակերպությունների և բնակչության իրավունքների հետագա ընդլայնումը։ Ընդ որում բոլոր քաղաքացիները (անկախ ազգային և ռասայական պատկանելությունից) ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ։ Ազգային փոքրամասնություններին, որոնք կազմում են ֆենիկական խմբեր, ինչպիսին են հունգարացիները, լեհերը և ուկրաինացիները, ապահովվում է մայրենի լեզվով ուսուցումը և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացումը։

Չեխոսլովակյան սոցիալիստական ռեսպուբլիկան,—ընդգծված է Ներածական դեկլարացիայում և XVI հոդվածում,—համաշխարհային սոցիալիստական սիստեմի օրգանական մասն է։ Նա առաջ կընթանա իր մեծ դաշնակցի՝ եղբայրական Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների հետ ձեռք-ձեռքի տված, մշտապես կնպաստի ընկերական փոխադարձ օգնության ընդլայնմանը և աշխատանքի միջազգային սոցիալիստական բաժանման խորացմանը։

Ուշագրավ է, որ նոր Կոնստիտուցիայի նախագծում, որը 1960 թվականի գարնանը դրվեց համաժողովրդական քննարկման, չէր նախատեսվում երկրի անվան փոփոխություն։ Ժողովուրդը, ջերմ հավանություն տալով Կոնստիտուցիայի նախագծին, միահամուռ կերպով պահանջեց հաշվի առնել այն հանգամանքը, որ սոցիալիզմը երկրում հաղթանակել է և Կոնստիտուցիայում մացնել հատուկ հոդված, ըստ որի Չեխոսլովակյան Ռեսպուբլիկան (ՉՍՌ-ն) վերանվանել Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկա (ՉՍՍՌ)։ Ժողովրդի պահանջը հարգվեց։

Լինելով հաղթանակած սոցիալիզմի երկրի Կոնստիտուցիա, ՉՍՍՌ-ի նոր Կոնստիտուցիան չի սահմանափակվում ժողովրդի անցած 15 տարիների ընթացքում ձեռք բերած նվաճումների օրենսդրական արտացոլումով և ամրապնդումով։ Նրանում շեշտված է նաև երկրի ապագա զարգացման հիմնական ուղին և ժողովրդի վերջնական նպատակը։ Չեխոսլովակիայի աշխատավոր ժողովուրդն իր Կոնստիտուցիայի Ներածական դեկլարացիայում հանդիսավոր կերպով հայտարարում է. «Մենք թևակոխել ենք մեր պատմության նոր ժամանակաշրջանը և պատրաստ ենք շարունակել մեր ուղին առաջ՝ դեպի նոր, ավելի բարձր նպատակներ։ Ամրապնդելով սոցիալիստական շինարարությունը, մենք անցնում ենք զարգացած սոցիալիստական հասարակարգի կառուցման և կատարում ուժեր կոմունիզմին անցնելու համար»։

Այդ հիմնական նպատակը կարմիր թելի պես ձգվում է Կոնստիտուցիայի ամբողջ շարադրանքով: Դա իր արտացոլումը գտավ նաև ՉՍՍՌ-ի ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանում (1961—1965), որը քննարկվեց և հաստատվեց նոր Կոնստիտուցիայի հետ միաժամանակ:

Չեխոսլովակիայի ժողովուրդը, այդպիսով, թևակոխեց իր պատմության մի նոր, ավելի բարձր ժամանակաշրջան՝ հասան սոցիալիստական հասարակարգի կառուցման և ուժերի կուտակման, կոմունիստական շինարարության անցնելու համար: Արդեն զգալի են այդ ասպարեզում նրա ձեռք բերած առաջին նվաճումները. 1958—1961 թվականներին տնտեսապես բարձր զարգացած Չեխոսլովակիայի արդյունաբերական արտադրանքն աճեց 34,9 տոկոսով, իսկ Սլովակիայում՝ 49 տոկոսով: Բնակչության անձնական սպառումը ավելացավ 1/5 չափով, աշխատավարձի տարեկան միջին աճը հասավ 3,7 միլիարդ քրոնի և այլն:

Նոր որակական աճեղաշրջումները և էկոնոմիկական բարդ խնդիրները, որոնցով բնորոշվում է Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկայի զարգացման արդի փուլը, միաժամանակ առաջ բերեցին ժողովրդատնտեսական և պետպլանային լուրջ դժվարություններ: Այսպես, III հնգամյակի 1961 թվականի արդյունաբերության զարգացման պլանային նորմաները կատարվեցին ընդամենը 99,8 տոկոսով, իսկ 1962 թվականի առաջին կիսամյակինը՝ 99,6 տոկոսով: Արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպիսին են մետաղամշակությունը և մեքենաշինությունը, սկսեցին ետ մնալ արդյունաբերության համընդհանուր վերելքից: Որոշակի դանդաղում նկատվեց կապիտալ շինարարության և երկաթուղային տրանսպորտի զարգացման տեմպերում: Հատկապես ետ մնաց դյուղատնտեսությունը, որի արտադրանքի աճը 1961 թվականին կազմեց ընդամենը 1 տոկոս: Տնտեսագիտական և հսկողական օրգանների անբավարար աշխատանքի հետևանքով ոչ միայն թերակատարվում էր պետական պլանային նորմաները, այլև հետևողականորեն չէր կիրառվում «արտադրել շատ, լավ և էժան» համապետական սկզբունքը:

«Չեխոսլովակիայի ժողովրդական տնտեսության բարդ խնդիրները և պլանային ու կազմակերպական գործունեության թերությունները,—իրավամբ շեշտել է ՉԿՊ ղեկավար գործիչ Ֆրանտիշեկ Գավլիչեկը,—աճի դժվարություններ են՝ հանդես եկած արտադրողական ուժերի կենսամակարդակի ու հասարակական հարաբերու-

թյունների զարգացման բարձր աստիճանում հաղթանակած սոցիալիզմի ժամանակաշրջանում և պայմանավորված նոր խնդիրների բարդությամբ, որոնք ծառացած են մեր առջև»[2]:

Ելնելով երկրում ստեղծված անբավարար վիճակի դիտականությունից, ՉԿՊ վերակառուցց ժողովրդական տնտեսության զարգացման պլանները և մշակեց կոնկրետ միջոցառումներ հասուն սոցիալիստական հասարակարգի կառուցումը և կոմունիստական շինարարության նախապատրաստումը ապահովելու համար: Ընթացիկ տարվա ամռանը նա հանդես եկավ նախահամագումարյան (ՉԿՊ XII համագումարը տեղի կունենա 1962 թվականի դեկտեմբերին)՝ «Մեր սոցիալիստական հասարակարգի հետագա զարգացման հեռանկարների մասին» նախագծային փաստաթղթով: Այս պատմական նախագծում, որ դրված է համաժողովրդական քննարկման (ՉԿՊ ԿԿ որոշմամբ այն քննարկվում է պարտիական դռնրաց ժողովներում), արվում է ոչ միայն XI համագումարից (1958) հետո ընկած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հանրագումարն ու գնահատականը, այլ նաև կանխորոշվում է երկրում հասուն սոցիալիստական հասարակարգի կառուցման և կոմունիստական շինարարության նախապատրաստման կոնկրետ ուղիներն ու միջոցները:

«Երկրի նյութա-տեխնիկական հիմքը զարգանալու է այնպես,— ընդգծված է Նախագծում,—որ նա աստիճանաբար վերածվի կոմունիզմի նյութա-տեխնիկական հիմքի: Քայլ առ քայլ հաղթահարվելու է հին և ձևավորվելու է նոր աշխատանքի բաժանում, վերացվելու են ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև գոյություն ունեցող էական տարբերությունները: Աստիճանաբար ստեղծվելու է ապրանքների առատություն հասարակության աճող պահանջմունքների բավարարման համար»:

Միաժամանակ մշակվում է ՀՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլան (1964—1970), որում մեծ ուշադրություն է դարձվում մեքենաշինության, մեքենաշինության, քիմիական արդյունաբերության, կապիտալ ու երկարաժամկետ շինարարության, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման

---

[2] Ֆ. Գավլիչեկ, Дальнейшее развитие социалистического общества в Чехословакии. „Проблемы мира и социализма", 1962, № 9, стр. 36.

տեմպերի բարձրացման վրա: Պարտիայի և ժողովրդի նախահամագումարյան բարձր ակտիվությունը, երկրում սոցիալիզմի հետագա զարգացման առանցքային հարցերի համաժողովրդական քննարկումը, ի պատիվ ՉԿՊ XII համագումարի սոցմրցման լայնորեն ծավալումը գրավականն են այն բանի, որ ժամանակավոր դժվարություններն ու անցողիկ խոչընդոտները հաջողությամբ կհաղթահարվեն և առաջիկա բարդ խնդիրները պատվով կլուծվեն:

ՀՍՍՌ-ի արտադրողական ուժերի զարգացման բարձր աստիճանը արդեն այսօր նպաստում է նրա բնակչության կյանքի և աշխատանքի մեջ կոմունիստական հասարակարգի որոշ տարրերի հանդես գալուն, ինչպես, օրինակ, հանրակրթական և մասնագիտական դպրոցների սովորողներին ուսումնական ձեռնարկներով բավարարման, աշակերտության դպրոցական սնուցման և արձակուրդների կազմակերպման, բնակչության բուժսպասարկման, ինչպես նաև սոցիալիստական աշխատանքի բրիգադների գործունեության մեջ և այլուր: Օրեցօր ծնունդ են առնում աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք: Ավելի ու ավելի են կատարելագործվում սոցիալիստական էկոնոմիկայի և տնտեսական պլանավորման ղեկավարության մեթոդները: Տեղի է ունենում սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ծավալում, ընդլայնվում է ժողովրդական մասսաների մասնակցությունը տնտեսական և կուլտուրական շինարարության ղեկավարմանը, պետության առանձին ֆունկցիաներ աստիճանաբար հանձնվում են հասարակական կազմակերպություններին:

Անդրադառնալով այդ հարցին, ՉԿՊ ԿԿ Քաղբյուրոյի անդամ Իրժի Գենդրիխը իր «Սոցիալիզմի հաղթանակը Չեխոսլովակիայում» հոդվածում գրում է. «Չեխոսլովակյան իրականության մեջ արդեն այսօր առկա են ապագայի, ավելի բարձր հասարակարգի բաղմաթիվ գծեր», որոնք կանխորոշում են «հետագա զարգացման հիմնական տենդենցները... Թեպետև սոցիալիզմի հաղթանակը Չեխոսլովակիայում պատմական իրականություն է, Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիան առաջ չի քաշում, որպես անմիջական խնդիր, կոմունիզմի կառուցումը: Հասարակական հարաբերությունների, ինչպես նաև տնտեսության և կուլտուրայի զարգացման այս էտապում այդ խնդրի առաջ քաշումը վաղաժամ կլիներ: ՉԿՊ-ն հաշվի է առնում հավասարաչափ առաջընթացի անհրաժեշտությունը, նա գիտակցում է վտանգը, որով հղի է զարգացման առանձին ֆտապներ շրջանցելու ամեն մի փորձ: Նա իր ամենօրյա քաղաքա-

կանության մեջ ևս ղեկավարվում է լենինյան ցուցումով, որ չի կարելի իրագործել այնպիսի փոփոխություններ, որոնք լրիվ կերպով չեն հասունացել ինչպես տնտեսական հարաբերություններում, այնպես էլ ժողովրդի ճնշող մեծամասնության գիտակցության մեջ»[3]։

Չեխոսլովակիայում սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիզմի հաղթանակը մարքսիզմ-լենինիզմի հաղթանակն է չեխոսլովակյան իրականության մեջ։ ՉՍՍՌ-ի կազմակերպումը մեկ անգամ ևս ապացուցում է, որ սոցիալիստական ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության գլխավոր օրինաչափություններն ունեն համընդհանուր բնույթ և պարտադիր են բոլոր երկրների, այդ թվում նաև բարձր զարգացած կապիտալիստական երկրների համար։

Հանրագումարի բերելով միջազգային սոցիալիստական լագերի երկրների սոցիալիստական շինարարության ասպարեզում կուտակած վիթխարի փորձը, աշխարհի 81 երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների 1960 թվականի Մոսկվայան խորհրդակցությունը իրավացիորեն շեշտեց, որ «սոցիալիզմի երկրների և սոցիալիստական ամբողջ լագերի հաջողությունները ձեռք բերվեցին սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափությունների ճիշտ կիրառման շնորհիվ, ընդսմին հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի պատմական առանձնահատկությունները և սոցիալիստական ամբողջ սիստեմի շահերը, այդ երկրների ժողովուրդների ջանքերի, նրանց եղբայրական սերտ համագործակցության և ինտերնացիոնալ փոխադարձ օգնության շնորհիվ ու առաջին հերթին Սովետական Միության եղբայրական, ինտերնացիոնալ օգնության շնորհիվ»[4]։

Չեխոսլովակյան Սոցիալիստական Ռեսպուբլիկայի միջազգային դրության ամրապնդման համար մեծ նշանակություն ունի սոցիալիզմի ամբողջ լագերի միջազգային դիրքը, իսկ այդ միասնական լագերը վաղուց արդեն վճռական տեղ է նվաճել միջազգային ասպարեզում։ Սոցիալիստական երկրները զբաղեցնում են երկրագնդի տերիտորիայի 26 տոկոսը և տալիս համաշխարհային արդյունաբերական արտադրանքի, նախնական հաշվումներով, 37 տոկոսը։ Նրանք ձգվում են սկսած Էլբայի և Օդերի ափերից մինչև խաղաղ

---

[3] И. Гендрих, Победа социализма в Чехословакии. „Коммунист", 1960, № 12, стр. 88.

[4] «Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը», Երևան, 1960, էջ 22։

Օվկիանոս։ Կենարար արևը դրեթե մայր չի մտնում սոցիալիստական աշխարհում։ Դեռ նոր թաքնված Չեխոսլովակիայի Սոցիալիստական լեռների հետևում, այն արդեն ծագում է Սովետական Միության Հեռավոր Արևելքում։ «Մեր ժամանակի գլխավոր բնորոշ գիծն այն է,—ընդգծված է հինգ աշխարհամասերի կոմունիստական և բանվորական պարտիաների 1960 թվականին Մոսկվայան խորհրդակցության Հայտարարությունում,—որ համաշխարհային սոցիալիստական սիստեմը վերածվում է մարդկային հասարակության զարգացման վճռական գործոնի»[5]։

Հանդիսանալով սոցիալիզմի մեկ միլիարդանոց լագերի անբաժանելի մասը Չեխոսլովակիան իր ուժի անսպառ աղբյուրն է գտնում այդ լագերի հզորության մեջ։ Սոցիալիստական շինարարության ասպարեզում նրա ձեռք բերած հաջողություններն իրենց հերթին ամրապնդում են սոցիալիզմի ամբողջ լագերը։

Բայց դրանով չի սահմանափակվում Չեխոսլովակիայում սոցիալիզմի հաղթանակի միջազգային նշանակությունը։ Գործնականում այն ցույց է տալիս, որ կապիտալիստական տեսակետից զարգացած երկրները, ազատագրվելով կապիտալիզմի շղթաներից, մեծագույն արագությամբ կընթանան դեպի մարդկության լուսավոր ապագան, դեպի կոմունիզմ։ «Մեր երկրի զարգացումը,—իրավամբ նշել է Ա. Զապոտոցկին,—տալիս է համոզեցուցիչ և անհերքելի ապացույց, թե ինչպիսի հնարավորություններ է բացում սոցիալիզմը արդյունաբերականորեն զարգացած երկրների առջև։ Մենք գիտենք, թե մեր երկրի նվաճումները ինչ են նշանակում արդյունաբերականորեն զարգացած կապիտալիստական երկրների պրոլետարիատի համար, թե ինչ են դրանք նշանակում այն «թեորիայի» հերքման համար, ըստ որի սոցիալիզմն այդ երկրներում իբր բացառված է»[6]։

Չեխոսլովակիայի ժողովուրդները ի դեմս հզոր Սովետական Միության իրավամբ տեսնում են իրենց փրկարարին և անկախության անսասան պատվարին։ ՍՄԿՊ XXII համագումարը պատմական իրադարձություն հանդիսացավ ոչ միայն Սովետական Միության, այլև սոցիալիստական լագերի բոլոր երկրների, ամբողջ մարդկության կյանքում։

---

[5] «Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունը», Երևան, 1960։ էջ 9։

[6] „Правда", 1.11.1957

Հանգամանորեն քննարկելով համագումարի համաշխարհային պատմական նշանակությունը, Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի 1961 թվականի նոյեմբերյան պլենումը ընդգծեց, որ XXII համագումարի ընդունած ՍՄԿՊ նոր՝ կոմունիզմ կառուցողների Ծրագիրը ընդհանրացնում է նաև սոցիալիստական երկրների կոմունիստական պարտիաների և այդ երկրների ժողովուրդների փորձը, իսկապես այն մեր դարաշրջանի «Կոմունիստական մանիֆեստն» է և բոլոր ժողովուրդներին ցույց է տալիս առաջադիմության, ազատության, սոցիալիզմի և կոմունիզմի ուղին։

Հանրագումարի բերելով միջազգային կոմունիստական շարժման պատմական զարգացումը, Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXII համագումարում դիպուկ եզրակացրեց, որ «XX դարը կոմունիզմի փառավոր հաղթանակի դարն է։ Առաջին դարակիսում մեր մոլորակի վրա ամուր հաստատվեց սոցիալիզմը, երկրորդ դարակիսում նրա վրա կհաստատվի կոմունիզմը»[7]։

Չեխոսլովակիայի աշխատավորները դաշնակցած ՍՍՌՄ-ի և սոցիալիզմի լագերի մյուս երկրների ժողովուրդների հետ, Չեխոսլովակիայի Կոմունիստական պարտիայի հմուտ ղեկավարությամբ հաստատուն քայլերով ու արագ տեմպերով ընթանում են կոմունիզմի լուսավոր ուղիով։

---

7 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», Երևան, 1962, էջ 159։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ներածություն . . . . . .

ԳԼՈՒԽ I

Չեխ և սլովակ ժողովուրդների պայքարը հիտլերյան Գերմանիայի դեմ . . . 5

1. Հիտլերյան ռեժիմը Չեխոսլովակիայում 18
2. Հակաֆաշիստական, ազգային-դիմադրության շարժման աշխուժացումը երկրում 22
3. Հակաֆաշիստական, ազգային-ազատագրական շարժման համընդհանուր վերելքը Չեխոսլովակիայում 27
4. Հաղթական ազգային-դեմոկրատական ռևոլյուցիան Չեխոսլովակիայում 45

ԳԼՈՒԽ II

Ազգային-դեմոկրատական ռևոլյուցիայի վերաճումը սոցիալիստական ռևոլյուցիայի (1945—1948)

1. Ժողովրդա դեմոկրատական պետական-հասարակական կարգերի կառուցումը 67
2. Պայքար ռևոլյուցիայի հետագա խորացման համար (1946 1947) . 87
3. Ժողովրդական մասսաների վերադաստիարակման հաղթանակը և նրա պատմական նշանակությունը 107

ԳԼՈՒԽ III

Սոցիալիստական շինարարությունը և սոցիալիզմի հաղթանակը Չեխոսլովակիայում

1. Արդյունաբերության զարգացումը 144
2. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և զարգացումը 170
3. Ժողովրդական մասսաների նյութական դրության բարելավումը . . 187
4. Կուլտուրական հեղաշրջումը Չեխոսլովակիայում 197

Վերջաբան 209

ԳԱՀ

Սուրեն Վարդանի Հովնանյան

Сурен Вартанович Овнанян

ՉԵԼՈՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատ. խմբագիր Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
Հրատ. խմբագիր Տ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Նկարչական ձևավորումը Հ. Կ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Հ. Լ. ԳՈՐՈՅԱՆ
Սրբագրիչ Ի. Ս. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎՖ 07010 ԽՀԽ 752 Հրատ. № 2121 Պատ. 426 Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 26/IX 1962 թ.
Ստորագրված է տպագրության 19/I 1963 թ.
Թուղթ 60×92¹/₁₆ տպագր. 14 մամ., հրատ. 11,58 մամ.
Գինը կազմով 80 կոպ.

ՀՍՍՌ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0006136

ЦЕНА
21534